ԳԻՆՆ Է 2 Ռ. 20 Կ.

Կ·ԱՏՐՅԱՆ

ԳՐՈՇՈՒՏ

01 JAN 2009
19 NOV 2010

891.99
Ա-81

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ·

Վ. ԱՏՐՅԱՆ

ԳՐՈՀՈՒՄ

ՎԵՊ

1932
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Թիֆլիս
„ՍԱԽԵԼԳԱՄԻ"

21 FEB 2018

21121

1560
46

Ա. Ֆ. Միասնիկյանի անվ. տպ. հրատ. «Զարյա Վոստոկա»-ի

Գատվեր 45 Գլավլիտ 2399 Տիրաժ 3000

ԸՆԿ. Վ. ԱՏՐՅԱՆԸ (Աստվածատրյանը) ծնվել է 1898 թվին գյուղացիական ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում։ 1917 թվի փետրվարին ընկ. Ատրյանն իր դասընկերների հետ մտել է կոմունիստական կուսակցության շարքերը։ Գրական ժուռնալիստական գործունեությունն սկսել է 1917 թվից աշխատակցելով՝ «Գայքար», «Բանվորի կոիվ», «Գահակ», «Կոմունիստ», «Կարմիր Աստղ», «Մարտակոչ» և «Գրոշեսար» թերթերին և Թիֆլիսում հրատարակվող ժուռնալներին։ Առանձին հրատարակությամբ լույս է տեսել «Զրահագնացք» պատմվածքը։ Ընկ. Վ. Ատրյանը՝ Վ. Կ. Կ. (Բ) Թիֆլիսի անդամ է, Վրաստանի գրողների Ֆեդերացիայի հայկական սեկցիայի պատասխանատու քարտուղարը և ՎՊԳԱ-ի հայսեկի քարտուղարության անդամ, «Հոկտեմբեր» ժուռնալի պատասխանատու խմբագիր։ Ներկա «Գրոհում» վեպն ընկ. Ատրյանի 1929—1930 թվի աշխատություններից է, վորի բովանդակությունն ընդգրկում է սոցիալիստական շինարարության այսորը։

ՎՊԳԱ Հայսեկ.

ԳՐՈՀՈՒՄ

I.

Մեծ քաղաքը չրջապատող սարերին աչունը փռել էր իր մառախլապատ թևերը: Խոնավությունը սեացրել էր քաղաքը: Մերկ ծառերի վերջին տերևներն անպամ ընկել էին: Ծառերի կատարների ճիպոտաձև ճղներին թառած ագռավները ճանճրացնում էին իրենց միապաղաղ կռավոցով, փողոցների ցեխը նախշվել էր ավտոյի լաստիկների հետքերից: Սրընթաց սլացող տրամվայի պատուհանները ծածկվել էին գոլորշիով, իսկ մեզի մեջ կորած էլեկտրական ահագին լապտերների ապակիների վրա անձրևի մարգարտանման կաթիլներն անվերջ ծորում էին դեպի ցած:

Քաղաքի ծայրամասում, ուր տրամվայը թեքվում և դեպի կայարան, բանվորական ակմբի լուսավորված պատուհաններից լսվում էին յերգի ու նվագի ձայներ: Դեպի ակումբն արագ սլացող տրամվայի վագոնը հանկարծակի կանգ առավ հորդ անձրևից լճացած ջրերի առաջ: Լայն թիկունքով և թուխ դեմքով մի մարդ դուրս թռավ նրա միջից և, ճողոպրելով լճացած ջրերը, ցատկեց մայթի վրա: Հայացքն ակամայից հանդիպեց նոր ալվարտված բանվորական տան պատուհաններին, վորի մեջ պլպլում էին էլեկտրական լույսերը, ժպտաց ու մտավ ծառուղին, ինքն իրեն խոսելով:

Լայնատարած այդու ցանկապատի ծայրին եր կանգնում այն յերկհարկանի, նորակառույց, մաքուր,

լայն պատուհաններով չենքը, վորտեղ յերեսուն ոսկի տարի ապրել է բանվոր Միհրանը: Միհրանի ծննդից առաջ այնտեղ եյին ապրել նաև նրա ծնողները: Մինչև նորակառույց բանվորաշենն այդտեղ բարձրանում էր մի հինավուրց շենք, վոր այժմ չկար: Միհրանը լավ էր հիշում իր հորը՝ Թոմասին, հաղթանդամ, բարձրահասակ, ուսերամն մազերով, ունքերն այնքան խիտ եյին, վոր ծածկում եյին փայլուն, կայտառ ու բարի աչքերը:

Փոքր հասակից, յերբ հայրը տուն վերադառնալով դուրգուրում, շոյում էր Միհրանին և նրա փոքրիկ քրոջը, Միհրանը շոշափելով հոր կոշտացած և սև ձեռքերը, յետ էր հրում ու հարցնում. «Հա՛յրիկ, ինչո՞ւ յեն ձեռքերդ այդքան սև ու կոշտ», բայց հայրը պատասխան չէր տալիս, նա միայն ժպտում էր, նստեցնում իր յերկու ծնկան վրա իր տղային և աղջկանը դեմ առ դեմ և, արագ – արագ ծնկներին վրա որորելով, ծուլ – ծուլ էր անում նրանց: Գիշերները հայրը նստում էր լապտերի առաջ և յերկար, յերկար լրագիր կարդում, մինչև վոր սկսում էր ննջել: Թոմասն միայն յերեխաներին չէր շոյում ու գուրգուրում, նա չափազանց սիրում էր և իր կնոջը,–նրան էլ էր գուրգուրում և շոյում: Իր կյանքում Միհրանը յերկու դեպք է հիշում, յերբ հայրը տանը չարացել էր:

Ամառվա չափազանց շոգ որերից մեկն էր, հայրը տուն յեկավ ամբողջովին քրտնքի մեջ կորած, շապիկը թրջվել էր, շապիկ ուզեց մայրիկից, սակայն տանը մաքուր շապիկ չկար, սկսեց ջղային դրությամբ մեջ դողդողալ, այս ու այն կողմը նետեց իրեղենների մի քանիսը:

Մի ուրիշ անգամ էլ հայրը չարացավ: Այդ անգամ Միհրանն ինքն էր մեղավոր. նա իր քրոջ, Լուսիկին քոքի ափն էր տարել, վորպեսզի լողանալու ժամանակ Լուսիկն իր շորերը պահի: Զարհանքի տղաները Լուսիկին հրել եյին ու ջրի մեջ ձգել: Միհրանը հազիվ էր քրոջը խեղդվելուց ազատել: Այդ որը ևս հայրը սաստիկ բարկացավ մոր և իրենց վրա: Սակայն նույն գիշերը, յերբ նրանք քնած եյին, Միհրանը լավ էր հիշում, թե հայրն ինչպես իր կոշտ ձեռքերով շոյեց նրանց յերկուսի մազերը, շոյեց մինչև արմատները և այդ չա՞տ, չա՞տ դուր յեկավ Միհրանին, յերևի և Լուսիկին:

Ցեվ որերը քաղաքի այդ խարխուլ տանը միապաղաղ անցնում եյին: Մի աշնանային գորշ առավոտ էր, անձրևը ծլթծլթում էր դուրսը: Միհրանն արթնանալով, հորն անկողնում մեջքի վրա պառկած տեսավ, հակառակն տանը քամոն էր կապած, հիվանդը քնած չէր: Նա վեր կացավ, արագորեն հագնվեց, պետք է դպրոց գնար, բայց մայրը չթողեց: Բժիշկը մի քանի անգամ յեկավ ու գնաց, հայրիկի կրծքին ու մեջքին բաժակներ կպցրին, իսկ մի առավոտ էլ մայրն ադամակ բարձրացրեց, ինքը և Լուսիկն անկողնից վեր թռան, հայրիկի յերեսը և կոշտացած ձեռքերը անշարժ ու սառն եյին. — «Մեռել է, մեռել» — կրկնում էր մայրիկը: Հայրիկի անկողնի մոտ յերկար, շատ յերկար մայրիկի հետ նրանք լաց յեղան, հեռացին ու հառաչեցին:

Մյուս որը Թոմասն արդեն դագաղի մեջ էր, գերեզմանից շատ բանվորներ յեկան ու տարան: Միհրանը քրոջ հետ մնաց տանը: Այդ որից յերեխաները Թոմասին այլևս չտեսան: Ու սկսվեցին նրանց տառապանքի որերը, մինչև նրանք չափահաս դարձան: Ցերբեմն տանը հաց չեր լինում կամ փայտ, յերբեմն սեղանի դատարկությունն արճճի նման ճնշում էր նրանց սիրտը և մայրը կուլ էր տալիս իր արցունքներն անվերջ:

Շատ բան եր փոխվել այն որից։ Ծնողները չկային, իսկ դառնությամբ ու կարիքով լի կյանքը հիմնահատակ եր յեղել։ Ցեվ խորը հառաչեց Միհրանը, մտնելով նորակառույց յերկհարկանի տան բակը։

Նա հանդարտ քայլերով բարձրացավ պատշգամբ, դորբչիապատ պատուհանի առաջ հանեց կրկնակոչիկները և նայեց սենյակի ներսը։ Ինքնայնորի մոտ նստած եր Լենան, վորը, լուռ հայացքը բարձրացնելով դեպի բացվող դուռը, կրկին իջեցրեց առաջը դրված գրքի վրա։ Միհրանը պորոֆելը ձգերով գրասեղանին, մոտեցավ, նստեց սեղանի ծայրին։

— Մայրիկն այստե՞ղ է, — չչնջաց Միհրանը, համարյա վախենալով չխանգարել լռությունը։ Լենան շարունակում եր կարդալ, իսկ Միհրանն իր խաղաղ հայացքն ավելի շեշտակի յեր հառում կնոջ վրա։ Ներքուստ ամեն կերպ նա աշխատում եր զսպել իր դայրույթը, սակայն Լենայի սնաթությունը, գրքին հառած աչքերը և տրամությունից ցած թողած ունքերն անշարժ ու անծպտուն մի այլ ցանկություն առաջացրին նրա մեջ։

Կրծքի տակ կենսահույզ ու մեծ թափով արթնացավ մի սանձարձակ զգացում, ցանկացավ վեր կենալ, գրկել Լենային, համբուրել, դուրգուրել, սակայն, անհարմար զգալով, զսպեց իրեն։ Մի քանի անգամ չփեց մազերը և առաջին անգամ այդ սենյակը մտած անծանոթի նման սկսեց դիտել առաստաղը։

Լռությունը դեռ շարունակվում եր։

Տասը տարի ապրել եյին միասին Լենան ու Միհրանը։ Ցերկուսն էլ գործարանի զաղդյահի բանվորներից եյին։ Մանոթացել եյին Հոկտեմբերյան հեղափոխության որը, արևի ազատ հոկտեմբերյան ճառագայթների և կարմրածածան դրոշների ծփանքի տակ։

Հիշում եր Միհրանը, թե ինչպես Հոկտեմբերյան հեղափոխության որերին ցույցի ժամանակ պատահեց նա Լենային, նրա զուլդ կրակոտ աչքերը լայն ճակատի և կամարաձև թուխ ունքերի տակից անդադար նայում եյին Միհրանի աչքերին, բայց յերկար չեր տևում նայվածքը, թեթև հոգմից ծփացող կարմիր քաթանը ծածկում եր Լենայի դեմքը, իսկ Միհրանը սրատորոի սպասում եր քաթանի հարմար ծփանքին, վոր տեսնի Լենայի հեղահամբույր հայացքը։

Իսկ Լենան կարդում եր «Լենինի կյանքը» գիրքը։ Հիշեց այն որը, յերբ առաջ քաշվեցին ինքը և Միհրանը։ Սգի որերն եյին։ Չչակներն ահարկու վոռնոցով շոնդում եյին քաղաքում։ Մարդկությունը կորցրել եր իր վեցերորդ դդայարանը և սարսափահար վազում եր փողոցներով, կարծես արևն եր զահավիժել ուկիանոսը։ Փողոցները, հիմնարկները, գրադարանները, սկոմբները, թատրոնները, հրապարակները լցվել եյին մարդկանցով։ Մահի չափ անտանելի ձայնով լրագրավաճառները զոռում եյին ամենուրեք — «Լենինի մահը», «Լենինի մահը»։ Հիշում եր, թե ինչպես եյին այրվում իր ճակատն ու այտերը։ Ինչպես եյին դգվում մազերը, ցնցվում մարմինը։

Հիշեց, թե ինչպես Լենինի թաղումից մի քանի որ հետո կուսակցական կոմիտեյի կազմբաժնի առաջարկով ծիտատոի գործարանի ինքը բանվորների հետ առաջ քաշեցին իրեն ու Միհրանին։ Միհրանը պետք և աշխատեր Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի Շինարարական բաժնում, իսկ Լենան՝ բանվորական կոոպերացիայում, վորպես հրահանգչուհի։

Կյանքն այդ որվանից փոխվեց, հեղափոխության փոթորիկն իրենց թոցրեց դեպի բարձր։ յերկուսն էլ

զգացին, վոր Լենինի ստեղծած աշխարհը չափազանց արագ է առաջ գնում և նոր մարդիկ է պահանջում, նոր մարդիկ՝ բանվորներից։ Այնուհետև քաղցը որոշ սկսվեցին Լենայի և Միհրանի համար, աշխատանք գործարանում, կուսակցության մեջ, հասարակական աշխատանք, կուլտուրական աշխատանք և այլն։

Լենան հղիացավ։

—Ցես յերեխա չեմ ցանկանում, յես չեմ կարող թողնել աշխատանքները, կալել վոտերս ընտանիքում։

— Վո՛չ, վո՛չ, պետք է լույս աշխարհ գա Կիմիկը։ Մեր գործը, մեր սերունդը պետք է շարունակի։ Ցեվ մեկը մյուսի յետևից թռչում եյին Լենայի մըտքով այն դատնությունները, վեճերը, անախորժությունները, վոր տեղի եյին ունենում մարդու ու կնոջ մեջ յերկար ամիսներ, մինչև վոր աշխարհ յեկավ նոր քաղաքացին, մինչև վոր սենյակների պատերն արձագանքեցին նորածին մանուկի ձայնին։

Միհրանը նորից նայեց Լենայի դեմքին. լայն ճակատն ավելի խորհրդավոր տպավորություն եր թողնում, ունքերն ավելի խտացել, աչքերն ավելի խելացի արտահայտություն եյին ստացել։ Համակարգությունը խանգարում եյին միայն նրա ներսում թագնված տարորինակ դատողությունները։

— Վերջ պետք է տա՞ս, թե՞ վոչ, թշնամիներ ենք, ի՞նչ է։

— Ցերը տուն ենք վերադառնում, թշնամիներ ենք։

Ցեվ սկսվում եյին մարդ ու կնոջ մեջ այն խոսակցությունները ու վեճերը, վորոնք տեղի յեն ունեցել մեծ քաղաքի ընտանիքներից շատ շատերում։

— Մի՞թե մեր ընտանիքից անհատականության հոտ է փչում, մի՞թե մեր ընտանիքը քեզ խանգարում է հասարակական աշխատանքներ կատարել։ Ձե՞ վոր ամբողջ որը հասարակական աշխատանքի յես, ինչո՞ւ յես ամեն որ կրկնում նույն պատմությունը, թունավորում մեր ազատ բոպեները։

— Ցես ժխտում եմ ամեն տեսակի ընտանիք, ազատ եմ ուզում լինել, ազա՞տ։

— Ցես յերբևիցե խանգարե՞լ եմ քո ազատությունը։

Միհրանը խոսում եր սառնասրտությամբ, համոզված չեչտով։ Ցերբեմն նրա յետ սանրած մազերն առաջ եյին ընկնում, ծածկում դժգույն ճակատը. նա ուղղում եր, կրկին նրա աչքերի սպիտակ արձճանումն գնդերը հանդիպում եյին Լենայի ածուխից ել սև բիբերին ու պահ մի «թշնամիները» մնում եյին այդ դրության մեջ, մինչև վոր Լենան, խիտ թերթերունքները թարթելով, աչքերն իջեցնում եր սեղանին դրված գրքին և հուսահատ կրկին բացականչում.

— Վո՛չ, վո՛չ, մեր ընտանիքում նորը դեռ չկա, կեսը հին, կեսը նոր. յես վոչինչ չեմ հասկանում։

Այս խոսքերը հնչում եյին զայրույթով։

— Դեռ հարկավոր է նոր ձևով աշխատել, նորը կառուցել, նոր ձևով ապրել։

Միհրանը վեր վացավ տեղից, մի քանի անգամ յետ ու առաջ գնաց, անհպատակ նայեց պատուհանից դուրս և, հանկարծ շուռ գալով, բացականչեց.

— Շատ մեծ բաներ ես պահանջում դու կենցաղի ասպարեզում այս յետամնաց, համարյա անկուլտուրական յերկրում. մոռանում ես, վոր Կովկասում ես ապրում։ Ձեր յերկրում խոշոր գործարաններ չկան, յերբ ձեզ ասում են աջակցեցեք կառուցել, վերակառուցել մեր յերկիրը, դուք ձեր հիվանդագին, կենցաղային հայացքներով խանգարում եք մեր աշխատանքները։ Հասկացի՛ր է, հասկացի՛ր, վոր մինչև բան-

Մի դուրեկան տաքություն ու բերկրանք և լինում Միհրանի սրտին, կարծես սիրտը լայնանում է, զարկերն արագանում են, ուզում է պայթել: Միհրանն զգում է, վոր պատրանք է այս բոլորը, պատրանք, վոր պետք է յերկաթե անհրաժեշտությամբ իրականանա...: Նա յերկու ձեռքով հենված նախագծերի վրա, գլուխը դրած կանաչ ծածկոցով լապտերի տակ, շրթունքները հուպ տված, նա անվերջ մտածում եր, որորելով գլուխը հատակագծի վրա:

Միհրանը տեղից չչարժվեց, յերբ կինը վերադարձավ: Լենան դուռը զարկեց և դա նշան եր, վոր համակված եր նույն զայրույթով ու բարկությամբ: Նա խիստ անկողին մտավ: Միհրանը դեռ յերկար ժամանակ նստած եր սեղանի առաջ: Ուշ գիշեր եր, յերբ նա լապտերը հանգցրեց ու անկողին մտավ: Կինն անհանգստորեն պտույտներ գալիս անկողնում, վոտները չարժում, գլուխը պտտում բարձի վրա: Յերկար խռովահույզ մտքոցներից հետո, Միհրանը լսեց բարեկ վոտների ձայն հատակի վրա: Լենան եր, մտավ Միհրանի անկողինը և յերեսը շուռ տվեց: Անշարժ պառկած եր Միհրանը: Լենան կարծելով, վոր նա քնած է, ճգնում եր ուսերի և վոտների շարժումներով արթնացնել նրան, սակայն նա լուռ եր: Ամոթից և վիրավորանքից, վոր ինքն է յեկել Միհրանի մոտ, այրվում եյին Լենայի աչքերը: Միհրանը շուռ յեկավ և հարցրեց.

— Ե՞, այդ ո՞ւր յեկար իմ անկողինը, ընտանիքի անկողին է սա, ընտանիքի մարդ է պառկած մեջը, իսկ այդ դու մեչչանականություն ես համարում:

Լենան լուռ եր: Նա ամենևին անհարմար չեր ըզգում և ավելի ամուր եր սեղմում իր թևերի մեջ Միհրանին:

Միհրանն զգում եր, վոր Լենայի դատողությունները դատարկ ֆրազներ են, վոր նրա համոզմունքները չեն համապատասխանում գործողություններին ու կարծում եր և մտածում, վոր Լենայի խառնված քիթ և բղխում նրա համառությունն ու կամակորությունը:

II.

Մեր քաղաքում, ուր ապրում է Միհրանը, մեծ յերկաթե բետոնե գործարաններ չկան: Ցարական ժամանակից մնացած մի քանի խարխուլ գործարաններն իրենցից վոչինչ չեն ներկայացնում: Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհուրդը նոր եր սկսում խոշոր գործարանների կառուցումը: Բայց մինչև կառուցումը կամպանիա յեր տարվում բանվորական մասսաների մեջ:

Մի այդպիսի ժողովի յեր չտապում Միհրանն այսոր: Նա ծանր և մտախոհ քայլերով մտավ ռայկոմի շենքի մուտքից ներս: Միջանցքով անցնելիս, նա բացեց այն դահլիճի դուռը, ուր պետք է գումարվեր ժողովը: Կատարյալ լռություն ու դատարկություն եր տիրում այնտեղ: Կարմիր մահուդով ծածկված սեղանի վրա իրար յետևից շարված եյին ջրով լի սափորը, բաժակը և զանգը: Միհրանը տարորինակ ժպիտ արձակեց և առանձին ուշադրությամբ նայեց այդ յերեք իրերին. «Չլինի՞ թե յետաձգել են ժողովը»,—մտածեց նա: Դուռը փակեց ու միջանցքով գնաց դեպի գրադարան — ընթերցարանի սենյակը, վորտեղից կարելի յեր տեղեկանալ ժողովի մասին:

Գրադարան — ընթերցարանում նա հանդիպեց բանվորներից մի քանիսին, վորոնք տեղեկություն տվին ժողովի մասին: Իմանալով, վոր ժողովը կայանալու

յե, նա քաշվեց մի անկյուն և քննում եր իր զեկուցագիրը։ Մի անհայտ զգացում ճնշում եր նրա սիրտը, յերբ մտածում եր, որ կարող է կառուցող բանվորների ժողովը չհամաձայնվել ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի մտադրության հետ։ Նա մտքում պատասխաններ եր պատրաստում այդպիսիների համար, համոզեցուցիչ, կրակոտ պատասխաններ։ Կարո՞ղ է արդյոք վորևե մեկը հակառակել այդպիսի հոյակապ գործարանի կառուցման դեմ։

Գրադարանի ժամացույցը խփեց վեց անգամ։

Միհրանը բաց դռնով նայեց դեպի դահլիճը։ Դահլիճի դուռը բաց եր և այնտեղ արդեն մարդիկ եյին հավաքվել։ Ռայկոմի քարտուղարը Միհրանին եր սպասում, նա ձեռքով նշան արեց նրան, ամբիոն բարձրացավ ու ժողովը բաց արեց։ Ակմբի մի քանի անդամներից դահլիճ մտան բավականին բանվորներ։

Միհրանն, տասը քաշելով զեկուցագրերի և ծրագրերի ահագին կույտը, սկսեց իր զեկուցումը։ Սակայն զեկուցման ընթացքում և վոչ մի անգամ չնայեց նրանց վրա։ Նա նայում եր միմիայն բանվորների դեմքերին, նրանց վրա կատարվող փոփոխություններին, իր խոսքերի թողած ազդեցության հետևանքներն եր կարծես ուսումնասիրում և, յեթե մեկը շարժվում կամ խոսում եր իր ընկերոջ հետ, Միհրանն աշխատում եր խոսքերով խանգարել խոսողներին։ «Գուցե չե՞ն հավատում մահուդի գործարանի դլուխ գալուն», մտածում եր Միհրանը։ և նա նկարագրում եր նույնիսկ նրա մանրամասնություններն անգամ, լուսատատ պատուհանների, պողպատե լծակներով ու մանիշներով զարդարված փայլուն մեքենաների շարաններն անգամ։ Միհրանն իր զեկուցումով կարծես հարց եր տալիս իր առաջը նստած, զարմանքով իրեն նայող

բանվորներին. «Ի՞նչ ծիծաղելի մարդիկ եք, չե՞ք տեսնում գործարանը»։ Նորից ու նորից նոր վոգևորությամբ նա պատմում, բացատրում եր մահուդի գործարանի մասին, ճիգ եր թափում, վոր լսողները նույնը զգան, ինչ վոր զգում եր ինքը, ուզում եր ամեն մեկի մեջ զարթեցնել նույն հետաքրքրությունը, նույն զգացումը։ Միհրանն զգում եր, վոր իր առաջարկը կուսակցության առաջարկն է, վոր իր առաջարկի իրագործման մեջ կան չափազանց մեծ հավատ և ուժ և իրական տվյալներ։ Իսկ յեթե չհաստատի՞ այդ վորոշումը կառուցողների կուսակցիվը, Միհրանը կաշխատի համոզել և կտրիպի, վոր հաստատեն, վորովհետև նրա ծրագրած կառուցման աշխատանքը մեծ գործ է. իսկ մի՞թե ակտիվի մեջ մարդիկ կլինեն, վոր լեմ դուրս գան մահուդի գործարանի կառուցմանը։

Միհրանը մի ժամ անցած վերջացրեց իր զեկուցումը։

Բանվորները մեկը մյուսի յետևից սկսեցին արտահայտվել։ Միհրանի սիրտը թրփռում եր ուրախությունից, վոր ինքը մենակ չե։ Նրա առաջ կազմակերպված մասսա յե նստած, վորը յերբեք դժվարություններից չի ընկճվում, վորը նույնպես իր նման պատրանքներ ունի, բայց իրականության մոտիկ պատրանքներ։ Միհրանի խոսքերը այնպես եյին ազդել բանվորներին, վոր նրանց յերևակայության մեջ պլանը մահուդը փայթափվում եր դլանակների վրա։ Կուսակցիվը հանեց իր վորոշումը. վերջին վճռական խոսքը ևս ասվեց։ Փոքրիկ դեռ ուրիշ հարցեր եր քննում։

Միհրանը, հավաքելով թղթերը, գնաց պորտ Ֆելի մեջ և զրոսաշրջիկ. գեղատեսիլ կոմիտեյի շենքից։ Դրսի դռները հղաց Միհրանը. էլեկտրական

1560
46

լապտերների ճառագայթող լույսերը կարծես տաքացնում էին օդը: Պետք է տրամվայ նստեր, բայց մոռացավ, վոտով էր գնում. յերևակայության առաջ ամենուրեք մահուդի գործարանի կորպուսներն ու փայլուն մեքենաներն էին յերևում: Կառուցելու ժամանակ Միհրանն այնպես կանչ, վոր անպայման կառուցվի իր յերևակայած պատկերի նման: Այս մտքերով ծանրաբեռնված, անցնելիս անդդուշաբար յերբեմն նա հրում էր մարդկանց, յերբեմն, մտքերից ավելի վոգևորվելով, արագացնում էր քայլերը, մինչև տուն նա իր գլուխը չդարձրեց կամ չթեքեց վորևե կողմ. ուղիղ աչքերը հառած գնացին, նա արագ քայլերով շտապում էր, կարծես գործարանն այսոր էր կառուցելու: Յերբ փայլեց նրա աչքերի առաջ իր սենյակների սպիտակ լույսը, նրա առաջ ցցվեց վենան՝ ընտանիքի կենցաղի տարրինակ և այլանդակ դատողություններով: Նրա ամբողջ եյությունը տակն ու վրա յեղավ, սիրտը կարծես աքցանով կղմթում էին, կարծես նրա պայծառ ուղին խառնվում էր, խճճվում, մոլորվում:

III.

Յուրաքանչ գնում, սաստկանում էր, իսկ մի առավոտ ել արդեն ձյունը ծածկել էր քաղաքը, տանիքների ջրառատ խողովակներից հատ հատ շիրտերով սառույցները յերկարաձիգ կախ-կախ էին ընկել մայթերի վրա: Շարժումն ու աշխուժությունը փողոցներում նույնն էին, բայց փափուկ ձյունը կլանում էր ոտքերը: Այստեղ-այնտեղ յերևացող փայտով բարձած սայլերի շուրջը հավաքվում էին անցորդները փայտի գինն իմանալու, և ցրվում:

Ամենուրեք մարդիկ խոսում էին Զադեսի, չուգունի, յերկաթի և նավթի մասին:

Քաղաքի ծայրում, Քուռ գետի ձախ ափին, մահուդի գործարանի տափարակի վրա արդեն գծում էին շենքի կորպուսների հիմքերը: Տեխնիկ Վատոն, բանվորների մոտ կանգնած, դիտում էր, թե ինչպես էին նրանք քարքարոտ հողը քրմնդներով փորում: Մեծ ճանապարհով գալիս էին ճռնչացող սայլերը, թափում էին բարձած քարը, աղյուսը, ցեմենտը, յերկաթը, թափում էին հարայհրոցով ու զրնգուն ձայնով:

Ցեմենտի և յերկաթե բետոնի հիմքերն արդեն տաքածվում էին տափարակի վրա: Միհրանն որական յերկու անգամ գալիս էր աշխատանքի վայրը, իսկ մնացած ժամանակն աշխատում էր քաղաքում շինարարական նյութերի մատակարարման գործով:

Ամբողջ որը կրում էին բանվորներն անդադար աղյուսը, ցեմենտի շաղախը, քարն ու յերկաթը, թափում էին հիմքերի փոսերի մոտ, վարպետների մոտ, նայում էին տեխնիկ Վատոյի կարմրատակած աչքերին, սաթի նման սև, կարճ բեխերին ու դոչում.

— Դայրո՞ջ սուկնո:

Վատոն մի քանի քայլ առաջ էր շարժվում, ցածր ձայնով «Դայրոջ, դայրոջ» էր անում ու գոռում.

— Դե՛, չո՛ւտ, չո՛ւտ, շտապել է հարկավոր:

— Տե՛ս, վո՞նց է շտապում:

—Մահուդը շուտ է ուզում, տերը չմեռնի:

—Հլա դեռ մինչև մահուդը շատ ժամանակ կա:

Նույնիսկ յերբ պլպլան ձյունների վրա արևն ընկնում էր յերկրի ծայրին ու գիմացի սարերի յետև ամպերը հրավառվում էին ու շիկանում, սայլերի ճռնչոցն ու բանվորների կենսուրախ խոսակցությունը

ներն ու չվչվոցները դեռ շարունակվում էին։ Գիշերն անգամ, երբ թանձր խավարն ինչում էր քաղաքի վրա, Միհրանը դալիս էր տեխնիկ Վատոյի դրասենյակը, դիտում էր աշխատանքները, հրճվանքով նայում էր տափարակի վրա փայլող ցեմենտի մոխրագույն, մեկը մյուսին կարող պատերին։ Ամեն որ նրան թվում էր, վոր պատերն ավելի բարձրացած կլինեն, սակայն դեռ հեռվից հավիշտակությամբ դիտելով, տեսնում էր, վոր պատերը դեռևից դանդաղ են բարձրանում։ Այդ մասին Միհրանը վոչ տեխնիկ Վատոյին էր բան ասում և վոչ էլ ինժեներներին։

Միհրանը չէր սիրում գործարանի շուրջը տիրող լռությունը։ Ցերբ բանվորները չէին աշխատում, Միհրանին թվում էր, թե գործարանն այդպես էլ քարացած պետք է մնա, նրա սրտի մեջ յերկյուղի նման մի դատարկություն էր առաջանում, կասկած, վոր խանգարում էր նրա ուղեղում դառավորված շարժողականության։ Սակայն նա հավատով լի յեր, վոր վաղը հատարավոր ձեռքեր ջլուտ շարժվելու յեն և մի քանի որ ու նա գործարանի պատերը բարձրացած կտեսնի։ Վորքան շատ քար, ցեմենտ ու յերկաթ եկին բերում դեպի նորաշեն գործարանի վայրը, այնքան ամուր էր դառնում գործարանը տեսնելու հավատը։ Այդ մեծ յերջանկության ու վոգևորության ժամանակ նրա միտքը թռչում էր դեպի տուն, հիշում էր Լենային, մարմնով սարսուռ էր անցնում։ Այստեղ աշխատանք, թափ, ծիծաղ, ուրախություն, այնտեղ անհաճո խոսակցություններ, վեճեր, կռիվներ։ Ու ակամայից Միհրանի մտքում ցցվում էին գործարանի պատերն ու ծածկում Լենայի անախորժ դեմքը։ Ինչո՞ւ յե նա այնքան խորթ ու դաժան։ Չե՞ վոր Միհրանը պայքարում է շինարարության թափն արագացնելու, յերկրի յերկաթի թռիչքն

արագացնելու, հասնելու առաջավոր յերկրներին, անցնելու նրանցից, աշխատում է դատակարգի համար։ Իսկ Լենա՞ն։ Նա խանգարում է այդ պայքարը, նա ժխտում է իր և Միհրանի կազմած ընտանիքը, ուր աշխատանք ու համերաշխություն էր թագավորում։ Ցերբ նրան Միհրանը հարց էր տալիս իր վերաբերմունքի մասին, նա միշտ միևնույն պատասխանն էր տալիս։—«Չգիտեմ յես, յերբ նոր դաղափարները դնում են հին կաղապարների մեջ»։ Կնոջ առաջադրած խնդիրներն անհասկանալի և տարբերային էին, վորոնց վրա նա խորհում էր ժամերով, բայց հասկանալ չէր կարողանում։ Ամեն անդամ նրան մի միտք էր տանջում. ինքը և Լենան բանվորներ են յեղել. կռվել ու կռվվել են կուսակցության պողպատե շարքերում, կուսակցությունն առաջ է քաշել նրանց, պատրաստված քաղաքացիներ դարձրել, ինչո՞ւ նրանք միևնույն կերպ չպետք է լուծեն ավյալ խնդիրը։

Միհրանն զգում էր, վոր Լենայի հոգեբանությունը չափազանց փոխվել էր և դա այն հիմնական պատճառն էր, վոր կենցաղի խնդրում Միհրանն ու Լենան դարձել էին անհաշտ թշնամիներ։ Ամբողջ ամեռը նրանց կենցաղային վեճը շարունակվում էր, ամբողջ ամեռը նրանք թշնամիներ մնացին, իսկ պառավ սատիկն անվերջ արցունքներ էր թափում ու սիծում նոր կարգերը, ժամանակները։

Արևն արդեն կարողանում էր տաքացնել յերկիրը. ծառերի ճյուղերի վրա բեռնավորված ճյուները վաղուց հալվել էին։ Տանիքներից ծլթծլթում էին հալվող ճյունի կաթիլները։ Լենան, նստած պատուհանի առաջ, ակնապիշ դիտում էր հեռվում փռվող լեռների յետևը հրդեհված վերջալույսը։ Մշուշի ծոցում թաղված էր քաղաքն իր

միլիոնավոր լույսերով ու հոգսերով։ Նա, դեմքը սևեռած քաղաքին, սառը հայացքով կարծես թափանցում էր այդ մշուշի խորքերը, սակայն մտքերը խառնաշփոթ ու կատաղի խեղդում էին նրա ներքին աշխարհը. զզվելի էր թվում նրան ընտանեկան անհատական կյանքը, թեպետ ամբողջ օրն զբաղված էր հասարակական աշխատանքով։ Չեր հասկանում Լենան, թե ինչ է կատարվում իր հետ, ինչն է փոխվել իր մեջ, ինչի յն ձգտում ինքը։ Ընտանեական հոգսերից ազատ էր, սակայն ընտանիքը կրկին ճնշում էր նրան։

«Մի՞թե ինձ դաղդյահից առաջ քաշեցին պարտակվելու այս պատերի մեջ։ Նեղ են այս պատերը, խրդճուկ, հեղափոխության շինարարության աշխատանքները բաղխում են մեր դռները, կյանքն այնպես արագ և առաջ սլանում, վոր պետք է փլել ընտանիքի պատերը։ Պետք է թքել ընտանիքի, յերեխաների վրա, նետվել կոլեկտիվի մեջ, ճուլվել նրա հետ, ապրել, աշխատել նրա համար, այրվել նոր կյանքի բոցերի հրդեհի մեջ։ Մի՞թե սխալ են իմ դատողությունները»։ Լենան տանջվում էր կասկածների մեջ. սիրտը ճմլվում էր. նա դայրանում էր, վրդովվում էր, ճգնում էր լուծել, պարզել իր մտքը, չեր աջողվում, հակասությունները շատ էին և նա տառապում էր ամենաթշվառ ու անողնական մարդու նման։ Դուռը ճռնչաց. մթության մեջ յերևաց Միհրանի դեմքը. ելեկտրական կոճակը պտտվեց, լույսը վառվեց, Միհրանի աչքանքից վառված ու հոգնած դեմքի պինդ մկանները մեղմ ժպտացին. մոտեցավ Լենային, շոյեց նրա կարճ, յետ սանրած մազերը։

— Ինչո՞ւ յես մթնում նստել։

Կինը լռում էր։

— Դե՛, ելի սկսվեցին։ Արի՛, մի քիչ խժռենք և գնանք գործարանը տեսնելու, գիտե՞ս, արդեն պատերը բավական բարձրացել են, իսկ կողքի դրաանյակի համար ժամանակավոր շենք արդեն կառուցված է. ո՞ւր են յերեխաները։

— Գնացել են կինո։

— Դե՛, վե՛ր կաց, ե՛։

Լենայի բարձր ու հպարտ ճակատի տակ փռված սև ունքերն անբավական արտահայտություն ընդունեցին, վորի փոխարեն Միհրանը նրա ծոծրակը քնքշորեն համբուրեց, համարյա ուժով թեերի տակից բռնած վեր քաշեց տեղից, հրելով տարավ դեպի մյուս սենյակն ու բաց թողեց։ Կինը կրկին լռում էր։

Մինչև սեղանը կպատրաստեր, Միհրանը մոտեցավ դռան ու ճակատը սառը ապակուն դրած, նայում էր դեպի գործարանի տափարակը։ Վերջալույսի ջինջ գոլգթերն անհետանում էին խավարի մեջ։ Նա աշխատեց տեսնել, թե ինչ սայլեր են ճռնչում մեծ ճանապարհին, բայց չկարողացավ, խավարն արդեն խտացել էր, վոչինչ չեր նշմարվում։ Այդ բոլորին դուռն արագությամբ բացվեց և Դիկտատոր Կիմիկը ներս յեկավ, ձեռքը բարձրացնելով, վողջույնի նշան արեց հորը. Կիմիկի յետևից, Ավրորայի ձեռքը բռնած, ներս մտավ Սոնա տատիկը։

Տխուր ու լուռ, հուսահատված սենյակը կենդանացավ աշխույժ ձայներով ու պատմություններով։

— Մա՛յրիկ, ձի տեսանք,—հա՛յրիկ, մի մարդ մյուսի յերեսին խմոր քսեց, հետո խփեց, վայր գցեց։

— Հա՛յրիկ, Վորոշիլովի պատկերը կառնե՞ս։

Յեվ կրկնացնում էին անվերջ Կիմիկին ու փոքրիկ Ավրորան։ Տատիկը նրանց կերակրեց ու տարավ քնեցնելու։

Ճաշից հետո Միհրանն ու Լենան դուրս եկան միասին տնից ու բռնեցին դեպի նորակառույց գործարանի ճամբան։ Ամբողջ ճանապարհը նրանք անցան լուռ։ Յերբ մտան գործարանի բակը, Միհրանը բռնեց Լենայի թևից, նրան չենանյութերի կույտերի միջից անց կացնելու համար։ Պատերի տակ Միհրանը բարձրացրեց Լենային տախտակե սանդուղքի վրա ու, պատի դլուխը հանելով, սկսեց բացատրել տափարակի վրա փռված քառակուսիների նշանակությունը և յուրաքանչյուրի դերը։ Ամենամեծամաղձոտ ու քաղցր յերդը, որ հիշում եր Միհրանը մանկությունից, ամենադուրեկան գեղարվեստական պատկերը նրան այնքան չեյին վոգևորում, չեյին լցնում նրա սիրտը բերկրանքով ու հաճույքով, որքան այդ կիսավարտ յերկաթեբետոնե պատերը։ Լենան համարյա յերկյուղով եր նայում նրան, նրա աչքերը վայրում եյին մթության մեջ, մաղերը յերբեմն խառը շարժումների թափից ընկնում եյին ճակատի վրա, նա յետ եր ձգում վոգևորությամբ ու մոլեգնաբար շարունակում կառուցումների պատմությունը։

«Ահա՛ թե ինչն է սիրում սա, ահա՛ թե ինչն է վոգևորում սրան»։

Մթության մեջ ցեմենտե-բետոնե կիսակառույց կորպուսների վրա կանգնած կինը խանդում եր։ Նա խանդում եր սառն աղյուսին, ցեմենտին և յերկաթին։ Իսկ յերկաթի ոլորի մարդը շարունակում եր խոսել, թե ինչպես այս ամայի դաշտում պետք է բարձրանա մի գեղեցիկ, հոյակապ գործարան։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես գործարանից հեռու գտնվող այն շենքը։ քանվորաշենն է, նոր կենցաղի հիմնաքարը։ բայց չկարծես, թե այս շենքում մի նոր, չտեսնված, անյերևակայելի կյանք է ստեղծվելու, վոչ։ շենքի մեջ

լինելու յեն ճաշարան, լվացարան, մանկատուն, ակումբ և դրադարան։ Ցերեխաներին խնամելու և պահելու յեն առանձին մարդիկ, ճաշը բոլորի համար պատրաստում են առանձին մարդիկ, լվացքը լվանում են առանձին մարդիկ։ Բայց ելի ընտանիքը, վորպես հասարակական հիմնական բջիջ, մնալու յե, ելի յես և դու միասին ենք ապրելու, ելի կինը յերեխա յե ծնելու, յերեխան մոր ստինքներից կաթ է ծծելու և այդպես շարունակ և սոցիալիզմի ժամանակ։

— Ուրեմն այստեղ նոր վոչինչ չի կարող լինել, նոր կլինեն միայն պատերը, իսկ նրա ներսը կկրկնվի հինը։

— Այստեղ ամեն ինչ նոր կլինի, բացի՝ դատարկ խոսակցություններից նոր կենցաղ ստեղծելու մասին։ Կինն ամբողջովին կարող է նվիրվել հասարակական աշխատանքների, կինը համահավասար իրավունքներ կունենա տղամարդկանց հետ, դա յե հիմնականը և գլխավորը, պետք է հավատով լի մտնել այդ տունը։

Պատերից իջնելով, նրանք մտան նորակառույց դրասենյակը։ Մի քանի ելեկտրական լույսով լուսավորված սեղաններ ընկան Լենայի աչքով, ամեն մեկի վրա կանաչ ծածկոցով լապտեր կար, որ լուսավորում եր սեղանի վրա թափված թղթերն ու հաշիվները։ Դրասենյակի ծայրում տեղավորված մեծ սեղանի չուրջը հավաքվել եյին ինժեներ Աղասի Աբրամիչը, գործարկոմի նախագահ Դավիթը և կոմբջիջի քարտուղար Սուրենը։

Այդ յերեք անձնավորությունների արտաքինը կատարյալ հակապատկերն եր մեկը մյուսին։ Ինժեներ Աղասի Աբրամիչը բարձրահասակ, նիհար մարդ եր, վոտերն ու ձեռքերը յերկար ու բարակ։ շարժումների մեջ նա զգույշ և չափավոր եր, դեմքը մոմի գույն ու-

ներ, մազերը միայն զարդարում էին յերկու ականջների կոթերը, խիտ ունքերի տակից պեծին էին տալիս նրա խելացի, խորամանկ, փայլուն, շաղանակագույն աչքերը. բաճկոնի գրպանում նա խրել էր մի քանի մատիտ, և, սեղանի կողքին կանգնած, յերկու ձեռքը գրպանում, նայում էր առաջը փռված հաշիվներին:

Աղասի Աբրամիչը յերկու ֆակուլտետ էր ավարտել, ինժեներ կառուցողների ֆակուլտետը Պետրոգրադում, իսկ ինժեներա-մեքենագիտական ֆակուլտետը՝ Բերլինում: Նա լավ գիտեր շինարարական գործը. հասկանում էր բոլոր մանրամասնությունները, միայն միշտ հաշիվների և նախահաշիվների կազմելու մեջ սխալվում էր, այսինքն՝ միշտ քիչ էր ցույց տալիս, բայց յերբ կառուցում էր գործարանը կամ նրա մի մասը, նախատեսած գումարը չէր բավականանում և նա այդպիսի դեպքերում անպայման հանում էր գլխից գլանակը, վառում ու, խորը ներս տանելով նրա ծուխը, բացականչում.

— Ախր այս ի՞նչպես յեղավ, է՞:

Այդ դեպքում նա միշտ հիշում էր ուսանողությունը: Նրա հարուստ վաճառական հայրը ամեն ամիս նրան վորոշ գումար էր տեղափոխում, սակայն 12 տարի առանց բացառության ուսանողության ժամանակ ապրուստի համար ստացված գումարները ծախսում էր յերկու և ամենաշատը յերեք որում, իսկ հետո, յերբ գրպանները դատարկ վերադառնում էր սենյակը, միշտ հարց էր տալիս իրեն. «Ախր ես ի՞նչպես յեղավ, է՞»: Ու այն ժամանակ էլ հանում էր գլանակը ծխելու, բայց շատ դեպքերում գլանակ էլ չէր ունենում:

Գործարան, զավոդ, էլեկտրական, ջրանցքներ, երկաթուղիներ շինելու մեջ Աղասի Աբրամիչը մեծ

հմտություն էր. նրա համար միևնույն էր, թե ում համար կկառուցի և վորտեղ կկառուցի, միայն թե կառուցի: Բայց յերբ գործարանի կողքին կառուցում էին բանվորական շեն, գրադարանի, բաղանիքի, մանկամուրի և մանկապարտեզի համար շենքեր, նա շատ ջղայնանում էր: Յեթե կարողություն և ուժ ունենար, նա ամեն կերպ կաշխատեր կասեցնել, խանգարել նրանց կառուցման նախագծերն ու աշխատանքները: Այդ շենքի վրա ծախսած նյութերը նա կորած, իզուր տեղը վոչնչացած էր համարում: Սակայն վերևից կոճակները շատ պինդ էին հուպ տալիս և Աղասի Աբրամիչը վոչինչ չէր կարողանում անել:

Մի աչքի ընկնող կողմ էլ ուներ նա. չափազանց վիրավորվում էր, յերբ նրան նկատողություն էին անում իր բացերի, աշխատանքի թերությունների համար, կամ յերբ գրում էին նրա մասին գործարանի կառուցողները պատի թերթում: Նա զայրացած դիմում էր ամենարարձր մարմիններին և միշտ իր հայտարարության մեջ գրում էր, վորպեսզի թույլ տան իրեն արտասահման անցնի: Սակայն, յերբ հանգստացնում էին նրան, նա վերադառնում էր դրասենյակ, իր յերկար վոտերը սենյակում մի քանի անգամ յետ ու առաջ գցելով, վրդովված զբոսնում էր. յեթե նկատողությունը ճիշտ էր լինում, շուտով մոռանում էր վրդովմունքն ու նորից կպչում աշխատանքի:

Մի քանի հետ միայն Աղասի Աբրամիչը չէր կարողանում հաշտվել: Անհատը վոչինչ էր այս յերկրում. ամեն ինչ պետք է վճռվեր կոլեկտիվի ցանկությամբ: Այս բանը նրան զարմացնում էր: Սակայն, յերբ հաշիվ էր անում իր մտքում մի քանի տարվա աշխատանքի փորձը, զգում էր, վոր կոլեկտիվը միշտ ճիշտ է բնորոշում ամեն ինչ, իսկ անհատը վորքան

եվ պատրաստված է լինում, այնուամենայնիվ սխալվում է։ Մինչև այժմ նա ծանոթ էր միայն մի փիլիսոփայության հետ.— ամենաուժեղ մարդը նա է, ով զինված է գիտությամբ, տեխնիկայով, իսկ այժմ այդ փիլիսոփայությունը ժխտում էր, ամենազիտունը չեթե մենակ է, ուժեղ չէ, ամենաուժեղը զիտակից կոլեկտիվը, մասսան է։ Աղասի Աբրամիչը զարմանում էր, վոր 22 տարի սովորել է դպրոցներում, բայց այդ մասին բան անգամ չի լսել։ Ցեվ նրա մտապատկերների մեջ բոլորը խառնվում, շուռ էին գալիս. կարծես այն ամենը, ինչ վոր նա գիտեր, ինչ վոր ձեռք էր բերել, չափազանց մեծ աշխատանքով ու դժվարությամբ խառնվում էր ու անպետք էր դառնում այս աշխարհի համար։ Ու զգում էր Աղասի Աբրամիչը, վոր ինքը սարսափելի կերպով փոխվում է։ Ժամանակը փոխում էր նրան և դեռ ելի պիտի փոխի։

Միհրանն ու Լենան կարեցին Աղասի Աբրամիչի մտքի թելը։

— Ի՞նչ ես խորասուզվել, հարցրեց ժպտալով Միհրանը։

— Ինչպես տեսնում է, ընկե՛ր Միհրան, բանվորաշենը մեզ հարյուր հազարից ավելի յե նստելու,— խոժոռեց իր աչքերն Աղասի Աբրամիչը։

Միհրանը ժպտաց։

— Բա եղ ի՞նչպես եյիր կազմել նախահաշիվը։

— Նախահաշիվը ճիշտ եյի կազմել, սակայն մենք ավելացրինք սենյակների քանակը, նյութեղենները թանգացան, վորոշ մասը փչացած դուրս յեկավ, վորոշ չափով էլ յես եյի սխալվել։ — Ե՛հ, ընկե՛ր Միհրան, յես սկզբից դեմ եյի, վոր բանվորաշենը... հետո կարող եյինք կառուցել։

— Ելի հին պատմությունները եք կրկնում, Աղասի Աբրամիչ, բանվորաշենն ու գործարանը պետք է ավարտել միասին։

— Ցերկաթե ձողիկներն այսոր ստացա՞ք։

— Այո՛։

— Իսկ համապատասխան քանակությամբ ադյուս ունե՞նք։

— Վաղվանից 10 բանվոր ավելացել են, հարկավոր է ադյուսի քանակությունն ութից մինչև տաս հազար ավելացնել, իսկ յեթե չկա ադյուս, հարկավոր է այնտեղից կոճակները հուպ տալ։

«Այնտեղից» խոսքը Աղասի Աբրամիչն արտասանում էր մի չտանձին պաֆոսով և հանդիսավորությամբ։

Լենան, մահուդի գործարանի կոմբինատի քարտուղար Սուրենը և գործարկոմի նախագահ Դավիթը քաշվել եյին սենյակի մի անկյունը։

Ամենից բարձր խոսում էր Սուրենը։ Խոսակցության ժամանակ նա ամրամրացնում էր իր չեկ գլուխը, մի ձեռքը գրպանում, մյուս ձեռքը տատանելով ոդի մեջ, ինչ-վոր բան էր համոզում Լենային և Դավթին։ Միհրանը չէր լսում խոսակցությունը, սակայն մոտավորապես հասկանում էր նրանց վեճի եյությունը։

— Վերակառուցում, վերակառուցում... Ի՞նչն ենք վերակառուցում, կենցաղը մենք վերակառուցո՞ւմ ենք,— դեմքը ծռմռելով ու հեգնորեն, զսպված զայրակոտությամբ մեջ նետելով իր հայացքը, բացականչում էր Դավիթը Սուրենի վրա։

— Կենցաղն իհարկե վերակառուցում ենք։

— Հապա քո անհատական կյանքում, քո ընտանիքում դու ի՞նչ փոփոխություն ես նկատում, ի՞նչն է

այնտեղ վերակառուցված,— կտրեց Սուրենի խոսքը Լենան։

— Իմ ընտանիքը կոմունիստի ընտանիք է, նա ապրում է մեր կյանքի համար։ Կառուցվող սոցիալիզմի յերկրում կոմունիստի ընտանիքը չի կարող դատարկարդից դատված լինել։

— Կենցաղից խոսի՛ր։ Ի՞նչ տարբերություն կա քո նախկին և այժմյան ընտանիքի մեջ, հնի և այսպես կոչված նորի մեջ։

— Ի՞նչ տարբերություն, չափազանց մեծ տարբերություն։

Սուրենը տարօրինակ ջղայնությամբ բռնեց Լենայի և Դավթի թևերից ու, մի քանի քայլ անելով դեպի պատուհանը, մատով, նորից փեղկը բացեց ու մատը մեկնեց դեպի բանվորաշենի բարձրացող պատերը։ Լուսնի լույսը կարեց նրա դեմքը, վոր գիպսի արձանի նման քարացել եր Դավթի և Լենայի առաջ։

— Նայեցե՛ք բանվորաշենին, նրա պատերը բարձրանում են մահուդի գործարանի կողքին, նոր գործարանի և բանվորաշենի հետ բարձրանում է նոր կենցաղը։ Ով կույր է, կարող է մոտենալ և չոչափել այդ պատերը։

— Այդ նոր պատերի ներսն ստրկաբար ճմլվելու յե կրկին ինձ նմանների սիրտը, կապվելու յեն նրանց վոտերը ծնվող մանուկների աղաղակներից։ Ձեզ հետ հավասար ազատ կյանք այդ պատերի մեջ ես գոյություն չի կարող ունենալ։

— Այո՛, այո՛, յես ես համոզված եմ, վոր այդ պատերի մեջ կնոջ համար հավասար ու ազատ կյանք գոյություն ունենալ չի կարող,—վրա բերեց Դավիթը Լենայի խոսքերին։

— Ռոմանտիզմ, տարերքի մատնված դատողություններ, անհատականություն, մեր ուժերի թերագնահատում և ուրիշ վոչինչ,— համոզված չեչտով պատասխանեց Սուրենը։

— Իսկ քո բայլևիկյան ռեալիզմը, ընտանիքը, յերեխաները, վալասներն ու ընտանեկան հոգսերը, հրեն, դու կրկնում ես նրա խոսքերը։

Լենան ձեռքը մեկնեց դեպի Միհրանը։ Միհրանը վեր կացավ տեղից, իսկ Աղասի Աբրամիչը, ճակատի կնճիռները խառնված, նայում եր դեպի Լենան։ Բանվորաշենի մեջ ելի ընտանիքը նույնն է լինելու, դու ելի յերեխաներ ես ծնելու, յերեխաները ծծելու յեն մայրերի ստինքները, սա յե քո բայլևիկյան ռեալիզմը։

— Այո՛, բայց բանվորաշենի շնորհիվ դու կարող ես բոլորովին ազատ լինել ընտանեկան հոգսերից և նրվիրվել հասարակական աշխատանքներին։

Վիճող ընկերներն առաջ չարժվեցին դեպի իրենց մոտեցող Միհրանը, վորն արդեն հասկացել եր վեճի եությունը։ Նա միայն ժպտաց, ապա բոլորը միասին դուրս յեկան պրասենյակից։

Լուսինն արդեն բավականին բարձրացել եր։ Նոր կառուցվող գործարանի կիսավարտ կորպուսների պատերի ստորոտում արծաթափայլ ծփում եր Քուռը։ Հեռվում յերևում եր մի ճրագ միայն, վորի առաջ պահակը յետ ու առաջ եր շարժվում։ Ռելսերի վրա վագոնետկանները, ջրը դատարկ, վորը բարձած թիթեղյա ձողերով և խողովակներով, քարացած կանգնել եյին։ Զկային այն մարդիկ, վորոնց ներկայությունը չունչ պետք է տար այդ վագոնետկաներին։ «Մի որվա աշխատանք և կորպուսներն ելի մի մետր կր-

բարձրանան»,— մտածում էր Միհրանը, չենքի կողմը նայելով։

Դավիթը, Լենան ու Սուրենը դեռ վիճում էին մթության մեջ, քայլելով յերկաթե ճողերի, ցեմենտի, շաղախի և քարերի կույտերի արանքով։ Միհրանը մթության մեջ կանգնեցրեց նրանց, բացականչելով.

— Կենցաղի մասին զգույշ, զգույշ և ելի զգույշ, կենցաղի բոլոր բարեփոխություններն անհատական դույն են ստանում. մեր ձգտումն է աշխատել մարդկանց վերակառուցել այնպես, որ նրանք մտածեն միևնույն կերպ։

Բոլորը հետաքրքրությամբ լսում էին Միհրանին, նրա ձայնն անկեղծ էր, հաստատուն, խրոխտ. նրա խոսքերը «մտածել միևնույն կերպ» կրկնվում էին նրանց մտքում. ցանկանում էին տեսնել նրա դեմքի արտահայտությունը, սակայն քայլում էին մեջքները դեպի լույսը։

IV.

Փետրվարյան արևը ծուլորեն տաքացնում էր քաղաքի խոնավ մայթերը, յերբ Արշակը դուրս յեկավ ռայկոմի դրասենյակից։ Նա բարձրացրեց իր վերարկվի վզի մորթին, ծածկեց ականջները, ձեռքի թղթի կտորը մեկ ել կարդաց ու դրեց գրպանը, ստվերից անցավ դեպի արևոտ մայթն ու սկսեց արագ քայլերով առաջ շարժվել։ Ռայկոմի անսպասելի վորոշումը — կցել նրան կառուցվող մահուդի գործարանի կոմբինատին կուլտուրական աշխատանքների դեկավարման համար, չափազանց վրդովել էր նրան։ Չնայած նրա թախանձագին պատճառաբանված հայտարարություններին չիրականացնել այդ վորոշումը, վոչինչ դուրս

չեկավ, գրությունը ձեռքը տվին և ուղարկեցին։ «Ուրեմն այսպես, ուրեմն այսպես ել են անում», մրթմրթում էր նա փողոցում և յերբեմն դանդաղեցնում իր քայլերը, ուզում էր յետ դառնալ, գնալ տուն, հայտնել կնոջը, վոր իրեն կցել են գործարանին, բայց շարունակում էր ճանապարհը։ «Ինչո՞ւ ուրիշ առաջ քաշվածների չեն ուղարկում, ինձ են ուղարկում, ի՞նչ անելիք ունեմ յես գործարանում»։ Այս մտորումների մեջ զայրացած ու շեշտակի նայում էր դիմացից յեկողների դեմքին, վորը յերբեմն կպչում էր քարին, մտքում հայհոյում էր ռայկոմի պատասխանատու քարտուղարին, վորի խոսքերը դեռ կրկնվում էին նրա ականջում. «Դու մասսաներից կտրվել ես, վորպես պատրաստված ուժ ուղարկում ենք գործարան և պետք է արդարացնես քեզ վրա դրված պարտականությունները»։ Այս խոսքերը մեխի նման ծակում էին Արշակի սիրտն ու նա հուզմունքից ավելի յեր զայրանում։

Մայթի կողքին շարված չորացած ծառերի բներին կպչելով, Արշակն իրեն մտքում հաշվում էր, թե ինչ է մնացել իր մեջ, նախկին բանվոր Արշակից ու սարսափահար մտաբերում էր ռայկոմի քարտուղարի խոսքերը. «Ամոթ է, առաջ քաշված բանվոր, կտրվել ես մասսաներից»։ Դեռ ռայկոմի քարտուղարը չգիտե Արշակի անցյալը, այդպես է վորակավորում նրան, իսկ յեթե ճանաչեր, հապա այն ժամանակ։

Քաղաքային դպրոցն ավարտելով, Արշակին 1917 թվին տարան ավտոբիական ֆրոնտը, 1918 թվին նա կեղծ հիվանդության պատճառով վերադարձավ ֆրոնտից։ Արդեն կատարյալ յերիտասարդ էր դարձել, մազերը գանգրացել, խտացել էին, սպիտակ լայն ճակատից ուղիղ դեմքով իջնող քթի տակ փայլում էին սև ու խիտ բեխերը, թիկունքը լայնացել էր, աչքերը փայ-

լում էին կենսալից ժպիտով։ Նա վերադարձավ Բաքու իր կնոջ հետ, որը թոչկուհի էր Ֆրունզում, և իսկույն մտավ մեխանիկական գործարան աշխատելու։ Շուտով նա մի զավակ ունեցավ, հետո յերկրորդը։ Դժվար էր դրությունը, ինքն էլ յերեխաներ չէր սիրում. թողեց այդ կնոջը, յերեխաներին, յեկավ Թիֆլիս։ Այստեղ կրկին մտավ մեխանիկական գործարան. նա միշտ խուսափում էր այլ աշխատանքից և անպայման ձգտում էր գործարան մտնել։ Նա գտնում էր, որ կարող էր առաջ գնալ, մարդ դառնալ միմիայն գործարանի միջոցով, միմիայն և միմիայն. ուստի նա ամուր կառչում էր գործարանին, որպես սարդը ցանցին։ Արշակը 1921 թվին արդեն կուսակցության թեկնածու էր, յերկրորդ անգամ ամուսնացավ, մեկ յերեխա ունեցավ, որին նա կամենում էր փողոց նետել։ Կինը չհամաձայնվեց այդպիսի դաժանության, յերեխան մի քանի ամսական դառնալուց հետո, Արշակը թողեց կնոջը։ Ցերբորդ կինը վախճանվեց ծննդաբերության ժամանակ, չորրորդ կնոջը 7 ամսական հղի թողեց, հեռացավ։ Այժմ Արշակն ապրում էր հինգերորդ կնոջ հետ և ապրում էր, որովհետև նա մշտական համաձայնություն էր տվել Արշակին յերեխա չունենալու։

Արշակն այնպես տարավ գործը, որ շուտով նրան գործարանից առաջ քաշեցին։ Աշխատում էր արհեստակցական միության կուլտուրաժնում, որպես հրահանգիչ, միևնույն ժամանակ սովորում էր համալսարանում, գրում էր և այլն։ Փառացի կերպով փոշընչով չէր զբաղված։ Ամեն կողմ ընկնելով, փոչ մի բան չէր կարողանում կատարել և որին անց էր կացնում պարապության մեջ, ժամանցելով այս կամ այն

որիորդի կամ տիկնոջ հետ, որոնք գայթակղվում էին Արշակի գեղեցկությամբ։

Արշակը հիշելով այս ամենը, սարսուռ զգաց. «այսպիսի այլանդակ կենցաղով բանվոր յերևի չատ հազվադյուտ է. բայց ո՞վ է իմանում. իհարկե վոչ վոք»։ Նա լսեց դիմացի մայթի վրա կանգնած ծխախոտ վաճառողի ձայնը, կանգ առավ, նայեց, անցավ մյուս մայթը, մի տուփ ծխախոտ վերցրեց ու կանգնեց տրամվայի կայարանի առաջ։ Նա հաղիվ տեղ բռնեց մոտեցող վագոնի մեջ ու կրկին ընկավ մտքերի ծովը։ «Ձեմ ուղում գործարան։ Բանի ուժո՞վ են ուզում, ի՞նչ է»։ Վագոնի կոնդուկտորն արդեն նրա կողքին էր և, ձեռքը մեկնած, փողի յեր սպասում, սակայն Արշակն ակնապիշ նայում էր վագոնի յետևը մնացող տներին ու փողոցին և չէր լսում կոնդուկտորի ձայնը։ Արշակը ձեռքը տարավ գրպանը միմիայն այն ժամանակ, յերբ կոնդուկտորը տոմսերի արկղիկը դեմ արեց ուղղակի նրա քթին։

Քաղաքի ծայրում տրամվայը կանգ առավ ուղղակի նորակառույց գործարանի առաջ։ Արշակն իջավ ու քայլերն ուղղեց դեպի գործարանի բակը, նա իսկույն դրասենյակ չմտավ. ցանկացավ դիտել շուրջը, կառուցումները, մոտեցավ գործարանի ծայրին, Քուռ գետի բարձունքի վրա յերկաթգծի մոտ կանգնած անթիվ վագոնետկաներին, որոնք բեռնավորված էին ցեմենտի տակառներով, յերկաթե ռելսերով, տախտակներով։ Ամեն մի վագոնետկան հրում էին յերկու բանվոր, հենելով վոտերը յերկաթգծի չպահներին։ Արևի ճառագայթների տակ փայլատակում էին գործարանի պատերի վրա աշխատող բանվորների գործիքները։

«Այո՛, դեռ վոչինչ չկա, գործարանն էլ պատրաստ չէ, կուլտ-կրթական աշխատանքներ են պահանջում»:

Ամեն մի վագոնետկան անցնելու դեպքում, բանվորները վղները թեքած կասկածանքով նայում էին Արշակին, վորը զարդարված եր վոտից մինչև գլուխ: Կասկածանքով եր նայում նաև պահեստի առաջ կանգնած պահակը:

«Գուցե ինձ լրտեսի կամ չարագործի տեղ են դնում» մտածեց Արշակն ու յետ դարձավ դեպի գործարանի բակի մուտքը, զգալով, վոր այդտեղ կանգնել և դիտելն անհարմար է: Հենց նոր եր հասել մուտքին, յերբ յետևից վոչու ամպ բերող ավտոն կանգ առավ և յերկու անձանոթ իջնելով, արագ քայլերով ուղղվեցին դեպի գործարան:

— Ո՞վքեր են այդ ընկերները,— հարցրեց Արշակը պահակին:

— Գործարանի դիրեկտորն է և կոմբջիջի քարտուղարը:

Արշակն իսկույն քայլերն ուղղեց դեպի դրասենյակ: Դրասենյակը նրան շատ դուր յեկավ, մեկ՝ այնտեղ շատ մաքուր դրասեղաններ կային, յերկրորդ՝ առաջին իսկ սեղանի մոտ նստած ծերունին, վորին Սուլիկ եյին կանչում, սիրալիր կերպով ընդունեց Արշակին, նստեցնելով իր կողքի փափուկ բազկաթոռի վրա: Մինչև կոմբջիջի քարտուղարի դալը, Սուլիկը դրուցում եր Արշակի հետ:

— Շատ ուրախ ենք, վոր ձեզ նման կուսակցական ընկերներին են ուղարկում մեզ մոտ կուլտուրական աշխատանքները կազմակերպելու. մեր աշխարհում ամեն ինչ պետք է հիմնովին փոխվի, կուսակցությունն այդպես է պահանջում: Բայց այստեղ թուլամտրթ մարդիկ շատ կան, վորոնք դեմ են այդ փոփոխություններին; վորոնք ծաղրում, թերագնահատում են մեր ուժերը, ընդունակությունները: Տեսե՛ք, ընկե՛ր ջան, վորպես նոր մարդ, յես զգուշացնում եմ ձեզ: Դուք հիմա լիհարկե կզարմանաք, թե ինչու ես ծերունին հենց առաջին հանդիպած բոպեյից իմ գլխին ավետարան է կարդում, սակայն յես հին մարդ եմ, գործը գիտեմ, ձեր դեմքից էլ յերևում է, վոր դուք աղնիվ կուսակցական եք, պետք է միշտ ինտրիգներից զգույշ լինել: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ յեն այստեղ ուժեղ մարդիկ ուղարկում կուսակցության կողմից. վորովհետև այստեղ նեխված տարրեր կան և հարկավոր է վոչնչացնել դրանց:

Լսում եր Արշակը Սուլիկին և գլխով դրական նշաններ եր անում, նրա ներսում դեպի գործարանն ու բանվորներն ունեցած տհաճությունները ավելի ծավալվում, խճճվում եյին:

— Թո՛ղ ձեզ չթվա,—շարունակում եր փսփսոցով ծերուկը,— վոր այստեղ դժվար է աշխատել. վո՛չ, այստեղի դեկավար ընկերները չափազանց պատրաստված և աչալուրջ մարդիկ են, նրանց հետ և նրանց աջակցությամբ հեշտ է գործ կատարել:

Ծերուկը մեջքը կորացրած և, ծխախոտի ծուխեց դեղնած բեխերն ուղղելով, ցանկանում եր շարունակել խոսակցությունը, բայց սենյակի ծայրից մոտեցող դրասենյակի աշխատակիցներից մեկը խանգարեց: Քարտուղարն արդեն յեկել եր: Արշակն անցավ բոլորի սեղանների առաջով: Արդեն ամբողջ դրասենյակի ծառայողներն իմացել եյին, վոր իրենց մոտ կուլտ-կրթական աշխատանքները ղեկավարող նոր ընկեր է յեկել: Յերբ Արշակը հըպարտ ու համարձակ քայլերով անցնում եր դրասենյակի միջով, բոլորը ժպտադեմ հայացքներով նայում

եյին նրան, իսկ նա նրանց արտաքուստ պատասխանում եր սառն ինքնաբավականությամբ։ Արշակը նստեց Սուրենի սեղանի առաջ դրված աթոռին և հանեց իր գրպանում գտնվող թղթի կտորը։ Սուրենն, առանց նայելու այդ թղթին, ասաց.

— Ցեռ արդեն գիտեմ ձեզ, ինձ արդեն ծանոթացրել և հրահանգել են ձեր կատարելիք աշխատանքների հետ։ Ինչպես տեսնում եք, գործարանի կառուցումը շուտով կավարտվի։ Այժմ մեր տրամադրության տակ կան բավականին թե՛ կառուցող և թե՛ հենց մահուզի գործարանում աշխատող բանվորներ, վորոնց մեջ անհրաժեշտ է ակտիվ քաղաքական – կազմակերպչական աշխատանքներ տանել։ Մեր կոմբջիջի ադիտ – մասսայական բաժնի ղեկավարությամբ, գործարկոմի կուլտհանձնաժողովի և ձեր աջակցությամբ ցեռ հույս ունեմ, վոր մոտ ապագայում մենք որինակելի աշխատանքներ կկսենք մեր բանվորների մեջ։ Այսոր կարող եք ծանոթանալ գործարանի և բանվորների հետ, վաղը կազմեցե՛ք ձեր աշխատանքների ծրագիրը և կանցնեք աշխատանքի։ «Հրամայելն սկսեց արդեն։ Ծրագի՛ր, ի՞նչ ծրագիր, ցեռ կյանքում իմ անելիքների համար ցերբեք ծրագիր չեմ կազմել»։

— Այսոր և վաղը ինդրում եմ, թույլ տաք, վորպեսզի ցեռ ծանոթանամ շրջապատի, բանվորների և աշխատանքի պայմանների հետ, հետո հեշտ է, կմտածենք,— պատասխանեց կեղծ հավատարմությամբ Արշակը, հույս ունենալով, վոր մի կերպ դեռ ելի կարող է պոկվել այդ դժոխքից։ Սուրենն առաջարկեց Արշակին իր հետ շրջել աշխատանքները դիտելու և աշխատակիցների հետ ծանոթանալու։ Գործարանի ճաշարանում Սուրենն Արշակին ծանոթացրեց Լենայի հետ, վոր յեկել եր կանանց ակտիվի հետ խորհրդակցելու։

Կարճ ժամանակամիջում Արշակը տեսավ և համոզվեց, վոր փոքրիկ տափարակի վրա, ուր բարձրանում եյին գործարանի ու բանվորաշենի կորպուսները, հսկայական աշխատանք եր կատարվում։ Իսկ այդ մասին նա վոչինչ չգիտեր։ Գուցե քաղաքի մյուս ծայրում ել են գործարան կառուցում, իսկ նա չգիտե։ Իր քթի տակ, իր քաղաքում, վորտեղ նա ծնվել և սնվել է յերեսուն և վեց տարի, հեղափոխություն է կատարվում, իսկ նա չգիտե։ Գործարանի կառուցումների աղղեցությունն ու տպավորությունն այնքան մեծ եյին, վոր այժմ նա այլևս չեր հետաքրքրվում գործարանից պոկվելու մտքին։

Գիշեր եր արդեն, յերբ նա գործարանից տուն վերադարձավ։

V.

Բանկոոպի կաթը բաժանող սայլակի փողի ձայնը արթնացրեց Լենային։ Միհրանը չնայած արդեն վաղուց եր ինչ դաղդյահի մոտ չեր աշխատում, սակայն միշտ վեր եր կենում շչակի հետ։

Այսոր Միհրանը պառկած եր, պառկած եր անշարժ, վոտերը մեկնած, վերմակը դլխին քաշած, քարացած։ Զարմանալի յեր։ Ինչո՞ւ։ Շուռ գալով մյուս կողմի վրա, Լենան ավելի պատեհ համարեց լռել։ Աչքերը հառած մահճակալի կողքի պատից կախած գորգի նկարներին, նա մտքի մեջ դասավորում եր այսորվա իր անելիքների ծրագիրը։ Առավոտն անցնելու յեր ծբխախոտի, քաղցրավենիների և տեկստիլ գործարանները, ժամը յերկուսին վարչության ժողովում զեկու-

ցելու յեր կանանց կենցաղը բարելավելու աշխատանքների մասին, յերեկոյան բարձր տիպի մարքսիստական խմբակի վերջին դասն եր, ավարտական փաստը, պետք է անպայման ներկա լիներ։ Անելիքները շատ եյին, Լենան ջղայնաբար շուռ յեկավ անկողնում, վերմակը բարձրացրեց, նորից քաշեց վրան, վերմակի ծայրը դիպավ մահճակալների արանքում գտնվող սեղանի վրա դրած դրքին, դիրքը վայր ընկավ աղմուկով։ Լենան կարծեց, թե Միհրանը կարթնանա, հայացքը դեպի Միհրանի մահճակալը թեքած, նա դիրքը բարձրացրեց, սակայն Միհրանն աղմուկից չշարժվեց տեղից։

Զարմանալի յեր։ Խմե՞լ է, ինչ է, ի՞նչպես խորն է քնել։ Նա վեր կացավ անկողնից, կիսամերկ վոտերն ու կուրծքը ծածկելով թափանցիկ դիշերանոցի փեշերով, ուղեց մոտենալ անկողնին, բայց անհարմար զգալով, ցածր ձայնով գոչեց.

— Միհրան։

Միհրանը յետ ձգեց վերմակը, վորի տակից յերեվաց սպիտակ բինտերով փաթաթված նրա գլուխը։ Լենան, սարսափելի ճիչ արձակելով, դուրս թռավ մյուս սենյակը։

— Ի՞նչ հիմարություններ ես անում, յերեխանները վախեցան,— ներս ընկավ հարևան սենյակից մայրը, հանդոտացնելով Լենային։

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել նրան, մա՛յրիկ։

— Վոչի՛նչ, առանձին վոչինչ, այտը փոքր ինչ ջարդվել է. յերեկ, ժամի 5-ին, աշխատանքները դիտելու ժամանակ գործարանի յերկաթե սյուներից մեկը հանկարծ վայր է ընկել և չանդրել է աջ այտը. վտանգավոր վոչինչ չկա։

Յերեխաները վազելով մոտեցան սարսափած մորը, տատիկը նրանց ձեռքից բռնած, յետ տարավ իրենց սենյակը և ուղարկեց յերկուսին էլ դպրոց։ Յերբ Լենան մտավ կրկին ննջարան, Միհրանն արդեն նստած եր անկողնում։

Նրա գլուխն ամողջովին փաթաթված եր ոսպիտակ փաթեթով, նման իսկական ձնե մարդու մեծ գլխի, վորի վրա չորս սև կետ եր նշմարվում միայն, քիթը, բերանը և յերկու աչքերի ծակերը։ Լենան, ամուսնու մեջքը բռնելով, նստեց նրա կողքին և չոյելով բացականչեց.

— Ի՞նչ է պատահել քեզ, Միհրան, այդ ի՞նչ է պատահել։

— Մի՞թե ցավում ես։

— Վո՞ւրտեղդ է ջարդվել։

— Դեռ վոչ մի տեղս, սի՛րելիս, միայն քերծվել է, ուրիշ վոչինչ։

— Խենթ մարդ, ինչո՞ւ, յերբ գիշերը յեկար, ինձ չարթնացրիր։

— Արթնացնե՞լ, սակայն ի՞նչպես, յերբ դու այստեղ չեյիր. այնքան ուշադիր ես դեպի ինձ, վոր չես նկատել նույնիսկ, վոր ամուսինդ տանն է։ Ձանձրացել ես, ձանձրացել, Լենա։

Միհրանը հանդարտ պատկեց անկողնում։ Լենան, հայացքը չհեռացնելով նրանից, սկսեց հագնվել։ Նրա սրտի մեջ արձագանքեց Միհրանի ձայնը—«ձանձրացել ես». իրոք կարծես ձանձրացել եր և յեթե այժմ ճիչ արձակեց Միհրանին տեսնելով, դա վոչ թե սիրուց, այլ խղճահարվելուց եր։

Միհրանը նույն հանդարտությամբ չարունակեց խոսել։

— Հասարակական աշխատանքների հետ դու յերբեք չպիտի մոռանաս յերեխաներին. դու նույնիսկ չես սիրում յերեխաներին, յես այդ նկատել եմ: Ինչպես կարող ես սիրել քո ընկերներին, շրջապատողներին կամ ուրիշի յերեխաներին, յերբ քոնին չես սիրում, խոստովանվի՛ր, ճի՞շտ եմ, թե՞ վոչ:

— Իսկ մի՞թե մենակ յես եմ, մի՞թե յես մենակ եմ, չե՞ վոր բոլորն են այժմ այդպես:

— Բոլո՞րը, — քմծիծաղ տվեց Միհրանը, — վո՛չ, այդպես են անում նրանք, վորոնք քեզ նման են հասկանում կնոջ ազատությունն ու հավասարությունը, յերկաթե ղրնդուն որերից չլացողները, վորոնք ծռում են իրենց մեջքը հեղափոխությանը և ընտանիքին ծառայելու դժվարությունների առաջ:

— Իհարկե, կամ մեկին պետք է ծառայենք, կամ մյուսին:

— Վոչ յերկուսին էլ, քանի վոր քաղաքացիական կռիվ չկա:

— Անհնարին պահանջ է դա, վոչ հեղափոխականի պահանջ:

Ու դուռը կրնկի վրա ամուր զարկելով, դուրս յելավ Լենան տնից փողոց:

VI.

Գարնանային թարմ ողի բուրմունքը հուզում էր Լենային: Վոսկեվառ արևը թափվում էր ծառերի բողբոջակալ ճյուղերի արանքից: Գետնից արագությամբ զոլորշի յեր բարձրանում: Թփից թուփ տարկու թպրտոցով թռչող ճնճղուկների ատմուկն ականջ էր խրացնում: Յերկնքի կապույտը սառն էր, մաքուր ու ժպտուն: Զգացվում էր, վոր բնությունը զարդարվելու պատրաստություն էր տեսնում, իսկ մարդիկ ուրախանում եյին դրանով:

Այն ծառուղին, վորի միջով այժմ անցնում էր Լենան իր մտքերի մեջ ամփոփված, կարծես փոխվել էր: Տարիների ընթացքում քանի անգամ է անցել Լենան այդ ծառուղով, ինչքան մտքեր ու տրամադրություններ են անցել այդ ծառուղու միջով Լենայի հետ: Ներկան, յերբ նա համեմատում էր անցյալի հետ, նրա սիրտը լցնանում էր, առանձին բավականություն էր զգում նա. անհոգ, անվերադարձ մանկություն կար այդ անցյալի մեջ, վորը մեռնում էր Լենայի սրտում քաղցր յերգի ձայնի նման: Ինչո՞ւ յեր հենց այսոր հիշում իր անցյալը, ինչո՞ւ յեր իր դառն ու անմխիթար անցյալը միշտ այդ ծառուղու մեջ հիշում: Ինչո՞ւ. պատասխանը նա գիտեր, բայց չեր տալիս, չկամեր մտքերը և արագացնում իր քայլերը:

Ծխախոտի գործարանի շեմքին, ռայկոմի հրահանգչուհի Մարթան սպասում էր Լենային: Այս անգամ Մարթան Լենային ավելի տգեղ թվաց: Կարծես նրա այտերն ավելի եյին դուրս ցցվել, իսկ բեխերն ավելի խտացել: Իրար թևի մեջ մտնելով, նրանք մտան գործարանի բակի ծայրում գտնվող կարմիր անկյան շենքը:

Դեռ կարմիր անկյան շեմքը չհասած, գործարանի շչակը սուլեց: Առաջինը կարմիր անկյունը վազեց կին-կազմակերպչուհի Աստղիկը: Ռադիոն բարձրացրել էր իր գոռոցը, բայց վորովհետև պետք է խորհրդակցեին, Աստղիկը հանեց ելեկտրոխցանը. դա նշան էր, վոր խոսակցությունները դադարեն, ժողով է լինելու: Բոլորը լռեցին: Ժողովը բաց արեց կուսշրջկոմի կինբաժնի վարիչը: Լենան համառոտ կերպով տեղեկացրեց, վոր բանկոոպի վարչությունը վորոշել

և գործարանում ճաշարան բանալ, գործարանի մանկամսուրի կաթի և ճոթեղենի բաշխումն էլ իր վրա վերցնել և բանվորուհիներին յերկարատև վարկով ապրանք բաց թողնել, յեթե իհարկե բոլորը լրիվ փայավճարներ կմացնեն: Այնուհետև շրջկոմի կինբաժնի վարիչ Մարթան գեկուցեց մի շարք կազմակերպչական հարցերի շուրջը, յերբ շչակը նորից սուլեց, նրանք ստիպված եյին ժողովը փակելու: Մի քանի բանվորուհիներ սիրտ առան և մտերմաբար մոտեցան Լենային, Մարթային և Աստղիկին, ձեռքերը միմյանց ուսերին դրած, խորամանկ հայացքներ ձգելով Լենայի հագուստին ու ձեռքի պորտֆելին, սկսեցին հարցեր տալ նրան:

— Ասում եք՝ գիտություն սովորենք, կուլտուրական դառնանք, թատրոն, կինո հաճախենք, գրադարաններ գնանք, բա յերեխաներին ի՞նչ անենք, յերեխաների՞ն:

— Բա ո՞ւր են ձեր խոստացած մսուրները: Գալիս, գնում եք, իսկ մեր տներում դեռ մսուրներ չկան:

— Գործարանում հո կա:

— Մենակ գործարանով բան կլի՞:

— Բանվորական տներում, տներում:

Մարթան և Լենան նայեցին միմյանց յերեսի, կարծես վորոշելու, թե ո՞վ պետք է նրանցից պատասխանի: Մարթան, ձեռքը դնելով հարց տվող բանվորուհուուսին, պատասխանեց.

— Մեր կենցաղը կբարելավվի մեր տնտեսական դրության բարձրացման հետևանքով, պետք է ամբողջ դասակարգի հետ պայքարենք մեր տնտեսության բարձրացման և վերակառուցման համար, պետք է աշխատել այսորվա մեր ծրագիրը վաղն իրականացնել, «հընդամյակն իրագործել չորս տարում», իմացե՞լ ես, — իսկ մսուրներ չուտով կունենաք: Բանվորական կոոպերացիան արդեն հատկացրել է կառուցման գումարը:

— Մինչև կառուցեն ելի մի քանի տարի կանցնի:

— Հապա մի անդամ՝, — վրա բերեց Մարթան, — մի՞թե չեք տեսնում, վոր ինչքան ուժերս պատում է, ամեն կերպ, ամեն տեղ կառուցում ենք ձեզ համար դպրոցներ, ակումբներ: Նոր չկառուցեցի՞նք մանկապարտեզը: Մենք շատ մանկատներ, մանկամսուրներ, ճաշարաններ, արհեստանոցներ, լվացարաններ ենք կազմակերպել: Այս բոլորը չե՞ վոր աշխատավոր կնոջ ազատագրման համար են: Բայց ելի դուք հասարակական աշխատանքներ չեք կարողանում տանել:

Շչակը յերրորդ անդամ սուլեց ճրվղրտուն ձայնով և բանվորուհիները, հրաժեշտ տալով իրենց կազմակերպիչներին, վազեվազ մտան գործարանի խորքը տանող միջանցքը:

Լենան ու Մարթան դուրս յեկան գործարանի բակից:

Գործարանի դռնապանն աչքերը պտտեց նրանց յետևից և քթի տակ մի բան մրթմրթաց:

— Ամեն անդամ, յերբ մտնում եմ գործարան, Մարթա, ընկնում եմ կոշմարային դրության մեջ: Միշտ ընտանիքի և յերեխաների հարցը բերում՝, դնում են առաջդ, լուծի՛ր:

Մարթան նայում եր Լենային ուշադրությամբ, նրա վրդովմունքից այլայլված դեղեցիկ դեմքի վրա տարորինակ անբավականություն եր կուտակված:

Մարթան լռում եր:

— Ինչո՞ւ յես լռում, մի՞թե մենք այժմ հնարավորություն չունենք լուծելու այդ խնդիրը:

— Շտապում ես և խճճվում թյուրիմացություն-ների մեջ։

— Չեմ շտապում. ես պնդում եմ, որ մենք վո-չինչ չենք անում։ Իլիչն ասել է, որ սոցիալիզմի կա-ռուցման համար հարկավոր է արմատապես վերա-փոխել մարդկանց. իսկ մենք ի՞նչ ենք անում, մենք կրկնում ենք այդ խոսքերը, իսկ գործնական վոչինչ չենք անում։

Մարթան այլևս չեր նայում Լենայի վրդով-մունքից դողդողացող շրթունքներին։ Նա զգում եր, որ վոգևորությունը Լենային չափազանց հեռու չի տա-նում, չցանկանալով կանանց կենցաղի մեջ փոթորկա-լից փոփոխություններ մտցնող այդ ենտուզիաստի մտքերի դեմ առարկություն անել. հանկարծ, արագու-թյամբ Մարթան, մատը դեպի Լենայի կողմը թափ տա-լով, կարծես նրա խոսքերը դադարեցնելու նպատակով, ասաց.

— Դու ժխտում ես ընտանիքը, դադարեցնում ծը-նունդը, քեզնից հեռացնում յերեխաների հոգսը։ Ի-լիչն այդպիսի բան չի ասել. ընտանիքը մեզ հարկա-վոր է նոր կենցաղի, վերակառուցվող տնտեսության, դասակարգի, մարդու և սոցիալիզմի համար։

Նրանք արդեն մոտեցել եյին յերկրորդ ծխախոտա-գործարանին։

Գործարանի մուտքի մոտ նրանք պատահեցին դի-րեկտորին, որն արդեն մի վոտով բարձրանում եր փայլուն ավտոյի վրա։ Մարթան բռնեց նրա պորտ-ֆելից։ Վերջինս, շուտ գալով, լուրջ դեմքը կնճռեց և բացականչեց.

— Խառնակիչնե՞ր, ելի յեկա՞ք։

VII.

Մարքսիստական խմբակի պարապմունքները վեր-ջացան։ Լենան նույնիսկ չմնաց ռայկոմի ագիտբաժ-նի վարիչի՝ ավարտողներին ուղղված վոգջույնը լսե-լու։ Մուտք սանդուխքներով նա իջավ դեպի փողոց։ Մտածկոտ եր և տխուր։ Հենց մուտքի մոտ Լենայի թևից բռնեց նրա մանկության ընկերուհիներից մեկը և, համարյա գրկախառնվելով, սեղմեց Լենայի յերկու ձեռքերը։ Լենան տարորինակ անտարբերությամբ պա-տասխանեց այդ վոգջույնին, թեպետ ավելի զգացված եր, քան ընկերուհին։ Մի քանի ընտանեկան տեղե-կություններ և մանկության ժամանակից դեպքեր հիշե-լով, նրանք բաժանվեցին, վորովհետև տրամվայի վա-գոնը, վորին սպասում եր ընկերուհին, կանգ առավ հենց նրանց առաջ։

Տասը տարի յեր անցել, ինչ նա չեր տեսել այդ աղջկան, վորին այժմ հաղիվ ճանաչեց։ Խարխուլ տնակներով այն փողոցի վրա եյին ապրում նրանք և քանի՞-քանի՞ յերկար տարիներ խաղացել եյին միասին, սիրել միմյանց, փորել հողը, տուն շինել, տաքա-ցել արևի տակ։ Ի՞նչքան փոխվել է կյանքը, ի՞նչպիսի սառնասրտությամբ են պատահում այժմ միմյանց։ Այն փողոցը, վորտեղ մեծացել եյին նրանք, այժմ խա-կի նման չե նախկին տեսքին։ Ամբարակ տների տեղ այժմ հսկայական շենքեր են բարձրանում, իսկ ամայի փողոցը պատռում են ելեկտրական տրամվայի գծերն ու Զագեսի մաշտերի վրայով ձգվող հատ լարերը։

«Նա հեռացավ ինձնից այն տպավորության տակ», — մտածում եր Լենան, — «վոր յես յերջանիկ եմ, ինչո՞ւ յես նրան չասի, վոր յես այնքան էլ յերջանիկ չեմ, ինչպես թվում է արտաքուստ»։

Ավտոյի ահարկու ձայնը և զանգի զուլանջները խլացրին փողոցը. բոլորը մայթերի վրայից ձգեցին իրենց վզերը հրդեհաշնչների սլացող ավտոյին նայելու. փողոցի շները կողկոնձալով փախան ու մտան պատերի տակ:

Քայլում էր Լենան դեպի տուն հրդեհաշնչների ավտոների թողած խիտ փոշու միջով, քայլում էր ու իորհում այն մասին, թե ինչպես և փոխվել ինքը: Դաղդյահի մոտ յեղած ժամանակ նա ուրիշ էր: Նրան այնտեղ չրջապատում էին իր հարազատ դասակարգի ընկերները, այն ժամանակ ամեն մի դժվար բոպեյին այդ ընկերներն ոգնում էին Լենային, գտնում էին յելք: Իսկ այժմ ո՞ւմ մոտ գնա, ո՞ւմ դիմի: Ո՞վ պետք է աջակցի Նրա մտքում մեխված վճիռն իրագործելու ժամանակ, չէ՞ վոր այդ վճիռը դատարկ բան չէր: Յեվ Նա զգում էր տարորինակ մենակություն, վորբություն, մատաններից կտրված մարդուն հատուկ անհատական դեգերումներ, ճգնում էր իր գիտցածով, իր կարողությամբ վճռել իր առաջ դրված խնդիրները, սակայն Նրանք Լենային շատ ծանր ու բարդ էին թվում:

«Մենակ ի՞մ գանգն է այսպես փոթորկում, թե՞ ելի շատ մարդիկ կան այս փողոցներում և տներում, վորոնց գանգը դրաղված է նույն խնդիրներով», հարց էր տալիս իրեն Լենան: Նրա կողքից լայն փողոցով հրե գնդերի նման սահում, գլորվում էին կայծակի արագությամբ տրամվայի վագոնները, մարդիկ խռնվում էին կաթնագույն լուսով վողողված խանութների առաջ, իսկ Լենան շարունակում էր իր տարտամ ճանապարհը:

Լարված միտքը յերկու բանակների յեր բաժանել իր կարծիքները՝ «կամ հասարակական աշխատանք, ցտեսություն ընտանիքին, կամ՝ ընտանիք, ցտեսություն հասարակական աշխատանքին»:

Նա դիտում էր իր մտքի մեջ այդ յերկու միմյանց հակառակորդ բանակները, դիրքավորում այնպես խիստ, փորպեպի նրանցից մեկին անցնելու դեպքում արդարացներ և գիտակցական բնույթ տար իր վճռին: Հենց այդ գիտակցական ձևակերպման համար էր այդքան լարում նա իր ուղեղը:

Բանվորական ակմբից լսվող լարային և փողային որկեստրների ձայնը, ակմբի ներսը հավաքված մասսայի աղմուկը, իրար յետևից ձգվող նորակառույց բանվորական չենքերը, ընդարձակ դրադարան – ընթերվորական չենքերը դրավեցին Լենայի ուշադրությունը: Նա նայեց այն կողմը, ժպտաց, ժպիտը կարճատև էր. Նա կրկին կախեց գլուխը. «միայն տներն են նոր, նրանց մեջ սմին ինչ հին է»,—կրկնեց նա մտքում և արագ քայլերով մտավ հատ բներ ունեցող ծառերով առատ այդու լայն ուղին, վորտեղից նա առավոտյան անցել էր: Այդ բոպեյին միայն նա հիշեց, վոր Միհրանը տանը հիվանդ է: Ամբողջ որը Նրա մտքումն անդամ չէր անցել Միհրանը. տարորինակ էր թվում այդ Նրան. սիրո՞ւմ էր արդյոք նա Միհրանին, թե վոչ, չէր կարողանում պատասխանել այդ հարցին: Առաջ աշխատանքի ժամանակ Միհրանի պատկերը նրա մտքից չէր հեռանում, իսկ հիմա՞, իսկի էլ չէր հիշում Միհրանին:

VII.

Սենյակի մեջտեղը դրված, լուծդներով ու թղթերով ծանրաբեռնված սեղանի մոտ իրար դիմաց նստած էին Միհրանն ու Լենան: Միհրանի ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր առաջը դրված նախագծի վրա: Լենայի դեմքն այլայլված էր, Նրա աչ-

տերը կարմրատակել էին, աչքերը խառնվել. անընդհատ յերկյուղ եր զգում իր մեջ, ճակատին թափվող մազերը ջղաձգաբար նա յետ եր քաշում, նրան գրաղեցնում եր մի միտք. «յե՞րբ հայտնի ամուսնուն իր վճռի մասին»:

Յեվ մեկիկ-մեկիկ Լենայի մտքով անցնում էին ծանոթ կանանց ու տղամարդկանց դեմքերը, վորոնց պատահել եր շրջկոմի կին-բաժնում, բանկոոպում, գործարանում:

— Ինչո՞ւ բաժանվեցիր ամուսնուցդ:

— Զգիտեմ:

Յեվ այժմ հասկանում եր նա, թե այդ ինչ բանբացատրելի «չգիտեմներ» են: «Զգի՛...տեմը» ճգվում եր նրա մտքում, նա կարծում եր, վոր տղամարդիկ են մեղավոր, կամ ուրիշ պատճառ կա այստեղ: «Զը...գիտե...մը» պատեցնում եր նրա գլուխը: Նա ցանկանում եր խոսել, շրթունքները շարժել, սակայն արագորեն բարախող սրտի զարկերից ուռչում էին նրա գեղեցիկ վզի զարկերակները, դրա փոխարեն Լենան այտին հենած ձեռքը ցած եր իջեցնում և մատները չռած քսում սպիտակ սփռոցին: Յեթե Միհրանը նայեր նրա դեմքին, անպայման կզարմանար Լենայի անհամարձակ, հուզված, տարորինակ արտահայտությունից, բայց նա չեր նայում:

— Դու յերջանի՞կ ես գործարանի կառուցման աշխատանքներով:

Լենայի մեղմ տոնը զարմացրեց Միհրանին: Նա թղթի վրայից չբարձրացնելով իր գլուխը, պատասխանեց.

— Ինչո՞ւ յես այդպիսի հարց տալիս:

—Դու վոչինչ չե՞ս ունենա, վորպեսզի յես ևս յերջանիկ լինեմ:

— Գտի՛ր այնպիսի աշխատանք, վոր քեզ վոգևորի այնպես, ինչպես ինձ իմ աշխատանքն է վոգևորում:

— Մեր պայմաններում ընտանիքի հետ կապված կինը յերբեք յերջանիկ լինել չի կարող, յերբեք իր աշխատանքով վոգևորվել չի կարող: Մեր ընտանիքում կինը չի կարող այնպես ազատ լինել, ինչպես տղամարդը. յես թողնում եմ այս ճահիճը, յես հեռանում եմ հավասար կյանք ունենալու համար:

Միհրանը ձեռքի նախագիծը դցեց սեղանին, մեջքը հենեց աթոռի թիկունքին ու զարմացած նայում եր Լենայի այլայլված դեմքին:

— Իմ վճիռը վճիռ է, — շարունակեց Լենան:

— Հավասարակշռությունը կորցրած բայլչևիկի ռոմանտիզմ է քո վճիռը, դժվարությունների առաջ նահանջող մարդու տրամադրություն, քո ցանկացած ազատությունը հիվանդոտ ազատություն է, ինչպես յերևում է, չես կարողանում քայլել մեր թափերի հետ:

Սպիտակ բինտերով փաթաթված կլոր գնդի յերկու ծակերը փայլում, կարծես կրակներ էին արձակում վրդովմունքից ու վիրավորանքից: Կործանվում եր ընտանիքը, ծանր եր այդ կործանման բոպեն և այդ պատահանատու ծանրության առաջ ընկճվում եր այնքան մեծ վոգևորություն ու տոկունություն ունեցող մարդը:

— Ազատ լինե՞լ: Հետաքրքիր է, վո՞ր տեղ է այդ ազատությունը. մի՞թե ընտանիքում ապրելով հանդերձ չի կարելի ազատ լինել, հավասար լինել:

— Տան մարդիկ կաշկանդում են իմ վոտները:

— Ճիշտ չե, դու կեղծում ես, նրանք յերբեք չեն կաշկանդել քեզ, դու միշտ ազատ ես յեղել:

— Անցյալ տարի, ամբողջ տարին կկրակրում եյի Ավրորային և ամբողջ տարին մնացի տանը: Այժմ ել հղի յեմ, չե՛մ կարող, չե՛մ կարող, չե՛մ կարող...:

Լենայի դայրացած դեմքին կնհիռներ առաջացան, նրա աչքերը լցվեցին արցունքներով ու վերջին խոսքերն սկսեց համարյա աղաղակել:

— Ձե՞ս կարող... ազատություն տենչող մարդը պետք է կարողանա՝ աղամարդու հետ հավասար լինել՝ դա չի նշանակում այլևս յերեխա չծնել:

— Ցես պետք է գնամ՝ իմ վճիռը վճիռ է:

— Ձամ հասկանում, ինձանից ես բաժանվում, յերեխաների՞ց, թե՞ մորից:

— Բոլորից, բոլորից:

VIII.

Իրիկնամուտ եր: Քոի յեռուը կիսված մշուշապատ սարերի կատարներին ձգվում եր պղնձագույն վերջալույսը:

Գործարանի բարձրացրած պատերի արևմտյան կողմն արդեն ավարտված մի հսկայական չենքի առաջ բազմաթիվ բանվորներ եյին հավաքվել: Գնացքն ուղղակի ներս եր մտել գործարանի շուրջը փռվող հրապարակը: Նրա բաց վագոնների վրայից բանվորները հարայհրոցով ցած եյին իջեցնում հսկայական ծանրություն ունեցող շղոու գլանաձև կաթսաները և առանձին հարմարեցրած անիվների վրայով ներս գլորում նորակառույց չենքի մուտքից:

Միհրանի գլուխը դեռ փաթաթված եր: Նա Ազասի Աբրամիչի հետ դիտում եր, թե ինչպես են իջեցնում այդ հսկայական ծանրություն ունեցող յերկաթե անոթները, ցուցմունքներ եր տալիս տեխնիկներին և բանվորներին:

Տեխնիկական աշխատանքների ղեկավար ինժեներ Սորինն իր հաստ շրթունքներն ամուր հպած միմյանց, կլպած ու կնճռոտած կարմիր դեմքն ա-բադրին այս ու այն կողմն եր դարձնում, մատը ցցելով վագոններից իջեցվող կաթսաների տակը: Փորը դուրս ցցած՝ նա մերթ մոտենում եր Միհրանին ու Ազասի Աբրամիչին, մերթ բանվորների մեջտեղը կանգնած տեխնիկ Խեչոյին, խաղողի հակինթների նման կանաչ աչքերն արագորեն այս ու այն կողմ պտտելով ու յերբեմն կասկածանքով նայելով Միհրանին:

— Ընկե՛ր Սորին, — կանչեց Միհրանը, գրպանից մի կանաչ թուղթ հանելով: Սորինը, փորը դուրս ցցած, արագ քայլերով մոտեցավ նրան:

— Դուք պահանջել եյիք վեց կաթսա, ցածր գոլորշի առաջացնելու ինտենսիվությամբ, իսկ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի տեխնիկական հանձնաժողովը գտել է, որ ձեր պահանջած ծավալով պղինձները գործարանին հարկավոր քանակությամբ գոլորշի չեն կարող մատակարարել. ուղարկել են ավելի մեծ ինտենսիվություն ունեցող պղինձներ: Ձե՞ զոր մենք նախագծում իսկապես ավելի մեծ պղինձներ նկատի ունեյինք. ինչո՞ւ յեք փոքր պատվիրել:

— Գիտե՞ք ինչ, ամեն մի մասնագետ կարող է վկայել, որ մեր դուրս գրած պղինձն ընդունակ կլինի միևնույն ժամանակամիջոցում արտադրել նույնքան գոլորշի, որքան Ժողտնտխորհի ուղարկածը, ել ինչո՞ւ մեծ պղնձի վրա ավելորդ ծախս անել, յես գործնականում այդ գիտեմ և կարող եմ փորձով ցույց տալ ձեզ:

— Իսկ վառելիքի քանակության մասին չե՞ք

մտածում։ Ահա Ժողտնտխորհի ուղարկած բացատրության մեջ նշված է, որ երենց ուղարկած ինտենսիվության շոգեպղինձները միևնույն քանակությամբ վառելանյութ ծախսելու դեպքում մեկ քառորդ անգամ ավելի շատ գոլորշի յեն արտադրում։

Սոբինն ուսերը վեր քաշեց, շրթունքները կրկին իրար կպցրեց, դեմքի կնճիռները ավելի ծալծլվեցին, չեկ ունքերը մի-բացան մի-մոտեցան և կմկմաց.

— Չեմ կարծում, չեմ կարծում...։

Ահագին ճռնչոցի ձայնը և բանվորների հարայ-հրոցը բոլորի ուշադրությունը գրավեց։ Վերջին շոգեկաթսան եյին իջեցնում. նրա ծանրության տակ կտրվել եր այն տախտակներից մեկը, որի վրայով պիտի սահեր կաթսան. բանվորների մի մասը լոմերով, փայտե ձողերով և ձեռքերով պահում եյին ջարդված տախտակները, մյուսները կոտրած տախտակները փոխարինում եյին նորով։ Միհրանն Աղասի Աբրամիչի և Սոբինի հետ մոտեցավ բանվորներին։ Շուտով բոլոր տախտակներն ել փոխարինվեցին, վերջին կաթսան ներս քաշեցին շոգեմատակարարման բաժանմունքը։ Բանվորներն ազատվելով գործից, շրջապատեցին յերեք ղեկավարներին և շարժվեցին դեպի գործարկոմի դրասենյակը. գնացքի շոգեմեքենան կոտրված ծղրտյուններ հանելով հեռացավ գործարանի բակից։ Սոբինը բռնեց Աղասի Աբրամիչի թևից և յետ մնալով, համարյա ուժով քաշեց նրան ու նստեցրեց նորակառույց գործարանի պատի տակ գտնվող տախտակե աթոռի վրա։

— Աղասի՛ Աբրամիչ, յե՛տ կանգնիր սատանայի ճանապարհից, շշնջում եր Սոբինը, շուրջը դիտելով ամեն ինչ քեզնից ե կախված. յեթե դու ցանկանաս, գործը գլուխ կգա։

— Ցես չեմ կարող պատասխանատվությունն ինձ վրա վերցնել?

— Լա՛վ մտածիր, ե՛, արտասահման, տարինեերով սպասում ենք այդպիսի հարմար առիթի, այժմ առիթն ինքն է յեկել մեր դուռը բաղխում. Ժողտնտխորհը, կուսակցական բարձրագույն որդանները, Մոսկվան վոչինչ դեմ չեն ունենա, յեթե մահուզի գործարանի մեքենաներ պատվիրելու համար նույն գործարանի կառուցող ինժեներները գնան արտասահման։ Իսկ դու գիտես, յես քեզ հազար անգամ եմ ասել, որ մենք այնտեղ հսկայական անելիքներ ունենք, ու յեթե դու չաջակցես իմ գնալուն, քեզ տըղերքն ուղղակի կտոր-կտոր կանեն։

Սարսափած Աղասի Աբրամիչը վեր կացավ տեղից.

— Ցեղրա՛յր...

— Ցեղրայր-մեղրայր չկա,— գոռաց նստեցնելով նրան Սոբինը,— առանց են ել բոլորը քո վերաբերմունքից վրդովված են, բոլորը քեզ համարում են «ծախված խարեբա», «խորհրդային շուն». արդեն խայտառակություն կլինի, Աղասի՛ Աբրամիչ, յեթե ես գործն ել տանուլ տանք...։ Մեղք ես, ծե՛ր ուկ, զգո՛ույշ կաց, այժմ ուրիշ ժամանակ ե, մտածի՛ր, ի՞նչ անհարմարություն, յեթե կառուցումների ղեկավար ինժեներ Սոբինը գնա Գերմանիա, Անգլիա մահուզի գործարանի մեքենաներ բերելու, չե՞ որ դա իմ ուղղակի պարտականությունն ե։ Հը՞։

Աղասի Աբրամիչը գլխիկոր լսում եր։

— Այսպես թե այնպես, յես այս գիշեր և յեթ կհայտնեմ տղերանցը, որ դու հանձն առար այդ գործը գլուխ բերելու։

— Գերմանիա, Անգլիա, լավ, բայց չե՞ որ քո ծրագիրն ե անպետք խլամներ հավաքել և ուղարկել

այստեղ, իսկ ինքդ այլևս չվերադառնաս, պատասխանն ո՞վ կտա, տղե՞րքը, թե՞ դու։ Ցեռ քեզ հազար անգամ եմ ասել, ինձ մի՛ խառնեք այդ անիծյալ մարդկանց հետ, յես խարդախություն չեմ սիրում։

— Դու չե՞ս սիրում խարդախություն, բա են ո՞վ 1916 թվին իմ ձեռքից քեզ հայտնի խարդախության համար ստացավ 5000 ռուբլի կաշառք։

— Այդ քո սարքած բաներն եյին, յես այժմ սիրում եմ կառուցել, կառուցել մաքուր, ազնիվ գործ անել։ Ինձ համար միևնույն է, ում համար եմ կառուցում. բանվորների՞, թե՞ բուրժուազիայի, սովորել եմ և պետք է կառուցեմ, այնպես, վոր գործարանն աշխատի, իսկ թե ո՞ւմ համար, այդ ինձ համար միևնույն է։

— Դու ելի նույնն ես կրկնում։ Իսկ ի՞նչ պատասխան կտաս, յերբ վաղը, մյուս որը նրանք գան և քեզանից հաշիվ պահանջեն, հը՞... ի՞նչ... Ասա՛... ինչո՞ւ յես լռում, դե՛, ա՛սա։

— Ա՛յ, կառուցած գործարանը ցույց կտամ. ի՞նչ ես վախեցնում, վատ բա՞ն է, ի՞նչ է։

Աղասի Աբրամիչը վճռական ու լուրջ դեմք ընդունեց։

— Ինչպես տեսնում եմ, դու ցանկանում ես խոշոր խայտառակություններ կազմակերպել և մեզ բոլորիս ծուղակի մեջ գցել։ Ո՞վ գիտե, գուցե նույնիսկ մատնել ես մեզ, ձերբակալել ես ուզում բոլորիս այն ժամանակ, յերբ մենք փայլուն հաղթանակներ ենք տանում մեր աշխատանքների մեջ, յերբ սրանք քայքայվում են, յերբ հենց այստեղ մեր գործարանի և մյուս բոլոր գործարանների կուսակցական բջիջները յերկու

բանակի յեն բաժանվել, յերբ խորհրդային իշխանության որերը համարված են։

—Հին պատմություն ե. ա՛յլ, ա՛խպեր, ինձ լսիր, չե՞ վոր սրանք կառուցում են, մենք ել կառուցողներ ենք, ա՛յլ, սրանց թշնամություն մի՛ անի։

Սոբինն արհամարական հայացքով վոտից մինչև գլուխ չափելով Աղասի Աբրամիչին, վեր կացավ տեղից՝ բացականչելով.

— Այսոր ժամը 9-ին կանչված ես այնտեղ, համեցե՛ք բացատրություն տալու։

IX.

Զագեսի յերկաթապատ սյունները մեկը մյուսի յետևից ցցվում եյին գործարանի դիմացի կանաչ բլուրների վրա, իսկ նրանց հանճապակե բաժակներից յելնող պղնձե կարմիր լարերը վոսկու նման փայլում եյին գարնանային արևի ճառագայթների տակ։ Վորքան մոտենում եյին այդ յերկաթակապ, թևերը յերկու կողմը պարզած հսկայական սյունները դեպի նորակառույց գործարանը, այնքան խորհրդավոր, հետաքրքիր եյին դառնում նրանք. սարյակներն ու ներկարարները թռչում եյին սյունների շուրջը, նստում եյին փայլուն, մաքուր ու ձիգ լարերի վրա և լեղապատառ թռչում կրկին, յերբ զրնգում եր սյունի վրա աշխատող բանվորի մուրճը, բանալին, կամ յերբ զլանգոցով ձգվում եր լարը։

Յերկաթապատ սյունները բոլորովին մոտեցան գործարանին. այսոր արդեն գործարանի առաջ բարձրանում եր այդ հսկա ծանրություն ունեցող սյուններից մեկը, վորի յերկու կողմը ձգված ուսերի վրայով պղնձե լարերը հեղահամբույր նաղանքով իջնելու եյին դեպի գործարան։ Գործարանի ճակատին

փակցրած յերկաթե պատվանդանը մի քանի շաբաթ ոպիտակ հախճապակե բաժակներով պատրաստ եր կուլ տալու այդ կենսատու հրեղեն լարերը։ Գործարանի դռան առաջ նստած, Արշակը հեգնական ժպիտը դեմքին նայում եր բարձրացող սյունին, դենապան Սիմոնը ձախ վոտն ավելի ամուր խփելով գետնին, յետ ու առաջ եր գնում, յերբեմն կանգ առնում ու պերանում։

— Ատում են, ընկե՛ր Արշակ, մի քանի ամսից հետո գործարանը մահուդ կհանի, հը՞։

— Զգիտեմ։

— Ինչո՞ւ չգիտես, աշխարհը գիտի, դու չգիտե՞ս։

— Աշխարհն ի՞նչ գիտի։

— Վոր գործարանը մահուդ կհանի։

— Իսկ դու հավատացա՞ծ ես, վոր կհանի։

— Վոնց թե. բա ինչո՞ւ յեն եսքան քրտինք թափում, գործարան չինում։

— Վոր չինում են, ուրեմն մահո՞ւդ կհանի։

— Զե՞ս հավատում։

— Եստեղի ինժեներների չինած գործարանը մահուդ չի հանի։

Սիմոնն ուսի հրացանի կաշին ուղղեց և, աչքերը հուսահատ կերպով չուած, նայում եր Արշակի ստվերած դեմքին. մեկը մյուսի յետևից չարված գործարանի պատերը կարծես կոտրվում, բեկբեկվում եյին նրա աչքին։

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, — լրջորեն ակնարկեց Սիմոնը, լցնելով չիբուխը թութունով։

— Գործը խարաբ ա, Սի՛մոն, չեն չինել ենպես, ինչպես հարկն ա, գործարանը բանի պետք չի։

— Բա չե՞ վոր պլանը Մոսկովումն են քաշել։

— Հենց եդ ա, ե՛... : Ասում են Մոսկովի ինժեներները դատի թարս են պլան քաշել, վոր գործը գլուխ չգա։

— Վա՛հ, վա՛հ։ Բա եդ բանը կառավարություն չի՞ իմանում։

— Կառավարությունը գլուխը կորցրել ա, ի՞նչ ա իմանում։

— Վո՞նց թե գլուխը կորցրել ա։

— Զե՞ս տեսնում, վոր կորցրել ա, բա վոր կորցրած չլինի, մենք ես որումը կլինե՞նք։

— Ի՞նչ որումն ենք, պլպլան մաշինեք ու գավոդներ ենք չինում. թե կառավարությունը բան չի հասկանում, բա ես մաշինեքը վո՞ր տեղից են գալիս, հը՞։

— Բա քաղցած մինչև յե՞րբ պտի մնանք մենք, ախր եդ մաշինեքը մեր փորի հաշվին են գալիս, ե՛։

— Զե, ա՛խպեր, առանց մաշինա մեր փորը միշտ դատարկ կմնա։

— Զե, առաջ պետք է գեղը հարստացնենք, գեղին ուշք դարձնենք, հետո գործարաններ կառուցենք։

— Զե, Ա՛րշակ, գեղն առանց մաշինի չի հարստանա. թշնամու խոսք ես ասում։

— Ա՛խ, Սի՛մոն, յես քեզ ինչպես ախպեր տղա բան եմ ասում, իսկ դու չես ուզում հասկանալ։

— Զեմ հավատում. այ կտեսնես, մաշինեքը կգան, մահուդը կգա, մեզ էլ, գեղացու համար էլ լավ կլինի։

— Զի դա, Սի՛մոն, եդ գործարանը, վոր չինել են, եդքան փողը ծախսել են, մի մտածո՞ւմ ես, բուրդ կա՞, վոր մահուդ չինենք. չկա, չկա։

— Կչինենք, Ա՛րշակ, կչինենք. Քոի աղաքը կապեցին, մահուդն ի՞նչ ա վոր։

Արշակն աչքերի սպիտակուցները պտտելով, Սիմոնին մտքում հայհոյեց ու յերեսը դարձրեց դեպի

յերկաթապատ սյուների աշխատանքների կողմը. մեկը մյուսին կոփած յերկաթե լայնանիստ հսկայական սյուներն արդեն դիք կանգնած եյին գործարանի քթի տակ: Արշակը ձեռքի գիրքը յետ ծալեց ու կարդալով հեռացավ դեպի տրամվայի կայանը: Սիմոնը մինչև դուռն ուղեկցեց նրան ու մոմռալով սկսեց դիտել մաշտի կատարը բարձրացած բանվորի աշխատանքները. բանվորը կողքի քաշ արած տոպրակից անց եր կացնում յերկաթե ձողիկների վրա մեծ հաղճապակե բաժակները: Դեռ Սիմոնը չեր կշտացել նայելուց, յերբ շչակի ձայնը լսելով, վազեց դեպի դռները՝ շինարարական նյութեր բերող ավտոն մուտքից բաց թողնելու:

Զհասած դռանը, ավտոն կանգ առավ: Հեռվից իր փայտին կռթնած, Սուլիկը մոտեցավ շոֆեր Պավլեյին, վորը իջել եր արդեն ավտոյից:

— Վազը հավաքույթ կունենա՞ք,— հարցրեց Սուլիկը փսփսալով:

— Այո՛, ուզիղ ժամի յոթին կլինես այստեղ, կիջնենք Քռի ափը և հովի հետ կկարդանք մի հետաքրքիր նամակ. զգո՛ւյշ, վոր վոչ վոք չիմանա: Գործարանում վոչ վոք չի լինի, բայց և այնպես հարկավոր է մեծ զգուշություն:

Սիմոնը չափազանց հետաքրքրվում եր, թե ինչ են փսփսում նրանք, գո՞ւցե գործարանի մասին է: Նա զանդաղ քայլերով շարժվեց դեպի Սուլիկը, սակայն, Պավլեն ցատկեց մեքենայի վրա, մեքենան դըժոխային աղմուկ բարձրացրեց, թանձր սպիտակ ծուխ արձակեց և հեռացավ դեպի պահեստը:

Սուլիկը գնաց դեպի բանվորների հանրակացարանը, բայց դեռ տեղ չհասած, այնտեղի սպիտակ գամփռը հարձակվեց նրա վրա. նա ստիպված, յետ-յետ

նայելով, վերադարձավ: Աննպատակ կերպով այս ու այն կողմն ընկնելով, նա վոչ վոքի չհանդիպեց ու Պավլեյի մեքենայով վերադարձավ քաղաք:

X.

Լենան Միհրանից բաժանվեց շատ հասարակ ձևով: Ժամի չորսն եր: Միհրանը տանն եր և չափազանց վրդովված: Դիմացը կանգնած եր Լենան. տարօրինակ սառնասրտությամբ նա յետ եր սանրում իր մազերը և առանձին բավականությամբ ու հանգստությամբ սպասում, վոր Միհրանը խոսի: Դուրսը ծառերի ճյուղերի վրա ծանրաբեռնված ագռավները կռավում եյին միապաղաղ ու ձանձրալի: Սոնա տատիկը ձեռքերը ծալած, Ավրորայի և Կիմիկի հետ նստած եր պատշգամբում: Ցերեխաները տխուր եյին ու մտածկոտ, իսկ տատիկի ճմռտված այտերի վրայով հ սում եյին փայլուն արցունքները:

— Հայրիկը վատն է:

— Տա՛տիկ, մայրիկը վոր գնում է, մեր մայրիկն ո՞վ կլինի:

— Չի գնա, ջա՛նիկս, չի գնա:

— Բա ինչո՞ւ յե իրերը հավաքում:

Սենյակի ներսը, պատին հենված, Լենան համառորեն սպասում եր, վոր առաջինը Միհրանը խոսի, սակայն նա կրկին լուռ եր:

— Այնպիսի մի առանձին տրագեդիա յեք ստեղծում, վոր կարծես մի դժբախտություն է պատահել: Մենք դժվարանում ենք միասին ապրել և պետք է բաժանվենք. ի՞նչ կա, յերեխաներս արդեն մեծ են, նրանց տատը կպահի այնպես, ինչպես մինչև հիմա պահել է, իսկ յես ցանկանում եմ ազատ լինել, ի՞նչ է, չարի՞ք է:

— Այո՛, յերբ փշրվում է ընտանիքը, չարիք է:

— Իսկ իմ կյանքը չի՞ փշրվում, մտածող կամ գրա մասին. յես ուզում եմ իմ ուժերը տալ սոցիալիստական շինարարության այս մեծ գրոհին:

— Տո՛ւր, յեթե հավատում ես մեր ուժերին, տո՛ւր, ինձ հետ, մեզ հետ, ընտանիքի հետ:

— Ընտանիքը խանգարում է:

— Մեր ընտանիքը մեր դասակարգի մի մասն է, նա յերբեք չի կարող խանգարել դասակարգի պայքարին: Դու ստում ես, դու մոլորվում ես, ընտանիքը հարկավոր է մեզ, ընտանիքը հարկավոր է սոցիալիզմին:

Լենան ցնցվեց. նա շուտ յեկավ դեպի պատուհանը, հավաքեց ցրված մտքերը, առանց պատասխան տալու Միհրանին, արագությամբ սկսեց փակել ճամբրուկների կողպեքները:

Միհրանի դեմքն ավելի լուրջ և հանդիսատ արտահայտություն ստացավ:

— Ցես մինչև հիմա չգիտեմ, թե մեր ընտանիքն ինչո՞վ եր քեզ կաշկանդում:

Լենան լուռ շարունակում եր գործը: Իսկ Միհրանը յերկա՛ր, յերկա՛ր դիտում եր նրա շարժումները:

Ի՞նչ քաոս եր տիրում այդ կնոջ հոգում, նա չկարողացավ հասկանալ. անբացատրելի, անմբռնելի, Ֆանատիկոսության հասնող ազատության տենչ, թե՞ մի ուրիշ զգացում եր ծնվել նրա մեջ: Միհրանին տարորինակ եր թվում կնոջ մեջ կատարված փոփոխությունը: Դա վերակառուցվող մարդու այլանդակություններն եյին: Այդպես խաղաղ, այդպես հանդիսատ և առանց պատճառի բաժանվում եյին շատերը:

Գուցե Միհրանն է մեղավոր. կինը, ինչ պայմաններում եկ լինի, փայփայել, սիրել է պահանջում, Միհրանն այդ չի արել, իսկ մի՞թե այդքան աշխատանքներով բեռնված նա կարող եր սիրելու, փաղաքշելու մասին մտածել: Այժմ, յերբ նա կանգնած եր ընտանիքի քայքայման առաջ, նոր եր հասկանում, վոր նա կնոջը թողել եր առանց փաղաքշանքի: Մեծ գրոհի թափերն այդպես եյին պահանջում, «բայց մի՞թե թափերը կարող են թուլացնել դեպի ամուսինը և դեպի յերեխաներն ունեցած սերը, զգացումը»,— մտածում եր Միհրանը ճանապարհին:

Արևը զարկվել եր դիմացի լեռան գագաթին: Նրա ճառագայթները համբուրում եյին քաղաքի տների միլիոնավոր պատուհանները: Յերեխաները տատիկի հետ ոգնում եյին Լենային իրերը դուրս քաշելու աշխատանքներին. նրանք կարծում եյին, վոր մայրը եկել կգա, և զարմանում եյին, վոր տատիկի ճմռտված դեմքից արցունքներն անվերջ հոսում եյին:

Մութը վրա յեր յեկել, յերբ Լենան ամուր-ամուր համբուրեց յերեխաներին և իրերի հետ միասին տեղափոխվեց իր նոր բնակարանը, վոր քաղաքի կենտրոնումն եր գտնվում:

— Ինքնուրույն, աղատ, անկախ և հավասար, ահա իմ կյանքի և աշխատանքի նշանաբանը. և տեսնենք, ո՞վ ավելի լավ կպայքարի,— այս մտքերն եյին պտտվում Լենայի գլխում, յերբ կառքը սլանում եր ժխորի մեջ կորած մեծ քաղաքի փողոցների միջով: Գողոտայի մի մեծ բանվորական շենքի առաջ կառքը կանգ առավ, տնային բանվորների ոգնությամբ Լենան սենյակ բարձրացրեց իրերը: Գրքերը տեղավորեց գրասեղանին, մահճակալը պարզեց, անկողինը պատ-

բաստեց, մյուս իրերը տեղավորեց, բայց արեց պատուհանները:

Թարմ գիշերային ոդը և քաղաքի աղմուկը ներս խուժեցին սենյակ: Ցերը նա մի քանի րոպե նստեց հանգստանալու, զգաց, վոր սենյակի լռությունը ճնշում է իրեն. նրա յերևակայությունը տեղափոխվեց քաղաքի մյուս ծայրը, այնտեղ լայն, ընդարձակ յերկու սենյակներ, յերկու յերեխան, մայրը, ամուսինը կանգնեցին նրա առաջ: Լենան ժպտաց: «Կարծես քաղքենին սկսում է խոսել իմ մեջ»: Նա, յերկու վոտով զարկելով հատակին, բարձրացավ տեղից, ուղղակի դուրս գնաց սենյակից, փակեց դուռը և ուղևորվեց Բանկոպի կարմիր անկյունը, ուր պետք է տեղի ունենար կանանց լիազորների ժողով:

XI.

Մթության մեջ քարերն ու ավազը վոտների տակ ցած թափելով, մահուդի գործարանի յետևի բարձունքից մեկը մյուսի յետևից հորիզոնի վրա յերևում եյին դեպի Ռուի ափն իջնող մարդկանց ստվերները: Սուլիկը ևս իջավ, վոտը քաշ տալով: Մերթ ձեռնափայտին կռթնելով, մերթ քարերից բռնելով, Սուլիկը հազիվ հաղ խառնվեց դեպի ափին քարերի վրա հավաքված մարդկանց:

Նրանք նստած եյին դեպի վոլորապտույտի արանքում փոքրիկ թերակղզում ընկած դերանի վրա. ջրի շաչյունն այնքան մեծ եր, վոր խոսակցությունն անլսելի յեր դառնում: Հեռվում լավում եր մեծ ճանապարհով գնացող սայլերի ճռնչոցը:

— Զգուշացնում եմ ձեզ չծխել, ուշադրությամբ լսել և չաղմկել: Մենք կենտրոնից մի փոքրիկ հրահանգ ենք ստացել, վորի ուժով պետք է կազմակերպենք մեր աշխատանքները,— սկսեց Ցատոնն իր խոսքը, մատները խփելով ձեռքում ամուր բռնած թղթին:

— Հարկավոր է նախ և առաջ կազմակերպել մի բջիջ, քանի հոգուց էլ վոր լինի, պետք է կազմակերպել: Հրահանգի ուժով մենք իրավունք ունենք նույնիսկ յերեք հոգուց բջիջ կազմակերպել. ինչ վերաբերում է, թե արդյոք կարո՞ղ ենք անլեգալ աշխատանքներ տանել կուսակցության դեմ, կենտրոնը կտրուկ կերպով այդ հարցը լուծում է դրականապես:

— Իսկ ի՞նչպես պիտի սկսենք աշխատանքները:

— Աշխատանքնե՞րը... նախ և առաջ պետք է մեր կողմը գրավենք կոմյերիտականներին:

— Ե՛, կոմյերիտականներից բան դուրս չի գա... բացականչեց յետևի շարքերում թիկն տվածներից մեկը:

— Կոմյերիտականներին պետք է քաշենք մեր կողմը և նրանց միջոցով տապալենք մեր հակառակորդներին: Աշխատանքների ձևերից մեկն ել անկուսակցական բանվորներին մեր կողմը քաշելն է, գործարանի չինարարական աշխատանքների ժամանակ, դաղդյահի մոտ, պատ շարելու, բետոն պատրաստելու, մեքենաներ սարքավորելու ժամանակ, ամեն տեղ, ամեն րոպե պետք է ագիտացիա և պրոպագանդա տանենք կուսակցության գլխավոր գծի դեմ:

Ֆը՛ռ ռ՛... ռ՛... ռ՛...:

Դիմացը, դեպի Ռուի յեզերքը յելնող կտրվածքի վրա լավեց թափվող քարերի ձայնը:

— Սո՛ւս. սու՛ս — ս՛ ...:

Մի քանիսը վեր թռան տեղերից ու մնացին քարացած, յերկուսը վախան դեպի վերև, մյուսները ձայները կտրած սպասում եյին:

Կրկին լսվեց քարերի թափվելու ձայնն ավելի մեծ թափով. այս անգամ բոլորը վոտի կանգնեցին ու մնացին քարացած, սպասողական դրության մեջ:

Մի քանի վայրկյանից հետո, նրանց վոտերին սկսեց փաթաթվել գործարանի շներից մեկը և բոլորը հանգստացած նորից հավաքվեցին թերակղզու ծայրին: Սուլիկը ցածր ձայնով սկսեց չվացնել ու կանչել փախածներին.

— Շունն է, յեկե՛ք, յեկե՛ք:

Յասոնն սկսեց շարունակել.

— Մեր մեջ, դուք տեսնում եք, անկուսակցականներ էլ կան, մեզ թույլ է տրված, ինչպես գիտեք, մեր բջիջին կցել նաև մեզ հավատարիմ անկուսակցականներին. իհարկե, այստեղ, ընկե՛րներ, ընտրություն կատարելիս պետք է լինենք խիստ ուշադիր, այլապես՝ կքայքայվեն մեր աշխատանքները:

— Այստեղ ո՞վքեր են ղեկավարելու մեզ,— հարց տվեց մեկը:

—Մենք քաղաքում չուտով կունենանք քաղաքային և շրջանային կոմիտեներ, դրանք կապված կլինեն կենտրոնին և համաձայն նրա հրահանգներին մեզ կըղեկավարեն: Բացի այդ, կենտրոնից մենք կստանանք գրականություն, որը մեր անդամների միջոցով կըտարածենք անկուսակցական բանվորների մեջ:

Այնուհետև յերկար ժամանակ ժողովականներն զբաղված եյին մի շարք հարցերի քննությամբ: Յասոնը խոսում եր, կարծես ինքն էլ չհավատալով իր խոսքերի ճշտությանը:

Հարց ու պատասխանները դեռ շարունակվում եյին, յերբ լուսինը հրդեհեց իր կարմիր բոցերով լեռան գագաթը: Հորիզոնի վրա գծվեցին հեռավոր սարերի, թփերի ատամնաձև շարքերը: Գետակի ավազների վրա սկսեց փայլել Յասոնի մազերից զուրկ բաց գլուխը: Վատնգավոր եր մնալ գետափին, և հավաքույթը ցրվեց:

Ժողովականներն սկսեցին մազլցել դեպի գործարանի բարձունքը:

XII.

Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի Շինարարական բաժնի սենյակում Սորինի շուրջն եյին հավաքվել մի քանի ինժեներներ, վորոնց մեջ մի Աղասի Աբրամիչը: Փոփոխում եյին խորհրդավոր կերպով: Բոլորի դեմքին փայլում եր անհամբերության և հուզմունքի արտահայտություն: Նրանցից ամեն մեկը, հարմար բոպե դտնելով, մտնում եր այս վարիչի, այն վարիչի, կոլլեգիայի անդամների առանձնասենյակներն ու նրանց ականջներին փսփսում:

Հավաքված ինժեներների մի մասը վորոշել եր կոլլեգիայի այսորվա նիստին արտասահմանից մահուդի գործարանին անհրաժեշտ մեքենաներ բերելու համար առաջարկել Սորինի և իր ազնվական թեկնածությունը: Սորինը և նրա համախոհները հարյուր տոկոսով համոզված եյին, վոր գործուղումը գլուխ յեկած բան է և պատրաստում եյին արտասահման մեկնելու և այնտեղ աշխատելու մոտավոր ծրագիրը:

— Բանդ աջող է գնում, Սո՛րին,— ճմլտացնում եր Աղասի Աբրամիչն աչքերը,—Նախ և առաջ մենք բոլորս համաձայն ենք, յերկրորդ՝ ուրիշ հարմար թեկնածու չկա: Ելի շնորհակալ չես ինձանից, է՛յ, է՛յ, է՛յ:

Սակայն, այս խոսքերն ասելով, Աղասի Աբրամիչը դողում եր. չլինի՞, թե այս ամենտյուրիստին ուղարկ-

կեն արտասահման, խլամ հավաքի և ուղարկի իրենց գլխին ցավ, այն ժամանակ...:

Ցերկու որ առաջ Աղասի Աբրամիչն զգուշացրել եր Ժողանտխորհի նախագահին, Սոբինի գնալու առթիվ և հուսով եր, վոր իր զգուշացումը բանի տեղ կանցներ:

Ժողանտխորհի նախագահի առանձնասենյակում կարևոր ժողով տեղի ուներ: Կոլլեգիայի Ֆբակցիայի նիստն եր, վորտեղ քննում եյին մեքենաների համար արտասահման գործուղելու հարցը: Մուխն այնքան եր թանձրացրել ողը, վոր յերբեմն փակվող ու բացվող դռան արանքից չեյին նշմարվում ժողովականների դեմքերը: արտահայտվողները միաբերան պահանջում եյին արտասահման ուղարկել մեքենաների և վորակյալ տեխնիկների յետևից Միհրանին ու Ժողանտխորհի յերիտասարդ ինժեներ Հայրապետյանին: Միհրանը փորձված ու կոփված եր մեքենաների կազմությունների քննման և նրանց ունակությունների ըմբռնման համար, իսկ Հայրապետյանը յեղել եր արտասահմանում և ծանոթ եր բոլոր ֆիրմաների նորագույն սիստեմի մեքենաների հատկություններին հետ:

Ֆբակցիայի ժողովից հետո, նույն ծխի մեջ կորած սենյակում գումարվեց Ժողանտխորհի և մանվածային բաժնի կոլլեգիայի միացյալ նիստը՝ արտասահման մեկնող թեկնածուների առթիվ վորոշում կայացնելու: Սոբինն առանձնահատուկ հրճվանքով եր սպասում ժողովի բացվելուն և, արհեստական ժպիտ տալով իր դեմքին, անհանգիստ կերպով քայլում եր ծխախոտի գլանակը ձեռքին առանձնասենյակի պատի տակ: Աղասի Աբրամիչը նույնպես ժպտում եր, բայց նրա խորամանկ ժպիտը կարծես զգացնում եր Սոբինին, վոր նա արտասահման մեկնելու հույսը կարի:

Աղասի Աբրամիչի մտքի թելը կարեց փոքրիկ դրսպանակավոր զսպդի ձայնը: Միացյալ ժողովը բացվեց: Նախագահը համառոտ կերպով բացատրեց հավաքույթի նպատակը և խնդրեց, վոր լուրջ կերպով մոտենան արտասահման ուղարկվող թեկնածուների հարցին, քանի վոր նրանց վորակյալ և գործին ծանոթ լինելուց և կախված գործարանի կառուցման աջողությունը: Ժողանտխորհի բաժնի վարիչներից մի քանիսը խոսք վերցրին և իրենց տեխնիկական ու ճարտարապետական բոլոր պատճառաբանություններով առաջարկեցին Սոբինին և նրա ոգնականին ուղարկել արտասահման: Խոսակցության ամբողջ ընթացքում Սոբինի դեմքն անորինակ արտահայտություն ուներ. սակայն, յերբ այդ առաջարկների դեմ առարկողներ յեղան, Սոբինը չիկնեց և զգալով, վոր տանուլ է տալիս գործը, իր բլոկնոտի վրա մի տոմս գրեց Աղասի Աբրամիչին, վորի խոսքն ավելի հեղինակություն ու վճռական դեր պիտի խաղար: Այդ տոմսի վրա գրված եր.

«Ինչո՞ւ յես լռում, խոսի՛ր, եկ վո՞ւրտեղ պետք է ցույց տաս, վոր կողմնակից ես իմ արտասահման գնալուն»:

Սոբինը ծածուկ նույն բովանդակությամբ տոմսեր գրեց և ուրիշներին, սակայն տոմսեր ստացողներից խոսեցին միայն յերկուսը – Աղասի Աբրամիչը և մեկ ուրիշը: Յերկուսն եկ ընդհանուր առմամբ պաշտպանում եյին Սոբինի թեկնածությունը:

Յերբ բոլորն արտահայտվեցին, Ժողանտխորհի նախագահը հայտարարեց, վոր Ֆբակցիան վորոշում ունի: Բոլորն աթոռների վրա ուղղվեցին և կարճատև հայացքներ ձգերով մի մյանց դեմքին, ժպտացին: Սոբինի աչքերը հառեց հատակին, Աղասի Աբրամիչն արհամարհանքով նայում եր Սոբինի կտրած գլխին և

յերբեմն թարթում եր աչքերը: Նախագահը հայտնեց, վոր Ֆրակցիան վորոշել է արտասահման ուղարկել Միհրանին ու Ճարտարապետ Հայրապետյանին:

Բաժինների վարիչներից մեկը մի յերկար «ըհը՛» արտասանեց: Սորինը գլուխը չբարձրացրեց և անխմատ կերպով նայում եր հատակին: Աղասի Աբրամիչը ժրպտաց նախագահի դեմքին և խորամանկաբար թարթեց ձախ աչքը: Մի քանիսը վորոշումը դատան մխանգամանքն տեղին և գործնական: Քվեարկության ժամանակ, յերբ մատները ցցվեցին, Սորինը չարունակում եր հատակին նայել:

«Ի՞նչ ուժեղ են անպիտանները», մտածում եր նա և մտքում խոստանչոթ յեղան նրա բոլոր ծրագրերը:

Ժողովը ցրվեց: Սորինն առաջինը դուրս յեկավ ժողովատեսքի չենքից և փողոցում մի այն սկսեց մրքերը կարգի բերել:

«Մինչև մեքենաների գալը չարունակել ամեն ինչ թարս կառուցել, ամեն ինչ փչացած նյութերից կառուցել, իսկ յերբ մեքենաները կգան, նրանց հետ ևս կարելի յե հաշիվները վերջացնել», վճռեց նա իր մեջ և արագ քայլերով հեռացավ դեպի տուն:

XIII.

Միհրանը ճանապարհ ընկավ դեպ իրեն անծանոթ և նոր աշխարհ, վորը չոչափելու համար նա փորձառություն չուներ: Փայլուն հայելիներով և ապակիներով, կարմիր վայրից ու փափուկ բարձերով կահավորված վագոնն անգամ անծանոթ եր նրան և անախորժ, վորովհետև հեռանում եր իր արդեն ավարտված գործարանի չենքից:

Միհրանի հոգին ալեկոծվում եր. Լենայի արարքը վոչ մի կերպ նա չեր կարողանում ալդարացնել. ընտանիքի քայքայումը և կորուստը նրա համար ծանր և անտանելի հարված եր, անտանելի հարված, վորովհետև Միհրանը չեր ձգտել և չեր ձգտում յերբեք ընտանիքի միջոցով հասարակական կործանման յենթարկել իր կնոջը: Ընդհակառակը, նա միշտ գտնում եր կնոջ հետ ընդհանուր լեզու, միշտ աշխատում եր այնպես անել, վոր Լենան յերբեք իրեն կաչկանդված չզգա ընտանիքի մեջ:

Յերբեմն մտքերն այլ կերպ եյին պաշարում Միհրանին. դուցե Լենան վորպես կին, վորպես մարդ ձանձրացել է իրենից, չի սիրում իրեն և այն ամենը, ինչ վոր նա արտահայտում եր, վորպես անհամաձայնություն, դատարկ պատրվակ եր: Դուցե Լենան վորպես ընկեր, վորպես կուսակցական հարգում եր Միհրանին, սակայն չեր սիրում, ի՞նչ կա վոր, չե՞ վոր դա բնական բան է: Ու այդ ավելի յեր վրդովում, ալեկոծում Միհրանի ներքին աշխարհը: Նա դուրս եր գալիս կուպեյից և միջանցքի պատուհանից յերկար – յերկար նայում եր լայնածիր դաշտերին ու մարդերին, աչքի առաջ թռչող ու պտտվող, խաղաղ հոսող գլգլան ջրերին: Առաջը միշտ ցցվում եյին Լենայի խելացի և փայլուն սև աչքերը: Ի՞նչ պետք է աներ Լենան ամբողջ վեց ամիս իր բացակայության ժամանակ: Թերևս Միհրանի ուղեղի ծալքերում վորևե կասկածներ կային, բայց նա յերևան չեր հանում, ավելի շուտ չեր համարձակվում այդպես մտածել:

Իսկ Հայրապետյանն որերով անվերջ անեկդոտներ եր պատմում. վերջ չկար, ծայր չկար: Միհրանը համարյա ամեն որ ննջում եր Հայրապետյանի անեկդոտների ազդեցության տակ: Յերբեմն Միհրանը մտածում եր, թե Հայրապետյանը նկատի ունենալով իր վիշտը, դիտմամբ է անվերջ անեկդոտներ պատ-

մում։ Բայց վո՞րտեղից եկին այդքան անեկդոտները, ի՞նչպես էր նա մտքումը պահում այդքան սրախոսությունները։

Վազոնի պատուհանի շրջանակից երևում էին ցորենի արտերը, վորոնք բարձրացել էին արդեն։ Դաշտերի արանքում փայլող ջրերը թարմության տպավորություն էին թողնում, իսկ սպիտակ պատերով ու բանջարատունկերով շրջապատված տնակնե՞րը, հրակայական քաղաքները, գործարանները, կոլխոզները, առուները· ի՞նչ դյութիչ, ի՞նչ սքանչելի, ի՞նչ լայնածիր և ազատ է այս յերկիրը։

Յերբեմն Միհրանը ցանկանում էր խոսել Հայրապետյանի հետ իր ընտանեկան դժբախտության, Լենայի տարորինակ վերաբերմունքի մասին, սակայն քաշվում էր, մտածելով, թե ի՞նչ պիտի հասկանա այս մարդը Լենայի այն տարորինակություններից, վորոնք ընտանիքի քայքայման պատճառ դարձան։ Ուրախանում էր Միհրանը։ Նրա անհանգիստ ներքին աշխարհի յերևակայության մեջ ցցվում էր Լենան իր այն բոլոր տարորինակություններով, վորոնք կարծես համոզում էին Միհրանին, վոր նա չէր սիրում իրեն։

Մի բան միշտ հանգստացնում էր Միհրանին· «Մեկ անգամ Լենան կյանքում սխալվել էր և դժվար թե այլևս նույն սխալը կրկնի»։ Այս մտքի հետ նա քուն էր մտնում վազոնի ճոճվող փափուկ զսպանակավոր մահճակալների վրա, արդեն առաջուց զգալով, վոր առավոտը կոչմարային գլխի ցավով է վեր կենալու անկողնից։

Իսկ գիշերը նրա ուղեղը պաշարում էին վանազան մտքեր, ծանր, խառնված ու մշուշապատ, մեծ քաղաքների գործարանների պատկերները, մահուդի գործարանի կիսավարտ պատերը, և նա վեր էր թռչում տեղից, յերբ կայարանում չռնդում էր վագոնի արդելակը։ Միհրանն այդպիսի դեպքերում փոքր ինչ յետ էր քաշում վագոնի վարագույրը, աչքերը հառում էր դուրս և նայում՝ անծայրածիր մթության սահմանը փնտռելու, սակայն, առանց վորևե բան նկատելու, ծածկում էր վարագույրը· վագոնը նորից շարժվում էր ու Միհրանն անվերջ խորհում էր աշխատանքի թափերի, հնդամյակի, սոցիալիզմի մասին։ Մեծ գրոհը տանում էր նրան հարվածային թափերի հոսանքի հետ, տանում էր ու փոփոխում նրան, և նա չէր ուզում յետ մնալ թափերից, վորովհետև այդ պատվի և հերոսության խնդիր էր։

XVI·

Արշակը մահուդի գործարանում, ինչպես և մյուս աշխատանքների մեջ, ցույց տվեց իր անտարբեր և անփույթ վերաբերմունքը դեպի գործը։ Սրտաբուռոտ նա ամեն կերպ ճգնում էր ցույց տալ, վոր աշխատում է բանվորների կուլտուրական մակարդակը բարձրացնել, սակայն գործով նա վոչինչ չէր անում։ Նա զգում էր, վոր չափազանց հեռու յեր բանվորական մասսաների ճգտումից։ Զե՞ վոր այդ խորթությունը բնական էր· մանավանդ, յերբ հիշում էր ռայկոմի քարտուղարի խոսքերը, աշխատում էր կտրել իր մտքի կապակցությունը, ու մրթմրթում էր· «Հազիվ ապրավեցի բանվորներից, ելի պիտի վերադառնա՞մ»։

Գործարանի բանվորներն զգում էին այդ, զգում էր և ինքն Արշակը և ամեն առիթ ոգտագործում էր ապացուցելու, վոր նվիրված է իրեն հանձնված աշխատանքներին, վոր հարազատ է բանվորներին։ Սակայն կոլեկտիվը չափազանց լավ էր ճանաչել նրան, նա իր աշխատանքով չէր վոգևորում վոչ վոքի, բանվորներն ատում էին նրան։

Արշակին թվում էր, թե բանվորները ծանոթ են նրա գլխում խմորվող մտքերին: Նա ամաչում էր ինքն իրենից, սակայն ո՞վ է բանվորներին հարցնում:

«Անսահմանելի ուժ, կորով և էներգիա յե հարկավոր այսպիսի յեռամեծաց բանվորներին բան սովորեցնելու համար, որանց գլուխը փայտ է. անհնարին, անիրագործելի աշխատանք եմ հանձն առել յես»,— մտածում էր նա:

Մոտեցավ և հաշիվ տալու որը: Գործարկոմի սենյակում նստած, Արշակը թերթում էր բլոկնոտը, տարտամորեն դարձնելով աչքերը զեկուցման համար կազմված ծրագրի վրա:

Սենյակի միջանցքում լսվում էր, թե ինչպես բանվորուհիները Դավթի գլխին կիսված, խնդրում էին, վոր իրենց քաղաքացոյի ցուցակի մեջ գցի: Մուտքի մոտ մեկը խուլ ձայնով յերգում էր: Ապա Արշակը լսեց Սուլիկի ձեռնափայտի ձայնը և պատրաստվեց դուրս գնալու, վորպեսզի ծերուկը չխանգարի իրեն, սակայն Սուլիկն արդեն Արշակի մոտ էր և պատրաստվում էր նստել սեղանի առաջ դրված աթոռի վրա: Նա ձեռքով նշան արեց Արշակին նստելու: Արշակն ստիպված նըստեց:

— Ի՞նչ կա, Սո՛ւլիկ:

—Ի՞նչ պիտի լինի. կոոպերատիվը լցրել են խմիչքներով, չոկոլադով և տապակած հավերով ու հնդուհավերով:

— Դուք ել գնեցե՛ք:

— Ինչո՞վ գնենք, հը՞:

— Դժվարություններ շատ կան, Սո՛ւլիկ, դժվարություններ, լսե՞լ ես, եդ դժվարությունները կստիպեն փոփոխել ամեն ինչ:

Սուլիկը ճղճղացրեց աչքերը և բեխերն ուղղեց:

— Ի՞նչպես փոփոխել:

— Պետք է վերջ դնել ես գործարանների վրա եղած փող թափերին:

— Հա՞, հա՞, հա՞,— ծիծաղեց Սուլիկը քունքերի յերակներն ուռցնելով,— կառուցենք, չկառուցենք, յերբեք չենք կարող հասնել ու՞անցնել:

— Ջերմատանդ տրոցկիստ ես, Սո՛ւլիկ, ա՛յ, ա՛յ, ա՛յ...

Գործարանի դիմացը կառուցված չոգեբաժանմունքի տուլիչը կամենալուն փրփուր ժայթքեց, ջերմակն ահռելի ձայնով յերկար ու ճիգ տուլեց: Սուլիկն առանց պատասխանելու Արշակին, վերցրեց ձեռնափայտը և նրանք շարժվեցին դեպի ժողովատեղի:

Առաջին անգամն էր, վոր Արշակը դուրս էր գալիս բանվորներին հաշիվ տալու իր աշխատանքի մասին: Ճաշարանի ընդարձակ շենքում խոնվում էին բանվորներն ու բանվորուհիները:

Սուրենը մի քանի անգամ շարժեց սեղանի վրա դրած փոքրիկ զանգակը և բաց արեց ժողովը: Արշակը նայում էր բլոկնոտին, վոր ընկած էր սեղանի վրա, սակայն, անհարմար դգալով, կրկին վերցրեց, դրեց գրպանը: Նախագահը նրան զեկուցման հրավիրեց:

Նա սկսեց իր խոսքն առանց նայելու բլոկնոտին, ամաչում էր գրպանից հանել, բայց յերբ խառնեց բոլոր հարցերը, ստիպված էր նայել նշանակված կետերին և շարունակել: Արշակը զեկուցում էր, թե ինչ միջոցներ են ձեռք առնված բանվորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, անգրագիտությունը և հարբեցողությունը վերացնելու համար: Նա գանգատվում

եր, վոր բանվորները դրաղարան-ընթերցարան, անգրագիտության վերացման դպրոցներ չեն հաճախում, դերբեր չեն վերցնում, կանանց մեջ աշխատանքները թույլ են տարվում, կազմակերպված զեկուցումներին չեն հաճախում: Նրա ամբողջ զեկուցումը, վոր մի ժամ տևեց, բանվորների ծուլության, անտարբերության և անկարողության պատմությունն եր:

Արշակն զգում եր, վոր իր զեկուցումը կեղծիքների հավաքածու յե, սակայն, չե՞ վոր բոլորն էլ իրենց բացատրական աշխատանքների մեջը բանվորների վրա յեն գցում, ինչո՞ւ ինքն էլ նույնը չանի:

Զեկուցումը վերջացավ: Մի քանի հարցերին պատասխանելուց հետո, սկսվեց մտքերի փոխանակությունը: Առաջինը խոսեց վարպետ Մկրտիչը:

— Մենք նոր աշխարհ ենք կառուցում, մեզ հրաշալավոր են նոր հարվածային մարդիկ, աշխատանքի նոր ձև, նոր թափեր, կուլտուր-կենցաղային նոր աշխատանքներ: Արշակից վոչինչ չենք լսել, նա վոչինչ չի արել:

Մկրտիչը բարմաթիվ փաստեր եր բերում:

Արշակն անհարմար շարժումներ և անում, տաքացած ատամներն ու ականջներն ավելի յեն վառվում, նա գլուխը կորցրած, շարժում է մատները բլոկնոտի վրա, գրում է բանվորի ասածները և մտածում պատասխանի համար: Սակայն պատասխանի համար նա խոսք չի գտնում: Դուրս է գալիս յերկրորդ բանվորը մոխրագույն սլինջակով, հաղթանդամ ձեռքերը կոթնում յերկար սիթոի մեջքին և սկսում է թափել իր յերկաթի գրնգոցի նման ծանր մեղադրանքները:

— Արշակի ուշ ու միտքն աշխատանքի մեջ չի, աղջկերանց փեշի տակն ա, սուտ ա ասում, ամբողջը սուտ

դակլաղ ա: Գրադարանից քանի անգամ կլի, գիրք ենք ուզել, գիրք չկա, քանի անգամ անգրագետների գիր սովորելու մասին խոսել ենք, մեզ խաբեբա ա արել, թողել, թե ժամանակ չկա:

— Սկզբը զոյություն ունի, բա եդ ակմբի մեջ չե՞ր կարելի մի ներկայացում կամ կլինո կազմակերպել,—վրա տված խոսում եր մի յերիտասարդ կին,— յերեխաները մանկապարտեզ չեն ընդունում, իսկ վաճառականների յերեխանց ընդունում են. ասում եմ՝ ընկե՛ր Արշակ, ոգնություն՛ արա, ասում ա, իմ գործը չի, գնա՛ ռայկոմ:

Ու խոսում եյին անվերջ, խոսում ու դատում եյին կուլտուրական հեղափոխության, անգրագիտության վերացման, կանանց ու կենցաղի մասին ավելի խելացի և լավ, քան Արշակն իր զեկուցման մեջ: Յերբ գլուխը բարձրացնում եր Արշակը և նայում լայնարձակ չենքում հավաքված մասսայի դեմքին, գլուխն ամոթից պտտվում եր և կորցնում եր մտքի թելը. չգիտեր թե վո՞րտեղից պետք սկսի հարցերի պատասխանները:

«Կարող է պատահել այնպես, վոր յեկրափակման խոսքի իրավունք չտան ինձ, ուշ լինելու, կամ մի այլ պատճառով. ի՞նչ լավ բան կլինի», մտածում եր Արշակը, չհավատալով սակայն, վոր այդպիսի բան կարող է տեղի ունենալ:

Վերջում Սուրենն ամփոփեց բոլորի ասածները: «Զե՛, փոխվել են այս անիրավ բանվորները», մտածում եր Արշակը, «օրանք իմ ժամանակվա բանվորները չեն, ուզղակի խաբեբա արին, թողին, եգուցվանից իմ վոտն այլևս գործարանում չի լինի»:

Ու պլշած աչքերով նայում էր Աբշակն իր դիմացի առաջին նստարանի վրա բազմած բանվորուհու չքնաղ դեմքի կայտառ դուլդուլն ծաղիկներին, նայում էր անվերջ ու չէր ուզում բարձրացնել իր հայացքը պահանջկոտ ու հանդուգն բանվորների դեմքերին: Ի՞նչպես կփախչեր նա այստեղից, այդ ժողովից, ի՞նչպես ատում է նա, յերբ հաշիվ են պահանջում աշխատանքի համար:

Սուրենը խոսում էր հանգիստ, յերկար պարանոցն առաջ դցած, համոզված չեչտով, խոսում էր, թե ինչպիսի մեծ ստեղծագործական ուժ, վոգևորություն և եներգիա կա բանվոր դասակարգի մեջ և վորքան մեծ չարիք է, յերբ չեն ոգտագործվում այդ ուժն ու վոգևորությունը մեր շինարարության համար:

Սուրենի ամեն մի նախադասությունը խրվում էր Աբշակի գանգում: Նա այնքան այլայլված էր, վոր չհիշեց, թե ինչ ասեց յեղբարակման խոսքում: Ժողովն աշխատանքը դտավ թույլ և առաջարկեց ՝ՐՔԻՀ ագիտ-պրոպին և գործարկմանն կցված ընկերությունը— Աբշակին, – շուտափույթ կերպով ուժեղացնել կուր տուրական Ֆրոնտի աշխատանքները:

XV.

Գարանային բույրն իջել էր քաղաքի վրա: Բոլորի յերակներում խաղում էր գարանանային գրգիռը: Տրամվայները ջրում էին փողոցները, վոր հոմն ընկներուն պես ավելի էին սկսել աշխուժանալ: Ծաղկավաճառներն ալ վարդի փնջերը ձեռքներին պտտվում էին անցորդ տիկինների և որիորդների առաջ, վորոնք մելամաղձոտ հայացքով նայում էին ու անցնում ժպտալով: Բանկոոպի ավտոները արագ – արագ մեկը մյուսի յետևից, մթերքներով բեռնավորված, դղրդյունով սլանում էին, բազմաթիվ զուլդեր չտապում էին դեպի ամառային ակումբներն ու այգիները սրտի ուրախ տրոփյունով:

Դյութիչ, հեզահամբույր և չլացնող ե գարունը:

Լայն պատուհանի առաջ թարմ ակացու քաչ ընկած վոդկուլյդների բուրմունքով արբած, կողքի վրա պառկած էր իր մահճակալի վրա Լենան կիսամերկ, դուբ եկան հոլանի, փղոսկրից կերտված թևերը դլխի տակ, դրած: Աչքերը մելամաղձոտ էին, բայց վառվում էին գարնանային կենսուրախությամբ: Կուրծքը հուզված բարձր ու ցածր էր անում և յերբեմն խորը հառաչ արձակում:

Նրան զարմացնում էր այն փաստը, վոր սոցիալիստական շինարարության այս բուռն շրջանում վոչ վոք չի ցանկանում զբաղվել ընտանեքի և սիրո հարցերով:

Լենան պահանջում էր իրենից պարզորոշ պատասխան այդ բոլորին:

Պատասխանի տեղ նրա դեմքի վրա մշ փունջ կնճիռներ էին յերևում և ներքուստ կարծես զղում էր իր թուլությունը: Կուտակված մտքերի մեջ առանձնանում էին Միհրանի խոսքերը:

Տարորինակ զգացումներից նրա նուրբ մորթը շառագունվում էր մայիսյան կենսահոդ ու բազմահրապույր բուրմունքից. կոմբրաթույլ շուրթերի վրա յերկչոտ ժպիտ էր յերևում. սիրտը չփոթվում, վրդովվում էր. նրա մեջ ցանկություն կար բնության գիրկը նետվելու. բնության հազար ու մի հրապույրները կանչում էին նրան. յերիտասարդ սիրտը փրփուում էր, ուզում էր պայթել, դուրս գալ կրծքից: Նրան հուզում էր մի քաղցր, տարորինակ ցանկություն:

Հանկարծ դուռը թակեցին։

— Կարելի՞ յե։

— Սպասեցե՛ք մի վոքը։

Նա հապճեպ հագնվեց ու բացեց դուռը։

Արշակը ներս մտավ, գլխարկը կախեց պատին կպցրած մեխի վրա և, իր խորամանկ հայացքը ձգելով Լենայի վրա, սեղմեց ձեռքն իր յերկու ձեռքերի մեջ։

— Այս հրաշալի յեղանակին պառկա՞ծ, ի՞նչ ֆ պատահել ձեզ։ Ցեթե գործ չունեք, գնանք զոնե զբոսնելու։

— Ուզում եյի գնալ յերեխաներիս տեսնելու. արդեն քսան որ ե, չեմ տեսել։

— Ցերեխանե՞ր... դու այն մարդը չե՞ս, վոր գոռում եյիր ազատ, առանց յերեխաների կոմունիստական նոր կենցաղ ստեղծելու մասին։ Ի՞նչ պատահեց քեզ։

Լենան գլուխը կախ եր գցել։ Արշակն ագահությամբ նայում եր յերիտասարդ կնոջ վղոսկրի պես փայլող թեերին ու բարձրացող և իջնող լանջին։ Լենան անվրդով պատրաստվում եր պատասխանել։ Հառաջի հետ դուրս թռան նրա խոսքերը.

— Կարծում եյի, վոր գրոհների ժամանակաշրջանն իմ մեջ կարող ե մեռցնել մայրականը. բայց զգում եմ, վոր սիրում եմ. դժվար բան ե մայր լինել։

—Ա՛խ, այդպե՞ս։

— Այո՛, այդպես։

Սենյակում արդեն մութն եր։ Հորիզոնի վրա վերջալույսի վարդակարմիր շողերը մարում եյին։ Արշակն ավելի մոտեցրեց իր աթոռը Լենայի մահճակալին, նրա աչքերը փայլում եյին մթության մեջ, փողոցից ներս թափվող ելեկտրական լույսի շողերի տակ, սենյակի լուության մեջ լսվում եր Արշակի խանգարված շնչառությունը։ Վավաշոտ հեզությամբ նա դողալով արտասանեց.

— Գիտե՞ս, թե վորքան եմ քեզ սիրում։

Լենան վեր բարձրացրեց կոպերը. կնճիռներն արագությամբ հավաքվեցին նրա ճակատի կենտրոնում, նրա դեմքի վրա բավականության ժպիտ յերևաց։ Արշակը բռնեց նրա ձեռքը և համբուրեց, սակայն Լենան դուրս կորզեց իր ձեռքը, վեր թռավ տեղից ու վառեց ելեկտրական լույսը։ Արշակն, անհարմար դրության մեջ ընկած, սկսեց քայլել սենյակում։

— Ցերեկ դու ինձ պատմում եյիր, վոր արդեն պատրաստվում ես վերադարձ կնոջիդ բաժանվել, իսկ այսոր ինձ սեր ես խոստանում։

—Ձե՞ վոր դու ժխտում ես ընտանիքը, ի՞նչ կա, վոր բաժանվում եմ, այլևս վոչ մի կին չեմ առնելու, ապրելու յեմ ազատ, ինչպես դու յես քարոզում։

—Վոչինչ, լավ ե, բայց չպետք ե ամուսնանայիր։

— Այդ ավելի լավ եր, յես նրանց ուսումնասիրելի։

— Քո մեջ յես վաղուց եմ նկատել այդ արհամարհանքը դեպի կինը։

Մի քանի րոպեյից հետո Արշակը և Լենան դուրս յելան տնից։ Մութ սանդուղքներից իջնելու ժամանակ, Արշակը վարանելով ձեռքը տարավ Լենայի թևի տակ, սակայն Լենան համարձակորեն յետ մղեց նրա ձեռքը։ Արշակը կարմրեց մինչև ականջի կոթերը և յերբ դուրս յելան փողոց, Լենայից կես քայլ յետ եր շարժվում, մինչև վոր անցան փողոցի մյուս ափը, ուր նրանք նորից հավասարվեցին։

XVI.

Կեսորին մոտ էր, յերբ Լենան իջավ տրամվայից։ Գնում էր յերեխաներին տեսնելու։ Ընկճված էր և տխուր, սակայն խանդավառ, կարոտի զգացումը նրան մղում էր դեպի տուն։ Զգում էր, վոր սրտի արագ զարկերը խանդարում են քայլերին։ Հեռուից նա կանգ առավ։ Զայրացավ, վոր «մայր» ասածը տակավին կենդանի յե իր մեջ։ Աչքի առաջ թավռացին թուխ գանգուրներով Կիմիկն ու Ավրորան, թարմ, անարատ, անմեղ, միամիտ հայացքով ու ժպիտով նրանց դեմքերին դիտելու վայրկյանն ամեն բանից թանգ էր, կարոտի թափն ավելի ուժեղացավ Լենայի մեջ և նա արագացրեց իր քայլերը դեպի խիտ կանաչներով պատած և հատ ծառերի ստվերների միջով անցնող ճանապարհով։

Բոպենները ծանր եյին։ Լենան հիշեց իր մանկությունը և ծնողների գուրգուրանքը։ Ժպիտներով եր անցնում այդ կյանքն իրենց խարխուլ սենյակում։ Մանկության հուշերի խոր ծաղքերի տակից մեկ-մեկ արթնացան քաղցր ու անուշ հիշողությունները։ Ի՞նչ պես անսպասելի կերպով բաժանվեցին ծնողները, ո՞ւր ցրվեցին ընկերները։ Արդեն չափահաս եր, յերբ մոր հետ անսպասելի կերպով ռուսական ֆրոնտից լուր ստացավ իր հոր մահվան մասին։ Մի քանի ամիս հետո կորցրեց մորը, գրանից ավելի մեծ, ծանր սրտի ծակոց չեր զգում Լենան։ Այնուհետև ծխախոտի գործարանը հյուրընկալեց նրան... Միհրանը, Կիմիկը, Ավրորան իր կյանքի ամենափայլուն զարդերն եյին և նրանց նա թողեց, հեռացավ։

Լենան արդեն տան բակն եր մտել։ Նա նկատեց ծաղկած նոճիների տակ խաղացող Ավրորային և Կիմիկին, վորոնք քանդում եյին հողը։

— Կի՛միկ, Ա՛վրիկ, սիրունիկնե՛ր...։

Յերեխաները նկատեցին, բայց առաջին բոպեին ամենևին չշարժվեցին տեղներից։ Նույնիսկ վտքրիկ Ավրորան ներքևի շուրթը կախ գցեց և նեղացած հայացքով, յերեսը դարձրած դեպի յեղբայրը, նայում եր, սպասելով, թե ինչ դիրք կբռնի նա։

— Կի՛միկ, Ավրո՛ր...։

Յերեխաները վազեցին դեպի մայրը և նրա գիրկն ընկան։ «Մի՞թե յերեխաները նեղացել են ինձանից։ Իհարկե նրանք իրավունք ունեն, յես արժանի յեմ այդպիսի արհամարհանքի և ատելության»։

— Ինչո՞ւ չեք խոսում։

Յերեխաները լուռ եյին։

— Եվ չե՞ք սիրում ինձ։

Յերեխաները շարունակում եյին լուռ մնալ։

— Ինչո՞ւ չեք խոսում, բա՛լիկ ջան։

— Ինչո՞ւ չես գալիս մեզ մոտ,— ցածր ձայնով չչնջաց Կիմիկը։

Լենան անդադար պինդ համբույրներ եր դրոշմում նրանց թշերին, ապա բարձրացան սանդուխքներով դեպի վեր։

Տատիկը դիմավորեց նրանց և նրանք ներս մտան սենյակ։

— Ի՞նչ պատահեց քեզ, Լե՛նա, ամուսնուդ չես սիրում, ծնողական խիղճդ ել ե՞ս կորցրել։ Քաղաքում ես ապրում և քսան որ ե, յերեխաների մոտ չես գալիս, ամոթ չե՞։ Կարծում ես, վոչք են, չեն հասկանո՞ւմ։

— Աչքերն ուտեյի, աչքերը Ավրորայի։

— Աչքերն ուտեյի, աչքերը, ինչո՞ւ մեզ մոտ չես գալիս, յեթե սիրում ես, — նեղացած ու աչքերը թարթելով, չչնջաց Կիմիկը։

— Արի՛, մա՛մա, արի՛, մամա։

Կչկչում էր Ավրորան։

— Կգամ, ջա՛նիկս, կգամ։

Ու անվերջ համբուրում, հա համբուրում էր Լենան յերկու թավռացող ճուտիկներին, վորոնք չափազանց շուտ մոռացան քանի որվա խորթությունը։

— Այժմ ամենալին կարիք չկա, վոր դու առանձին ես մնում. Միհրանն այստեղ չէ, չգիտեմ էլ ո՞ւմից ես փախչում, մորի՞ց, յերեխաների՞ց, ի՞նչ տարորինակ մարդ ես։

— Ցես վոչ վոքից չեմ փախչում, յես ուզում եմ ազատ լինել և աշխատել, անվերջ աշխատել, ուրիշ վոչինչ։

Ծոյելով յերեխաներին ու անծանոթի նման դիտելով տան կահ-կարասիները, Լենան մտածում էր իսկապես այստեղ մնալու հնարավորությունների մասին։ Գիշերը Լենան իր ծոցն առավ Կիմիկին ու Ավրիկին, վորոնց յերջանկությանը սահման չկար և սնուց քնեց նրանց հետ։

Սակայն այդ գիշերն էր միայն։ Առավոտը նա զգաց, վոր վերադարձը կրկին կապելու յե իր վոտերը, կոշկանդելու յե իր ազատությունը։ Նա բաժանվեց յերեխաներից և նրանից հետո կրկին յերկար ժամանակ չվերադարձավ։

XVII.

Մայիսի 1-ն էր։

Խուսն բազմությունը լցվել էր փողոցները։ Ցերգ ու նվագով դեպի կուսակցական ռայկոմն էին շարժվում բանվորների մասսայական շարքերը. ռայկոմի առաջ ասեղ դցելու տեղ չկար, ալ դրոշների անտառը ծփում էր մայիսյան կենսարար զեփյուռից։ Բազմության ծայրը լայն պողոտայում էր յերևում։ Խաչաձև փողոցի ծայրերից այս ու այն կողմից շտապում էին բանվորական խմբերը դեպի ռայկոմի շենքը։ Ծաղկավառված մի կին, կողովը լի ծաղիկներով, խառնվում էր բանվոր – բանվորուհիներին։ Փողոցի անկյունի կրպակի բոլոր աշխատակիցները վոչ մի կերպ չէին կարողանում հաղեցնել խմբված բանվորների ծարավը։ Հանդամանքից ոգտվելով, փոքրիկ ջրավաճառը մի րոպեյում դատարկում էր իր կուլան։

Բոլորի հայացքն ուղղված էր դեպի ռայկոմի պատը՝ զարդը, վորտեղից պետք է խոսեր հռետորը։ Սակայն հռետորը չկար. նայողների աչքերին ճոճվում էր դաղ յերևում էին մարդկային գլուխների ծովի վրա։ Յին դրոշների փնջերն ու պլակատները խոշոր լոզունգներով։

Դեպի հեռուները, դեպի պողոտայի խորքերն անվերջ տարածվում էին կարմիր քաթանի և սպիտակ թղթերի վրա փակցրած լոզունգները, վորոնք խաղաղ յերերվում էին մարդկային գլուխների ծովի վրա։

Խիտ շարքերը ճեղքվեցին և փողային որկեստրի նվագածության տակ արագ քայլերով սկսեցին անցնել պիոներների խմբերը, նրանց յետևից, զինվորներով շրջապատված, որորվելով քայլում էին մոտավորապես 20 եշ, վորոնց վրա բազմել էին Զեմբերլենը, Պուանկարեն, Մակդոնալդը, տերտերը, սիրացուն, կուլակը և այլն։ Տիրացվի բուրմառը նույնիսկ խնկարկում էր։ Նրանց յետևից, յերեխաներով ու կանանցով բեռնավորված, դանդաղ շարժվում էին կանաչի մեջ կորած Բանկոտպի ավտոները, վորոնցից առաջինի մեջ նստած էր Լենան։ Ավտոները կանգ առան մահուդի գործարանի բանվորների դիմաց։

Աղասի Աբրամիչը նկատեց Լենային և, շարքից դուրս գալով, մոտեցավ նրան: Լենան ստիպված իջավ ավտոյից:

— Եղ վո՞ւրտեղ եք, վո՞ւրտեղ, ի՞նչպես եք, չեք յերևում, փոքրիկ ճուտիկներն ի՞նչպես են:

— Լա՛վ են, Աղասի՛ Աբրամիչ· շնորհակալություն, դո՞ւք ինչպես եք:

— Լա՛վ, լա՛վ· յերեխաները հիմա ձեզ հե՞տ են:

— Վո՛չ, նրանք այստեղ չեն:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, այդ ձեզ ներելի չէ, տի՛կին· ուրիշների յերեխաներին հավաքել, բերել եք, իսկ ձերոնց մոռացե՞լ:

— Հասարակական աշխատանքներ տանողն իրեն՝ մոռանում է:

— Չպետք է մոռանալ, լավ հասարակական աշխատողը յեթե իր յերեխաների համար չմոռանի, ի՞նչպես կարող է ուրիշի յերեխաների մասին մտածել:

Լենան վիրավորվեց, բայց չուտով ուշքին եկավ: Աղասի Աբրամիչի տարորինակ ակնարկները նրան հասկանալի էին: Վիրավորանքից նրա կոպերը տաքացան և արցունքների պատրաստություն էին տեսնում: Չիմանալով ինչ պատասխան տալ Աղասի Աբրամիչին, Լենան բացականչեց.

— Ի՞նչ գիտեք, վոր չեմ մոռացում:

— Ցես, վոր մի բան չգիտենամ, չեմ ասի:

Աղասի Աբրամիչի պլպլան, նեղահար անող աչքերն ստիպում էին Լենային յերկչոտությամբ լռել, նա ցանկանում եր բացատրել ընտանիքից իր հեռանալու պատճառները, սակայն համոզված լինելով, վոր Աղասի Աբրամիչը չի հավատալու, լռեց:

Ցետևից գոռացին.

— Առա՛ջ, առա՛ջ···:

Պատշգամբից բարձր ձայնով միտինգը բաց արեց մեկը և բոլորը կանգ առան իրենց տեղերում: Լենան և Աղասի Աբրամիչը մոտեցան պատշգամբին: Ինտերնացիոնալի ձայնը թնդացրեց ողը: Զանազան տեղ յերգում ու նվագում էին մեկը մյուսից անկախ: Կարճ վողջույնի խոսքից հետո հավաքված մասսան սկսեց շարժվել առաջ, դեպի Ազատության հրապարակը:

Դեռ բանվորները չէին շարժվել, յերբ Բանկոոպի աշխատակիցներ Պարմենը և Հայկազը մտան Բանկոոպի ավտոն և տեղավորվեցին Լենայի կողքին: Կամրջին չհասած, Պարմենը, հարմար բոպե գտնելով, հարցրեց.

— Եղ ի՞նչ խոշոր գործ ես բացել, Լենա, №18 խանութում:

— Ենքան էլ խոշոր չէ, ինչպես կարծում եք:

— Ցես ասոր իմացա հաշվառք կատարող խանութային հանձնաժողովից, վոր յուրացված է մոտ 30·000 ռուբլու ապրանք:

— Այո՛, մոտավորապես:

— Ցեվ ի՞նչպես բռնեցիք:

— Ամենալավ ժամանակը, յերբ մտնավորները խանութի յետևում գտնվող պահեստից բարձում էին տանելու:

— Ահա քեզ բանվորների մատակարարման գործը բարելավողները,—վշտացած խոսեց Հայկազը:

— Կեցցե՛ս, ա՛խպեր, կեցցե՛ս:

Ճպճպացնում եր Պարմենն աչքերը, բեխերը վոլորելով, բայց դեմքի արտահայտությունը ցույց եր տալիս, վոր նրան վոչ թե վատնումն, այլ մի ուրիշ հարց եր հետաքրքրում. նա ցածր ձայնով շշնջաց.

— Ուրեմն ասոր ընարձրանո՞ւմ ենք:

— Բարձրանում ենք:

— Գիտե՞ս ինչ, Լե՛նա, համաձայն չենք, վոր մեր այսորվա ժամանցին մասնակցի Արշակը:

— Դուք համաձայն չեք, իսկ ես համաձայն եմ:

— Ի՞նչ քեֆ անող մարդ է վոր:

— Քեֆ, քեֆ, յերևի ամբողջ Բանկոոպում արդեն տարածել եք, գիտե՞ք, մեր կանայք ինչ կանեն:

— Իրավունք չունե՞նք Մայիսի մեկն անցկացնելու:

— Իրավունք ունենք, բայց բոլորս միասին:

— Ով կուզի, թո՛ղ դա, մի՞թե մենք խանգարում ենք:

— Դեռ մի Արշակ է գալիս, ասում եք՝ «համաձայն չենք», վոր բոլորը գան, ի՞նչ կանեք:

— Խանգում է, — խոսքը կտրեց Հայկազը:

Պարմենը ժպտաց և կտրմրեց:

— Ձեմ ուզում, վորովհետև մենք գնում ենք մեր հիմնարկից մեր ընկերների հետ, իսկ նա վոչ մի կապ չունի մեզ հետ:

Հրապարակում, ուր բազմահազար մարդիկ եյին հավաքվել, Արշակը նկատեց Բանկոոպի ծառայողներին և, բաժանվելով գործարանի խմբից, մոտեցավ Լենային:

— Ինչո՞ւ չմոտեցար ինձ ռայկոմի մոտ, ես քեզ սպասում եյի, — ժպտալով հարցրեց Լենան:

— Բավական զբաղված եյիք ուրիշներով:

— Նրանք քեզ, դու նրանց, ի՞նչ զզվելի խանդ և այս:

Գիշերը յեկավ: Քաղաքն այրվում եր հրդեհների բազմերանգ բոցերի մեջ: Փողոցները, շենքերը, պատուհանները, խանութների ցուցանակները զարդարվեցին դուլդուլ հրաբորբոք լապտերներով: Սմենուրեք ժպտում եյին Լենինի, Ստալինի պատկերները:

Քաղաքի կենտրոնական ու ծայրամասերի բոլոր այդիներն ու ակումբները լցվեցին մարդկանցով:

Դավթի սարի տակ գտնվող այգում Պարմենը, Հայկազը, Աստղիկը, Լենան և Արշակն սպասում եյին վեցերորդ ընկերոջը, բայց նա չեկավ: Վորոշեցին սարը բարձրանալ միայն հինգով, ճեղքեցին ամբոխը և հերթի կանգնեցին: Շուտով ֆունիկուլյորի վագոնն իջավ սարից ու նրանք մի քանի րոպեյում բարձրացան սարի գագաթը:

Սարի գագաթի տափարակի վրա ավելի զով եր ու հեռաքրքիր: Ամեն ծառի ու թփի տակ զույգ կար, ամեն մի ճաշարանից յերգի, նվագի ու պարի ձայներ եյին լսվում: Այստեղ տխուր մարդ չկար ու չեր կարող լինել: Առաջին ուսավորությունից Լենան զզվանք զգաց, սակայն վոչքր ինչ չըշելուց հետո, նա ընտելացավ: Նրանք մտան սարի գագաթին ցցված ճաշարանի առանձնասենյակներից մեկը, վորի պատուհանից յերևում եր հրավառվող քաղաքը:

Արշակը և Լենան բռնեցին պատուհանի մոտ գտնվող աթոռները, Աստղիկը և Հայկազը նստեցին նրանց դիմացի բազկաթոռի վրա, իսկ Պարմենն սկսեց պատվերներ տալ ճաշարանի աշխատակցին ուղղակի համար: Հանաքներին և ծիծաղներին չեր մասնակցում Լենան. նա, կանգնած պատուհանի առաջ, դիտում եր քաղաքը: Ներքևում գտնվող միլիոնավոր փայլուն ճրագները և աղմուկը կարծես նոր մաքեր եյին ծնում նրա մեջ: Մտածում եր—ինչո՞ւ յես յեկել այստեղ. ի՞նչ հետաքրքրություն: Համապատասխանո՞ւմ է արդյոք այդ առանձնասենյակը և նրա սեղանի վրա բեռնավորված չշերն ու ուտելիքները նոր կենցաղի, հասարակական սնունդի բարելավման պահանջներին: Բայց չե՞ վոր ինքն ազատ է, անկախ, այդ է գլխավորը, հիմնականը,

և այստեղ բարձրանալն իր մաերիմ ընկերների հետ հենց այդ ազատության և անկախության ապացույցն է։

Արշակն այլ բան եր մտածում։ Համոզել, խոստովանվել, վոր ինքը սիրում է Լենային, վերջնականապես և ամբողջովին տիրանալ Նրան։ Բայց այժմ չեր կարող ասել, սպասում եր, յերբ գինովնա, յերբ գլուխը պտտվի, այն ժամանակ միայն կասի։

Պարմենի գել ձայնը գրավեց բոլորի ուշադրությունը։ Լենան ևս շուռ յեկավ, սեղանը ծածկված եր անհամար չչերով։ Նրա հայացքն այլայլվեց, մարմինը փշաքաղվեց, պահ մի ուզեց դուրս թռչել այդտեղից, գնալ կայարան, իջնել քաղաք, սակայն Պարմենը բռնեց նրա թևից և ուղղակի զոռով նստեցրեց իր կողքի աթոռին։

«Պետք է նստել նույնիսկ մինչև առավոտ, վորպեսզի կանանց ստրկական և վոչ ինքնուրույնության մնացորդներն ամբողջապես լինեն իմ մեջ»։ մտածում եր Լենան։

Պարմենը լցրեց գինին ու գավաթը բարձրացնելով, նրա հետ բարձրացրեց վերևի շրթունքը, աչքերը, ունքերն ու ճակատը։

— Ընկերնե՛ր, համաշխարհային պրոլետարիատի ամենաթանգագին, հոյակապ ու մարտական ոգին, Մայիսի մեկը մեզ այսոր հավաքեց այստեղ, յեթե չլիներ մեր ներքին ընկերական կապն ու համակրանքը, մենք չեյինք հավաքվի այստեղ, բայց վորովհետև այդ կապը շատ ամուր է վոչ միայն մեր մեջ, այլ և համաշխարհային պրոլետարիատի մեջ, մենք այսոր հնարավորություն ունեցանք միասին հանդիպելու և ուրախանալու։

Մենք բոլորս նախկին բանվորներ ենք։ ընկ։ Արշակն ել բանվոր է, առաջ է քաշված կուսաշխատանքների համար։ մեր ընտանիքի մեջ խորթ մարդ չկա։ մենք ենք և մենք, մի լավ քեֆ անենք, ընկերնե՛ր։ Խրմում ենք մեր մեծ տոնի, կարմիր Մայիսի կենացը կարմիր գինով։

Պարմենը մինչև վերջը դատարկեց բաժակը։ Դատարկեցին և մյուսները։

— Կոմունիստական բարոյականությունը թո՞ւյլ է տալիս արդյոք գինու բաժակով քաղաքական ճառեր արտասանել,— հարցրեց Լենան Պարմենին։

— Յեթե գլուխդ չես կորցնում, թույլ է տրվում։

— Իսկի ել թույլատրելի չէ, ալկոհոլը քայքայում է որգանիզմը, իսկ կոմունիստական բարոյականությունը քարոզում է պահպանել որգանիզմն աշխատանքի, շինարարության համար,— վրա բերեց Աստղիկը։

— Սխալ է, դուք տեղական պայմանները նկատի չեք առնում։ Լցրեք բաժակները, վորպեսզի քեֆը դիսպուտ չդառնա։

Պարմենն ստիպում եր բոլորին բաժակները դատարկել և վորովհետև ցուցարարները շատ հոգնած ու քաղցած եյին, գինին ել քաղցր եր, խմում եյին ախորժանց ընդհմանալու։

— Լե՛նա, խնդրում եմ՝ բաժակդ դատարկես, դատախոսությունները ներքևը, քաղաքում կկարդան։ Ցեսս կարծում եմ, պետք է թողնենք կոմունիստական բարոյականության մասին խոսակցությունները, կոմունիստն ամեն բանի իրավունք ունի՝ խմելու, սիրելու, պարելու, փոշտալու, հա՛, հա՛, հա՛... խմենք մեր ամենալավ, խելացի և մարմնով ու հոգով գեղեցիկ ընկերներից մեկի՝ Լենայի կենացը։

Պարմենի աչքերը փայլեցին ու հայացքը սևեռելով դեպի Լենան, ուզում էր շարունակել, սակայն Լենան կտրեց նրա խոսքը:

— Դե՛, խմի՛ր, խմի՛ր, մի՛ յերկարացնի:

— Խմում եմ քո կենացը, վորին յերկար ժամանակ ուսումնասիրեցի, բայց վոչինչ չհասկացա:

Բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:

Պարմենը տաքացել էր, նա վերցրեց Լենայի ձեռքը և մոտեցրեց իրեն, սակայն Լենան չուտով կարողացավ դուրս քաշել նրա ձեռքից.

— Կոմունիստներին չի կարելի, յես մոռացա,— վրա բերեց Պարմենն անհարմար դրությունից դուրս գալու համար: Կրկին հրհռացին, իսկ Պարմենն ավելի շուտ – շուտ սկսեց խմել. նրա լեզուն բլբուլ էր դարձել:

Արշակն ու Լենան արդեն նստած էին այն վեստիուկ բազկաթոռի վրա, վոր մի քանի ժամ առաջ ավելորդ ու զզվելի յեր թվում Լենային: Արշակը ջերմաջղորեն դողում ու անվերջ խոսում էր:

— Ցես յերբեք սերն այնպես չեմ հասկացել, ինչպես հիմա. յես յերբեք այնպես չեմ սիրել, ինչպես քեզ:

Լենան ժպտում էր Արշակին. անվերջ շոյում էր նրա սիրավառ խոսքերն իր հայացքով, Արշակը մոտենում էր նրան, մոնում նրա թևի տակ, նայում ցածից նրա լայն բացված, կենսուրախ դեմքին, գլուխը դնում Լենայի թևին, զզվում:

— Հա՛, հա՛, հա՛,—զոռաց Պարմենը,— տեսե՛ք՝ ի՞նչ սիլի-բիլի յեն անում, կոմունիստն իրավունք չունի... դե՛, յեկե՛ք, մոտեցե՛ք սեղանին: Պարմենն այս անգամ ստիպեց բոլորին մեծ բաժակով խմել: Լենայի գլուխն արդեն պտտվում էր: Աստղիկը յերգում էր Մարսելյոզ, իսկ Պարմենը, Արշակը և Հայկազը դեռ ելի յերկար-յերկար խմում եյին ու վիճում:

Արշակն այլևս չդիմացավ գինուն, մեկնվեց բազկաթոռի վրա և սկսեց ննջել:

Լենայի գլուխը ցավում էր. նա դուրս գնաց մաքուր ող ծծելու և զբոսնում էր կանաչ թավիշների մեջ, ճաշարանի պատի տակ: Մի քանի բոպեյից նրա յետևից դուրս գնաց Պարմենը: Մթության մեջ Պարմենը վորոնում էր Լենային:

— Լե՛նա,— զոչեց զողզոջուն ձայնով Պարմենը,— պինդ գրկեց նրան և սեղմեց կրծքին: Մթության մեջ փայլում եյին կատաղած վագրի նման Պարմենի աչքերը: Լենան իր բռունցքներով անխնա հարվածում էր Պարմենին, վորը թավալեց նրան խոտերի վրա ու սկսեց բռնի ուժով իր հաստ շրթունքներով համբուրել, սակայն Լենան գլուխը չկորցրեց, նա իր ուժեղ բազուկներով այնպես բարձրացրեց ու յետ հրեց գինուց իրեն կորցրած Պարմենին, վոր նա, մի քանի քայլ գլորվելով, դիպավ ցանկապատին: Պարմենը կրկին վեր կացավ տեղից և խեղդված ձայնով սկսեց կմկմալ.

— Մի՛ աղմկի, կի՛ն, ասում եմ, մի՛ աղմկի:

— Սրիկա՛, սրիկա՛, հապա մոտեցի՛ր: Ցեվ Լենան ահագին քարի կտոր վերցնելով, բարձրացրեց վեր ու սպասում էր, վոր Պարմենը մոտենա, սակայն Պարմենն ամոթից քրտնած, արագ շուռ յեկավ, բարձրացավ ռանդուղքի վրայով ու մտավ կրկին առանձնասենյակը:

Մի քիչ անց, նրա յետևից ներս մտավ Լենան: Սեղանը քաոսի նման խառնվել էր. Պարմենը գլուխը գրել էր առաջը դրված ափսեյի մեջ ու քնել: Աստղիկը և Հայկազը մեկնվել եյին բազկաթոռի վրա, Արշակը՝ աթոռի վրա:

«Սա՞ յե մթթե մայիսմեկյան ընկերական հավա-
քույթը, սա՞ յե ազատ կյանքը»։ Լենան զզվանք զգաց
և արագ քայլերով մոտեցավ Արշակին, արթնացրեց
նրան, հագնվեց և դուրս յեկան ճաշարանից։ Ասիական
մելամաղձոտ նվագածությունը դեռ շարունակվում եր,
թեպետ ժամի յերեքն եր։

— Թո՛ղ քնեն մինչև առավոտ, իսկ մենք իջնենք
քաղաք,— համոզում եր Լենան Արշակին։

— Անհարմար է։

— Վոչ մի անհարմարություն, յես զգվում եմ,
յես հեռանում եմ։

Անտանելի ամոթից հոգեխռով Լենան Արշակի
հետ իջան դեպի ցած, դեպի հրաշք քաղաքը։ Ակ-
նապիշ նայում եր Լենան մեղմածուփ զովի միջով
ցած սահող վագոնի պատուհանից վոսկե լույսերի մեջ
վանդակված տների ու փողոցների վրա։ Քաղաքը կը-
վարթ եր, դյութիչ, փայլուն։ Արշակը չոյում եր Լե-
նայի մազերն ու թիկունքը, իսկ Լենան վարձես յեր-
կար ժամանակ կարոտել եր զգվանքի։ Նա հեզ ու հնա-
զանդ, աչքերը ճրագներին հառած, անվերջ հառաչում
եր։

Տրամվայի վագոնն իջավ քաղաք։

XVIII.

Լենայի բնակարանից վոչ հեռու, մեծ մոխրագույն
շենքում եր տեղավորված քաղաքի Բանկոոպի վարչու-
թյունը։ Այդ շենքի մեծ դահլիճում Լենինյան ռայո-
նից բաղմաթիվ կանայք եյին հավաքվել, վորոնք ցըր-
ված խմբվել եյին դահլիճի սեղանների շուրջը։ Դեմքը
մատախոհ և լուրջ, կանգնած եր Լենան մի
խումբ յերիտասարդ կանանց մեջ, մեջքը պատին
կռթնած, խոսակցում եր նրանց հետ առորյա խնդիրնե-

ի շուրջը։ Հարցերը շատ եյին և մեկը մյուսից հետա-
քրքիր։ յերբեմն խոսակցության ընթացքում բարձրա-
նում եր ծիծաղի ձայնը և ճղճղոցը, վորից հետա-
քրքրվելով, մյուսները ևս մոտենում եյին խմբին ու
շրջանը հետզհետե մեծանում եր։

Լենան ամբողջովին կլանում եր խոսողների ա-
սածը։ Նա լավ եր ըմբռնել, թե ինչով են շնչում իր ա-
ռաջ կանգնած կանայք և կարոդացավ այնպես անել,
վոր նրանք, դեռ ժողովը չսկսված, ավելի ազատ ու
պարզ արտահայտվեցին այն բոլորի մասին, ինչ վոր
ինքը ցանկանում եր։

— Ա՛յ, յեկել եմ ժողով, բայց ուզղակի ասեղնե-
րի վրա յեմ նստած,—խոսում եր հատ ձայնով մի հաղ
թանդամ տիկին,— յերեխաներս փոքր են, ո՞ւմ մոտ
թողնեմ։ Դեռ ժողով չեմ կարողանում գալ, ի՞նչպես
հասարակական աշխատանքներ տանեմ։ Հավատացե՛ք,
վոր յեթե շաբաթական նույնիսկ մեկ-յերկու անգամ
ժողովի գամ, ամուսինս առանց այլևայլության բա-
ժանման հարց կդնի։

— Ամուսինդ անկուսակցակա՞ն է,— հարցրեց Լե-
նան։

Հաղթանդամ կինը դրական նշան արեց։

— Ի՞նչ է, կարծում եք, վոր իմ ամուսինը կուսակ-
ցական է, նրանից լա՞վն է,— յետևի շարքերից գլու-
խը ներս խցկելով, խոսեց մի յերիտասարդ կին։

— Բջիջի բաց ժողովներին խնդրում եմ ինձ էլ
տանի ժողովի, չի տանում։ Այս մարտի 8-ի որը, յերբ
ինքը գնաց բջիջի ժողով, հաղնվեցի և յետևից գը-
նացի, վրա հասա, յերբ նա ճառ եր ասում կանանց
ազատագրման մասին, ուղղակի գնացի ու առաջին
աթոռի վրա նստեցի։ Յերբ տեսավ, լեզուն կապ ըն-

կավ, ճառը չկարողացավ վերջացնել, յեկավ կողքիս նստեց և, ունքերը կիտած, մրթմրթաց. «Ո՞ւր յեկար, այստեղ ի՞նչ քո տեղն է, գնա՝ տուն, յերեխաները վառարանը չուռ կտան»:

— Ասում եք՝ պետք է ամեն ինչ անել, վորպեսզի խոհանոցից կինն ազատվի,— ճղճղոցով խոսում եր արագիլի նման վիզը յերկարացրած մի կին. մենք բոլորս վառվում ենք այդ տենչով, սակայն, տեսե՛ք, ինչպես են ղեկավարում հասարակական սննդի գործը. յես ինքս Բանկոոպի 12-րդ ճաշարանում եմ աշխատում, բայց յեթե այդ ճաշն ինձ տան, չեմ ուտի, գործը չափազանց վատ հիմքերի վրա յե դրված, ճաշարանի գործում նույնիսկ մնասարարներ կան, իսկ այդ մնասարարների դեմ պայքարող չկա, ճաշի տեղ գիրիլ են տալիս. կարելի՞ յե սառնասիրտ կերպով նայել հասարակական սննդի այսպիսի վիճակի վրա:

—Ասում եք՝ նոր կենցաղ ստեղծենք,— ձեռքը մեջքին դրած՝ առաջ յեկավ մի միջահասակ կին,— այդ նոր կենցաղը շատերը հակառակ են հասկանում, այլասերվում են, քայքայվում:

— Ասում ես ու թողնում,— վրա յե բերում խոսողին մի ուրիշը,— մեր գործարանում ջահել կոմյերիտական բանվորներից մեկը սեր է խոստանում 17 տարեկան յերիտասարդ կոմյերիտուհի բանվորուհիներից մեկին, մի քանի որից հետո, ցանկանում է կենակցել հետը, աղջիկը թույլ չի տալիս և պահանջում է ամուսնանալ: «Մեչչանականություն է»,— ասում է տղան, ի՞նչ ժամանակի սմբուանություն է, դու մի՞թե կոմյերիտուհի յես,—տղային վերջիվերջո աջողվում է կենակցել, մի քանի որից հետո նա թողնում, հեռանում է: Ասացեք, մի՞թե պարկեշտությունը

մեչչանականություն է: Դիմում ենք կոմրջիջին, պատասխանում են. «Դա մանավոր գործ է»:

— Ամուսինս 5 տարի սրանից առաջ ինձ թողեց 2 յերեխայով. այս հինգ տարում յերեք կին է առել, թողել, ելի յերկու յերեխաներ կան այդ կանանցից. յերբ նրան հարց են տալիս իր արարքի մասին, նա պատասխանում է. «Իսկական կոմունիստի, հեղափոխականի կյանքն այդպես պիտի անցնի»: Ճի՞շտ է արդյոք, այդ պիսի արարքն ընդունելի՞ յե:

—Լսեցե՛ք,— ձեռքը շրջանից ներս ցցելով, խոսեց մի ցածրահասակ արծվաքիթ կին:

— Ամուսինս յետամնացի մեկն եր, այրուբենը յես եմ սովորեցրել: Հեղափոխությունից և խորհրդային իշխանությունից հետո ժողով, լրագիր, ընթերցություններ, դեկուցումներ, պրոֆմիություն, և ես մարդն առաջ գնաց, այժմ գիտնական է դարձել իրեն: «Ե՛հ, գիտե՞ս ինչ,— ասում է,— «դու չափազանց յետ ես մնացել. վոչնչից վոչինչ չես հասկանում»:—Իսկ ինչո՞ւ չեմ հասկանում, հարցնում եմ յես նրան. արդյոք ինչո՞ւ ինձ ել հետդ ժողովներ ու թատրոն, ընթերցարան չես տանում, վոր բան հասկանամ: Այսոր, յերբ տուն յեկավ, նստեցրի տանը յերեխաների մոտ ու ասացի. «Հիմա ել իմ հերթն է. պետք է գնամ պատվիրակուհիների ժողով, մինչև վոր համը կիմանաս:

Մարթան, ձեռքի պորտֆելը թափահարելով, ջրդայրն ձայնով հանդատացրեց դանդատվողներին:

—Դուք ակտիվ հարձակումներ եք գործում տղամարդկանց վրա, սակայն կոնկրետ վոչինչ չեք առաջարկում, ի՞նչպիսի միջոցներ գործադրել, վորպեսզի նրանք ձեզ աջակցեն ձեր կենցաղային պայմանն-

րի հիմնական փոփոխման համար: Հետո, դուք այնքան էլ յետ չեք մնացել, ինչպես կարծում եք: Մենք փոփոխվում ենք չափազանց մեծ արագությամբ մեր շինարարության վերելքի հետ: Ապա մի ձեզ հարց տվեք՝ ի՞նչ եյիք դուք յերեք տարի սրանից առաջ, յես ձեզ բոլորիդ ճանաչում եմ, դուք վոչինչ եյիք, իսկ այժմ բոլորդ գրագիտություն ձեռք բերիք, լեզու ունեք բերանները դրեք, բողոքում եք, դա նվաճում է:

Լուսավորված միջանցքից դահլիճի դռների շարքանակի մեջ նկարվեց Պարմենի հասակը, վորը ճակատի տակից նայում եր Լենային. նրա յետևը կանգնած եր Հայկազը. նրանք ներս մտան դահլիճ. վարչությունը հրահանգել եր, վորպես կազմ-բաժնի աշխատակիցների՝ ներկա լինել այսորվա ժողովին:

Զայրույթից Լենայի շրթունքներն սկսեցին դողդողալ, նա ցնցվեց, հայացքը շուռ տվեց դեպի շրջապատող ընկերները, սակայն խոսակցության թելը կտրվել եր, ուշադրություն այլևս չեր կարողանում կենտրոնացնել:

Դուրս գալով իրեն շրջապատող կանանց ողակից, Լենան մի քանի քայլ արեց դեպի սեղանը և կանգ առավ, վորովհետև Պարմենը և Հայկազը ցցվել եյին նրա առաջ:

Պարմենը հին սպայի նման յերկու վոտն իրար կպցրած, մեջքը կորացրեց և, գլուխն իջեցնելով, ցածը ձայնով շշնջաց.

—Մենք ներողություն ենք խնդրում ձեզնից մայիսմեկյան մեզ անթույլատրելի վերաբերմունքի համար:

Լենան կարծես ուշադրություն չդարձրեց նրա ասածներին և արագությամբ դեպի սեղանը գնաց: Պարմենը և Հայկազը հետևեցին նրան:

— Բաց անեք ժողովը,— հարցրեց Պարմենը սիրալիր կերպով Լենային:

Լենան, քմծիծաղ տալով, գլխով դրական նշան արեց:

Ժողովը, բացվեց, կանանցից ընտրվեց նախագահություն, Լենան սկսեց իր զեկուցումը, վոր կազմված եր ամբողջովին այն հարցերի շուրջը, վորոնց մասին խոսում եր հավաքվածների հետ քիչ առաջ: Գլխավորը հենց այդ եր, վոր Լենան կարողանում եր բոլորի ուշադրությունը կլանել և, յերկրորդ՝ արթնացնել ներկա յեղողների մեջ խոսելու, արտահայտվելու ցանկություն: Հետաքրքիր եր Լենայի զեկուցումը և նրանով, վոր նա կենցաղի հեղաշրջման համար չափազանց խիզախ և համարձակ մտքեր եր հայտնում:

Զեկուցումից հետո Բանկոտոպի կլոր ու մեծ դահլիճում խորհրդակցության յեկած բանվորուհիներն ու տանտիկինները յերկար խոսեցին. ավելի շուտ նրանք հայհոյում եյին Բանկոտոպին, վոր նա հասարակական լվացքատների, մանկատների կազմակերպման, բանվորների մատակարարման գործը կանոնավոր հողի վրա չեր դրել: Մասսան բողոքում եր, վոր կոոպերացիան յետ եր մնում տեմպերից: Բոլոր յելույթ ունեցողներին պատասխան տրվեց:

Վաղուց արդեն Արշակը միջանցքում սպասում եր Լենային: Յերբ ժողովը վերջացավ, նա իջավ ցած: Հետաքրքրությունը նրան ստիպեց գալ այդտեղ, տեսնել, թե ինչ է անում Լենան, ումով է հետաքրքրվում: Տեսնելով Պարմենին ու Լենային սեղանի առաջ նստած, նա ավելի այլայլվեց: Ինքնասիրությունը թելադրում եր չերևալ նրանց աչ-

քին: Նա արագ-արագ ցած գնաց և թաղնվեց ներքևի մութ միջանցքում: Կանայք իջնում էին միմյանց հետ խոսելով, և Արշակը պարզ լսում էր նրանց խոսակցությունը:

— Ցերեխաներին ու մարդուն թողել է:

— Ճիշտ, ասում են, վոր սիրեկան ունի:

— Ցեվ սիրեկանն էլ Պարմենն է, այ են կողքին նստած գեղեցիկ տղան, վոր ժողովը բաց արեց:

— Ե՛հ, խակի էլ չէ, դա ապրում է, ասում են, մի ուրիշի հետ:

—Ե՛հ, ի՞նչ գիտեք, վոր խոսում եք, գուցե ի՞նչպիսի ամուսին է ունեցել:

Արշակը, սրահի այուների տակից շունչը պահած, լսում էր:

Լենան դեռ չկար:

Ցերը կանայք հեռացան, արագ ու համարձակ քայլելով Արշակը դուրս յեկավ մութ միջանցքից և կրկին վեր բարձրացավ՝ միջանցքի դռան ճեղքից նա նկատեց, վոր Լենան, Պարմենը և Հայկազը դահլի՛ճի դռան առաջ սիրալիր խոսակցությամբ են զբաղված: Մի քանի վայրկյան դիտելուց հետո նա կրկին շուռ յեկավ, արագորեն իջավ սանդուխքների տակ և վիրը դեպի վեր ծռած, սպասում էր, վոր Լենան ցած իջնի:

Ժամի տասներկուսը զարկեց:

Ծառայողների վերջին մնացորդներն էլ իջան ու գնացին:

Արշակը էս դուրս յեկավ Բանկոոպի շենքից, դիմացի մայթի վրա սկսեց յետ ու առաջ քայլել, աչքերը մուտքից չհեռացնելով:

Մի քանի րոպեյից հետո Լենան, Պարմենը, Հայկազը և մի ուրիշ աշխատակից դուրս յեկան և զրուցելով դիմեցին դեպի փողոցի անկյունը: Արշակը չմոտեցավ, այլ հեռվից սկսեց հետևել նրանց: Փողոցի անկյունում Հայկազն ու անծանոթը բաժանվեցին նրանցից, իսկ Պարմենը և Լենան գնացին Լենայի բնակարանի ուղղությամբ: Արշակն արագացրեց իր քայլերը նրանց յետևից և պարզ նկատեց, վոր Պարմենն ու Լենան մտան Լենայի բնակարանը տանող փակուղին: Սրտի արագ զարկերը հանդստացնելու համար Արշակը կանգ առավ, չորացած շրթունքները լիզեց և նրանց յետևից մտավ փակուղին, նույն մուտքից արագորեն վեր մագլցեց մատերի ծայրերի վրա ու կանգ առավ Լենայի սենյակի առաջ:

Սենյակի ներսը ցածր ձայնով յերկու անծանոթություն փսփսում էին: Արշակն ականջը դրեց դռանը և շունչը կտրած ու լարված ուշադրությամբ լսում էր: Փսփսոցը շարունակվում էր, միայն յերբեմն ցածր խոսակցության ձայները դադարում էին: «Լենան ու Պարմենն են»,— մտածում էր Արշակը: Խանդից և զայրույթից նրա այտերն այրվում էին: Ուզում էր ամբողջ մարմնով այնպես հրել դուռը, վոր մինչև կրունկները բաց լինի, ասկայն ի՞նչ իրավունքով, ինչո՞ւ: Անցավ մի քանի րոպե էս. սենյակում գտնվող զույգը լռեց:

Այնուհետև ամեն ինչ մթնեց Արշակի գիտակցության մեջ: Շունչը կտրվում, կոկորդը խեղդում էր:

Ներքևից մեկն սկսեց բարձրանալ, կանացի կոշիկների կրնկների ձայները տկտկացին սանդուխքների քարերի վրա: Ցածը լուսավորված էր և Արշակը վերևից նայեց տեսնելու՝ ո՞վ է յեկողը, վո՞ր հարկն է բարձրանում: Յեկողը կին էր: Ցերը նա ավելի բարձրացավ, Արշակը նկատեց, վոր Լենան է. ապշած ու շվարած, նա մի քանի քայլ դեպի մութ միջանցքը գնաց մի կերպ թաղնվելու, բայց հարմար տեղ չգտա-

նելով, արագությամբ կրկին վերադարձավ, կանգնեց դռան առաջ և սկսեց դուռը թակել։

Դուռն իսկույն բացեց մի դեռատի կին։

— Ընկեր Լենան տանը չե՞,— միամիտ ձևացնելով իրեն, արագությամբ հարցրեց Արշակը։

— Վոչ։

Լենան արդեն կանգնած եր Արշակի յետևը։

— Տանն է։

Արշակը շուռ յեկավ և ցույց տվեց եր մինչև ականջները չիկնած դեմքը։

— Կարծեմ դու դիտեյիր, վոր յես այսոր ժողով ունեմ, չե՞։

—Այո՛, բայց յես կարծում եյի, վոր ժողովը վաղուց է վերջացել։

—Նե՛րս մտիր։

— Չե, դու հյուրեր ունես, յես կգնամ և վաղը կանցնեմ քեզ մոտ։

Արշակն իր չշմած հայացքը հառած Լենայի աչքերին, վոտը դրեց սանդուխքի աստիճանի վրա։ Լենան նրա յետևից բացականչեց.

—Ընկերուհիս իր տղայի հետ յեկել են մեկ որով, վաղը մեկնում են, յերեկոյան կարող ես անցնել. յեթե տանը չլինեմ, դռան վրա կգրեմ, թե վոր ժամին կլինեմ տանը։

Արշակն արագ քայլ ցած, ճակատի սառած քրտինքի կաթիլները փայլում եյին։ Հրա՞չք եր, թե՞ տեսիլ, նա ծիծաղում եր մտքում իր վրա։

XIX.

Այս առավոտ մահուդի գործարանի ապակեզարդ տանիքն արևի ճառագայթներից արծաթի նման պեծին եր տալիս։ Նայողի աչքերը փայլից շլանում եյին։ Գործարանի ներսի լայնատարած և սյունազարդ սրահի աջ կողմը ձգվող միջանցքով զրնգոցով գնում գալիս եյին վագոնետկաները։ Մեքենաների մի մասն արդեն արտասահմանից ստացվել եր. գործարանում սպասում եյին, վոր գնացքը շուտով կբերի։ Վագոնետկաներն արագ ակնապտույտով ճռճռոցով գլորվում եյին դեպի չենքի խորքը և դուրս գալիս, ցեմենտի շաղախ եյին տանում մեքենաների տեղը պատրաստելու համար։

Ուրախ եյին բանվորները, վագոնետկաների յետ դառնալիս նրանք հռհռոցով թռչում, նստում եյին վագոնետկաների վրա և յերբ ծանրությունից վագոնետկան կանգ եր առնում, հրող բանվորը քարացած կանգնում եր մի կետում, իսկ վարպետ Խեչոն յետևից գոռում եր։

— Խաղի ժամանակ չի, ե՛։

— Իմացա՞ր, մեքենաները յեկել են։

— Ետո՞ր պիտի իջեցնենք։

— Բա յե՞րբ, հարվածայինես նայի՛ր, ինչպես ե խոսում։ Ետրվա գործն եգո՞ւց կգցեն։ Ուզում ես կառուցողների ցեխը սոցմրցումը տանի՞։

—Ե՛հե, տե՛ս, վոնց ա ծուլանում,— գոռաց յետևից բանվոր Սաշան,— մարդ մաշինա ունենա և ծուլանա իջեցնելո՞ւ։

—Մեր աշխարհը, Պե՛տրոս, պետք է դարձնենք մաշինի ծով։

— Վա՛հ։

—Հոմ տեսնո՞ւմ ես, ճոթը պակաս ա, ինչի՞ցն է, ա՛խմախ, եդ բոլորը մաշինիցն է, մաշինա վոր ըլի, եդ բոլորը բոլ կլի։ Մենք էլ գաղրանիցի հուսով չենք լինի։ Մեր գործարանների հուսով կլինենք։

— Պո՛զոս, մո՛տ ելի, բան եմ ասում,— Իլիկոն վագոնետկան կանգնեցրեց շաղախի առաջ,— Սորինն ինձ ենորն ասավ, վոր Միհրանի զարկած մաշինեքիցը բան չի դուրս գալ, նրանք, ասում է, մաշինեքիցը բան չեն հասկանում, խարաբ բանները սաղացրել են վրենները ու խարել, խելքդ ի՞նչ ա կարում եդ բանից:

— Ե՛հ, ե՞լի ախմախ-ախմախ դուրս ավիր:

— Ինչի՞ յե, տո քեզ բան չի՞ լինի ասել:

— Բա Միհրանը բան չի հասկանո՞ւմ:

— Միհրանը հասկանում ա, համա ինժեներ հո՞ չի, ինչքան չլի, բանվոր ա:

— Միհրանը համ ինժեներ ա, համ բանվոր, նրա զրկած մաշինեքն ավելի լավը կլինեն. շները հաղոցին ականջ մի՛ արա, շաղախն ածա՛, տանենք, չո՛ւտ:

Շոգեշարժը սուլոցներով դանդաղ մտավ գործարանի բակը: Բանվորները, գործերը թողած, շտապեցին դեպի գնացքը, վորի բոլոր վագոնները բեռնավորված եյին հսկայական արկղների մեջ փակված մեքենաներով. շոգեշարժը պոկվեց և հեռացավ: Շուտով յեկան Աղասի Աբրամիչը, Սորինը, Խեչոն, Սուրենը, Դավիթը և Գերմանիայից յեկած վարպետները ու սկսեցին մեքենաներն իջեցնելու պատրաստություններ տեսնել: Բարձրացնող կրանն սկսեց աշխատել, պտտելով իր լծակը վագոնների վրա. բանվորները հավաքվեցին վագոնների և վագոնետկաների շուրջը:

—Հարվածային, հարվածային թափով,— գոռում եյին բանվորները և ուռչում եյին նրանց արյունով լցված աչքերը, քրտնախաչ կուրծքները, բաց բերաններ հեռում եյին, վագոնետկաները գլորվում եյին դեպ ծարան. արագորեն նրանք այս ու այն կողմն եյին

թռչում, մեջքները տալիս այս կամ այն վագոնետկայից ցած յեկող մեքենաներին: Ամբողջ որը ձանձրալի ճոնչոցով աշխատեց ծանրություններ բարձրացնող կը բանը. բոլորի շապիկները մինչև վերջին թելերը թրջվեցին: Իսկ յերբ դադար հայտարարվեց, մեծ արկղներից մեկի վրա նստած Սաչան, Սուրենը, Դավիթը, շրջապատված բազմաթիվ բանվորներով, կարդում եյին Միհրանի նամակը:

«Բարև մահուդի գործարանի բոլոր ընկերներին. ջերմ կարոտով սեղմում եմ ձեր բոլորի ձեռքերը: Տըպավորությունները չմեցուցիչ են: Մենք պետք է տիրապետենք տեխնիկային, հասնենք ու անցնենք արտասահմանյան յերկրներից. մեր յերկրում կառուցվող հսկայական գործարանները ապահովում են այդ. բայց ամենաուրախալին այն է, վոր մեզ հետ են նաև Ցեվրոպայի բանվորները, մեր հարազատ, սրտացավ ընկերները. այդ նրանք ցույց տվին Մայիսի 1-ի ցույցի ժամանակ, վորին յես ինքս ականատես եյի: Այստեղի բանվորները վոգևորվում են մեր չինարարական թափերով. կրկնապատկե՛ք ձեր ուժերը, վորպեսզի կարողանանք հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից, վորպեսզի արդարացնենք այստեղի պրոլետարիատի հավատը դեպի մեզ. մեքենաներին աչքի լույսի նման հսկեցե՛ք և պահպանեցե՛ք, շուտով մընացած մեքենաների հետ կլինեմ ձեզ մոտ: Ձեր Միհրան»...:

— Կեցցե՛... ե՛... կեցցե՛..:

Բանվորներից մի քանիսն սկսեցին ծափահարել:

— Ի՞նչ ես գոռում, սպասի՛ր, մի սարքենք, տեսնենք, ի՞նչ է ստացվում եդ մեքենաներից, հետո կը-գոռաս,— դեմքը թթված, բղավեց Սուլիկն արկղի առաջը կանգնած բանվոր Ասլանի վրա: Զարմացած Ա-

լանը չուռ յեկավ և, տեսնելով Սուլիկի հանդիմանութեամբ լի դեմքը, ժպտաց։

— Ի՞նչ կա, ծերուկ, սարքեն, չսարքեն, նամակի հետ ի՞նչ կապ ունի։

— Ասում են՝ մեքենաները բանի պետք չեն, խաբել են, ախո՛ս, ախո՛ս, մեր չարչարանքը։

— Ո՞վ է ասում։

— Նա յե ասում, ով ինձնից ու քեզնից շատ է հասկանում։

— Պարապ մարդու հաջողներին չհավատաս, չե՞ վոր իրենք են սարքավորելու։

—Ցերանի թե այդպես լինի։

— Այդպես կլինի, ծե՛րուկ, Զաղեսի մասին էլ ե՞յին ասում, թե լույս չի տա. տե՛ս, ի՞նչ թառլան լույս է տալիս։

Ասլանը, ձեռքը վեր բարձրացնելով, գոռաց.

— Դայո՞չ սուկնո։

Բանվորները բարձր քրքիջ արձակեցին ու կրկին գրոհ տվին դեպի վագոնները։

Սուլիկը, փայտին կոթնած, մնաց մենակ և քայլերն ուղղեց դեպի գրասենյակ։

Հոգնած ու քրտինքից այրված բանվորները կըրկին լարում եյին իրենց ուժեղ մկանները, իրենց աշխատանքները պատվով վերջացնելու համար։ Բոլորի քրտնաթոր, այրվող աչքերում միայն մահուդ, դույնըզդույն մահուդ եր յերևում, վոր դուրս պիտի բրդեր մեքենաների միջից։ Նրանց մեջ չկար և մեկը, վոր հավատալիս չլիներ, թե այդ մեքենաներից մահուդ է դուրս գալու։ Ու յերբ ծանրությունն իջեցնում եյին վագոնետկաների վրա ու ճոնչալով մեջքները կորացրած, վոտերն ու ձեռներն ուժեղ լարումով ձգած, հրում եյին վագոնետկաները դեպի գործարան ու կանգ առնում գործարանի սալերում, վարպետ Խեչոն ժպիտը դեմքին ակնարկում եր.

— Հանգստացե՛ք, տղե՛րք ջան, հանգստացե՛ք, հարվածայիններն էլ են հանգստանում։

Գալիս ու գնում եյին վագոնետկաները և լցնում գործարանը փայլուն գզող մեքենաներով, շարում գործարանի լայնարձակ սրահում մեկը մյուսի յետևից։ Տեխնիկներն արդեն սկսել եյին կահավորման աշխատանքները։

Բանվորները, շրջապատած փայլուն մեքենաները, յերկար ժամանակ մանրաղնին դիտում եյին նրանց ու զոգևորվում։

Արևն արդեն մայր եր մտել, յերբ աշխատանքները վերջացան։ Գրասենյակի առաջ, բակում Սոբինը և Սուլիկը, քիթներն ուղիղ միմյանց տնկած, փսփսում եյին.

— Գրքերում հաշիվներն անց են կացված այնպես, վոր ստացված է տասը վագոն և ծախսված է տասը վագոն. ծախսված 10 վագոնի կտրոնները և ստորագրությունները գտնվում են ինձ մոտ, հաշվապահության գործերում, իսկ դու ծախսել ես փաստացի 9 վագոն, դեռ մի քիչ էլ պակաս, մնացածը փառավոր կերպով կարող ես հալել, ցինկի թիթեղների նման, իսկ այդ գումարը բավական կլինի մեզ։

— Ցինկի թիթեղնե՛ր... Նրանք քանակով քիչ եյին, իսկ սա մի ահագին վագոն, ո՞ւմ առաջարկեմ։

— Փալա՛ս,— քիթ ու մռութը ծռելով, արհամարհեց Սոբինին Սուլիկը։—Գնա՝, յես մարդ կուղարկեմ քեզ մոտ։

Դպրոցական աշակերտի համեստությամբ Սոբինը չուռ յեկավ Սուլիկի առաջ ու մտավ գործարան,

եկ Սուլիկը, ձեռնափայտին կռթնելով, գործարանի բակից դուրս գնաց:

XX.

Էլեկտրական լամպերի լույսը բանվորական ակմբի սաղարթախիտ պարտեզում ծառերի արանքից հորդաբուղխ խուրձերով թափվում էր կանաչների վրա: Ավազանի կենտրոնից դուրս ժայթքող ջրի շատրվանն այդ լույսի մեջ կազմում էր փոքրիկ ծիածան, որի բազմաթիվ գույներն ավելի էին գեղեցկացնում շրջապատը: Ծառուղու աջ կողմը ձգվող յերկար շենքի ամեն մի մուտքի մոտ կարմիր լույսով վառված մի-մի սլաք էր կախված, տակը՝ փոքրիկ մակագրությունով. «կուլտ-կրթական խմբակ», «կոոպերատիվ խմբակ», «կենցաղի բարելավման խմբակ», «գերմաներեն լեզվի խմբակ» և այլն: Ծայրն ընդարձակ գրադարան-ընթերցարանը վարագույրներով ծածկված և կորած էր սաղարթավոր ծառերի մեջ. այստեղ հարյուրավոր գլուխներ սեպի պես խրվել էին գրքերի, լրագրների մեջ և հափշտակված կարդում էին: Կինո-ժապավենի թրթռացը և մթության մեջ շարժվող պատկերներն ու գեմքերը շատերի ուշադրությունն էին գրավում: Թատրոնի շենքում լավում էին ծափեր, եատրադայի վրա լսվում էր լարային խմբի սիրտ հուզող նվագը: Կուլտուրական այս հսկայական գործարանն անասելի յեռ ու զեռի մեջ էր: Շուրջը թարմ էր և զով:

Լենան, հենված խիտ թփերի յետևը կորած յերկար աթոռի մեջքին, լսում էր յերիտասարդ գույգերի բարձր խոսակցությունը, ծիծաղը, սիմֆոնիայի սիրտ մաշող ձայները, որ յերբեմն մեղմանում, յերբեմն ուժեղանում էին: Եթե այդ սիմֆոնիայի սիրտ հուզող ձայները չլինեին, Լենան չեր հիշի յերեխաներին: Նա ուզեց մտաբերել, թե քանի ժամանակ է, ինչ չի տեսել յերեխաներին, բայց չկարողացավ ժամանակը վորոշել: Մտքում վճռեց բոլորովին մոռանալ յերեխաներին, «յերեխան մարդու կյանքի կեսը խլում է, նա պետք է հեռու ապրի ծնողներից: Մենք այնպես կկառուցենք ու կվերակառուցենք մեր կենցաղը, վոր յերեխաներն առանձին կապրեն ծնողներից, ի՞նչ լավ, ի՞նչ հրաշալի կլինի»,— մտածում էր Լենան:

Սակայն նրա գեմքի փայլը բոպեական էր:

«Կկառուցենք», այդ ո՞վ չի լինի համաձայն, դա ի՞նչ հերոսություն է, իսկ ա՞յժմ, ա՞յժմ: Միտքը ցցվեց նրա առաջ. «այժմ, այժմ պիտի կարողանաս գրոհել և պահպանել ընտանիքը». գլուխը սեղմած յերկու ձեռքերի մեջ, յերկար ժամանակ նայում էր մթության մեջ փայլող էլեկտրոլամպերի լույսերին:

Սիմֆոնիայի հնչյունները կտրվեցին, լսվեց բուռն ծափերի ձայն, ապա հաստ ու պարզ ձայնով արտասանություն:

Թփերի և ծառերի յետևից մեկը մոտեցավ աթոռին. Արշակն էր, նա բռնեց Լենայի ձեռքը և նստեց կողքին:

— Հրաշալի տեղ է, անց ու դարձից, կածանների հեռու:

— Մարդկանց աչքերից ես:

— Դու վաղո՞ւց ես այստեղ:

— Վոչ:

— Ի՞նչ եյիր անում մթության մեջ մինչև իմ գալը:

Լենան ձեռքը տարավ, յետ բարձրացող թփի ճյուղերից մեկը պոկեց և սկսեց պտտել ձեռքին:

— Լսում եմ յերաժշտություն ու խորհում...:

— Ցես գիտեմ, թե ինչի մասին — կենցաղի և ընտանիքի:

Դա Արշակի սովորական հեգնանքն եր, և Լենան չվիրավորվեց:

— Լսի՛ր, ինչո՞ւ յես միշտ հեգնանքով խոսում այդ խնդիրների շուրջը:

— Հեգնանքո՞վ:

— Այո՛:

— Վորովհետև կուսակցականն ընտանիքի հետ գործ չունի:

— Քո կարծիքը սխալ է. յես պնդում եմ, վոր համառորեն պետք է զբաղվենք այդ հարցով, պետք է լուծենք այդ հարցը:

Ամբի ծայրում Ոսո-Ավիաքիմի խմբակը մեծ հրթիռ բաց թողեց, վորի կանաչագույն լույսը կայծակի նման փայլատակեց ու լուսավորեց Արշակի ու Լենայի դեմքերը: Լենան հափշտակված նայում եր Արշակի շոյող ու գրավիչ աչքերին, վորոնք լի եյին վենտուրախ ժպիտներով:

— Ի՞նչ գեղեցիկ եր հրթիռը,— շշնջաց Լենան,— նա լուսավորեց քո դեմքը, ափսոս, վոր հանգավ:

Արշակը մոտեցավ Լենային, նրան ամուր գրկեց և դողդողալով շրթունքները տարավ դեպի Լենայի դեմքը, սակայն Լենան յետ հրեց նրան:

Արշակը փորձեց նրան նորից գրկել, սակայն թվերի միջից մեկն անցավ և նա ստիպված եր ուղղվելու: Այնուհետև յերկուսն ել լռեցին: Արշակը հեռացավ և նստեց դիմացը նստարանի վրա: Մի քանի րոպե հետո, Լենան կրկին կանչեց Արշակին. Արշակը չմոտեցավ, Լենան ինքը յեկավ ու նստեց նրա կողքին:

— Լսի՛ր, այժմ կարելի յե, թույլ եմ տալիս, համբուրի՛ր:

Արշակը չեր նայում նրա դեմքին, անշարժ նստած եր:

— Ցե՞ս լսում:

— Այժմ չեմ ցանկանում, սերը վամ համբույրը հրամանով չի:

Լենան ձեռքով սկսեց շոյել Արշակի մազերը:

Բանվորական ակմբի բուրավետ թփերի մեջ նրանք զմայլվում եյին յերկա՛ր, յերկա՛ր մինչև վոր Ոսո-Ավիաքիմի խմբակը 2-րդ հրթիռը բաց թողեց:

Կանաչավարդ լույսի տակ նրանք բաց թողեցին միմյանց: Սերն այդպես, ինչպես հիմա զգում եր, Լենան յերբեք չեր զգացել: Նրան թվաց, վոր ամենաուժեղ ու անքակտելի կապերով է կապված Արշակի հետ և վոչ մի բան աշխարհի յերեսին չի կարող նրանց բաժանել միմյանցից: «Այսպես կարող է լինել սերը միմիայն այն ժամանակ, յերբ նա հեռու յե ընտանիքից»,— մտածում եր Լենան:

Ցերը նրանք վերադառնում եյին դեպի ռուն, ակմբի խմբակների սենյակների ճակատին փակցված սլաքների մեջ վառվող լույսերը հանգած եյին: Որկեստրը լռել եր:

Այդում համարյա վոչ վոք չկար:

XXI.

— Ա՛յ հիմարի գլուխ, յես քո մարդ ասողին, ի՞նչ իրավունքով բաց թողիր մեքենան, ուզում ես ջարդ ու փշուր անե՞լ,— գոռում եր գերմանացի Ցրլեցը կո-

տրրտված ռուսերենով: Նրա աղաղակը մեքենայի դղրդյունից բարձր էր: Նա թռիչք դարձեց դեպի լծակը և կանգնեցրեց արագ պտտվող սանրող մեքենան:

— Մեքենան պտտվում է իր կարգով, վոչինչ ջարդ ու խուրդ չեղավ, ինչո՞ւ ես հայհոյում, խո՛զի գլուխ, ես քեզանից պակաս մեխանիկ եմ, ի՞նչ է,— դայրացկոտ գոռում էր բանվոր Սաշան այնպես, վոր ճակատի յերակներն ուռչում եյին: Նրա ձայնն արձագանքում էր գործարանի լայնարձակ սրահում: Տեխնիկ Խեչոն, մի յերկաթե մեծ պտուտակ ձեռքին, մոտեցավ Ֆրիցի և Սաշայի շուրջը հավաքված բանվորներին, վորոնք լուռ նայում եյին մերթ մեքենային, մերթ Ֆրիցի ու Սաշայի դեմքին:

— Եղ ի՞նչ արիր, Սա՛շա:

— Վոչինչ, մեքենան կարգի բերելուց հետո բաց թողի: Ձեռքին ռեմեն ուներ, դեն չպրտեց ու գաղտնի նման հարձակվեց վրաս, թե ինչո՞ւ ես բաց թողնում: Զայրույթը գալիս է, վոր մենք էլ բան գիտենք, վոր սովորեցինք բոլոր դաղտնիքները: Ցերեք ամիս յե՞ս եմ չարչարվել մեքենան դնելու, թե՞ ինքը:

—Ցերեք... յերեք... յերեք... испортил машину,— յերեսը ծամածռելով, ծաղրեց Ֆրիցը Սաշային:

— Ի՞նչ ես ծաղրում,— Սաշան գլուխը ձդել էր դեպի նա: Մի ակնթարթում կատվի նման տեղից ցատկեց, թեքեց դիմացի լծակը, մեքենաներն իրար յետևից սկսեցին պտտվել: Ֆրիցը, Խեչոն և շուրջը հավաքված բանվորները զարմացած նայում եյին Սաշայի կրակոտ աչքերին:

— Испортил?... հանդուգն կերպով դիմեց Սաշան Ֆրիցին:

Սպա ջղայնացած, կրկին կանգնեցրեց մեքենան, արագ քայլերով յեկավ, անցավ Ֆրիցի կողքով յերկար, դատարկ միջանցքով դուրս գնաց գործարանից ու մտավ գործարկոմի շենքը: «Ինչո՞ւ մենք այնքան չդիտենք, վոր այդպիսիների կամակորությունների չյենթարկվենք»,— մրթմրթում էր նա ճանապարհին:

Գործարանի միքանի բաժանմունքներն արդեն պատրաստ եյին և կարող եյին աշխատել: Մեխանիկական մասն արդեն վաղուց էր աշխատում, մեքենաները սարքավորելու առաջին որից: Պատրաստ եյին և գլող մեքենաները, վորոնց գլանաձև դղիչների բերանները դեռ թարմ եյին փորձի համար նրանց մեջ նետած բրդի փաթիլները: Բուրդ լվացող և չորացնող բաժանմունքի մեքենաները կանգնեցված եյին, սակայն բուրդ չորացնող վառարանը վորոշ պակասություն ուներ: Գործող մեքենաները ևս բոլորն ստացված եյին, մնում եյին մանվածային ցեխի մի քանի մեքենաները, վորոնց ստանալուն և դնելուն պես գործարանի բոլոր ցեխերը կարող եյին աշխատել:

Գործարանում մոտ 50 հոգի բանվորներ կային, վորոնց գերմանացի վարպետներ Ֆրիցը և Իոսիֆը սովորեցնում եյին:

Խոժոռ և խորամանկ դեմք ուներ Ֆրիցը: Նա բանվորներին և բանվորուհիներին աչքերի տակից էր նայում: Ընդհակառակն էր Իոսիֆը: Նա բանվորների դեմքին ժպտում էր, յերբ նրանք սխալվում եյին, կամ կարգին չեյին կարողանում բաց թողնել մեքենաները: Նա իր ամբողջ գիտությունը ցանկանում էր տալ սովորողներին և յերբ բանվորները լավ եյին ըմբռնում, հրճվանքից նրա յերկու թշերին յերկու նեղ ու յերկարավուն փոսեր եյին առաջանում:

— Իո՛սիֆ, դու մե՞րն ես, թե՞ չե...

— Ձերն եմ, սո՛ւս... Ֆրիցը չիմանա:

— Ֆրիցը վախկոտ է և խորամանկ:

— Ֆրիցը ֆաբրիկանտի ազենտ է։

— Իսկ դու, դու ի՞նչ ես։

— Ցես չե, չե... յես «պրոլետարներ՝ը բոլոր յերկրների, միացե՛ք»։

Ու թուչկոտում եյին աղջիկները Իոսիֆի շուրջը, չոյում եյին նրա մեջքը, բռնում թևերից, կախվում ուսերից։

—Իո՛սիֆ, հիմա ելի նոր գործարան պիտի կառուցենք, մեքենա կբերե՞ս։

— Կբերեմ, ավելի լավ է, յեկե՛ք, միասին պրոլետարիատի դիկտատուրա չինենք Գերմանիան, այն ժամանակ բոլոր մեքենաներն առանց բերելու մերը կըլինեն։

— Բրա՛վո, բրա՛վո, Իո՛սիֆ։

— Սուս, Ֆրիցը... Ֆրիցը չիմանա... յես վոր գնամ Գերմանիա, հենց առաջի որից կպատմեմ ընկերներիս Խորհրդային Միության մասին։ Կասեմ, վոր համառ են այնտեղ մարդիկ, խորտակում են հին, կիսավայրենի կյանքը, սարսափելի, չտեսնված հերոսական թափով պայքարում են յերկաթի, չուգունի և քարածուխի համար ու պայծառ են նրանց ճդռումներն ու վերելքը, աշխատանքը հերոսության ու պատվի խնդիր է, հանդուգն և ուրախ նրանք պարծանքով են նայում իրենց անցած հաղթական ճամբի վրա, սո՛ւս, վոր գնամ Գերմանիա, կոմկուսի շարքերը պիտի մտնեմ։

Ու Իոսիֆին չրջապատած, բանվորուհիները դուրս են գալիս գործարանի բակը։ Նայում է Իոսիֆը սարերի կապույտին ու նրանց յետևը՝ հեռու, հեռու, իրենց քաղաքները...

— Ի՞նչ է, Իոսիֆ... ինչի՞ մասին ես մտածում։

— Մեր յերկրի մասին։

— Ձեր յերկիրը մերից լա՞վն է։

— Լավն է, թե վատ, բայց մերը չե։

— Իո՛սիֆ, դու կին ունե՞ս։

Իոսիֆը լռում եր։

— Ունի,— վրա եյին բերում ամեն կողմից։

— Ասա՛, Իո՛սիֆ, մե՞նք ենք գեղեցիկ, թե՞ գերմանուհիները։

Իոսիֆի կլոր թշերը կրկին ծակվում եյին ու ժպտալով նա չուրթերն առանց բաց անելու նայում եր բանվորուհիների աչքերին, նայում ու անվերջ ժպտում եր։

— Դուք սև եք և կարմիր, դուք լավն եք։

Բանվորները խմբով մոտեցան գործարկոմի չենքի առաջը կիտված բանվորուհիներին, վորոնք կարդում եյին պատից կպցրած հայտարարությունը։

«Այսոր ժամի 2-ին հայտարարված է կոմբջիջի փակ ժողով, որակարգի մեջ է Համկոմկուսի Կենտկոմի հուլիսյան պլենումի արդյունքները»։

Բանվորուհիները Իոսիֆի հետ դուրս յեկան գործարանից, կուսակցականները մնացին ժողովին։

Քաղաքում տոթն ավելի անտանելի յեր դառնում. մարդու շնչառությունը կանգ եր առնում։ Քարերն այնքան տաքացել եյին, վոր դաղում եյին։ Փողոցներում մարդ չեր յերևում, միայն յերբեմն արագ ընթացող տրամվայի վագոնում կարելի յեր նշմարել արևից սևացած և վոտերը բաց եկսկուրսանտներին, վորոնք, գլուխները աջ և ձախ պտտելով, զննում եյին տրամվայից փախչող չենքերը։

Ցերը զեկուցողը ներս մտավ, Սուրենը բաց արեց բջջի ժողովը. կուսակցության քաղաքականությունը գյուղում և հացամթերումների կրիզիսը, յերկրի ինդուստրացումը, վնասարարության և նոր

կաղբերի պատրաստման շուրջն էր պտտվում զեկուցումը։ Զեկուցումից հետո սկսվեցին վիճաբանությունները։ Առաջինը խոսեց Արշակը։ Նրա ձայնը վրդովմունքից դողում էր։ Արշակի այդ անսովոր անհանգստությունն ու վրդովմունքը չափազանց հետաքրքրեց ժողովականներին։

— Ձեզ բոլորիդ հայտնի է, որ մեզ հաց է հարկավոր և ոչ ինդուստրիա։ Իսկ կուլակը չի տա իր հացը, մինչև հացի գները չբարձրացնենք։ Հարկադրաղական քաղաքականությամբ ի՞նչ կարող ենք անել, եհարկե կուլակն իր հացն ավելի խորը կպահի և դու ստիպված կլինես գիջելու։

Արշակի առաջին խսկ նախադասություններից հետո մեծ աղմուկ բարձրացավ։ Ամեն կողմից սկսեցին հարձակվել և ծաղրել Արշակին։ Իսկ նա աղմուկի մեջ շարունակում էր։ Սուրենը և զեկուցողը լուռ լսում էին Արշակին։ Նրանց դեմքի լարված արտահայտությունն ստիպեց բոլորին լռել և Արշակի խոսքերն ավելի պարզ ու լսելի եյին դառնում բոլորին։

— Մեր յերկրի ինդուստրացման ծրագիրը շատ լավ ծրագիր է, ընդունելի, բայց դժվարին և անիրագործելի։ Մեզ համար գաղտնիք չէ, որ այդպիսի թափերով մենք չենք կարող առաջ գնալ և հասնել ու անցնել կապիտալիստական յերկրներից։

— Սխալ է, ոպորտունիզմ է։

— Ի՞նչն է սխալ, վոչինչ էլ սխալ չէ։

— Տղան վախեցել է թափերից, վախը չափեք։

Աղմուկն ու հարայ-հրոցը շարունակվում եյին։

Սուրենը լռեցրեց աղմուկը։ Ցեվ այնուհետև դուրս յելնող բանավորներն այնպես քամբլեցին Արշակին, վոր նա անհարմարությունից ուղղակի քար էր կտրվել։ Ցերը զեկուցողն ավարտեց իր վերջին խոսքը, ապացուցելով Արշակի յերությի ոպորտունիստական բնույթը, Արշակն ամենից առաջ դուրս յեկավ ժողովատեղից և փախավ դեպի քաղաք։

Մութն էր, վոր բջիջը ցրվեց։ Սուրենն արդեն պարզորոշ կերպով նկատեց, վոր իրեն հանձնված բջիջը հեվանդ է և հենց նույն գիշերը գնաց ռայկոմ, խոսելու այդ մասին։

Սաշան, Սուրենի թևից բռնած, նրան համոզում էր։

— Ցես պահանջում եմ՝ վաղը և յեթ հայտնեք ռայկոմին իմ հայտարարության մասին։ յես պատասխանատու յեմ իմ բոլոր խոսքերին։ Սուրենը գլխով համաձայնողական նշան էր անում։

Սուրենին ճանապարհ գցելով, Սաշան յետ դարձավ գործարան, պտտվեց այս ու այն կողմը, նկատեց, վոր մանվածային բաժնում Ֆրիցը, Իոսիֆը և մյուսներն աշխատում են, ներս մտավ և զարմացած հարցրեց Իոսիֆին։

—Տեսա՞ր, Իո՛սկա, ի՞նչ արեց եսոր եդ հայվանը։

— Ի՞նչ։

— Մեքենան, վոր յես իմ ձեռքով եմ դրել, խնամել և սարքավորել, թողեցի, յերևակայի՛ր, սկսեց հայհոյել։

— Դիտամբ է անում, Սա՛շա։

— Գիտեմ։

— Նա չի ցանկանում, վոր դուք բան իմանաք, թշնամի յե, թշնամի։

—Թո՛ղ դա լավ իմանա, վոր յեթե մենք վորոշել ենք, ուրեմն կհաղթանակենք։ Ցեվ ի՞նչպես էր հայհոյում, գի՞տես, նա չի իմանում, վոր

իշխանությունն այստեղ մերն է, վոր այս մեքենաների համար մենք արյուն ենք թափում, վոչինչ, մենք վաղը, մյուս որը մեր գործարանները, մեր տեխնիկները կունենանք, այն ժամանակ դրանց հերը կանիծենք:

— Թշնամի յե, Սա՛շա. դրան հետևի՛ր, Սոբինին, Սուլիկին, դրան ասոր, գիտե՞ս, ելի տեսա, ջչփչում եյին... ուրեմն բան կա. տե՛ս, քեզ ասում եմ, լրագրում չգրես, չիմանամ, դնա՛, միայն Զեկա, գիտե՞ս, Զեկա:

XXII.

Վոլորապտույտ խճուղու վերելքով մթության մեջ բարձրանում եր ավտոն դեպի սարը, ճեղքելով նրա լանջերին փռված ցորենի դեզերով ծանրաբեռնված արտերը: Քաղաքի տոթից դուրս գալով ու լեռնային թարմ ոդին շփվելով, մարդ արբենում եր: Շուրջն այնքան մութ եր, վոր վոչինչ չեր նշմարվում. միայն խճուղին եր փայլում ավտոյի էլեկտրական պրոժեկտորի լույսից, իսկ յերբեմն-յերբեմն դիմացից վերադարձող ավտոների լույսի սուր սլաքները ծակում եյին յեկողների աչքերը, հանդչում և անցնում: Ցածում յերևում եր քաղաքը բազմաթիվ լույսերով, կարծես յերկիրն աստղազարդ յերկինք եր դարձել:

Լենան գլուխը թեթև կերպով հենել եր Արշակի ուսին, իսկ նա շոյում եր նրա թևերը: Վոլորապտույտներում Լենան ամուր կպչում եր Արշակին, վորը աղահորեն համբուրում եր նրան և ավելի ամուր եր սեղմում իր կրծքին:

—Ա՛րշակ, զգո՛ւյշ վոլորապտույտներին,— հեգնում եր Լենան:

— Վոլորապտույտներից պետք է ոգտվել:

— Ուրեմն ոգտվելու համա՞ր ես ապրում, ուրիշ վոչինչ:

— Կյանքի գերագույն նպատակը սերն է, վորովհետև նա ամենազորեղն է. սերը հաղթանակում է ամեն ինչի:

— Սերը հեղափոխությունից ուժե՞ղ է:

— Անկասկած. ինչո՞ւ սիրեցիր, ինչո՞ւ յես քեզ սիրեցի, չե՞ վոր յես կին ունեմ, իսկ դու ամուսին ես ունեցել, չե՞ վոր յերկար ժամանակ տանջել է մեզ այդ հարցը: Ինչո՞ւ սերը հաղթահարեց քեզ:

— Ինչո՞ւ:

— Այո՛, ինչո՞ւ, հենց այնպես հո չեր կարող պատահել:

Լենան հիշեց Միհրանի խոսքերը. սրտում իր ատելություն զգաց դեպի այդ սերը և յերկար մտորումներից հետո, յերբ ավտոյի սուլոցները դադարեցին և մեքենան դուրս յեկավ ուղիղ ճանապարհ, նա բացականչեց:

— Ինձ թվում է, վոր ամոթ է, յերբ այս մեծ գրոհի որերում սերը հաղթահարում է մարդուն, վոչնչացնում է նրան, վորպես հասարակական մարդ և դարձնում նրան անհատական: Ինձ թվում է, վոր այդ ճիշտ է: Ցեսս առաջ կարծում եյի, վոր ազատ սիրելը, ազատ սիրելն ավելի ազատություն է բերում մարդու, իսկ իրականությունն ինձ համոզում է, վոր անհատականություն և ստորություն է բերում: Չե՞, կարծես չի դուրս գալիս, չե՞:

— Ե՛հ, Լե՛նա, չե՞ս տեսնում, ամեն տեղ դժվարություններն այնքան շատացել են, վոր մինչև մտա-

ծենք կյանքը ձևափոխելու մասին, մեր սիրելու ժամանակն ել կանցնի:

Ճանապարհը վատ եր, ավտոյի ցնցումներն այնքան ուժեղ եյին, վոր Լենայի գլուխը պտտվում եր. ներքուստ նա զգում եր, վոր մի ինչ-վոր ուժ բողոքում է այդ աննորմալ հարվածների դեմ. նրա սիրտն արագ բաբախում եր: Բազմաթիվ թելերով նրա մարմնին կպած մի կենդանի կծիկ վորովայնի մեջ կարծես ձգում, մղում եր նրա սիրտը:

— Արշակ, յես վատ եմ զգում...:

Լենան փալասի նման վայր ընկավ նրա բազուկների վրա:

Արշակն ստիպված ավտոն կանգնեցնել տվեց:

Փոքր ինչ հանգստանալուց հետո, Լենան ուշքի յեկավ և ճանապարհը շարունակեցին:

— Ի՞նչ պատահեց քեզ,— մի քանի անգամ հարցրեց Արշակը:

Լենայի դեմքն այլևս չեր ժպտում, նրա այտերը դունատվել եյին:

— Գլուխս պտտվում է, յես հղի յեմ:

— Հղի՞... ի՞նչ ես ասում:

— Մի՞թե այդքան զարմանալի յե. ինչո՞ւ սարսափեցիր:

Արշակն այլայլվեց:

— Զե...

— Ուրախ չե՞ս, վոր հղի յեմ:

— Խայտառակ բան է, այդպիսի բանից յես յերբեք կյանքումս չեմ ուրախացել:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչ պատահեց քեզ, ի՞նչ, կին, ասա՛ր:

— Միհրանը յեկել է, յերեխաների մոտ է, ավելի լավ է, կրկին վերադառնանք քաղաք:

— Վախենո՞ւմ ես, ի՞նչ է Միհրանից. ցանկանում ես վարադառնալ, վերադառնանք:

«Իհարկե վերադառնանք»,— մտածում եր Լենան: Բայց մի հակառակ զգացում, Միհրանին դոնե հեռվից տեսնելու ցանկությունը կարծես ավելի ուժեղ կերպով ծավալվում եր նրա եյության մեջ: Նրա միտքն ընկավ, վոր այս ճանապարհով, վորի ափին կանգնած եր Լենան, քանի-քանի անգամ անցել է Միհրանի հետ, քանի-քանի անգամ յերեխաների հետ այս փոքրիկ մարգերում ծաղիկներ է հավաքել և ժպիտներով ու յերգերով ճանապարհ դրել Միհրանին քաղաք: Այժմ ինչո՞ւ յե նա ամաչում, փախչում. մի՞թե ազատ ապրելու իրավունք չունի, ինչո՞ւ չի ուզում գնալ, տեսնել յերեխաներին, վերջապես Միհրանին, չի՞ կարելի, ի՞նչ է, տեսնել նրան, վորպես ընկերոջ: Սակայն ի՞նչպես նայեր նրա շիտակ ու ազնիվ հայացքին, ի՞նչ պատասխան տար նրան իր արարքի համար, յերբ նա հարցներ:

— Գնա՛նք, այստեղ խոնավ է, կմրսես,— կոկորդը մաքրելով, խոսեց Արշակը:

— Սպասի՛ր:

«Այնուամենայնիվ պետք է գնալ և տեսնել նրան, դոնե յերեխաների պատրվակով, ի՞նչ կա վոր, իրը չգիտեմ, թե նա յեկել է, կտեսնվեմ և վերադառնամ»:

— Գիտե՞ս ինչ, Արշակ, յես ուզում եմ այնուամենայնիվ տեսնել յերեխաներին և այնպես վերադառնալ քաղաք:

— Նու, հիմա կոկսես այս կողմ, այն կողմ, ուզո՞ւմ ես, գնա՝, տե՛ս։

— Սակայն չգիտեմ, վորքան հարմար է այդ։

«Ինչո՞ւ յեմ այս մարդու հետ հարմարության և անհարմարության մասին խոսում, սա ի՞նչ կարող է ասել, հարմար է, թե վոչ»։

— Այսպես, Արշակ, դու սպասի՛ր մեքենաների կայանի մոտ, ամենաշատը կես ժամ կմնամ, հետո կգամ և կվերադառնանք քաղաք։

Արշակը գնաց դեպի կայան, իսկ Լենան մութ ծառուղիով վերադարձավ յեկած ճանապարհով նույնքան դանդաղ քայլերով, վորքան արագ փախել եր։ Մտածում եր, թե ինչպես պետք է հանդիպի Միհրանին։ Յերեխաներն ի՞նչպես պետք է դիմավորեն, հարկավոր է վողջունե՞լ Միհրանին, ձեռքը սեղմե՞լ, թե՞ վոչ։ Ի՞նչ կմտածի նա, իսկ ինչո՞ւ չբարևել, ձեռքը չսեղմել, վայրենի հո չի՞»։

Այսպիսի մտքերով ծանրաբեռնված, նա մոտեցավ ամառանոցի բակին, վորտեղ անհամարձակ կերպով դըրեց սանդուղքին և սկսեց առանց շչուկի բարձրանալ վեր։

Զգուշությամբ պատուհանից ներս նայեց։ Միհրանը նստել եր թիկունքը դեպի դուռը, Կիմիկը կանգնած եր նրա առաջ, իսկ Ավրորան նստել եր ծնկանը և յերկու ձեռքով գրկել եր հորը։ Սենյակի խորքում մայրն ինչ-վոր բան եր պատրաստում։ Սեղանը բեռնավորված եր բազմաթիվ խաղալիքներով և փաթեթներով, վոր ըստ յերևույթին Միհրանն եր բերել։

Կողքի ամառանոցավոր հարևանը հանկարծ դուռը բացեց և պատշգամբ դուրս յեկավ, Լենան անհարմար

զգաց կանգնած մնալ, յետ փախչել չեր կարող և նա բռնեց դռան փակիչը։ Փակիչը շարժվեց, հարևանը չնկատեց պատշգամբում կանգնած կնոջը և կրկին ներս գնաց։ Դուցե յեթե հարևանը դուրս չգար, Լենան սենյակը չմտներ, նորից յետ դառնար, բայց արդեն ուշ եր։ Միհրանը և յերեխաները դռան փակիչի ճռնչոցը լսել եյին և վիզները թեքած դեպի դուռը, սպասում եյին, ով է ներս մտնելու։ Դուռը բացվեց և Լենան չառաջնորդված հայացքը դեպի հատակը հառած, վողջունեց, արագ մոտեցավ մահճակալին, ձեռքի իրեղենները դրեց նրա վրա և մոտեցավ Ավրորային։

— Արի մոտս։

Յերեխան նույնիսկ չնայեց դեպի մայրը։ Միհրանն, Ավրորայի թևերից բռնած, ուզեց մորը հանձնել, սակայն նա յերկու ձեռքով ամուր բռնեց հոր վզից և պրկ չեկավ։ այս անհարմար դրությունից Լենան ավելի շիկնեց, վորովհետև Միհրանը ժպտաց դառը ժպիտով, իսկ Կիմիկը թարս նայեց մոր վրա ու կպավ հորը, առանց ուշադրություն դարձնելու Լենային։

Լենան ցածր ձայնով սկսեց դրուցել մոր հետ. մերթ ընդ մերթ նա նայում եր Միհրանին, վոր կարծես յերիտասարդացել եր, դեղեցկացել։ Նախկին լրջությունը չեր կոլցրել, նա շարունակ ժպտում եր։

— Յերեխաները պատմեցին, վոր այստեղ ես յեկել նրա հետ,— ցնցեց ցածր ձայնով մայրը։ Լենան ավելի այլայլվեց։ նա զգաց, վոր այժմ իր պատասխանատվության ամենացածր բոպեներն են։ «Մի՞թե նա դեռ վոչ վոքի հետ չի կապվել և նախկին վեհությամբ ու աղնվությամբ կանգնած է իմ առաջ, ան-

ընկճելի սիրո և զգացումների սանձերն ամբողջովին իր ձեռքում հավաքած, զսպված, ինչպես խոսքով, այնպես էլ գործով։ Իսկ յես կանգնած եմ նրա առաջ, վորպես փետրահան, խղճուկ հավ, լքված, մոլորված, ոտարի պես նայում եմ վերելքի մեծ ճամբին. ինքս չգիտեմ, թե ուր եմ գնալու, ցանկանում եյի նոր հոյակապ կյանք, դուրս յեկավ դատարկ անհատականություն և ես մարդը համառորեն ծիծաղում է ինձ վրա»։

Միհրանը Կիմիկի և Ավրորայի ականջներում փսփսալով, համոզեց, վոր նրանք գնան մայրիկի մոտ. յերեխաները դժկամորեն մոտեցան և Լենան հասկացավ, վոր ուղարկողը Միհրանն է։

Յերեխաները, փոքր ինչ ընտելանալուց հետո, պատմում եյին մորը, թե ինչ է բերել իրենց համար հայրը, թե իրենք ինչ են պատմել հորը մամայի մասին։ Միհրանն, աթոռին թիկն տված, նայում եր հակառակ կողմը և լսում եր յերեխաների պատմությունները ու ժպտում. նրա ժպիտների մեջ և՝ դառնություն և՝ հեգնանք կար, հեգնանք ուղիները կորցրած մարդու վրա։

Շարունակվող լռությունը ճնշում եր նույնպես Միհրանին, նա ցանկանում եր խոսել Լենայի դրության, աշխատանքների մասին, սակայն անհարմար եր համարում։ Կիմիկը հասկանում եր արդեն այդ լռության պատճառը. նրան թվում եր, թե իր կյանքը ևս այդպես է անցնելու։ Նրա փոքրիկ դլխում խմորվում եր համառորեն մի միտք, վոր յերբեք ինքը չամուսնանա և յերբեք ինքը յերեխա չունենա։ Ավրորան վոչինչ չեր հասկանում և հարցնում եր Լենային.

—Ինչո՞ւ ել պապայի հետ չես խոսում, ինչո՞ւ...։

Լենան սկսեց գնալու պատրաստություններ տեսնել։

Մայրը նրա ձեռքից բռնելով, նստեցրեց աթոռին։

—Ո՞ւր ես գնում, վաղը քո հանգստի որն է, գնալմնալ չկա, ինչո՞ւ յեք լռել, բաժանված ամուսինները չե՞ն զրուցում միմյանց հետ, ի՞նչ է։

— Վո՛չ, յես չեմ կարող մնալ, թո՛ղ Միհրանը մընա, յես կերթամ, յես անպատման պետք է գնամ։

— Միհրանը չի կարող մնալ, վորովհետև գործ ունի, իսկ դու կմնաս։

Լռությունը շարունակվում եր։ Մի քանի րոպեյից հետո, անկուշտ համբույրներ դրոշմելով կարոտած թշերին, Միհրանը բաժանվեց նրանցից։ Մահուդի գործարանի մեքենայի լամպերը վառվեցին ու լուսավորվեց ծառուղու խորքի մթությունը։ Միհրանին հրաժեշտ տվող յերեխաների յետևը կանգնած Լենան, ծառուղու խորքում նկատեց Արշակին, վորն ավտոյի արձակած լույսի շերտից անցավ մթության մեջ։

Ավտոյի գնալուց մի քանի րոպե անց Լենան ծառուղու խորքում փայփայում եր Արշակի ուսերը և լսում նրա նախատինքները։

XXIII.

Միհրանն իր վերադարձից հետո մեծ փոփոխություններ եր նկատում գործարանի աշխատանքների և աշխատողների մեջ։ Կարծես մի աներևույթ ուժ ամեն ինչ խառնել, տակն ու վրա յեր արել գործարանը։ Նա գիշեր-ցերեկ չեր հեռանում գործարանից։ Նա

անցնում էր բաժանմունքից բաժանմունք, գրասենյակից՝ գործարկում, գործարկումից բանվորաշեն։ Ցերեկ չնայած իր կարգադրություններին, դուրսը մնացած նոր մեքենաները ծածկոցով չէին ծածկվել, բանվորներն ու բանվորուհիները, վորոնք աշխատում էին մեքենաների վրա, դեռ վոչինչ չէին սովորել, բաժանմունքների աշխատանքները դանդաղում էին։ «Մի՞թե այս բոլորը չարամիտ կերպով և արվում, մի՞թե այստեղ վնասարարներ կան»,— մտածում էր Միհրանն ու ճիգ էր թափում մոքում վերականգնել վնասարարության կոնկրետ փաստեր, հետևանքներ, սակայն չէր աջողվում ու նա կանգ էր առնում, ձեռքերը գրպաններում, չուած հայացքը հառած մի կետի, անվերջ նայում էր յերկա՛ր-յերկա՛ր։

Մի որ, յերբ մտածմունքների մեջ Միհրանը կանգնած էր գործարանի բակում, գործարանի կորպուսի յետևի անկյունից մեկը շուռ յեկավ։ Միհրանը նկատեց, վոր յեկողը կանգ առավ պատուհանի առաջ, մի-մյանց վրա դրեց այնտեղ թափված աղյուսները և վոտերի թաթերով կանգնելով աղյուսների վրա, յերկար ժամանակ դիտում էր գործարանի ներսը։ Միհրանը հենվեց պատին և ենչակուր դիտում էր նրան։ Կես ժամի չափ դիտում էր պատուհանից նայողը և այդ ժամանակաշրջանում Միհրանը չշարժվեց տեղից։ Ցերը անծանոթն իջավ աղյուսների վրայից, վոտով ցրեց աղյուսները և քայլերն ուղղեց դեպի նա, Միհրանը թաղնվեց պատի անկյունում։

Մոտեցողը բանթղթակից Սաչան էր։ Միհրանը դուրս թռավ անկյունից, ամուր բռնեց նրա ոձիքից ու թափահարելով, ասաց.

— Դու բան դիտես, Սա՛չա, և թաղցնում ես ինձանից։

Միհրանը ծպտում էր, ուրախանալով, վոր բռնեց Սաչային, իսկ Սաչան վախեցած նայում էր Միհրանի խառնված աչքերին։

— Ցես ի՞նչ պիտի դիտենամ։

— Այստեղ կարծես մի ձեռք հակառակ ուղղությամբ է պտտում մեր աշխատանքների անիվը, իմ բացակայության ժամանակ այստեղ նույնիսկ փոխվել են մարդիկ, կուսակցական ընկերներից մի քանիսն անճանաչելի յեն դարձել։

— Ձե՞վ վոր յես մի քանի որ առաջ բջիջումը նույնն ասացի, չե՞ վոր այդ զզում է մեր ամբողջ գործարանը։

— Դե՛, այժմ ասա՛, կոնկրետ, գործնական ի՞նչ գիտես։

— Հենց եդ կոնկրետը չգիտեմ, ընդհանուր առմամբ, յես ել նույնն եմ զզում, ինչ վոր դու։

Միհրանը բաց թողեց Սաչայի թևը և կասկածանքով նայում էր նրան։ Սաչայի մի կետին նայող աչքերը ապացուցում էին, վոր Սաչան շատ բան գիտե։ Իսկ նա, կեղծ խոստովանանքից անհարմար զգալով, շարունակում էր լռել, մինչև վոր կիսաձայն Միհրանը։

— Ցես յերբեք չեմ կասկածել քո ընկերական անկեղծության վրա, իսկ դու պարզապես կեղծում ես, չես ուզում ինձ ասել, ինչ վոր գիտես. յեթե դու բան չգիտես նայիր, բա ինչի՞ մասին եյիր բջիջի բյուրոյում խոսում։

— Ցես կոնկրետ վոչինչ չգիտեմ, յես զգուշացնում եյի բյուրոյին, ընկերներին։

— Են ո՞ւր եյիր պատուհանից այսքան ժամանակ նայում ներս։

— Ենպես, ուզում եյի պարզել, ի՞նչ են շինում։

— Բա դու իսկի պարզած բան չունե՞ս։

— Ցե՛...ե՛...ս...սկսեց յերկարացնել Սաշան։ Միհրանը հասկացավ, վոր նա ամեն ինչ գիտե։

— Դո՛ւ, դու ասա՛, դա ի՞նչ հիմարություն է, ումի՞ց ես թաքցնում։

— Իրավունք չունեմ։

— Մի՞թե դու կասկածում ես, վոր յես գաղտնիքներ չեմ կարող պահել և յերկրորդ մի՞թե դու ցանկանում ես, վոր յես կործանվեմ, վոր ինձ պատասխանատվության յենթակեն։ Ել ի՞նչ կոմունիստ, ի՞նչ ընկեր ես դու։

Միհրանը դառը կերպով ժպտաց Սաշայի աչքերին։ Սաշան զգաց, վոր Միհրանը վիրավորվեց։ Ու թեպետ պետք է գործի ընդհանուր շահերի համար գաղտնապահ լիներ, սակայն նույն շահերը թելադրում եյին, վոր ինքը հայտնի այն ամենը, ինչ վոր գիտի գործարանում կատարվող վնասարարության մասին։

— Լավ, կպատմեմ, ա՛րի։

Ու Սաշան բռնելով Միհրանի թևից, գնացին դեպի պատի տակը և աղյուսների վրա նստեցին։ Սաշան պատմում եր Սոբինի, Ֆրիցի, Սուլիկի փոխադարձ կապի և նրանց կատարած վնասարար աշխատանքների մասին. Միհրանը լսում եր Սաշային հանդիստ ու, յերբեմն կտրելով նրա խոսակցությունը, հարց եր տալիս, վատերն ավելի լավ ստուգելու համար։ Սաշան հայտնեց, վոր Պետքաղվարչությունն արդեն հաստատ գիտե, թե ինչպես է Սոբինը յերկու վագոն շինանյութ յուրացրել, թե ինչպես Ֆրիցը պետական շինանյութերի համար արձանագրություններ է կազմում, վոչնչացնում և նորը պատվիրում։ Սաշան Միհրանին պատմում եր իր ականջով լսածները, թե ինչպիսի ագիտացիա յեր մղում Սոբինը բանվորների մեջ հոգուտ աջերի, «ձախերի», տրոցկիստների։

—Հապա բարձրացի՛ր և նայի՛ր այս պատուհանից, տե՛ս ի՞նչպես են անգործությամբ զբաղվում և արտաժամյա ստանում,—բացականչեց Սաշան և յերկուսն ել վեր կացան։ Միհրանը կանգնեց աղյուսների վրա և նայեց պատուհանից։

Ներսում Ֆրիցն անգործ նստել եր մասնիկները վեր ածված մեքենայի առաջ, ծխում ու փսփսում եր Սոբինի հետ։ Նրանք ինչ-վոր բանի մասին վիճում եյին։ Սոբինը չեր համաձայնվում Ֆրիցի հետ, իսկ Ֆրիցը կարմրատակած ու բորբոքված ամբողջովին ձգված դեպի Սոբինը, կարծես ուզում եր հարձակվել նրա վրա։

— Այսպես ամբողջ գիշերն անց են կացնում անգործ։

Բորբոքված վեճից հետո Սոբինը, շուրջը դիտելով, դրպանից մի կապոց թղթադրամներ հանեց և տվեց Ֆրիցին։ Ֆրիցն խկուշ դրամները դրեց գրպանը և, մեքենայի մասնիկներից մեկը վերցնելով, սկսեց խաղացնել ձեռքին։

Ֆ — Տեսա՞ր, ինչ կատարվեց, լավ վրա հասանք, Միհրան։

— Հասկանալի յե, — խորը վշտով համակված, սեղմված ատամների միջից շշնջաց Միհրանը։

— Շուտով այդ բոլոր գումարների պատմությունը կբացվի։

Միհրանը և Սաշան իջան աղյուսների վրայից և գնացին դեպի դրասենյակը։

—Գիտե՞ս, այստեղ միայն սրանք չեն, այստեղ տրոցկիստներ ել կան։

Նրանք նորից կանգ առան և Սաչան մանրամասն պատմեց, թե ինչպես տրոցկիստները ժողովներ են կազմակերպում մոտակա խաղողի այգիներում, ինչպես Սիմոնը նկատել է մի քանի անգամ նրանց կասկածելի հավաքույթները: Ընդարձակ բակը լուսավորող լիմոնաձև լամպի սյունի տակ, Սաչան շարունակում էր իր պատմությունը, խառնելով իր փսփսոցը Քոի միապաղաղ խշշոցի հետ, իսկ Միհրանը լսում էր հանգստությամբ:

— Ցեթե ուզում ես համոզվել, Միհրան, ա՛յ, մի քանի րոպեյից հետո Սիմոնն ինձ տանելու է նրանց հավաքույթը ցույց տալու, դու հենց դրա համար եմ թափառում այստեղ, գնանք միասին:

Նրանք լուռ մոտեցան Սիմոնի տնակին: Սիմոնը սովորական քայլվածքով դեռ ու առաջ էր գնում դործարանի դռան առաջ: Սաչան, կանգնելով նրա դիմաց, բացականչեց.

— Հապա պատրաստվի՛ր, արդեն ժամանակն է:

— Բա պոստն ո՞ւմ թողնեմ:

— Իսկապես ի՞նչ անենք:

— Դե՛, դուք ա՛յ եսպես գնացեք,—մատը մեկնելով, խոսեց Սիմոնը. դեռ կնոջս կկանչեմ, իմ տեղը կանգնի, դեռ ձեր յետևից կհասնեմ:

Քայլում էին Նրանք գլխիկոր ու լուռ դործարանի յետևը փռվող դաշտի փշերի ու քարքարոտ մացառների միջով դեպի գերմանացիների այգիները: Նրանց վոտերը դիպչում էին քարերին, ընկնում էին փոսերի մեջ, դուրս դալիս: Ցերը արդեն մոտեցել էին այգիների ցանկապատին, Սիմոնը հասավ Նրանց յետևից և կանգնեցնելով Նրանց, մատը ցցեց դեպի յերկինք:

—Ա՛յ . . . տեսնում ե՞ք, Զագեսի մաչտը, նրա տակին են, գնացե՛ք:

— Դո՛ւ ել մեզ հետ արի, — ասաց Միհրանն ու առաջ ընկավ. նա դեմ առավ մացառոտ ցանկապատին:

— Կոխի՛ր, անցի՛ր, — վոտը ցանկապատին դնելով, փսփսաց Սաչան:

— Չե, սպասի՛ր, յես չաքմեք ունեմ, — ասաց Սիմոնը, — անցնեմ, հետո դուք ավելի հեշտությամբ կանցնեք:

Ու հաղթանդամ վոտերը դրեց ցանկապատի վրա: Ցերկարատև ճարճատյունի ձայներ լսվեցին:

Նրանք թռան մեկ-մեկ ցանկապատի վրայով այդին: Վազերի տակով, սողալով փորձված այգեպանների նման նրանք առաջ եյին շարժվում հանդարտ դեպի մաչտը: Ցերեսուն քայլի վրա լսվում էր արդեն ժողովականների խոսակցության ձայնը, սակայն ո՞վքեր եյին խոսում, չեր կարելի ճանաչել:

— Տե՛ս, յերևում են, նայի՛ր, վազերի արանքով:

— Հա, սո՛ւս . . . յես այժմս կվառեմ ելեկտրական լամպը և մենք կմոտենանք:

Մի քիչ մոտենալուց հետո, Միհրանը վառեց ելեկտրական լամպը, վորի չողերն ընկան ուղղակի խմբի մեջ: Հանկարծակի յեկած բոլորը վեր թռան տեղներից:

— Չշարժվե՛ք,— դուք շրջապատված եք,— գոռաց Սաչան:

Նրանք յերեքով շրջապատեցին խմբին. Միհրանը լուսավորում էր նրանց դեմքերը և խլում ձեռքներին գտնվող թղթերը. բոլորը մահուղի դործարանից եյին. լապտերի լույսի տակ մեկ-մեկ փայ-

լում էին Ցասոնի, Սուլիկի, վարպետ Ոհանի և մյուսների գունատված դեմքերը:

Ընդամենը յոթ հոգի էին, վորոնցից չորսը կուսակցականներ, իսկ յերեքն՝ անկուսակցական: Նրանց բոլորի մոտ յերևան հանվեց տրոցկիստական ոպոզիցիայի գործունեության մասին դրականություն, վոր բռնագրավեց Սաշայի կողմից: Ժողովականները գունատ էին և սպասում էին Միհրանի հրամանին:

—Ի՞նչ եք փստյոացել, ասե՛ք, ի՞նչ եյիք չինում,— հանդիմանում էր Սաշան:

—Դուք իմանում եք, թե ինչ էյինք չինում, ինչո՞ւ յեք հարցնում:

— Իմանում ենք, իհարկե, գեներալների հետ նոր կուսակցություն եք կազմում:

Նրանք լռում էին:

—Դե՛, էլ ինչո՞ւ յեք կողքներդ դեմ արել, առա՛ջ ընկեք:

Շշմած անսպասելի հարվածից, նրանք չարժվեցին տեղներից և մեկը մյուսի յետևից դուրս յեկան սրդուց:

Փողոցի ծայրում նրանք միացան կրկին և փսիրսոցով առաջ էին շարժվում:

Միհրանը և Սաշան բաց թողին բոլորին, իսկ իրենք ուղևորվեցին դեպի շրջկոմ:

Իմ սիրտն ուզում է պայթել գրոհի թափերում, իսկ դրանք մոլորության ճամբեն բռնած, բաժանվում են ու նախկին գեներալ Սուլիկի հետ են կապում մեր մեծ ճամբան: Վոչնչացնել է հարկավոր դրանց:

— Դրանց չի վոգևորում մեր յերկրի սոցիալիստական շինարարության նվաճումները, Սա՛շա, մեր

պայքարը, հերոսամարտը դատարկ հնչյուններ են դրանց համար, կորած մարդիկ են, դասակարգից, ապազայից կտրված, այլասերված, մոլորված:

XXIII.

Շչակները սուլեցին մեկը մյուսի յետևից, սուր ու ճղրտուն ձայնով: Գործարանը դատարկվեց: Սոբինը գործարանի ներսում պատուհանների տակից սողալով ստուգեց իր թաղցրած դինամիտների տեղերը և նրանցից դուրս յեկող պատրույգները: Սոբինին թվաց, թե դինամիտի կտորներն ավելացել են, «ի՞նչ լավ է, ո՞վ է ավելացրել, հրաշալի յե, հրաշալի, ի՞նչ մեծ թափով կցնդվի գործարանը, պատառ-պատառ կլինեն նրա յերկաթե բետոնե հիմքերը և բոլոր մեքենաները»: Սոբինը գլուխը բարձրացրեց և նրան թվաց, վոր գործարանի մեքենաների բաժանմունքի ծայրում մեկը շարժվում է, սարսափահար նա յետ վախավ, ընկավ գղող բաժանմունքի բրդի կույտերի մեջ, ծածկեց իրեն բրդով, շունչը կտրվում էր, խեղդվում էր, նորից դուրս յեկավ, վազում էր գործարանի մի ծայրից մինչև մյուսը, վոչ վոք չկար, կրկին զննեց պատրույգներն ու դինամիտները, բոլորն իրենց տեղերում էին. բաց արեց պատուհանն ու դուրս թռավ: Սաբինն ըղդաց, վոր թռչելու ժամանակ վոտը դիպավ մի քարի, վորից սրունքի վոսկորը ջարդվեց, սարսափելի ցավից սիրտը ճմլվեց, քաշեքաշ սողաց դեպի ցած, Քոլ ավը, մակույկի մոտ: Այնտեղ նրան սպասում էին Սուլիկը, Ֆրիցն ու Սպիրիդոնը. մակույկի մոտ վառվում էր մի լապտեր:

—Ի՞նչ է պատահել, — հարցնում են նրան:

— Վոչինչ, վոտս ջարդեցի:

—Իսկ դինամիտները տե՞ղն են:

— Բոլորը տեղն են:

Ընկերներն արագությամբ փաթաթեցին Սոբինի արյունաշաղաղ վոտը և միասին բարձրացան դեպի վեր։ Սոբինն զգում է, որ ցավը կտրել է և բավականին լավ է քայլում։ Ցերբ ափից մի քիչ բարձրացան վեր շուռ տվին փափուկ հողի թմբի վրա ամրացրած տափակ քարը, թափ տվին մի ինչ-որ խողովակի միջով զնացող սպիտակ բամբակի պատրույգը և սարսափահար նայեցին միմյանց յերեսի, ապուշ կտրված։

— Ո՞ւմ եմ սպասում, վառի՛ր։

Ու վառեց Սոբինը պատրույգի ծայրը, որը կաս կարմիր կրակ եր կտրել ու ճռթճռթալով բարձրանում եր վեր, դեպի գործարանը։ Լեղապատառ նորից դեպի ցած, Բուի տին և գլորվում Սոբինն ու իր ընկերները, հենց նստում են մակույկ, հրաբխի նման պայթում է գործարանը, մեկը մյուսի յետևից մութ կարմիր բոցեր արձակելով իր միջից, զընգում է ամբողջ քաղաքը, ձորը ծխով լցվում, նավը յերերվում է ջրի վրա, բոցերի ու ծխի մեջ Սոբինի շունչը կտրվում է, Սոբինը խեղդվում է։

Կայծակահար վեր թռավ Սոբինն անկողնից, լապտերի լույսի տակ իր գրասեղանի մոտ նըստած եյին Սուլիկը, Ֆրիցը, Սպիրիդոնը. սենյակը ծխով լիքն եր։ Դեմքը տրորելով, խելագարի նման նա չռեց աչքերը նրանց վրա, գլուխը կոշմարային ցավով բռնված, խորը հառաչեց և ապուշ կտրված հարցրեց։

— Պայթոց չի՞ յեղել։

— Ի՞նչ։

— Պայթոց։

— Ի՞նդ պայթոց, ա՛յ մարդ, ի՞նչ ես ասում։

— Բա վոչ մի ձեն - ձուն չի՞ յեկել։

— Վոչ։

— Բա վո՞ր տեղից լսեցի այդպիսի ահարկու ձայն։

— Սուլիկի ձեռնափայտը միայն վայր ընկավ մի քիչ առաջ, ուրիշ վոչինչ։

— Ձեռնափա՞յտ... չե, ձեռնափայտ չեր... ինժեներն ել այդպիսի յերազ կտեսնի՞ ... զարմանալի յե։ Նա, քունքերը տրորելով, վեր կացավ տեղից, մոտեցավ նրանց և, ունքերը ճղելով, չշնչաց։

— Ցերազ տեսա, կոշմարային սարսափելի յերազ, չեմ կարող նկարագրել, իբր թե գործարանը պայթեցրինք ու փախանք։

— Ցերազդ բարին կատարի, — մոխրամանի մոխիրը խառնելով, հեգնեց Սուլիկը։

— Դատարկ խոսակցություններով ժամանակ չե, գործի՛ց խոսիր, պատրաստվի՛ր, գնանք, յերեք ժամ է մնացել։

— Թիթեղի գումարները կարողացա՞ր ստանալ,— դեմքը Սուլիկին սևեռելով, հարցրեց Սոբինը։

— Տվեցին։

Սուլիկը, կրծքի կոճակները քանդելով, ծոցից հանեց չերվոնեցների մի ահագին կապոց։

— Այստեղ 15·000 է, հինգ հազարը խոստացավ վաղը տալ։

— Սրիկա՛, մի վագոն թիթեղը նաղդ տարավ ուղղակի կայարանից, իսկ փողը ջուր կտրեցրեց։

— Հորդ զավոդի՞ցն եյիր տվել։

Փողն ա՞յժմ եք ուզում բաժանեմ, թե՞ վաղը։

Վոչ վոք չպատասխանեց Սոբինի հարցին։ Սոբինը, դրամի կապոցները ձեռքին բռնած և աչքերը պատին հառած, անշարժ սպասում եր պատասխանի։

— Ինչո՞ւ ձայն չեք հանում։

— Փողը հանձնե՛ք կազմակերպությանը, նա ինչպես կուզի, այնպես ել կանի,— առարկեց Սուլիկը։

— Ցեռ կազմակերպության անունից եմ խոսում։

— Տվե՛ք ամենին իր հասանելիքը, քանի արտը կանաչ է, — բացականչեց Ֆրեցը և, վեր կենալով տեղից, վրդովված սկսեց քայլել սենյակի մի անկյունից դեպի մյուսը, աչքը չհեռացնելով չերվոնեցիների կուստից։

Սոբինն արդեն կտրել էր կապոցները և համրում էր ամեն մեկի բաժինը։ Ապա ստացականներ առնելով, դրեց գրասեղանի արկղում, թղթե ծրարի մեջ։

— Սո՛բին, դու \եսոր նորից գնե՞լ ես դինամիտների տեղերը, բոլորը կարգի՞ն են։

— Բոլորն իրենց տեղերումն են, պատրաստ, մի լուցկի չե հարկավոր, ուրիշ վոչինչ։

Մի քանի բոպեյից հետո, նրանք բոլորը միասին դուրս յեկան փողոց և սիրալիր զրույցով դիմեցին դեպի հրապարակ։ Նրանց հետևում եյին յերկու յերիտասարդ։

Մութն ընկնելուն պես՝ գործարանի յետևը, դեպի Քուռն իջնող թեքված ի տակ, թփերի մեջ, Միհրանին շրջապատած, նստել եյին Պետքաղվարչության լիազորները և սպասում եյին վնասարարների յերևալուն։

Նրանք հանդիստ ժպտում եյին միմյանց դեմքին։ Շնորհիվ Իոսիֆի հերոսական ջանքերի, Սաշայի միջոցով նրանց աջողվել էր ծանոթանալ Սոբինի ձեռնարկած զարհուրելի ծրագրների հետ, գտել եյին նրանց կազմակերպած ավերիչ աշխատանքների բունը և յերբ Սոբինն այսոր, վերջին անգամ, դինամիտներն ու պատրույգները գնել, գնացել էր, Միհրանը, Սաշան և Պետքաղվարչության ներկայացուցիչները կտրատել եյին պատրույգները։

Նրա համար եյին այժմ նրանք այդպես հանդիստ նստել ու սպասում \եյին վնասարարներին, հանցագործության վայրում տեղն ու տեղը ձերբակալելու համար։ Բայց Սաշայի բացակայությունը չափազանց անհանգստացնում էր Միհրանին։

Գործարանի զմայացը, քոռ ափին, յերկար ու ձիգ սուլոցի ձայն լսվեց։ Մթության մեջ վառվեց մի աղոտ լույս, վորի առաջ շարժվում եյին մարդկային ստվերներ ու պլպլում եյին քոռ ալիքները։ Շուտով լույսն սկսեց շարժվել և մոտենալ դեպի մյուս ափը։

— Գալիս են. բոլորդ նկատի ունեցե՛ք, վոր մինչև թմբի գլուխը չբարձրանան և չվառեն պատրույգը, մենք տեղներից չենք շարժվի։ Նավակն արդեն ափին էր. նրանից յերեք հոգի իջան և սկսեցին բարձրանալ դեպի թումբը, սակայն գնա թմբի գլուխը չհասած, չոգեցին ու էլ առաջ չեյին գնում։ Թփի տակ գտնվող ընկերները լսեցին, վոր մի տափակ քար գլորվեց դեպի գետի ափը։

Այսոր յերեկոյան պատրույգները կտրատելուց հետո Սաշան յերկար ժամանակ մնաց գործարանում։ Նա չեր ուզում տուն վերադառնալ, բայց վորովհետև ճաշարանը փակ էր և ինքն էլ քաղցած էր, ստիպված տուն յեկավ։ Մինչև նրա դալը Իոսիֆը յերկու անգամ յեկել էր Սաշայի բնակարանը, բայց չեր հանդիպել նրան և ստիպված տոմս էր թողել տանը, վորի մեջ շտապ և անհետաձգելի պահանջում էր տեսնվել իր հետ։ Սաշան տոմսը կարդալով, բերանն առանց մի բան գնելու դուրս յեկավ տնից և ուղևորվեց դեպի Իոսիֆի բնակարանը։ Բայց Իոսիֆը յերկար սպասելուց համբերությունը կտրել էր և յերրորդ անգամ յեկավ Սաշայի մոտ։ Մեկը մյուսին փնտրելով բավականին ժամանակ անցավ։ Յերբ Իոսիֆն ու Սաշան հանդիպեցին միմյանց, Իոսիֆը, Սաշայի թևից բռնած, քաշեց նրան փողոցի

անկյունում վառվող էլեկտրական լամպի տակ ու, ծոցից մի թղթի կտոր հանելով, դեմ արեց նրան և սկսեց մատը վրան պտտելով բացատրել.

— Նայի՛ր, այսոր Սորինի բնակարանումն եյի, նրա գրպանից եմ հանել և արտանկարել, պատրուդների նախագիծն է. տե՛ս, գործարանից հեռու յերկու ճյուղի յե բաժանվում, վորպեսզի, յեթե մեկը վորևե պատճառով վիչանա, մյուսն ոգտագործվի: Յերկրորդ ճյուղն անցնում է առաջին կորպուսի առաջին պատուհանի տակով: Դուք կտրատե՞լ եք այդ ճյուղը:

Քրտինքը Սաշայի ճակատից ջրի նման կաթկաթում եր թղթի վրա: Նա այնքան լայնացրեց կոպերը, վոր կարծես նրանք պատառոտվեցին, խելագարի նման մի քանի քայլ նա յետ վազեց:

— Ձե՞ք կտրատել:

— Վո՛չ, վո՛չ, վո՛չ:

Սաշան նորից առաջ յեկավ, բռնեց Իոսիֆի թևից ու սկսեց վազել դեպի լայն պողոտան: Պողոտայում Սաշան կանգնեցրեց դեպ իրենց սլացող առաջին մեքենան, շոֆերի ականջում մի յերկու անկապ խոսքեր մրմնջաց, ապա ներս գցեց Իոսիֆին, ինքն էլ յետևից ներս պրծավ և ավտոն սկսեց սլանալ դեպի մահուդի գործարանը: Գնդակն այնքան չեր շտապի, վորքան շտապում եր Սաշան, նա վոչ թե նստած եր ավտոյում, այլ պպզած, մեջքը կորացրած, գլուխը դեպի առաջ գցած, կարծես ուզում եր ավտոյից առաջ դնալ, բայց փողոցի պտույտները դեռ չեյին վերջանում, իսկ գործարանը դեռ քաղաքից հեռու յեր:

Ավտոն, վորի մեջ սլանում եյին Սաշան ու Իոսիֆը, արդեն մոտեցել եր գործարանին: Գոնապան Սիմոնը գոնները բացեց սովորական ղանդաղությամբ, սակայն ավտոն ներս չմտավ, նրա մի-ջից իրտնած նապաստակի նման դուրս պրծան Սաշան ու Իոսիֆը և անյերևակայելի արագությամբ սկսեցին վազել դեպի գործարանը: Շենքի կեսից անցնելով, մի ահագին քարի կտորով Սաշան փշրեց պատուհանը և, ձեռքերը կտրատելով շրջանակի մեջ մնացած ապակիների վրա, ներս ընկավ գործարանի միջանցքը. վոտերն արդեն թուլացել եյին և նա սողում եր դռնել առաջին կորպուսի առաջին պատուհանի տակ գտնվող խողովակը:

Ճիշտ նույն րոպեին Սորինը վառեց գետնում թաղած պատրուդի ծայրը և յերեքն էլ արագությամբ սկսեցին իջնել ցած, թափելով քարերն իրենց վոտերի տակ:

Սաշան դեռ առաջ եր սողում պատրուդի յերկրորդ ճյուղի մուտքը գտնելու համար, յերբ Իոսիֆը տեսավ, վոր մթության մեջ պատրուդը վառվեց, նա իրեն դցեց գործարանի շոգեմատակարարման բաժանմունքը և հուպ տվեց գործարանի չչակի լծակը:

Շչակն աղիողորմ ձայնով սկսեց սուլել: Սորինը, Սուլիկը և Սպիրիդոնը կանգ առան չվարած: Թփի տակ թաղնված մարդիկ շրջապատեցին նրանց:

— Գործարանը չի պայթի, մի՛ վախենաք, — հանդիստ ձայնով դիմավորեց նրանց Պետքաղվարչության ավագը:

—Յեթե վոչնչացրել եք պատրուդի յերկու ճյուղն էլ, գործարանն այն դեպքում միայն չի պայթի,— դողալով պատասխանեց Սորինը:

Միհրանի աչքերը վայելեցին վայրի վաղրի նը-
ման. իսկույն գուշակեց, որ չչակի ձայնը մի այլ բան է
ասում. նա վրա ընկավ, բռնեց Սորինի բկից և գո-
ռում էր խուսող ձայնով խավարի մեջ.

— Ասա՛, չո՛ւտ, առանց ժամանակ կորցնելու,
վո՞ր տեղից է մտնում պատրուդի յերկրորդ ճյուղը:

Սորինն, ազատելով կոկորդը Միհրանի ճանկե-
րից, սառնասրտությամբ և արագ պատասխանեց.

— Առաջին կորպուսի առաջին պատուհանի տա-
կից խողովակին զուգահեռ: Բայց մեք անհանգստա-
նա, յեթե այդ ճյուղը կտրված չե, գործարանը կը-
պայթի հենց այժմ:

Միհրանն անհայտացավ խավարի մեջ:

Չչակը չարունակում էր սուլել:

Իսկ բոլորը վայրկյան առ վայրկյան աննկարա-
գրելի տարտավով սպասում եյին դղրդյունին, որ
քարուքանդ էր անելու տարիների թափած աշխա-
տանքն ու քրտինքը:

Միհրանը կոտրած պատուհանով ներս թռավ,
ձեռքերը դցեց խողովակի տակ, նրա ձեռքն ընկավ
քանդված պատից դուրս յեկող կտրված պատրուդ-
գի ծայրը, որ դեռ տաք էր. «վառվել և կտրվել է»,—
մտածեց նա: «Իսկ մյուս ծա՞յրը, գուցե չարու-
նակում է այրվել». նա լուսավորեց իր գրպանի ե-
լեկտրա — լապտերով և մի զարհուրելի տեսարան
բացվեց նրա առաջ: Հատակին վռված էր Սաչան,
ուշաթափ դրության մեջ. ձեռքում բռնել էր կտրված
պատրուդի մի ծայրը, մյուս ձեռքում արյունաշա-
ղաղ դանակը. Սաչան ու Միհրանը քարացած նայում
եյին միմյանց:

Չչակը սուլում, հա սուլում էր. և հետզհետե
ռավարանում եյին դեպի գործարանը վազող բան-
վորների խմբերը: Գործարանը լուսավորվեց. նրա
միջանցքներով սկսեցին բանվորները վազել դեպի
ցեխերը, մեքենաները: Շուտով ներս յեկավ Իոսիֆը,
շրջապատված բանվորներով, և կանգնեց հատակին
վռված Սաչայի և շվարած Միհրանի առաջ:

Սաչան խեղդվող ու դողդոջուն ձայնով չչնջաց.

— Գերմանացի բանվոր Իոսիֆը փրկեց մեր
գործարանը:

XXIV.

Լենան և Արշակը յերկու որ էր, ինչ ժամանել
եյին Աբասթուման: Առավոտ, յերեկո ձեռնափայտ-
ները պտտեցնելով, նրանք չափչփում եյին միասին
սար ու ձոր, Արազինդոյի ժայռերի ծայրերին նստած՝
կչկչում եյին, ինչքան ներում էր ժամանակը:

— Ասա՛, Ա՛րշակ, ինչո՞ւ գյուղը, բնությունն ինձ
այսքան դուր է գալիս:

— Վորովհետև հորիզոնը լայն է, մտածելու
ժամանակ շատ կա, իսկ քաղաքում այդ չկա: Քա-
ղաքը պահանջկոտ է, իր ժամանակին պետք է բար-
վարարվեն այդ պահանջները: Քաղաքում լայնանում
է մարդու միտքը, գյուղում հոգին, սիրտը, զգաց-
մունքները, գյուղում մտածելու անսահման ժամա-
նակ կա, քաղաքում սուղ է այդ ժամանակը:

— Ամեն մի հարցի բացատրության և լուսաբան-
ման մեջ դու միշտ նկատի յես առնում հինը.
«գյուղում անսահման ժամանակ կա». այժմ մի՞թե
կոլխոզնիկն ազատ ժամանակ ունի:

— Հին գյո՞ղը, — հեգնանքի ժպիտով և ունքերը վեր քաշելով, քմծիծաղ տվեց Արշակը։

— Խոսի՛ր, խոսի՛ր։

— Իսկ նոր գյուղ գոյություն ունի՞, հապա ասա՛, ի՞նչ կա նոր այժմյան մեր գյուղում, վոչինչ բառիս բուն նշանակությամբ, նույն հին խղճալի և վողբալի դրությունը, յեթե ճիշտն ես ուզում իմանալ, այժմ գյուղացին ավելի վատթար վիճակի մեջ է, քան առաջ։ Գյուղացիությանն այժմ թույլ չեն տալիս վերականգնել իր տնտեսությունը, անհատական տնտեսությունը, վորը միակ յելքն է ստեղծված դրությունից դուրս գալու։

— Հա՞, հա՞, հա՞, — ծիծաղեց Լենան, — Թերահավա՛տ, կո՛ւյր, «միակ յելքն է»։ Ցելքը, տեսնո՞ւմ ես Վախրամի տափարակի վրա աղմկող տրակտորները, տե՛ս, ի՞նչպես են գրոհում, յելքը, տե՛ս, նա յե, մենք գիղանտներ ենք կառուցում, տիրապետում ենք տեխնիկային, ինդուստրիալ յերկիր ենք դառնում, ծրագրերի իրացման յերկիր ենք դառնում, բարձրանում ենք մենք՝ բանվոր դասակարգը։ Ու ձորը լցվում եր Լենայի քրքիջով։

Անցնում եր արևոտ ցերեկը, գիշերները, յերբ ջրի շաչյունի և կանանց յերգի ձայնը խառնվում եյին իրար, նրանք կրկին դեպի անտառ եյին դուրս գալիս։ Ամտեղ թփերի տակից, թավուտների միջից լսվում եյին գույդերի փսփսոցը, նրանց յերգի, գրուցի ձայները, բնության ծոցում ամենուրեք զմայլվում եյին։

Ժամանելու 4-րդ որը, Արշակը տուն վերադառնալու ժամանակ փոքրիկ կամրջի վրա պատահեց Սուրենին, Աստղիկին և մի անծանոթ տիկնոջ, վորի հետ իսկույն ծանոթացավ և վոտից մինչև գլուխ չափեց, ձեռքը նրա ձեռքից ազատելու ժամանակ։

— Սո՛ֆիա։

— Ա՛րշակ։

— Դուք նո՞ր եք յեկել, Ա՛րշակ, — հարցրեց Աստղիկը։

— Մեկ շաբաթ կլինի։

— Ցերջանիկ եք, իսկ մեր գնալու ժամանակն արդեն մոտենում է։

— Շատ ծանր է, յերբ մոտենում է ամառանոցից քաղաք վերադառնալու ժամանակը։

— Բարևեցե՛ք Լենային և ցանկություն հայտնեք մեր կողմից, վոր Սուրենը, Աստղիկը, Պարմենը և մեր ընկերներն անշուշտ շատ ուրախ կլինեն մեր մնացած ժամանակը միասին անց կացնելու։

— Շատ ուրախ կլինենք, թեպետ յես շատ զբաղված եմ. ցանկանում եմ աշխատանքիս ծրագրերն այստեղ վերջացնել, բայց և այնպես կարող եմ ժամանակ գտնել ձեզ հետ զրոսնելու, զրուցելու, նույն իսկ ժայռերի ծայրերը բարձրանալու։

Տիկինը մի սիրալիր հայացք ձգեց Արշակի վրա։

—Կուզե՞ս, հենց հիմա բարձրանանք մեկ ժամով Արաղինդո,—առաջարկեց Սուրենը։ Արշակը նայեց տիկնոջ դեմքին, նա կրկին ժպտում եր։ Այդ Արշակին դուր յեկավ և նա, յերկար չմտածելով, բացականչեց։

— Մեծ ուրախությամբ։

Ու խումբն անցնելով գետակի վրայի նեղ կամուրջը, յեղևնիներով շրջապատված հարթ ճանապարհով զրուցելով ու կատակելով բարձրանում եր դեպի Արաղինդո։

Սոֆիան շատ դուր յեկավ Արշակին, նրա կազմվածքը վոչ մի պակասություն չուներ, իսկ մետաքսի տակից փայլող փղոսկրի գույնի լիք թևերը

և ուսերն ուղղակի դեպի նա էին մղում Արշակին, ամբողջ ճանապարհը նա վոչ մի վայրկյան չթողեց, վոր Սոֆիային զբաղեցնի մի ուրիշը:

Սոֆիան, վորպես պատասխան Արշակի հարցերին, ներկած շրթունքները հուպ տված ժպտում եր, աչքերը ցած գցում և, մարմինը կոտրատելով, ձեռնափայտն ավելի ուժեղ կերպով կրթնում դետնին:

Ցածում, ուր տները հաղիվ էին նշմարվում, Արշակի ամառանոցում, Լենայի դիմացը նստած, Արշակի նախկին կինը՝ Գայիանեն, արտասուքն աչքերին պատմում եր Լենային իր կյանքի պատմությունը:

— Ցես յերեխա շատ էլի սիրում, իսկ այդ զվարթին ուղղակի դաղդում եր, յերբ յերեխայի անուն եր լսում. յես, դիտես, տանջվինը աբորտ եմ արել:

— Լսե՛լ եմ:

— Նա միշտ դավաճանել է ինձ, միշտ ուրիշ կանանց յետևից է թրև յեկել, յերբ յես նրան կշտամբում էլի, անիծում, մեղադրում, նա միշտ հպարտությամբ ինձ պատասխանում եր.— «Հեղափոխությունն այդ է պահանջում».— վերջը, յերբ բաժանվեց, յեկավ ձեզ մոտ, յես հղի էլի և վորոշեցի ծնվել ու ծնեցի. յես կաշխատեմ ու կպահեմ իմ դավակին, սակայն թո՛ղ այդ սրիկան չխուսափի վճարել հասանելիք ալիմենտները: Ցես նրան չեմ թողնի այդպես ազատ իր քեֆը քաշի: Դուք կոմունիստ եք, ասացե՛ք, խնդրեմ, որինակա՞ն է իմ պահանջը:

«Պաշտպանել սրա՞ն»,— մտածում եր Լենան: Նայում եր նրան իբր բարեկամաբար, բայց ատելություն, խանդ և զզվանք եր զգում դեպի նա, ի՞նչպես կարող եր պաշտպանել:

— Ինչո՞ւ չեք ուզում հասկանալ, վոր սիրտ և

տղամարդուն թողնել ազատ, ո՞ւմ հետ ուզում է, թո՛ղ ապրի, ի՞նչ գործ ունեք:

— Նա միշտ էլ ազատ է յեղել. նա յերբ ձեզ հետ եր ապրում, ապրում եր և ինձ հետ: Ասացե՛ք, դուք, կոմունիստ կանայք, ազա՞տ եք թողնում ձեր ամուսիններին, յերբ դուք ապրում եք նրանց հետ:

— Իհարկե:

— Իսկ ձեր մեջ խանդ չկա՞:

— Համոզվա՛ծ յեղեք, վոր վոչ, յես անկեղծ եմ ասում:

— Ջեմ հավատում:

Դուռը հանկարծ բացվեց և չեմքին յերևաց Արշակը: Նա նկատեց Գայիանեին, դողաց, այլայլվեց, ձեռնափայտը և ձեռքի պլաշչը դանդաղորեն կախեց պատից, հանեց թաշկինակը և առանց վորևե կարիքի սկսեց մաքրել քիթը, ապա դուրս գնաց կրկին պատշգամբ ու մի կետին հառած ապուշի նման նայում եր: Լենան ներս կանչեց նրան և հեղնանքով բացականչեց:

—Որենքն ալիմենտ է պահանջում, ընկե՛ր Արշակ.

— Ի՞նչ:

— Ցերեխա ունես, արդեն ծնվել է, ալիմենտ և հարկավոր:

— Ցես յերեխա չունեմ:

— Դու իրավունք չունես,— հեկեկաց Գայիանեն:

— Ցես քեզ ասացի, վոր աբորտի գնաս:

— Այլևս չեմի կարող գնալ, բժիշկները չթողեցին: Վճարիր ալիմենտներն, առանց վիճաբանությունների, յես կարծեմ իրավունք ունեմ յերեխա ունենալու, առանց քո ցանկության:

— Ալիմենտը կստանաք լրիվ, յես կտիպեմ նրան տալ. — պատասխանեց Լենան:

Գայլանեն վրդովված դուրս թռավ ամառանոցի սենյակից, հրաժեշտ տալով Լենային։

Մի քանի որ էլ անցավ։ Արշակը մեր ծանոթ խմբակի հետ մի քանի զբոսանքներ ունեցավ, վորից հետո Արշակն առանց Լենայի ստեղ – ստեղ անհետանում էր տնից ու վերադառնում էր ուշ գիշերը։

Մի յերեկո, յերբ Արշակը դուրս գնաց զբոսանքի, Լենան հետևեց Արշակին։ Նա հանդիպեց Սոֆիային մութ ծառուղու մոտ փոքրիկ կամրջից վոչ հեռու։ Նրանք սիրալիր կերպով սեղմելով միմյանց ձեռքը, նստեցին յեղևնու տակ ձգվող աթոռի վրա։ Լենայի մարմնով սարսուռ անցավ, թինկը տվեց մոտակա թփի տակ և լսում էր Արշակի խոստումներն ու հրաշունչ համբույրները Սոֆիային։ Ամոթի տաղնապի մեջ, Լենան ցանկանում էր ճեղքել մթությունը, գնալ ու խեղդել այդ մարդուն։ Հուզմունքից նրա սիրտը հևում էր, կուտակվում եյին խանդն ու ցասումը ներսում, ինքն անիծում էր իրեն։ Ուզում էր սողալով մոտենալ, խեղդել, խեղդել այդ յերկու ամենատելի մարդկանց, ամենազզվելի մարդկանց և հիշում էր մի քանի որ առաջ իր ասած խոսքերը «համոզված յեղեք»։ «Ինչո՞ւ չեք ուզում հասկանալ, վոր տղամարդուն և կնոջ պետք է թողնել ազատ, ո՞ւմ հետ ուզում է, թող ապրի», «իսկ ինչո՞ւ յես չեմ ուզում այժմս հասկանալ, վոր նա ազատ է, ինչո՞ւ սառը քրտինքը պատել է ճակատս, ինչո՞ւ սիրտս տաղնապից ճաքում է, շրթունքներս չորացել են և չեմ ուզում հասկանալ, վոր նա ազատ է»։ Նա վեր կացավ տեղից և հուսահատ ու լացակում տուն վերադարձավ։ Ամբողջ գիշերը նա պտույտ էր գալիս անկողնում և համոզվում էր հետզհետե, վոր կենցաղի խնդիրներն այդպիսի թեթևությամբ չեն վճռվում։

XXV.

Ուշ գիշեր էր։ Սորինի սենյակում նստած եյին Պետքաղվարչության լիազորները և զտնված փաստաթղթերը կուտակած, արձանագրություն եյին կազմում։ Փաստաթղթերն ապացուցում եյին, վոր Սորինը և նրա ընկերները կապված են յեղել արտասահմանյան հակահեղափոխական կազմակերպության հետ։ Նրանց նպատակն է յեղել ձգձգել մաթյան հուզի գործարանի կառուցումը, կառուցել անպետք նյութերից և ապա պայթեցնել։ Սորինը, վորպես կառուցող աշխատանքների վարիչ և կառուցողական նյութեր մատակարարող, հաշվապահ Սուլիկի անձակցությամբ մանավոր անձանց վրա վաճառել է մեծ քանակությամբ կառուցողական նյութեր։ Դուռմարի մի մասը գործադրվելիս է յեղել անձնական, մյուս մասը վնասարարական կազմակերպության կարիքների բավարարման համար։

Սենյակի խորքում, փափուկ բազկաթոռի մեջ, Թիկնոցի յերկու ծայրերը ձեռքում սեղմած, անասելի վշտի մեջ կուչ էր յեկել ու խուլ հեծկլտում էր Սորինի կինը։ Ցերբեմն նա իր մեխամաղձոտ աղիողորմ հայացքը գցում էր Պետքաղվարչության լիազորների վրա, կարծես յերազի մեջ, դողում էր ու նորից աչքերն արցունքով լի հայացքը թեքած դեպի անծանոթ մարդիկ, սպասողական դրության մեջ նայում էր ամուսնու սեղանի վրա կիտած թղթերին։ Հավաքելով բոլոր փաստաթղթերն ու գրություններ, լիազորները վեր կացան ու պատրաստվեցին դուրս գնալու։ Սորինի կինը վոտի կանգնեց, նրա կարմրած, արցունքակալ աչքերը կարծես ապուշ եյին կորել, չվարած մի քանի քայլ առաջ յեկավ, կցկտուր լացակում ձայնով նա չչնջաց ավագ աշխատակցին.

— Աղաչում եմ, ասացե՛ք, ի՞նչ կանեն նրան։—անծանոթներն իրար դեմքի նայեցին։ Սորինի կնոջ աչքերում վայրի ատելություն էր պրպտում։

— Խիստ պատժի կենթարկեն, սակայն ի՞նչպիսի պատժի, չեմ կարող ասել։

— Ձի՞ կարելի նրան մի կերպ... մի կերպ... յես յերեխաներ ունեմ։

— Այդ մասին դուք դիմեցե՛ք Պետքաղվարչության կոլեգիային։

Պետքաղվարչության աշխատակիցները դուրս յեկան, իսկ Սորինի կինը մոլեգին դեռ քայլում էր ծանր ու լուռ սենյակի դորգերի վրա։

Սուլիկի սենյակը ևս յենթարկեցին խուզարկության, նրա սեղանի վրա Պետքաղվարչության լիազորները գտան տրոցկիստական ոստողիցիայի պլատֆորման, վնասարարների կազմակերպության կողմից ստացված մի քանի նամակներ և բարձի տակ մի հետաքրքիր հուշատետր, որի մեջ բազմաթիվ մեմուարներ կային։ Պետքաղվարչության լիազորներից մեկն սկսեց կարդալ Սուլիկի մեմուարներից մի քանիսը։

«Զգիտեմ, ինչո՞ւ խորհրդային իշխանության առաջին որից յես միշտ սիրտս պարապ եմ զգացել։ Անապատ է դարձել կյանքը, ամենուրեք յերկաթի, չուգունի, ցեմենտի ու նավթի մասին են խոսում։ Կյանքում ել վայելք չկա, յերևակայում եք մեր կյանքը, յերբ մարդիկ միայն սև յերկաթի, նավթի և չուգունի մասին են մտածում»։

«Աղնվական արյունս շարժվում է ազնվական հին դինին խմելիս իմ ընկերների հետ, լավ է, գոնե գինի գտնում ենք, սակայն այժմ ընկեր տեսնելը դարձել է անհնարին բան։ Կիրակի չկա, տոն չկա, ժամանակ չկա, բոլորն զբաղված են, ժողովներ են, խորհրդակցություն, համագումար, տեմպեր»։

«Անհավատալի պայքարի մեջ յես չեմ լքվել տակավին, հաստատակամ շարունակում եմ քայլել ու դալիս եմ դեպի քեզ, ո՛վ մեծ, չքնաղ դաղափար, Ա՛ինչ թվում է, թե Գյորգիի, Ստանիսլավի և Վլադիմիրի չքանչանները կրծքիս կանգնած քո առաջ, տեսնում եմ քեզ, մեծ արքա, քայլում ես դու ռուսական հողի վրա»...։

«Յես, բոլոր պատերազմների հերոսս, այժմ նստած յերկաթի ու ցեմենտի հաշիվներ եմ տեսնում. անողո՛ք, անողո՛ք ճակատագիր, յես, բոլորի հրամանատարս, այժմ բոլորից հրաման եմ ստանում, մի՞թե այդպիսի սոսկալի ձևով կարելի յե վոտնատակ տալ մարդու պատիվը»։

Ուղղիչ տանը հենց առաջին գիշերը Սուլիկին անդամալույծ յեղավ։ Նրան տեղափոխեցին ուղղիչ տան հիվանդանոցը։ Նրա դեմքը բրոնզի արձանի արտահայտություն էր ստացել։ Միտքը խառնաշփոթ վոլթորիկ էր. նրան թվում էր, թե վիրավորվել է կոշմարային ճակատամարտից հետո Երզրումի տակ և պառկած է գործող բանակի հիվանդանոցում։ Աչքի առաջ բարձրանում էին յերկաթի կույտեր, թիթեղներ, չերվոնեցների կապոցներ, որոնք պտտվում էին կրանների չղթաների վրա. թվում էր, թե ինքը վառում է դեպի գործարան գնացող պատրույգի ծայրը, գործարանը պայթում էր ահագին հոնդյունով, այդ ճայներից նա վեր էր թռչում տեղից, մի քանի քայլ անում մահճակալից ու վայր ընկնում։

Գիշերն սկսեց զառանցել։

— Աչքերը չեն դիջի, ճախերը կհաղթեն, Դենիկինը... գալիս է, Փարիզից, Լոնդոնից, Խորհրդային Միության բանը պրծավ... Սո՛բին, վառի՛ր, վառի՛ր այժմ, քան յերբևիցե, յեթե չվառես, կորանք։

Բանտի ակմբի ռադիո հաղորդիչը Սուլիկից ավելի բարձր եր աղաղակում, հաղորդելով հնդամյակի նվաճումները և հարվածային աշխատանքների տված արդյունքները, վորից հետո հնչեցին յերգ, նվագ, պար, ծիծաղ:

Վերջին անգամ բարձրախոսը ծիծաղեց

Յերբ ռադիոն հաղորդեց Կրեմլի ժամացույցի 12 զարկը, բանտում և քաղաքում ամեն ինչ լռեցին· Հենց այդ վայրկյանին Սուլիկը ցանկանում եր վառել պատրուդի ծայրը, ձեռքը մեկնեց, ձգվեց դեպի պատրուդը, վայր ընկավ մահճակալից և հավիտյան փակեց իր աչքերը:

XXVI.

Բաց պատուհանից ներս թափվող արևի ճառագայթների ջերմությունն արթնացրեց Միհրանին· Նա աչքերը բացեց և նկատեց, վոր իր կողքին դրված սեղանի լամպը դեռ վառվում է, իսկ գիրքն ընկած է հատակին: Նա բարձրացրեց գիրքը, ուզեց մտաբերել, թե մինչև վորտեղ է հասել, լռության մեջ ժամացույցի չիկչիկոցը դրավեց նրա ուշադրությունը· վիզը յերկարացրեց դեպի ժամացույցը, ժամի ութն եր: Այսոր բժիշկները պետք է կրկին բարձրանային ամառանոց Կիմիկին սրսկելու: Միհրանն անպայման պետք է գնար նրանց հետ: Միևնույն ժամանակ ժամի 9-ին Մոսկվայից յեկած հատուկ հանձնաժողովը պետք է ծանոթանար նորակառույց գործարանի հետ, իսկ գիշերն անհետաձգելի գործ ուներ: Ի՞նչպես անել, ո՞ւր գնալ: Նա չուռ յեկավ անկողնում ու նրա աչքովն ընկավ գորգի վրա կախած Լենայի պատկերը Կիմիկի և Ավրորայի հետ: Սիրտը կարծես սառեի ծակոց զգաց: Ինչո՞ւ յե նա այդքան սիրում Կիմիկին, գուցե նրա համար, վոր նա փոքր է, անպաշտպան, անողնական, դուցե նրա համար, վոր նա պետք է մեռներ, բայց չե՞ վոր նա սիրում եր նրան և մինչև հիվանդությունը:

Նա կրկին բացեց սեղանի վրայի գիրքը և նորից սկսեց կարդալ մենինգիտ հիվանդության բացատրությունները: «Չե, Կիմիկը պետք է առողջանա, Կիմիկը պետք է ապրի, պետք է ապրի ինձ համար, դրոհների, տեմպերի համար, մեզ համար»: Ու նրա արյունով լցված աչքերը ծանր թախծից ավելի եյին վառվում: «Յեթե Կիմիկը մեռնի, միայն յես, յես կլինեմ մեղավոր, վորովհետև յես նրան ողնություն հասցրի միմիայն հիվանդության վեցերորդ որը, մինչդեռ կարելի յեր ավելի շուտ, ավելի շուտ...»:

Հանկարծ փողոցում, տան առաջ, ավտոյի չչակը սուլեց: Միհրանը վեր թռավ տեղից ու հագնվեց· դուրս գնալիս վերցրեց սեղանի վրայի գեղի տուփերը:

Այսոր Նա հանձնաժողովին պետք է ծանոթացներ գործարանի աշխատանքների հետ, ժամադրվել եր, բայց պետք է անպայման բժիշկների հետ գնար հիվանդի մոտ:

Ձեռքերն ամառային վերնաշապկի գրպանները խորած, աչքերը պատին հառած, Միհրանը տան դռան շեմքում վորոշում եր, թե վո՞ր կողմը գնա· պատասխանատվության զգացմունքը, գործարան գնալու անհրաժեշտությունը գերակշռում եր նրա մեջ: Նա վերջնականապես չկարողացավ վորոշել, ձեռքերը թափահարեց ու, վերցնելով պորտֆելը, դուրս յեկավ փողոց:

Միհրանը նկատեց, վոր ավտոն կանգնած է յերեսը դեպի ամառանոցի կողմը, իսկ նրա մեջ նստած եյին Կիմիկի բժիշկները: Շոֆերն ուղղվեց և զարմացավ, վոր Միհրանը չի նստում մեքենան:

— Ձե՞ք գալիս յերեխայի մոտ:

— Սիրելինե՛ր, այսոր յես վոչ մի հնարավորություն չունեմ գալու. ամեն ինչ արե՛ք և յերբ վերադառնաք, Վասոյի հետ մի տեղեկություն ուղարկե՛ք ինձ։ Կարծում եմ, վոր այսոր յերեխան լավ պիտի ղգա յերեկոյան յես կբարձրանամ պրոֆեսորի հետ։

Մեքենան շարժվեց և անհայտացավ, բայց Միհրանը մտածկոտ դեռ կանգնած եր դռանն ու շարժվեց միմիայն այն ժամանակ, յերբ անցորդները տարորինակ կերպով սկսեցին նայել նրա վրա։

Հակառակ հոր յենթադրություններին, վորոնք արդյունք եյին դեպի յերեխան ունեցած սիրո, Կիմիկի դրությունն այսոր ավելի վատթարացել եր, շնչառությունը խռպոտ վչչոց եր հանում, ձեռքերն ավելի ջղաձգաբար և շուտ-շուտ եր դեպի վեր գցում։ Աչքերը խառնվել եյին. նա զառանցում եր անվերջ ու վեր եր թռչում։ Սոնա տատիկը, կարմրատակած աչքերը տրորելով, շարունակ արտասվում եր. իսկ հիվանդին խնամող կինն անվերջ ուղղում եր նրա գլխի սառույցի պարկը։ Հիվանդությունը սարսափելի տանջանքներ եր պատճառում յերեխային, յերբեմն նա բաց եր անում իր պղտոր աչքերը, անորոշ, բութ հայացքով նայում եր տատի տառապած և անքուն դեմքին, կարծես մի բան եր աղերսում, տատը նրան մի քիչ ջուր կամ կաթ եր խմեցնում ու նորից նա փակում եր իր աչքերը։

Նրա կողքին նստած Ավրորան չոյում եր յեղբորը, իր ձեռքի բռնած քաղցրավենին դեմ եր անում նրան, Կիմիկը միայն աչքերը թարթում, խղճալի հայացքով նայում ու կրկին տաղնապի մեջ նիրհում եր։

Բժիշկները յերկար ժամանակ զննեցին Կիմիկին, կրկին ծակեցին մեջքը, վողնաշարից հեղուկ հանեցին,

սրսկեցին, մի քանի պատվերներ տվին հիվանդապահներին և դուրս յեկան ամառանոցից։

Ավտոն շարժվելուց հետո, Վասոն հարցրեց բժշկին.

— Ի՞նչպես է հիվանդը։

— Հիվանդի ընդհանուր վիճակը շատ վատ է։

— Խե՛ղճ Միհրան, խե՛ղճ Կիմիկ։

Շոֆերի աչքերը լցվեցին տաքությամբ, հուսալքվեց պեղալին ու գլխապտույտ արագությամբ ավտոն ոճապտույտ ճանապարհով թռչում եր դեպի փոշոտ և այրվող քաղաքը։

Մանվածային բաժանմունքի մեքենաների մեջտեղը կանգնած, Միհրանն ինժեներների հետ զրուցում եր, յերբ շոֆեր Վասոն մոտեցավ, կանգնեց նրա յետևը։ Միհրանը շուռ յեկավ և շոֆերը կարեկցաբար հարցրեց.

— Յերեխայի դրությունը վատ է, Մի՛հրան։

— Ինչո՞ւ, նա պետք է լավ լիներ, այդպես եյին ասում իրենք։

— Յես ինքս տեսա, վատ է յերեխան, Մի՛հրան, վատ։ Բժիշկն ասաց, վոր քեզ հայտնեմ յերեխայի դրության լուրջ լինելու մասին։

— Դու տեսա՞ր նրան... նա խոսո՞ւմ է, թե՞ վոչ։

— Անվերջ սիրտը թավում է և ձեռքը դեպի դրուխը ճոճում, աչքերը չռված են, խառնված, անդուշն, անփայլ, քարացած, անշարժ, ու յերբ տաքությունն իջնում է, բացականչում է. «Տա՛տիկ, ո՞ւր են իմ մայրիկը և հայրիկը»։

Միհրանի մարմինը փշաքաղվեց. նրա սիրթնած շրթունքները դողում, վոտները մեջքից կտրվում եյին, սիրտն ուզում եր պայթել, կարծես նրա կյանքն եր մոտենում իր վախճանին ու նայում եր դողալով

Վասոյի շրթունքներին, վորոնցից դուրս թռչող բառերը մեխերի նման ցցվում եյին Միհրանի գանգում: Վասոն նկատեց, թե ինչպես Միհրանը կուլ եր տալիս իր արցունքները: Վասոյի փոքրիկ մարմինը Միհրանի աչքին ավելի կարճանում ու հեռանում եր, կարծես Վասոն փոքրանում, պստվում, բարձրանում եր:

— Ասում ես՝ մնաս բարև ասերու գնանք Կիմիկին, համ, – ու արցունքները խեղդեցին Միհրանի կոկորդը: Վասոն հեռացավ նրա մոտից, ինժեներները շվարած ու ցավակցությամբ նայում եյին Միհրանին:

Բժշկի գնալուց մի ժամ հետո Կիմիկի դրությունն ավելի վատթարացավ, տաքությունը թեպետ ընկել եր, բայց նա համարյա անգիտ դրության մեջ եր. յերբեմն նա թույլ ձայնով բացականչում եր.

— Տա՛տիկ, ի՞նչ լավ կլիներ, վոր յես մամայի հետ չապրեյի, մանկամսուրում, մանկատանը մեծանայի: Հրաշալի բան կլիներ, տա՛տիկ, հրաշալի բան:

Մահուդի գործարանի ավտոն Կատաղի արագությամբ բարձրանում ե դեպի վեր, հրակեզ արևից տաքացած ճանապարհի փոշին քամուն տալով: Մութն ընկնում եր: Ավտոյի մեջ նստած են Միհրանն ու Ծերունի պրոֆեսորը: Արցունքները խեղդում եյին Միհրանին, նա չեր կարողանում զսպել իրեն:

—Մենինգիտից յերեխաները, հաճախ ե պատահում, աղաստվում են,–խոսում եր Ծերունին, – այստեղ միմիայն մի հանգամանք կա. հիվանդությունը վորոշել են հինգերորդ օրը, իսկ սրսկումները կատարել են վեցերորդ օրը. սա ուշ ե, փհարկե: Բայց դա չի նշանակում, վոր հույս չկա. դեռ առողջանալու հույս կա:

— Ցերանի թե այդպես լինի, յերանի թե:

—Բայլևիկն ամուր սիրտ պետք ե ունենա, արցունքները չեն սազում ձեզ:

— Ամուր սիրտ պատերազմի դաշտում, կառուցման ֆրոնտում, բայց յերբ մեռնում ե անողնական, անպաշտպան մի եյակ, վորի մահվան պատճառը գուցե հենց յես եմ, ի՞նչպես կարող ե բայլևիկ հայրը սառնասրտորեն տանել:

—Բժիշկները հմուտ մարդիկ են և յես չեմ կարծում, վոր ամեն ինչ արած չլինեն:

Այնուհետև յերկուսն ել լռեցին մինչև սարի գագաթը:

Ցերբ Միհրանը գլուխը վեր քաշեց, ավտոն արդեն մոտեցել եր ամառանոցին:

Բակում նրանք իջան ու բարձրացան վեր. Վասոն հետևեց նրանց: Միհրանը չեր ուզում վեր բարձրանալ. նա դանդաղում եր, սրտի բաբախյունը խանգարում եր նրան, բայց ստիպված եր հետևել Ծերունուն: Նա վախենում եր Կիմիկին կենդանի չգտնել:

Ցերբ սենյակի դուռը բացվեց, Միհրանը տեսավ, վոր Ավրորան Կիմիկի կողքին ձեռքով շոյում եր նրա այտերը: Կարծես ամեն ինչ սովորական ու հանգիստ եր: Տատիկը մահճակալի յեռևը, դեմքը թաղցրած բարձի մեջ, արտասվում եր:

Հիվանդապահ կինը վոտի կանգնեց: Պրոֆեսորը նախ չափեց Կիմիկի տաքությունը, զննեց քարացած վիզը, յերկար ժամանակ լսում եր սրտի բաբախյունը ու շնչառությունը, ապա ակնոցները քթին դնելով, կարդաց վողնաշարից հանած հեղուկի անալիզի թղթերը: Վերջը խնդրեց հիվանդապահին ելեկտրական լամպը մոտեցնել հիվանդին, մատերով կոպերը բաց արեց ու զննում եր Կիմիկի աչքերը: Կիմիկը կոպերը բաց արեց, պրոֆեսորը լամպն աջ ու ձախ եր

տանում Կիմիկի աչքերի մոտ և կարծես չէր բավարարվում իր քննությամբ։ Վերջապես նա լամպը դրեց սեղանին ու հանեց ակնոցները։

Լռությունը խանգարեց Միհրանը։

—Ի՞նչ կասեք, պրոֆե՛սոր։

Պրոֆեսորը լռում էր։ Նա գլուխը հանկարծ թափահարելով բարձրացրեց և հայացքը նետեց Միհրանի աչքերին, վորոնք փայլում էին սարսափով։ Պրոֆեսորն անսահման վիշտ տեսնելով Միհրանի աչքերի մեջ, դարձավ մի կողմը և չշնչաց ցավակցությամբ։

— Ցերեխան կուրացել է։

— Ի՞նչ եք ասում, Պրոֆե՛սոր ի՞նչ եք ասում,— ահռելի մռնչոց արձակելով, Միհրանն ընկավ Կիմիկի անկողնի վրա և քնքշությամբ սկսեց համբուրել նրա այտերը, աչքերը։ — դուցե սխալվո՞ւմ եք, հը՞, դուցե սխալվո՞ւմ եք։— ի՛մ պիոներ, անտեր մնացած, կուրացած, ի՛մ պիոներ։

— Ցերանի թե սխալված լինեյի,— վեր կենալով տեղից, հաստատակամ ձայնով խոսեց պրոֆեսորը։

—Փրկեցե՛ք նրան, պրոֆե՛սոր, փրկեցե՛ք, աղաչում եմ ձեզ, թո՛ղ կույր լինի, միայն թո՛ղ կենդանի մնա։

Կիմիկին վոչինչ չոգնեց։ Ցերկու որից հետո, յերբ Ավրորան, հատակի վրա նստած, դասավորում էր խաղալիքները և իր թլթիկ լեզվով յերգում էր փոքրիկ ընիկի յերգը, Կիմիկի բարձր տաքությունը հանկարծ ընկավ և նա ընդմիշտ փակեց իր կուրացած աչքերը։

XXVII.

Անտառի միջից ձգվող նեղ արահետով, փախչող լրագրավաճառից մի լրագիր վերցնելով, Լենան բարձրանում էր Արաղինդոյի արահետով դեպի վեր արևի ճառագայթների տակ տաքանալու։ Ցերկու կողմը տարածվող փշատերև յեղևնիների թփուտում ճռիկները ճռռացնում էին իրենց ձանձրալի յերգը։ Թափանցիկ բյուրեղի նման պարզ էր ողը։ Դյութական, կասկարմիր արևը նոր էր բարձրանում լեռների յետևից, թավուտների մեջ ցողը պլպլում էր ծիածանի գույներով։ Ճնճղուկներն ու ժեռերը սրարշավ ընկնում էին ծառերից ցած, ճռվողում, ծլփում, իրար կըցահարում, թռչում։ Ճանապարհի կողքից ծառերի սաղարթներն իրար յետևից բարձրանում են կանաչազարդ վրանների նման։ Հովն անուշ է այստեղ, անուշ, հմայիչ և քնքույշ։ Ծառերի հսկայական սյուները տարածվում են յերկա՛ր, յերկա՛ր։ Ծաղիկները կարծես փունջ արած պսպղում են իրենց պըսակներով կանաչ խոտերի մեջ։

Լենան թինկը տվեց ճանապարհի կողքի աթոռի վրա, նոր բարձրացող արևի ճառագայթների դուրեկան դդվանքի տակ։

Ցածում, կանաչ յեղևնապատ անտառի մեջ, ձորի մշուշի միջից յերևում էին հիվանդանոցների, սանատորիաների փայլուն տանիքները։

Լենային թվում էր, թե նա կյանքը շոշափեց իր յերկու ձեռքով լիովին, ամբողջովին։ Նա զգում էր, վոր միանգամից չի կարելի ստեղծել այն նորը, վորին նա ձգտում էր։ «Նոր մարդ մենք չենք կարող լինել, մեր մեջ դեռ գոյություն ունի հինը, վորին դուրս վը-

տարելու համար մենք դեռ յերկար ժամանակ պետք է մաքառենք, մաքառենք և մաքառենք: Ա՛յ Ավրորան, Կիմիկը, Նրանք են նոր մարդիկ, Հոկտեմբերի իսկական ծնունդ, իսկական հերոսներ, իսկական քաղաքացիներ: Նրանց մեջ կարող է ծավալվել նորն իր ամբողջ մաքրությամբ: Նրանց համար պետք է ապրել, պայքարել, մեռնել»:

Լենան զգում էր, վոր ինքն չտապալե, ժամանակից առաջ է վաղել. նրա սիրտը ճմլվում էր, այտերն այրվում էին հրաբորբոք, իրականությունը նրան կարծես ստիպում էր հաշիվ տեսնել իր հետ:

Ցերկար աթոռի վրա մեկնված, աչքերը ծառերի կատաղներին հառած, Լենան հիշեց Միհրանին և այն ամենը, ինչ վոր պատահել և խոսվել էր նրանց մեջ: Ի՜նչ անտանելի յեր անակնկալ հանդիպումն ամառանոցում, ի՜նչպես քարացել էր ինքը. լուռ էր և Միհրանը. նրա լռության մեջ Լենան զգում էր յերկաթե կամքի և գիտակցության ուժ: Լենային թվում էր, թե ինքն իր ապատ ու նոր կենցաղի բարձր ձգտումներով ավելի ցածր էր կանգնած, քան Միհրանը. այժմ անդունդը բաժանում է նրանց միմյանցից. այժմ անդունդն ավելի խոր էր, քան սկզբնական շրջանում: Այն, բոպեին նա մեծ կարիք զգաց մոտենալու Միհրանին, սակայն դուրսն երեն սպասում էր Արշակը:

Լենան աչքերը տրորեց, չտակած տեղից նստեց աթոռի վրա, լրագիրը վայր ընկավ դեռնին: Նա հիշեց Արշակի և Սոֆիայի տեսակցությունը թփի տակ, ի՜նչպես ամուր էր հուպ տալիս Արշակը Սոֆիային իր բաղուկների մեջ, անբաժանելի, անահման զգվանք ու տխրություն զգաց նա դեպի Արշակը: Ծղրիդները շարունակում էին իրենց յերգը: Լենան ձանձրությամբ ձեռքն առավ լրագիրը. լրագրի հենց ճակատին նա կարդաց խոշոր տառերով գրված. «Հակահեղափոխական վնասարարները մահուդի գործարանն ուղեցել են պայթեցնել», «Վնասարարները ձերբակալված են»: Մեքենայաբար նստեց և հանգիստությամբ սկսեց կարդալ. ցնցվեց և դողդոջուն մարմնով յերկրորդ և յերրորդ անգամ կարդաց, ու նրան թվում էր, թե իրականում այդպիսի դեպք տեղի չի ունեցել: Նա մտքով տեղափոխվեց դեպի գործարան, վորի վրա այնքան ժամանակ դառը տանջանք էր կրել Միհրանը ու գործարանի սպիտակ ապակեղարդ ցածրիկ կորպուսները մեկը մյուսի յետևից ցցվեցին նրա առաջ: Պարզ էր ամեն ինչ: Լենայի սիրտը վորոտաց, ափոսեց Միհրանի աշխատանքները. նրա մեջ բանվորական արյունը շարժվեց, տակն ու վրա արեց նրա եությունը: «Այժմ կատաղի կռիվ է. ով-ում հարցն է վճռվում այժմ, իսկ յես, յես ինչերի յետևից եմ ընկել, ամո՛թ, ամո՛թ»:

Նա զգաց, վոր իր հետ տարորինակ բան է կատարվում: Ուզեց վեր կենալ և փախչել ցած անդունդի ահարհատով, սակայն մնաց քարացած: Շրթունքները դողում էին: Նա ամաչում էր, վոր սիրել է Արշակին, ամաչում էր իր ստեղծած անհատական ճահճից: Նրա անձնական զգացումներն ու դասակարգային զգացումները կատաղի պայքարի էին բռնվել. նա յերկար ժամանակ գալարվում էր աթոռի վրա: «Ցեռ զգում եմ, վոր դարձել եմ նրա ստրուկը. յես զգում եմ, վոր սերը հաղթել էր ինձ», — շշնջում էր նա իր մտքում:

Ծառերի արանքից, վերելքի վրա լսվեց խուլ հաղոցի ձայն: Լենան լարեց ուշադրությունն, առանց պառկած տեղից վեր կենալու: Նիտ ծառերի ֆոնի վրա յերևաց Արշակը: Լենան, արտաքուստ սառնություն ցույց տալով, մնաց պառկած և աչքերը շուռ տվեց ձեռքին բռնած ծալած լրագրի վրա: Վոտերի ձայնը մոտեցավ և կանգ առավ աթոռի մոտ: Արշակը նստեց: Լենան ատելությամբ նայում եր նրա դեմքին, վորի վրա մի մեծ կնճիռ ակոսել եր ճակատից դեպի քիթը: Նա լուռ դիտում եր ծառերի կատարները: Լռությունը յերկար չտևեց:

— Գիտե՞ս, դու խայտառակ սրիկա յես,— ճչաց Լենան եր ամբողջ կոկորդով:

— Ցես քեզանից այդպիսի բան չեյի սպասում:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև դու իրավունք չունես վորպես կոմունիստ նեղանալու, վոր յես մի ինչ-վոր կնոջ հետ խոսակցությամբ եմ բռնվել:

— Կոմունի՞ստ, իսկ դու կոմունի՞ստ ես:

— Ցես քեզ սիրում եմ առաջվա նման:

— Քա՞նի կին ես սիրում:

— Ձե՞ վոր յես ազատ եմ, քանիսին կուզեմ, կսիրեմ...:

— Դու ամենախայտառակ, այլասերված բուրժուայի տիպ ես. քո մեջ կոմունիստական վոչինչ չկա:

Լենան վեր կացավ և նայում եր Արշակի դեմքին տարտրինակ հայացքով: Արշակը մոտեցավ նրան փաղաքշելու, հանգստացնելու, սակայն Լենան պոկվեց տեղից և խրտնած յեղնիկի նման բարձր խոտերով ծածկված արահետով այնպիսի արագությամբ վազեց դեպի անդունդը, վոր Արշակը չկարողացավ յետևից հասնել: Ձորում լսվում եր Լենայի հանդիմանությունների ջղային ձայնը:

Ճանապարհը, վորով անցել եր Լենան մի ժամ առաջ, նրան թվում եր փոփոխված. մի քանի անգամ նա նորից յետ նայեց զննելու, այդ ճանապարհո՞վ է յեկել, թե՞ վոչ: Կարծում եր, վոր Արշակը կգա նրա յետևից, սակայն չե՞ վոր այժմ յերկուսին է սիրում, այժմ յետևից գալու կարիք չկա, ու, դառնացած կյանքի իրական փորձի ծանր ու կեղտոտ տպավորությունների տակ, ներս ընկավ եր բնակարանը:

Սեղանի վրա դրված փակ հեռագիրը գրավեց նրա ուշադրությունը: Նա մոռացավ ամեն ինչ և հապճեպ բաց արեց հեռագիրը: Հեռագիրը նույն հապճեպությամբ չկարդաց, չունչ առավ, ավելի հանգիստ դիրք ընդունեց, կարդաց և ուշադնաց ընկավ անկողնու վրա: Սոնա տատիկը հայտնում եր Կիմիկի մահվան մասին:

XXVIII.

Ցուրտն արդեն ընկնում եր: Ծառերը բոլորովին մերկացել եյին: Քաղաքի տների կտուրները ծածկվել եյին յեղիամով, արևը լողում եր կապույտում հիվանդի նման: Մերկացած ծառերի մեջ թռչունների ձայնն խսպառ լռել եր:

Աշնանային մառախլապատ առավոտներից մեկն եր: Մշուշապատ փողոցները համարյա դատարկ եյին: Փակ պատուհանների վարագույրների յետևը դեռ լույսերը վառվում եյին: Այդ դատարկ փողոցներով Միհրանն շտապում եր գործարան: Մինչև չչափները նա ցանկանում եր այնտեղ լինել:

Գործարանի ճամբին Միհրանին պատահում եյին միայն պահակները, վորոնցից յերկուսը հարցրին նրան ժամը, խանդարելով Միհրանի մեղմ մրմռոցը: Գործարանի ներսը փայլում եյին էլեկտրական լույս-

սերը: Տեղկոմի չենքի առաջ Միհրանը նկատեց մի խումբ ընկերների: Նրանք դրուցում էին: Սուրենը, Դավիթը և Սաշան էին: Միհրանի մոտենալուն պես՝ նրանք բարձրաձայն ծիծաղեցին:

— Բա՛րև քեզ, ի՞նչ կասես, այժմ դո՞ւ յես յեկել վաղ, Թե՞ մենք,— դիմավորեց Միհրանին Սաշան:

Միհրանը ժպտաց և սեղմեց ընկերների ձեռքը:

— Բանվորներից յեկողներ կա՞ն:

— Բավականին յեկել են:

Նրանք ներս մտան գործարան: Բանվորները շրջապատեցին Միհրանին:

— Մինչև չչակը ժամանակ քիչ է մնացել· կազմենք հինգ հարվածային բրիգադ և համապատասխան ցեխերում շտկենք բոլոր մանր թերությունները, վորպեսզի գործարանը բաց թողնենք առանց թերությունների:

Այսոր մահուզի գործարանը փորձնական աշխատանք եր տալու: Տեխնիկները, ավագ վարպետները, ինժեներներն ու ամբողջ ադմինիստրացիան բանվորներից վաղ եյին յեկել գործարան և կարգավորում եյին յերեկվա կիսատ թողած գործերը:

Ցրիցը չկար· նա նստած եր ձերբակալվածների հետ, իսկ Իոսիֆը սովորական ժպիտով, մանվածային բաժանմունքի էլիկատատ յերկարաձիգ մեքենաների արանքով այս ու այն կողմն եր վազում: Աղջիկները նրան մեկ այս մեքենայի, մեկ այն մեքենայի մոտ եյին քաշ տալիս, յերբեմն էլ կատակում ու բարձր ծիծաղում:

Աղասի Աբրամիչը, Հարությունյանը, Դաթիկոն ու Միհրանը շրջեցին ամբողջ գործարանը: Բոլոր բանվորներն իրենց տեղերումն եյին, յերբ շչակները դուրս ժայթքեցին ձյունի նման սպիտակ գոլորշու շիթերը:

Ելեկտրոմանտաժը խեչոն գործարանը Զաղեսի տակի մեջ առավ և բոլոր մեքենաներն ու պտուտակներն ահռելի դղրդյունով սկսեցին պտտվել ու շարժվել մեկը մյուսի յետևից: Միհրանը կանգնել եր այդ դյութական ձայների մեջ: Պողպատե լծակները աշխուժությամբ հրում եյին մեկը մյուսին, պտտում եյին անիվները, մաքոքներն արագընթաց զարկվում եյին այս ու այն կողմը, բուրդը յերկաթի մեջ սեղմվում, ձգվում, մանվում, փաթաթվում եր, աղմուկն սկանջ եր խլացնում: Միհրանին թվում եր այս աղմուկը վորպես ամենաղյութիչ համերգ: Իջնում եյին բրդի փաթիլներն սպիտակ փրփուրի նման, իջնում եյին մեքենաներից, հավաքվում, փաթաթվում, նորից իջնում, մինչև վոր նրանցից կազմվում եյին ամենաբարակ թելեր: Կարծես կոճերի վրա փաթաթվող այդ բարակ թելերը դուրս եյին գալիս Միհրանի սրտից, վոր ուրախությունից թրպրտում եր: Միհրանը չեր ուզում, վոր իրեն վորևե մեկը մոտենա: Անցնող բանվորները, գլուխները թեքելով, զարմացած նայում եյին նրա քարացած հայացքին: Նա բախտավոր եր, նա վազելորվում, այրվում, հալվում եր այդ ձայների մեջ: Միհրանը, մի քանի քայլ անելով, մտավ գործող բաժանմունքը: Այստեղ շաչյունն ավելի ուժեղ եր: Արդեն մահուզը փաթաթվում եր մեքենայի գլանակին: Նա ձեռքով շոշափեց մահուզը ու յետ քաշվեց, հիշեց, վոր կանգնած է այնտեղ, ուր մի քանի ամիս սրանից առաջ գրուցում եր գործարանը քննող հանձնաժողովի անդամների հետ: Այն ժամանակ գործարանը քարացած եր, բայց յերբ Վասոն կանգնեց նրա յետևը և շշնջաց՝ «Կիմիկի գրությունը վատ է», Միհրանին թվաց, թե այն ժամանակ էլ այսպիսի աղմուկ բարձրացավ, կարծես աղմուկն այն

ժամանակ ավելի մեծ էր: Իսկ հիմա ուրախության, բերկրանքի այդ բոպեին անտանելի վիշտն այրում էր նրա ներսը: Կիմիկի կարոտը խեղդում էր նրա կոկորդը: Մեքենաները շաչյունով գնում, գալիս էին, իսկ Միհրանը հիշում էր նրա կառուցման ծանր ու դժվար օրերը, հիշում էր, թե ինչպես իր շուրջը համախմբած կառուցող բանվորներով պատվով տարավ գործը, թափերից յետ չմնաց, իսկ Լենան անտես արեց այդ, հեռացավ, մոռացավ ամեն ինչ: Միհրանը բոլորովին չվհատվեց: Նա կրկնակի վոգևորությամբ շարունակեց իր աշխատանքները: Ու մի որ Կիմիկը, յերկաթե որերի յերկաթահեր այդ մանուկը, վորը պետք է շարունակեր առաջ անցած թափերը, մեռավ: Կիմիկի ապակու նման սառած կույր աչքերը ցցվեցին Միհրանի բերի մեջ ու նկարվեցին սպիտակ մահուդի վրա, վոր շարժվում էր մեքենայի մեջ. արցունքի յերկու կաթիլներ կախվեցին Միհրանի աչքերից: Նա կրկին նայեց սպիտակ մահուդին և նրա վրա յերևացին բազմաթիվ ապակենման սառած, կուրացած աչքեր: Ու պատվեց բոլոր դժվարությունների դեմ մաքառող այդ մեծ ենտուզիաստի գլուխը: Նա արմունկով հենվեց պատին և, ուժերը մի կերպ հավաքելով, դուրս գնաց գործարանից դեպի դրասենյակը:

Աղասի Աբրամիչը Սաչայի հետ, գլուխը պատեցնելով, գնում էր նրա յետևից ու չչնչում.

— Ախր շատ է հոգնել, շատ է հյուծվել խեղճը. ա՛յ, բոլոր բանվորներդ պարտավոր եք սրանից որինակ վերցնել. աշխատո՛ղ է՛, աշխատո՛ղ: Այդպիսի մարդիկ մի՛ այն հեղափոխությունը կարող է ծնել:

Գործարկոմին կից բժշկի սենյակում Միհրանը մի քիչ պարզեց իրեն: Բժիշկը նրան կաթիլներ տվեց, բայց Միհրանը մերժեց:

— Ցերկրորդ գիշերն է, չեմ քնել. դրանից է, յես հիվանդ չեմ, բժի՛շկ:

Բժիշկը տարորինակ հայացքով նայեց Միհրանի աչքերին և համառությամբ կրկին դեմ արեց դեղի բաժակը: Միհրանը չվիրավորելու համար խմեց:

— Հիվանդ չե՞ք,— Աղասի Աբրամիչի դեմքին քմծիծաղ տարով, բացականչեց բժիշկը և բաց թողեց Միհրանի զարկերակը: Ապա մի բոպե լռություններից հետո նա շարունակեց.— դուք հիվանդ եք, լուրջ հիվանդ, ձեր սիրտը կանոնավոր կերպով չի աշխատում, այժմ հարկավոր է ձեզ մխիթարանք:

— Հենց այդ հանգստությունն է հարկավոր դրան և ուրիշ վոչինչ,— ակնոցների տակից բժշկին զննելով, վրա բերեց Աղասի Աբրամիչը:

Գառկած տեղից Միհրանը ժպիտով նշան արեց Աղասի Աբրամիչին, մատը մեկնելով դիմացի պատին: Աղասի Աբրամիչը զարմացած վեր կացավ և սկսեց կարդալ պատին փակցրած յերկար ձիգ պլակատը. «Հնգամյակը չորս տարում», «Տասը տարում հասնել և անցնել»:

— Ինձ համար դրանք դատարկ հնչյուններ չեն, ի՞նչ ես կարծում, յեթե դա քեզ չի վոգևորում, իսկ ինձ, ինձ չի՞ վոգևորում:

— Թո՛ղ վոգևորի, բայց այդքան կարելի՞ յե աշխատել: Այդպես առաջ վազելը վնասակար է:

— Գործարանը ժամանակին բաց թողնել՝ դա պատվի, հերոսության խնդիր է, և առաջ վազել չի նշանակում, — նստելով, բացականչեց Միհրանը:

— Գառկի՛ր, պառկի՛ր, չի նշանակում, բայց հոգրակ չե՞ս դառնալու և ամբողջ աշխարհն այրելու:

— Պլանն իրագործել ժամանակին, յեթե կան բոլոր հնարավորությունները, ամեն ինչ ե այժմ։

Դաթիկոն, վոր մինչև այդ նստած եր լուռ ու մունջ, վրդովված վեր կացավ տեղից, աթոռը նրա վեր կենալու հարվածից ընկավ կողքի վրա։

— Բայց վոր անհնարին են այդ ծրագրները, վոր կործանվում ես այդ ծրագրների ծանրության տակ, վոր օբյեկտիվ պայմանները թույլ չեն տալիս իրացնելու։

—Գործարանն աշխատո՞ւմ ե,— կրկին տեղը նըստեց Միհրանը, խոժոռած դեմքը Դաթիկոյին հառելով։

— Աշխատում ե։

—Դե՛, ել ի՞նչ կա, ի՞նչ պայմաններ, ի՞նչ պայմաններ, ուրեմն կարելի յեր բաց թողնել և բաց թողնք։

— Հումո՞ւյթ։

— Ձե՞ռ տեսել՝ ինչքան հումույթ կա մեր պահեստում։

— Վոր վերջանա, հետո՞։

— Վոր վերջանա, ձեռքներս կծալենք ու կնստենք, մինչև վերևից բուրդ կթափեն քո չշմած գլխին։

XXIX.

Միհրանի հոգնած որդանիզմն ու ջղերը կարոտ ելին հանգստի։ Բժիշկները նրան ստիպեցին անկողին մտնել։ Նա պառկած եր անհանգիստ և անվերջ կարդում եր։ Սոնա տատիկը միշտ նստած եր լիում Միհրանի կողքին, իսկ Ավրորան հոր անկողնի վրա խաղում եր։ ամբողջ որը։ Դրսում դեկտեմբերյան քամին լիզում եր պատուհաններն ու դռները։ Սենյակում լուռ եր միայն վառված փայտերն ելին փլվում և, Միհրանը, մերթ ընդ մերթ լրագիրը ցած քաշելով յերեսից, աչքերը դցում եր ոջաղի մեջ ճարճատող ու

բոցավառվող կրակին։ Ոգտվելով հոր մտածկոտ հայացքից, Ավրորան հարցեր եր տալիս.

— Պա՛պա, բա Կիմիկը խակի ել չի՞ գալու...

Միհրանն այդ դեպքում նայում եր Ավրորայի մխամիտ աչքերին ու հառաչում. հուզմունքից նրա դժգույն այտերի ծայրերը կարմրում ելին. կսկիծները սրտի մեջ արթնանում, զարկվում ելին նրա ամենազգայուն լարերին։ Իսկ Սոնա տատիկի աչքերը թրջվում ելին և սկսում եր ախ ու վախ անել։ Ավրիկն անողոք եր. նա կրկին շարունակում եր հարցը և սպասում պատասխանի։

— Հը՞, պա՛պա, Կիմիկը բա ել չի՞ գա մեզ մոտ։

— Ձե՛, ջա՛նիկս, չե՛։

— Ձե՛, չե՛։ Մաման գնաց, չեկավ։ Կիմիկը գնաց, չեկավ։ Դու ել կգնաս, տատիկն ել կգնա, բա յես մե՞նակ մնամ...։

Ու անցնում ելին այդպես որերը։

Մի որ Միհրանը տատիկից պահանջեց իր վորսորդական հրացանը։ Նրա մեջ մեծ ցանկություն կար վորսի գնալու և նա հիշեց, թե ինչքան և թափառել իր ընկերների հետ, ինչքան եր սիրում նա վորսը և ինչպես հեշտությամբ նա թողեց այդ գործարանը կառուցելու ժամանակամիջոցին։ Վո՞րքան ուժեղ են մեծ գրոհի թափերը, պահանջները, վորոնք մեռցրին նրա մեջ անհատական զվարճության և հանգստության ամենահետաքրքիր բանը։

Հանկարծ հեռախոսի զանգը հնչեց։ Սուրենը հայտնեց, վոր բժշկի հետ գալիս են Միհրանի մոտ։

Մի քիչ անց, մի ավտո կանգնեց Միհրանի տան առաջ։ Սուրենը, Դաթիկոն, բժիշկը և Աղասի Աբրամիչը ներս մտան Միհրանի սենյակը։ Սուրենը խոխոն առավ

Ավրորային և սկսեց խաղալ նրա հետ: Բժիշկը քննում էր Միհրանին:

— Ցեռ խորհուրդ եմ տալիս մի քանի որից հետո վեր կենալ անկողնից, սակայն, կատեգորիկ կերպով պահանջում եմ, մինչև գործարանի պաշտոնական բացումը կրկին շարունակել հանգստանալ, կազդուրվել: Ավելի լավ է ծովափ գնաս, իսկ եթե չես ուզում, կարելի է մնալ այստեղ, բայց կատարյալ հանգստության մեջ:

—Բժի՛շկ... արագությամբ տեղը նստեց Միհրանը, ճակատը կնճռած և աչքերը ձգեց անկյունում դրած հրացանի վրա,— կարելի՞ է վորսի գնալ...

—Անշուշտ առողջանալուց հետո կարելի է, նույնիսկ անհրաժեշտ է, վորսորդության միջոցով ջղերը կատարյալ հանգիստ են առնում, իսկ հիվանդությունից շատերը բուժվում:

— Մի քանի որ հետո գնա՛նք, Սո՛ւրեն. յերկու տարի է, ինչ գործարանի հիմքը գցել ենք, վորսի չենք գնացել: Ո՛, ի՞նչպես եմ կարոտել, ի՞նչպիսի ագահությամբ կթափառեմ բնության գրկում:

Միհրանը ցույց տվեց Սուրենին հրացանը: Սուրենը զննեց նրա փողերը, նրանք փայլում էին, չնայած, վոր յերկու տարի շարունակ հրացանն անգործ կախված և յեղել պատից:

— Զարմանալի է, շատ մաքուր է մնացել:

Ցերբ Սուրենը հրացանը նորից դրեց անկյունում, Աղասի Աբրամիչը և Դաթիկոն, շախմատի սեղանի առաջ նստած, սկսել էին խաղը:

— Մի՛հրան, Լենինգրադում քաղաքացիական ինժեներների ինստիտուտը մշակել է կոմունալ-տների կառուցման ընդարձակ նախագիծ, ամեն մի տուն

հազար մարդ է տեղավորելու իր մեջ, իսկ Վերորդի շրջանում և Մոսկվայում արդեն գոյություն ունեն կոմունաները, այն, ինչ վոր ձեզ հետաքրքրում էր, հիշում ես: Սաման անպայման միասին գնանք տեսնելու, յես շատ եմ հետաքրքրվում, ուզղակի փափագում եմ տեսնել:

Միհրանը զարմացած կրկին նստեց անկողնում:

— Ոհո՛, լսո՞ւմ եք, այս մարդը, վոր յերկու տարի առաջ դեմ էր գործարանի կողքին բանվորաշեն կառուցելու, այժմ կոմմունաների և սոցիալիստական քաղաքների կառուցման մասին է խոսում: Եղ ի՞նչ պատահեց, Աղասի՛ Աբրամիչ:

Դաթիկոն գլուխը բարձրացրեց և նայում էր շախմատի վրա կուտցած Աղասի Աբրամիչի ալեզարդ գլխին: Սուրենը ևս իր հայացքն ուղղեց նրան, և բոլորը լարված սպասում էին Աղասի Աբրամիչի պատասխանին:

Ծերուկը դանդաղորեն գլուխը բարձրացրեց, ծանր ու բարակ նայեց իրեն ուղղված հայացքներին, կարծես ընդդիմադրություն էր պատրաստում նրանց:

— Ցերկու տարի, յեկող դարաշրջանի մեջ այդ յերկու տարին մեծ նշանակություն է ունենալու: Վեց – յոթ տարի առաջ կարծում էի, վոր իմ մեջ բեկում չի առաջանա դեպի խորհրդային իշխանությունը, սակայն յես տեսա թափեր, վորոնցից մազերս բիդբիդ էին կանգնում: Ցես վոգևորվեցի. յես սկսեցի գիտակցաբար մասնակցել հսկա կառուցումներին: Ինձ համար այլևս միևնույն չէ, թե ում համար եմ կառուցում: Ցես տեսա հերոսների, իսկական հերոսների և ամոթից կարմրեցի. յերկաթե դրոհն ինձ վոխեց, և դա շատերի համար զարմանալի է: Ցերբ յես ինձ հարց եմ տալիս, թե ախր ես ի՞նչպես պատահեց, չեմ

կարողանում պատասխանել։ Այժմ յերևակայե՛ք, գործարանները կառուցելուց ետո, ինձ հետաքրքրում է, թե ի՞նչպես են կառուցում կենցաղը և առաջարկում եմ, գնանք, տեսնենք։ Այժմ ինձ համար միևնույնը չէ, թե ինչպես են մարդիկ կառուցում նոր կյանքը։

Ու Ծերունին նորից կախեց իր ալեզարդ գլուխը։ Միհրանն ինքնաբավական ժպտաց ու թիկն տվեց բարձին։

— Ուրեմն քո մեջ էլ հին վոչինչ չկա՞։

Ծերունին նորից բարձրացրեց գլուխը։

—Գուցե կա, բայց նա մահվան է դատապարտված. նա գերակշռող տեղ չի կարող բռնել. նա կորած է ինձ համար անվերադարձ կերպով։ Հինը չի կարող խանգարել ծավալվող նորի այս հսկայական հոյակապ հոսանքին։ Ցեռ այժմ ամաչում եմ հնի մասին խոսել։

Ու Ծերունին նորից գլուխը կախ գցեց չախմատի տեղանի վրա, և յերկար ժամանակ վոչ վոք չեր համարձակվում խանգարել լռությունը։

— Շախ և մատ, վերջացավ։

Աղասի Աբրամիչը վեր կացավ տեղից, իսկ Դաթիկոն աչքերը տախտակին մնկած, գլուխը չեր ուզում բարձրացնել, դեմքը չեր ուզում ցույց տալ։

— Պարծենում ես անկրամը, քսան լոպե չքաշեց։

— Ա՛յլ, մեկ էլ...։

— Չե՛, չե՛, չե՛, տանողն առաջին անգամն էլ կտաներ, ավելի լավ է, գնա՛նք, չե՞, բժի՛շկ, հանդիպատ թողնենք Միհրանին։

— Աղասի՛ Աբրամիչ, խնդրում եմ՝ մեկ էլ ինձ ասեք, այն որը գործարանում ուշքս վրաս չեր, ամեն ինչ տեղն է, չե՞, գործարանն այլևս վոչ մի թերություն չունի՞։

— Ցերևակայի՛ր, վոր վոչ մի։ Այսոր յերեք ժամ անընդհատ աշխատեցին բոլոր մեքենաները ու դաղգյահները. գործարանն աշխատում է հերոսի նման, հանդի՛ստ մնա և առողջացի՛ր։

XXX.

Պատուհանի առաջ նստած, գրիչը ձեռքին, յերկար ժամանակ յերկմտանքի մեջ խորտում եր Լենան առջևի թղթի կտորը։ Ամեն անգամ, յերբ գրիչը դնում եր թղթի վրա, նա մի ներքին անբավականություն, անհարմարություն եր զգում և խկուն գրիչը վերցնում եր թղթի վրայից, նայում պատուհանի ապակու վրա արտացոլված իր ծուռ ու մուռ դեմքին, վոր գլխի շարժումներից յերկարում, բանանում ու կնճռվում եր։ «Ճիշտ այս ապակու նման է կյանքը, վոր թվում է, թե հարթ է, սակայն այնքան խորդ ու բորդեր կան, վորոնց միջով պետք է անցնել շատ զգույշ, չաղտոտվելու համար» — մտածում եր Լենան։

Նորից նա գրիչը դնում է թղթի վրա և ունքերը վեր քաշում, անվերջ, ապուշի նման նայում գրչի ծայրին։ Վերջապես յերկար խոմզելուց, ջնջելուց հետո նա սկսեց գրել։ Գրիչը շատ դժվարությամբ եր շարժվում թղթի վրայով։ Խոմզած թղթերի վրա բազմաթիվ «Միհրան», «Արշակ» մակագրություններ կային։ Մեծ ընդմիջումներից հետո Արշակին և Միհրանին ուղղված նամակներն արդեն պատրաստ եյին։

«Ընկե՛ր Արշակ, ինչպես ասում են, անսպասելի կլինի այս նամակը քեզ համար. վաղուց է, ինչ բաժանվել են մեր ճանապարհները և հանկարծ նամակ։ Թափերից յետ մնացած, խճճված, մասսաներից կտրված մարդու նամակ, վոր անկարող է անցնել յետ մնա-

ցած ճանապարհը և չի ուզում ապրել: Հաղվադեպ են այժմ այդպիսի մարդիկ մեր դասակարգից: Իմ ազատ կյանքի տենչն անհատականություն դարձավ, խճճվեց, մոլորվեց, ընկավ ճահիճը. հասարակական աշխատանքի տենչող իմ անհատական ձգտումն ինձ գլորեց անդունդը և դու հրեցիր ինձ դեպի այդ անդունդը, երբ դեռ կանգնած եմի նրա ծայրին: Իմ կորստի գլխավոր պատճառը դու եղիր. երբ հիշում եմ քո խոսքերը, վոր կենցաղն ել նեպի նման մեզ դեռ տանում, մազերս բիզ-բիզ են կանգնում: Ցեռ այժմ հասկացա, վոր այդ նահանջը միայն քեզ նման այլասերված և ինձ նման ճահիճը նետված դեռ մնացողների համար ե. իմ անկման ամբողջ պատասխանատվությունն ընկնում ե քեզ վրա, դու և քեզ նմանները պետք ե հեռու լինեն մեր շարքերից, քո և քեզ նմանների չունչն ապականիչ, քայքայիչ ազդեցություն ե թողնում մեր աշխատանքների, հսկայական թափի վրա. դու կարող ես այդ տրամադրությամբ վարակել շատ շատերին: քո ուղին դեպի անկումն ե դնում. քո սերը քայքայված, այլանդակված, նահանջող կյանքի սերն ե, վորն ըմպելուց հետո, պետք ե ատրճանակի փողը դնես բթացած գանգիդ ու գործադրես անթույլատրելին: Դու այն խայտառակ «հեղափոխականներից» ես, վորոնք սիրո և կենցաղի ամենաբարձր և բարդ խնդիրները վճռում են թփերի տակ: Դու այն ընկերն ես, վորին պատահելուց հետո հասարակական մարդու համար փակվում են բոլոր ճանապարհները: Իմ բոլոր ճանապարհները փակված են, դեռ զգում եմ իմ անկումը. իմ կյանքն այլևս դեպք չունի, իսկ քեզ ուրիշների կյանքը խորտակելու համար պետք ե պատասխանատվության ենթարկել:

11 դեկտեմբերի, Լենա»:

«Ընկե՛ր Միհրան, երբ մխասին եյինք, իմ կյանքը միշտ հոսում եր աշխատանքի հետ, ի՞նչ կոմունիստ պիտի լիներ, վոր բողոքեր այդպիսի կյանքի դեմ: Ցեռ բողոքեցի, չհասկացա թափերը, նրա պահանջները, այն, վոր պետք ե հասկանա այժմ ամեն մի քաղաքացի: Ցեռ բողոքեցի վոչ թե մեքենական ճահիճն ընկնելու, այլ ավելի առաջ գնալու, ավելի ազատ, հավասար, անխարդախ կյանք ստեղծելու համար: Այդ կյանքը չեր կարելի ստեղծել ընտանիքից դուրս: Ցեռ շատ առաջ եյի ուզում վազել, բայց ամենից յետ մընացի, յեռ սխալվեցի, դու ճիշտ ես, յեռ չկարողացա դրոհում մնալ. յեռ դուրս պոկվեցի դրոհից: Հետագայում յեռ չզգաստացա, այլ անգիտակցաբար հետզհետե ընկա անհատական զգացումների մեքենականի ճահիճը: Այդ խայտառակ ճահճի մեջ կորցրի կյանքի ամենաթանդարժեք իմաստը, ամոթաբար յեռ մնացի հարվածային թափերից: Ցեվ այժմ յեռ ամաչում եմ ապրել: Ծանր ե ինձ համար, վոր Կիմիկի կորստյան պատճառը յեռ եյի:

Դու ճշմարիտ ես յեղել բոլոր հարցերում. մեր դժբախտությունը կայանում եր նրանում, վոր ամեն մեկս առանձին-առանձին հարցերն այնպես չեյին լուծում, ինչպես կուսակցությունն ե լուծում: Իմ սխալը կայանում ե նրանում, վոր իմ միտքը, դատողությունս, զգացումներս, տրամադրություններս չեյին շաղկապվում: Ցնդրանի՞ քեզ, վոր հարվածային աշխատանքը քեզ համար պատվի և հերոսության խնդիր ե: Ապրե՛ր յերջանիկ, Ավրորայի հետ:

Վերջին համբույրներս Ավրորային: Մնա՛ք բարով, ինձ չհանդիմանե՛ք: Լենա»: 11 դեկտեմբերի:

Կյանքի մեջ Լենան չեր հիշում, վոր այդպիսի դժվարությամբ նամակ լիներ գրած. դժվարություն

ու տհաճություն. քանի անգամ նա գրեց ու ջնջեց հիշյալ նամակները, ջնջվածները և ուղղվածները մի քանի անգամ ավելի բովանդակություն ունեցին, քան վերջնականը: Նամակները պետք եր ուղարկել: Կիսաբաց թողնելով դուռը, Լենան դուրս գնաց պատշգամբ և կանչեց դռնապանին: Բակում անսովոր վոչինչ չկար: Բակի միակ սև, պառավ հավը, կուրծքը դուրս ցցած, յերկու վոտով փորում եր գետինը, կլուցով ջոկում հողի մեջի իրեն պետքական հատիկները: Ցածի հարկում բնակվող բանվորի կինը հավաքում եր պարանի վրա փռած սառած լվացքը:

Ցերը Լենան շուռ յեկավ, դռնապանն արդեն կանգնած եր նրա յետևը:

Լենան ներս վազեց սենյակը ու նրա խորքից դուրս բերեց յերկու ծրար:

— Զգի՛ր մեր տան կողքին կախված պոստարկղը:

— Փոշտի յաշչի՞կը:

— Այո՛:

— Առանց մարկա կգնա՞:

— Մարկա՞...

— Հա՛:

Լենան նորից անցավ սենյակը. դռնապանը մտավ նրա յետևից. Լենան քսակի մեջ վազ եր փնտրում:

— Ե՛հ, Ա՛լեք, ասա՛, ես կյանքից դու չե՞ս ճանաչել:

— Աշխարհը նոր ե աշխարհ դառնում, նոր ենք սկսում ապրել, ել ի՞նչ ժամանակ ե ճանաչելու:

Լենան դառը կերպով ժպտաց Ալեքի դեմքին: Ալեքն այլ կերպ հասկացավ այդ ժպիտը և ավելացրեց.

— Աշխարհում լավ բան շատ կա, լավ-լավ աղջիկներ, սիրուն կանայք, քեֆ, ուրախություն:

Ալեքն ուղղեց հայացքը Լենային, վոր այդ ակնարկներին համապատասխան պատասխան ստանա, սակայն Լենան դրամը դնելով նրա ձեռքը, ասաց.

— Գնա՛, յերկու մարկա կառնես, կկպցնես և կգցես արկղը. միայն չո՛ւտ, վոր յերնկոյան պոստի հետ հավաքեն:

Նամակներն Ալեքը տարավ:

Լենան փակեց դուռը և կանգնեց սենյակի ուղիղ մեջտեղը, սեղանի առաջ, վորի վրա յեր դրված վոքրիկ բրաունինգ ատրճանակը: Կյանքում ատրճանակ չեր բռնել. ատրճանակը վերցրեց, նայեց վրան, կրկին ցած դրեց, մոտեցավ պատուհանին ու ժպիտով շշնջում եր մտքում:

«Ցերևի ամենադժվար բանն ինքնասպանությունն ե». սրտի արագ բաբախումից նրա շունչը կըտրվում եր: «Ինչպես յերևում ե, յես չպետք ե կարողանամ իրագործել վորոշումս. ել ինչո՞ւ եյի նամակներ գրում, ո՞ւմն եյի վախեցնում, զարմացնում»:

Նա նորից վրա վազեց դեպի սեղանը, վերցրեց ատրճանակը, դրեց գնդակը տեղը, պատկեց անկողնում, ղեմ արեց վոտը դանդին ու մատը դրեց բռնակին, ձեռքը դողաց... ճակատը թրջվեց, լեզուն արդեն ցամաքել եր...: «Գուցե թո՞ւյն ընդունեմ, գուցե թույնով ավելի հե՞շտ ե մեռնել», — մտածեց նա ու, պատուհան գալով մահճակալի վրա, վեր կացավ, զգուշությամբ ատրճանակը դրեց կրկին սեղանին, չդդեց հատակին, դողացող ձեռքերով հանեց դեղի տուփը բարձի տակից, դեղափոշին ածեց բաժակի մեջ, խառնեց, բարձրացրեց բաժակը, մանրաղանին սկսեց դիտել և խելագարի պես ծիծաղել: Այս ավելի ծանր թրվաց նրան, բաժակն ել դեն չպրտեց ու սկսեց սրտանեղած ու մտախոհ քայլել սենյակում:

«Ասում են, վոր թուլամորթները, քայքայվածները են ինքնասպանություն գործում, միթե ինձնից ավելի քայքայված մարդ կլինի, ինչո՞ւ չեմ կարողանում»։

Լենան, յերեսի վրա ընկած, սկսեց հեկեկալ։ Զայրույթից մարմինն այրվում եր։ Ինքնասպանության վճռականությունից զուրկ լինելը նրան խայթում ու այրում եր։ Հանկարծ նա վեր թռավ տեղից, բաց արեց դուռը և դուրս նետվեց սենյակից։

Արդեն մութն եր։

— Ա՛լեք, Ա՛լեք, Ա՛լեք··· ա՛յլ այստեղ։

Ալեքը, լոպե չանցած, բարձրացավ վեր. բակի ելեկտրական լույսն ընկել եր Լենայի վրա և նրա կարմրած աչքերը փայլում եյին Ալեքի աչքերում։

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ կա։

— Նամակները գցեցի՞ր պոստարկղը։

— Չե՛։

— Ինչո՞ւ։

— Մարկաներ չկտա։

— Ցե՛տ բեր նամակները։

— Ներքևն ա, պլինջակիս ջեբումը, կբերեմ։

Ալեքն արագ ցած իջավ։ Լենան մնաց պատշգամբում և մտքում միշտ կրկնում եր՝ «վախկոտ, վախկոտ, վախկոտ»։

Լենան ուզում եր Ալեքի յետևից կրկին գոռալ, յետ կանչել, բայց շրթունքները հուպ տվեց, ատամները կրճատացրեց և պոկվելով պատշգամբից կրկին սենյակը մտավ։

Սենյակում արդեն բոլորովին մութն եր. նա վառեց սեղանի լամպը և աչքերը կրկին հառեց բրաունինդին, շրթունքները մրմնջում եյին ցածր ու լացակում ձայնով.

«Չեմ ուզում ապրել, չեմ ուզում յետ մնալ բոլորից, չեմ ուզում, վոր իմ այլասերված դեմքը տեսնեն ընկերներս։ Բայց չեմ կարողանում, չեմ կարողանում վերջ տալ այս խայտառակ տանջանքներին։ Գուցե՞ յես այլասերված, քայքայված չեմ։ Ցեթե չեմ կարողանում վճիռս իրագործել, ուրեմն կամքի ուժ ունեմ, ուրեմն քայքայված չեմ։ Մի տարորինակ ուժ ծավալվում է իմ ներսը. թուլամորթությո՞ւն է, թե՞ ընդհակառակը, չեմ հասկանում, բայց զգում եմ, վոր հաղթանակում է, զգում եմ, վոր ապրելու տենչն ավելի մեծ է, քան մեռնելու։ Վճռված է։ Ցես չեմ կարող ինքնասպանություն գործել։ Չեմ կարող, չեմ կարող, յե՛տ բեր, Ա՛լեք, նամակները»։

Լենան սկսեց պտտել սեղանի վրա դրված ատրճանակը, մատով խաղ անելով նրա հետ։ Հանկարծ մատը դիպավ բլթակին, ատրճանակը տրաքեց և պատռեց Լենայի կուրծքը։ Արյունը տաքացրեց նրա մարմինը։ Նա վերցրեց ատրճանակն ու չվարած կանգնած եր սենյակի մեջտեղը։ Մի քանի վայրկյանից հետո նա ուժասպառ գետին գլորվեց, ատրճանակը ձեռքում տրաքեց յերկրորդ անգամ։ Ալեքը բացեց դուռը, յերկու ծրարները ձեռքին։ Հարևանները ներս խուժեցին բնակարանը։

XXXI.

Նույն որը, դիշերվա ժամի 11—ին, յերկու ժամանց, յերբ գնդակը ծակեց Լենայի կուրծքը, կայարանի առաջ կանգնած մարդատար գնացքի վագոններից մեկը մտան չորս վորսորդ, տաք հագնված,

սառնամանիքից պաշտպանվելու համար։ Վորսորդական իրեղեններից ու նրանց վրա գտնվող բոլոր պատրաստություններից յերևում եր, վոր նրանք ուղևորվում եյին բաղեր վորսալու։

Վագոնը տաք եր, լուսավորված և կիսով դատարկ։ Վորսորդները հանեցին իրենց ուսերից պայուսակները, հրացանները, կախեցին վագոնի պատերին կպցրած կեռերին, փաթաթած յատնջիները բաց արին, փռեցին նստարանների վրա ու թիկն տվին։

Զորս վորսորդները — Միհրանը, ինժեներ Հարությունյանը, Սուրենը և Դավթիկոն եյին։ Վագոնում Սուրենը և Դավթիկոն բարձրացան վերի դարակը և պառկեցին, Միհրանը և Հարությունյանը մնացին ցածում։

— Վատ չեր լինի, յեթե մի քիչ խժռենք, — ասաց Հարությունյանը, ձեռքերը վորսորդական պայուսակի մեջ կոխելով և հարցական նայելով Միհրանի դեմքին։ Միհրանը դրական նշան արեց։

— Ի՞նչ կասեք, աղե՛ր, ընթրե՞նք։

— Վոչինչ, կարծում եմ, չեր խանդարի, յեթե քիչ-միչ ուտեյինք։

Միհանը մեկ-մեկ լցնում եր կոնյակի բաժակը և տալիս հերթով ընկերներին, վորից հետո սկսեցին կրծել թղթի վրա փռած յերշիկն ու տապակած հավի միսը։

— Քի՛չ կեր-ծանր փորով բաղեր չես կարող վորսալ, — կատակեց Սուրենը, Դավթիկոյի ձեռքը բռնելով։

— Դո՛ւ քիչ կեր, վոր աչքին խրես։ Բարձրաձայն ծիծաղ բարձրացավ։

— Մի պատմի՛ր սրանց, Դավթիկո, թե ինչպես տասը բաղ խփեցիր։

— Ե՛, դե լավ, — անհամբեր զգալով, բացականչեց Դավթիկոն։

— Թե դու չես պատմում, յես սկսեմ, — հավի միսը կրծելով, համառությամբ շարունակում եր Սուրենը։

— Ջրի տանը տո՛ւր, խմեմ և քի՛չ խոսիր։

— Շատ հետաքրքիր է, թե ի՞նչ տասը բաղի պատմություն է, յես ու Միհրանը չգիտենք, պատմեցե՛ք մեկն ու մեկդ։

— Լսեցե՛ք, — սկզբից կուշտ ծիծաղելով ու խեթելով աչքերը դեպի Դավթիկոն, սկսեց Սուրենը։ — Պիտեք, վոր Դավթիկոն յերիտասարդ վորբորդ գիտեք, վոր Դավթիկոն յերիտասարդ է, ինչ վորս է ատում։ յերիտասարդ վորսորդներն իրենց անաջողության մեջ միշտ մեղադրում են կամ հրացանին, կամ փամփուշտներին և կամ շանը, բայց իրենց՝ յերբեք։ Անցյալ տարի ձմեռը մի քանի անգամ գնացինք բաղերի Խրամ, Ղարայազ։ Դավթիկոն մի քանի անգամ դատարկ վերադարձավ տուն։ Դու մի ասի կինը միշտ կշտամբում է, թե ինչի՞ս վորսորդն ես՝ գնում ես, թափառում, հոգնում, թրջվում, գլխովում և դատարկ գալիս։ Դավթիկոն պատասխանելիս ի լինում։ «Սպանեցի, ջուրը տարավ» կամ «սպանածներս սառույցների վրա մնացին» և կամ «յես հո բաղերի համար չե՞մ գնում վորսի, այլ զվարճության, հանգստանալու և վերջապես վորսն աջողությունից է կախված»։

Ցեկ Սուրենը պատմում եր, միսը ծամելով, թե ինչպես ինքը Դավթիկոյի հետ անցյալ տարի գնացել եր Խրամ՝ բաղերի, Դավթիկոն մեկ հատ բաղ եր սպանել առավոտը թռիչքի ժամանակ և մինչև իրիկուն

այլևս վոչինչ։ Վերադառնալիս Դաթիկոն յետ եր մնացել գնացքից և քաղաք յեկել առավոտյան գնացքով. թե ինչու յեր մնացել Դաթիկոն, տղերքը չեյին հասկացել, սակայն առավոտը քաղաքում տեսնող ընկերները պատմել եյին, վոր Դաթիկոն տասը բաղ կախած վրայից, գնալիս եր յեղել դեպի տուն։ Ինքը Դաթիկոն եկ յերբ գործարան եր յեկել, պատմել եր, վոր տասը բաղ ե ոպանել առավոտը վաղ կայարանի ընանցքների վրա, յերամների թռիչքի ժամանակ։ Դաթիկոն այդ բաղերի մասով հյուրասիրում ե և ընկերներին։ Ճաշի ժամանակ Դաթիկոն մի քանի անգամ կնոջը հիշեցնում ե, վոր վորսն աջողության բան ե։

Գնացքը ծղրտաց յերկար ու դիլ ձայնով և կանգ առավ կայարանում։ Սուրենը դադարեցրեց իր պատմությունը։

— Ում ջրամանը դատարկ ե, այստեղ պետք ե լցնենք, — ասաց Միհրանը։

Սուրենը, Հարությունյանը և Դաթիկոն լիքն վագոնից, դրսից առատորեն վագոնը ողողեց թարմ, սառն ողը։ Միհրանը վեր կացավ, փակեց վագոնի բաց դուռը և թիկն տվեց յարինջու վրա։ Մի քանի րոպե չանցած, տղերքը վերադարձան կրկին վագոն դատարկ ամաններով։

— Բոլոր խողովակները սառած են։

— Դոնե բորժոմ բերեյք։

— Վոչինչ, մյուս կայարանում ջուր կճարենք։

Գնացքը կրկին շարժվեց. բոլորը թիկն տվին իրենց տեղերում։

— Դե՛, շարունակի՛ր տասը բաղի պատմությունը։

— Շարունակե՞մ, Դաթիկո։

— Շարունակի՛ր, ժամանակն անցնի, բայց սարսաղ բաներ մի՛ ավելացնի։

— Հա, բաղերն ուտելուց հետո, մի յերկու շաբաթ անց, հանդստի որը, Դաթիկոն և իր կինը գնում են չուկա մթերքներ գնելու։ Կինը մի խանութպանի մոտ մեծ քանակությամբ կաքավներ և բաղեր նկատելով, քաշ ե տալիս մարդուն դեպի այն կողմը և հարցնում ե բաղերի գները։ Վաճառողը գնահատում ե մեկ բաղը 80 կոպեկ։ Դաթիկոյի կինն ասում ե, թե թանգ ե։ «Ինչո՞ւ յե թանգ», պատասխանում ե վաճառողը, — հիմա ավելի եժան ե, յերկու շաբաթ սրանից առաջ ձեր ամուսինն ինձանից ինը բաղ առավ մի-մի ռուբլով։

Հարությունյանը սրառված տեղից նստեց ուտակից գլուխը բարձրացրեց դեպի Դաթիկոյի կողմը։ Միհրանը ժպտաց։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛։

Վագոնն ոտքադանքում եր վորսորդների ծիծաղի ձայնին։ Նույնիսկ հարևան նստարանի վրա պառկած ճամբորդը, վոր հետաքրքրությամբ լսում եր պատմությունը, բաց եր արել բերանը, վորքան հնարավոր ե, և ծիծաղից առաջացած հաղը չեր կարողանում զսպել։

— Եդ պատմությունն իսկապես ճի՞շտ ե, — հարցրեց Հարությունյանը։

— Հարյուր տոկոսով ճիշտ։ Եդ գործը բաց արեց ինքը Դաթիկոյի կինը մի յերեկո, յերբ մենք պատահեցինք ակմբում. նա բոլորը պատմեց մեզ. յերեվակայեցե՛ք, մինչև հիմա կինը չի հավատում, թե նույնիսկ են մեկը, վոր խփել եր Դաթիկոն, իսկապես նրա սպանածը. լինի, ասում եր. — «Եդ ել գուցե պատահմամբ ե դիպել»։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛ — սրտաբուխ ծիծաղի ձայնը դեռ յերկար հնչում եր վագոնում։

— Ե՛ն պատմիր, ե՛ն, Սո՛ւրեն, թե ինչպես նաստաակին նշան բռնեց, բայց չանը կպավ, — ասաց Հարությունյանը։

— Եղպիսի բան միշտ պատահում է, յերբ շունը նապաստակից մոտիկ է լինում։

— Հա, իրեն ել է պատահել, պատմել չի ուզում։

Ու ապա սկսվեցին բազմաթիվ հիշողություններ և պատմություններ լորերի, կաքավների, ֆազանների վորսի ու շների քաջագործությունների մասին։

Սուրենն արդեն մրափում եր գնացքի որորից, իսկ մյուսները ննջում եյին։

XXXII.

Ժամի յերեքն եր, յերբ վագոնի ուղեկիցը զարթեցրեց վորսորդներին, վորոնք շալակելով իրենց իրեղեններն, իջան կայարանում։

Լիճը, վորտեղ պիտի վորս անեյին, կայարանից բավական հեռու յեր. վորսկաններն առանց կայարանում կանգ առնելու անցան յերկաթգիծը և բռնեցին լճի ճամբան։ Միհրանը լավ գիտեր այդ ճանապարհը և գնում եր առաջից, բոլորը լուռ եյին, չեյին խոսում. աղմկում եյին միայն նրանց կողքից քաշ ածած ջրամանները։

Մի ժամից հետո արդեն լճի ափին եյին. ցուրտը սաստիկ եր։ Աստղազարդ հորիզոնի վրա լույսի և վոչ մի նշույլ չկար։ Դաթիկոն յափնջին փռեց սառած գետնին, բոլորն իջեցրին իրենց բեռները, նստեցին յափնջու վրա և փաթաթվեցին մյուս յափնջիների մեջ։ Միհրանը վառեց մոմը, հանեց չախմատը և

Հարությունյանի հետ սկսեց խաղալ։ Դաթիկոն և Սուրենը հետաքրքրությամբ դիտում եյին ու յերբեմն սրան-նրան ցուցմունքներ անում։

Լիճն անդորր եր, նրա ափերի սպիտակյազը սառույցները վայլում եյին, իսկ ջրի մեջ արտացոլում եր ամբողջ յերկինքը։ Ընդհանուր լռությունը յերբեմն խանգարում եր ափերի յեղեգների սոսափյունը, վորը խորհրդավորությամբ արձագանքում եր լճի վրա։ Վորսորդները դարձնում եյին իրենց յերեսները դեպի լիճը, նայում վայլող սպիտակին ու կրկին շարունակում իրենց խաղն ու զրույցը։

— Աբի ու տես, վոր այստեղ բաղեր չկինեն, — խոսեց Դաթիկոն։

— Տարվա այս ժամանակ և այսպիսի յեղանակին անպատճառ այստեղ պետք է լինեն, — հաստատ համոզված հավատացնում եր Դաթիկոյին Միհրանը։

— Հիշո՞ւմ ես, Սո՛ւրեն, անցյալ տարի ելի ես-տեղ եյինք, ճիշտ է, այս ժամանակ չեր, բայց բաղեր չկային։

— Եթե այժմ չկան ել, ապա առավոտը, աղջամուղջը բացվելուն պես, անպայման թռիչք կլինի։

— Ուրեմն դու համոզվա՞ծ ես, վոր ես-տեղ բաղեր չկան։

— Իսկապես հաստատ չեմ կարող ասել, յեթե լինեն, պետք և աղմկեն։

— Ուրեմն չկա՞ն։

— Ողին ո՞ւմ մոտ է, մեկ – մեկ գավաթ տվե՛ք, խմենք, չսառչենք։

— Շախ...

— Վոչինչ, եղպիսի չախերից չեմ վախենում։

— Ելի շախ։

— Սո՛ւս, բարձր մի՛ք խոսի, տղե՛ք։

— Հիշո՞ւմ ես անցյալ տարի Նրամում. լույսը բացվելուն պես՝ քանիսը գցեցինք, Սո՛ւրեն, — ձչնջաց Դաթիկոն պարծենալով:

— Համենայն դեպս դու վոչ մեկն ել չգցեցիր:

— Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛... Թրիքրտացին բաղերը լճում: Լիճն արձագանքեց բաղերի աղմուկին: Վորսորդները բոլորը վոտի կանգնեցին, յափնջու փեչն ընկավ չախմատի կոճերի և մոմի վրա, չախմատի կոճերը վայր ընկան, մոմը հանգավ: Դեմքերը դեպի լիճը սևեռած, չորսն ել կռացած նայում եյին սպիտակին ու կլանում աղահությամբ բաղերի աղաղակները: Դաթիկոն ուզեց առաջ գնալ դեպի ափը, սակայն նրան չթողին: Միհրանը, բոլորի թևերից քաշելով, նորից նստեցրեց յափնջու վրա և սկսեց Հարությունյանի հետ շարունակել չախմատը, իսկ Դաթիկոն անվերջ խոսում եր բաղերի քանակության մասին:

— Ղա՛, ղա՛, ղա՛...

Նորից արձագանքեց լռության մեջ մեռած լիճը բաղերի ձայնին ու թրպրտոցին:

Միհրանը ժամացույցին նայեց և հայացքը դարձրեց դեպի արևելք: Արևելքն արդեն շառագունել եր. լճի յերեսն ավելի յեր վայլում, իսկ աստղերի լույսն ադոտացել եր: Նա վեր կացավ տեղից:

— Միայն թեթև պայուսյակները վերցրե՛ք, մյուս բոլոր իրեղենները թողե՛ք այստեղ. Դա՛թիկո, դու կգնաս դեպի քո թուփը, այդ թփի տակից և վոչ մի կողմ չհեռանաս: Ցերը հասնես այնտեղ, համարյա արդեն թռչքի ժամանակը կլինի, իսկ մենք կգնանք աջ, դեպի յեղեգնուտը և յուրաքանչյուրս միմյանցից հինգ – վեց հարյուր քայլ հեռու կպահվենք յեղեգնուտի մեջ: Տեսե՛ք, զգուշացնում եմ, վոչ վոք լճի սառույցի վրա վոտ չդնի:

Բաղերը լռել եյին, սակայն վորսորդներն ուզում եյին, վոր նրանք աղմկեն: Անզուսպ վորսորդական անհամբերությամբ նրանք ցանկանում եյին, վոր լույսը շուտ բացվի և արևի կարմրաչող սլաքները արտացոլեն պլպլան ջրերի կարմիր յեղեգների մեջ, ուր կանաչաթև բաղերն են լողում, և սպասեն, վոր միամիտ մոտենան կամ թռչեն իրենց գլուխների վերևով:

Պլպլան ալ կարմիր գունդը սարերի յետևից ցույց տվեց իր յեղրը, վոր կամաց-կամաց կլորացավ: Հրեղեն գունդը բարձրացավ վեր: Արևելքը հրդեհվեց: Բոլոր

պտտվող յերամից, ընկնում եյին ցած, արնակոլոլ, բերանները բաց ու խուսի անում և մնում քարացած:

Դաթիկոն թփի տակից մի քանի անգամ արձակեց յերամների վրա, սակայն անհետևանք. բաղերը չարժում եյին իրենց կտուցները, փոխում թռիչքի ուղղությունը և շարունակում ճանապարհը:

— Թո՛ւ, փամփուշտներս վատ են լցված,— մրմրթմրթացնում եր նա թփի տակ նստած:

Գլխի վերևը բաղերի թռիչքի սրընթաց ձայները լսվեցին. հանկարծ նա կանգնեց թփի մեջ. հրացանը բարձրացրեց վեր և յերկու փամփուշտն ել կրակեց: Բաղերից մեկն արագությամբ թեք գծով քարի նման վայր ընկավ Դաթիկոյի դիմաց լճի ափի սառույցների վրա:

Նա դուրս յեկավ թաղստյան տեղից և, ճակատի քրտինքը սրբելով, վազեց ափի սառույցների վրայով դեպի ընկած բաղը: Տասը քայլ չարած, նա կանգ առավ, հիշելով, վոր Միհրանը խիստ կերպով արգելեց սառույցի վրա մտնելը. բաղը դեռ թրպրտում եր ու Դաթիկոն, լցված զայրույթով, շարունակեց ճանապարհը դեպի բաղը, բռնելու համար:

— Դը՛մբ... դը՛մբ... դը՛մբ...

Ընկերների զարկերի ձայները լսելիս, Դաթիկոյին թվում եր, թե նրանք տասնյակ բաղեր եյին վեր ածում և նրա մեջ ավելի յեր մեծանում ընկած բաղը ձեռք գցելու ցանկությունը: Դաթիկոն աչքերն արնակալած շարունակեց ճանապարհը:

Ցերեսուն քայլ եր մնացել սպանված բաղից, յերբ սառույցները ճաքճքեցին Դաթիկոյի վոտների տակ և նա, վայրկենապես կորցնելով հավասարակշռությունը, ամբողջ մարմնով ընկղմվեց ստոր ջրի մեջ: Նրա

լեզուն կապ ընկավ: Հրացանը ձեռքից վայր գցեց, սակայն լճի ջուրն այնքան խորը չեր, նա կանգ առավ յերկու վոտով ջրի հատակին ու սկսեց փորձեր անել բարձրանալու սառույցի վրա: Նրա բոլոր փորձերն ապարդյուն անցան, սառույցը միշտ կոտրվում եր ու նա նորից ընկղմվում եր ջրի մեջ:

Հուսահատորեն դողդոջուն ձայնով նա սկսեց աղաղակել ամբողջ կոկորդով, լիճն ահռելի արձագանք տվեց:

— Ոգ-նե-ցե՛ք... հա՛յ... խեղդվո՛ւմ եմ-հա՛յ, նրա մարմինը բոպեյապես սառեց, ձայնն այնքան եր դողդողում, վոր այլևս չկարողացավ գոռալ, հանեց սուլիչը և սկսեց անընդհատ սուլել:

Միհրանը լսեց սուլոցները, հասկացավ, դուրս յեկավ յեղեգնուտից, սպանված բաղերը ցած գցեց գետին, հեռադիտակն ուղղեց դեպի լիճը, թաշկինակով նշան արեց, վոր ընկերներն իրեն մոտենան և սկսեց վազել դեպի Դաթիկոն, վորի միայն գլուխն եր յերևվում լճի փայլուն ջրերի վրա:

Ցերբ դեմ առ դեմ կանգնեցին Դաթիկոյի դիմաց ափի վրա, նա դեռ շարունակում եր աղաղակել և ընկերներից ողնություն եր աղերսում, համարյա սրտասվելով:

— Պետք է ոգնել, դե՛, պատրաստվեցե՛ք դեպի սառույցները, — ասաց Միհրանը:

Դեն շպրտելով պայուսակը, Միհրանն արձակեց վրայի զոտիները և սկսեց արագությամբ ոդով լցնել իրենց հետ բերած ռետինե նավակը:

— Ի՞նչպես,— ասաց Հարությունյանը,— դու պատրաստվում ես սառույցների վրայով գնալ նրա մոտ:

— Թողնել, վոր նա մեռնի, սառչի այս ծանծաղ ջրերի մեջ, բա ել ընկերը վո՞ր որվա համար է։

Միհրանը բարձրացրեց ռետինե նավակը և, աչքերը հառած Սուրենի ու Հարությունյանի դեմքերին, հարցրեց.

— Ո՞վ է գալիս ինձ հետ, յես այս լիճը գիտեմ, նա խոր չի և հատակն ել քարոտ ու մաքուր է։

— Ձե՞զ վոր մեր տակն ել սառույցը կիջրվի։

— Բա, նավակն ինչի՞ համար է. ո՞վ է գալիս ինձ հետ, ժամանակ չի կարելի կորցնել։

Սուրենը նայեց Հարությունյանի այլայլված դեմքին, նայեց Միհրանին, լճին և, դեն ձգելով հրացանն ու պայուսակը, մոտեցավ, բռնեց նավակի ծայրից։

Ու յերկուսով բռնած նավակը, դանդաղ քայլում եյին սառուցի վրա այլ ուղղությամբ, դեպի Դաթիկոն, համակված միայն մի զգացումով՝ փրկել ընկերոջը, վորն այլևս չեր աղաղակում, այլ փորձում եր դուրս գալ սառույցի վրա։

Դաթիկոյից հիսուն քայլ եր մնացել, յերբ սառույցը Միհրանի և Սուրենի վոտերի տակ ճարճատեց։ Սուրենը և Միհրանը նայեցին միմյանց և նավակը գցելով, ընկղմվեցին ջրի մեջ։ Նավակը չոգնեց նրանց։

Սկսվեց նոր պայքար, Միհրանը և Սուրենն սկսեցին բռունցքներով ջարդել սառույցը. մեծ դժվարությամբ նրանք հասան Դաթիկոյին, մի քիչ ողի խմեցրին նրան, բարձրացրին և դցեցին սառույցի վրա։ Սակայն սա դրությունից փրկվել չեր նշանակում, վորքան նրանք փորձում եյին իրենք ևս բարձրանալ սառույցի վրա, սառույցը կոտրվում եր. դրությունն անյելանելի յեր. ափում կանգնած Հարությունյանին Միհրանն կմաց տվեց, վոր գնա մոտակա գյուղից ոգնություն կանչի։

Հարությունյանն անհայտացավ։

Միհրանը և Սուրենը շարունակում եյին կռիվը սառույցների դեմ համառությամբ։ Նրանք ձեռքներին վոչինչ չունեյին, վոչ մի յերկաթի կտոր ու բռունցքներով ջարդում եյին սառույցը և առաջ շարժվում։

Ափը հեռու յեր և նրանց բռունցքներն ավելի շուտ կջախջախվեյին, քան մինչև ափը փռվող սառույցները հասնեյին։

— Սառչելու յենք, չենք կարողանալու դուրս գալ այստեղից. ՀՀՆՋում եր դողացող շրթունքների արանքից Սուրենը։ Միհրանը նայում եր պատանու սիրթնած դեմքին, կտոր-կտոր եր լինում նրա սիրտը, մեկին փրկելու փոխարեն պետք է կորչեն աննպատակ կերպով յերեքը և այդ այն ժամանակ, յերբ լճի մեջ նրանք կարողանում են շարժվել։

Սառնությունն արդեն թափանցել եր նրանց վոսկորները. վոչ Միհրանի և վոչ Սուրենի մեջ-այլևս ուժ չեր մնացել սառույցները ջարդելու. նրանք հենվել եյին սառույցի վրա և ապասում եյին, թե յերբ դիմացի սարից կերևան ոգնության հասնող մարդիկ։

«Մի՞թե այսպես հիմարաբար և անսպասելի պետք է վոչնչանանք, սառչենք այս ջրերի մեջ, աշխատանքի այսպիսի մոմենտին, յերբ դեռ այնքան հսկայական գործեր ունենք կատարելու»։

Այդ բոլորեյին նրա աչքի առաջ շարվեցին գործարանի բոլոր մեքենաները, բանվորները, ընկերները, Ավրորան, նույնիսկ մտաբերեց Լենային. «ինչ հիմար և անիմաստ վախճան է». ու Միհրանն իր յերկար թե-

ձերով նորից ցանկացավ վեր բարձրանալ սառույցի վրա, բայց սառույցը նորից կոտրվեց:

— Հնար չկա. Հարությունյանը շատ ուշ կհասնի տեղ. սառչելու, վոչնչանալու ենք այս սառույցների մեջ. ինչ ամոթալի և հիմար է լինելու մեր վախճանը,—հառաչում եր Սուրենը:

— Ձենք սառչի, հավաքի՛ր ուժերդ, կամ մեր ուժերով կազատվենք, կամ ոգնություն կգա: Դա՛թիկո, ա՛ Դաթիկո, դու ի՞նչպես ես, հը՞:

Դաթիկոն հիսուն քայլ նրանցից հեռու մեկնված եր սառույցների վրա:

— Ցես չեմ շարժվում, վորովհետև վախենում եմ, վոր սառույցը վոտիս տակ նորից կոտրվի:

Ու ամեն ինչ նորից լռեց լճի վրա. միայն բաղերի ղայոցն եր լսվում, վորոնք պտտվում եյին լճի ջրերի վրա, արևի աղոտ շողերի տակ:

Սուրենի դեպի գյուղի ճանապարհը հառած աչքերն սկսեցին մթնել: Նրան թվում եր, թե իրենց գլխին բազմաթիվ բաղեր են պտտվում, շատ մոտ և թևերով զարկում են իրենց գլխին, ուսերին: Այդ բաղերը հետո կարմիր, կանաչ թիթեռներ դարձան. ի՞նչքան շատ եյին թիթեռները, ամբողջ յերկնքի կապույտը ծածկեցին: Հետզհետե այդ թիթեռները սև կետեր դարձան և յերկինքը մթնեց. Սուրենը գլուխը թեքեց սառույցի վրա: Սառույցների տակ նա լսում եր ստորյերկրյա դղրդացող աղմուկները, վորոնց մեջ պարզորոշ կերպով նա տարբերում եր իրենց ոգնության յեկող մարդկանց խոսակցությունը, Միհրանի ձայնը:

— Սո՛ւրեն, սի՛րելիս, տե՛ս, նարի վրա յերևացին, ձիերով են գալիս, քիչ ել համբերություն, տոկունություն և փրկված ենք,— թափահարում եր Սուրենի ուսերից բռնած Միհրանը:

Սուրենը լսում եր, բայց կարծես մարմնի հետ նրա գիտակցությունը ևս սառչում եր. նա ինչ վոր սմբակների դոփյունի ձայն զդաց, ապա կորցրեց գիտակցությունը, մեջքի վրա թեքվեց դեպի հատակը, սակայն Միհրանը բռնեց նրան իր քարացած ձեռքերով և ամուր հուպ տվեց իր կրծքին, սառած այտերը դրնելով նրա գլխի վրա:

— Դա՛թիկո, Սուրենը շատ վատ է... վատ է, նա մեռնում է: Սո՛ւրեն, հո՛գիս սի՛րելիս, մի քիչ ել, ա՛յ, գալիս են,— աղերսում եր Միհրանը և չփում Սուրենի սառած ականջները, ճակատը:

Միհրանի աչքերը ևս խառնվեցին, ականջները թաչչում եյին անասելի չչմեցուցիչ ձայներից. նրա գլուխը ևս ընկավ սառույցների վրա, վորոնց տակից ահռելի աղմուկ եր լսվում: Աղմուկը նման եր մահուդի գործարանի աղմուկին, վորի միջով քայլում եր ինքը: Զդաց, վոր կորցնում է գիտակցությունն ու հավասարակշռությունը և ավելի հուպ տվեց Սուրենին իր կրծքին:

Հենց այդ բոպեին յեկողները հասան ափը:

— Հե՛յ, հե՛յ, հե՛յ, — Մի՛հրան, Մի՛հրան...

Միհրանն զդաց, վոր ձայներն ափիցն եյին, ոգնության յեկողներն են, բարձրացրեց գլուխը, բայց աչքերն այլևս հեռուն չեյին տեսնում: Ցեվ միայն քարացած, ձեռքը հազիվհազ կարողացավ վեր բարձրացնել:

— Հե՛յ, հե՛յ, պարանը բռնի՛ր, պարանը չուն բերել է, քո առաջն է, բռնի՛ր, կապի՛ր քեզ և Սուրենին, կապի՛ր, կապի՛ր, կապի՛ր:

Միհրանը չռեց աչքերը և իր առաջ սառույցի վրա նկատեց պարանը, վայտացած ձեռքը շարժեց սառույցի վրայով, բռնեց պարանը, քաշեց դեպի Սուրենի թևերի տակով, պարանը հեշտ եր գալիս, սակայն դեռ մի պտույտ չեր արել նրանով, յերբ հանկարծ պարանը դբվեց և այլևս չեր գալիս: Միհրանը նայեց պարանի ուղղությամբ և նկատեց, վոր Դաթիկոն բռնել է նրա մեջտեղից և քաշում է դեպ իրեն, ցանկանում եր փաթաթել իրեն:

— Դա՛թիկո, Դա՛թիկո, – գոչեց Միհրանը խեղդվող, խռլոտ ձայնով, – սպասի՛ր, ա՛նիրավ, Սուրենի դրությունը վատ է, Սուրենը սառել է, Սուրենն անշնչացել է, սպասի՛ր, ա՛նիրավ, մի՛ ձգիր պարանը:

Բայց Միհրանի ձայնը խռխռում եր կոկորդի մեջ:

Դաթիկոն տեսնում եր, վոր Միհրանի ծնոտները շարժվում են, ձայնը խեղդվում, խզխզում է, բայց և այնպես քաշում եր պարանը:

— Դա՛թիկո, Դա՛թիկո, թո՛ղ պարանը, թո՛ղ, – գոչում եր ափից Հարությունյանը, քեզ ուրիշ պարան կգցենք, թո՛ղ:

Դաթիկոն չեր թողնում:

Միհրանի վայտացած ձեռքը չկարողացավ պահել պարանը. Դաթիկոն ավելի ուժեղ եր, քաշեց պարանը, վորը դուրս պրծավ Միհրանի ձեռքից: Դաթիկոն նրանով փաթաթեց իրեն:

Միհրանն զգաց, թե ինչպես սառույցների վրայով Դաթիկոն սահեց դեպի ավ:

Յերբ յերկրորդ անգամ շունը պարանը բերեց և ձգեց Միհրանի առաջ, նա բոլորովին կորցրել եր գիտակցությունը և Սուրենին գրկած ընկղմվեց ջրի տակ:

XXXIII.

Յերկար փայլող հատակ ունեցող միջանցքի պատից կախած մեծ ժամացույցը զարկեց 11-ը. միջանցքի ճիշտ մեջտեղում դրված փոքրիկ սեղանի առաջ նստած յերիտասարդը գլուխը ծուլորեն բարձրացրեց լրագրի վրայից, նայեց ժամացույցին, մեկ անգամ բերանը լայն բացեց, վեր կացավ տեղից, սպիտակ գոգնոցի գոտին ամրացրեց, սկսեց գննել առաջը դրված տուփի մեջ դտնվող ջերմաչափերը: Մի քանիսի մեջ սնդիկը դեռ իջեցրած չեր: Նա մրթմրթաց, հայհոյեց իրենից առաջ հերթ պահող բժշկին և սկսեց մեկ-մեկ ձեռքի արագ տատանումով սնդիկն իջեցնել:

Այդ բոպեին դիմացից բժշկուհիներից մեկի հետ թևանցուկ, կոտրատվելով, լրագիրը ձեռքին, ձեռնափայտը կռան տակը դրած, յերիտասարդ բժշկին մոտեցավ դիշերային հերթապահը և հետաքրքրությամբ, ձեռքը լրագրին խփելով, հարցրեց.

— Կարդացի՞ր:

— Ի՞նչը:

—Վորսորդներ են խեղդվել լճում:

— Ցեռ սենսացիաներով չեմ հետաքրքրվում:

— Ոհո՛:

— Ինչո՞ւ ջերմաչափերի սնդիկները ցած չես թողել, չե՞ վոր քո պարտականությունն է այդ:

—Ցեթե բոլորս մեր պարտականությունները լրիվ կատարենք, ել Բան – Գյուղտեսչությունն ո՞ւմ համար է:

Բժշկուհին բարձրաձայն ծիծաղեց, և յերկուսը միասին հեռացան դեպի միջանցքի սանդուղքները:

Հերթապահը մտավ միջանցքի ծայրի սենյակը և սկսեց մեկ-մեկ հիվանդների թևերի տակը դնել ջեր-

մաշափերը· յերբ դուրս յեկավ, նորից վերցրեց լատդիրը և կարդաց վորսորդների խեղդամահ լինելու մասին բամասնությունները:

Վերջին սենյակում պառկած եր Լենան և մի ուրիշ հիվանդ կին· Ջերմաչափն իր ձեռքով թևի տակը դնելով, Լենան նստեց և ժպտադեմ հայացքով, կարեկցարար, ցածր ձայնով հարցրեց ներս յեկող հերթապահ բժշկին·

— Ի՞նչպես ե հարևանուհիս:

—Վատ ե, սի՛րելիս, վատ:

—Խե՛ղճ կին, յերեք յերեխա ունի: Մի՞թե անբուժելի յե նրա հիվանդությունը:

— Ինչո՞ւ չեյիք խղճում ձեզ:

— Մի՞թե չեք հավատում, վոր յես ինքնասպանություն չեյի ուզում գործել, վոր յես չափազանց խղճում եյի ինձ, վոր այս ամենը պատահմամբ տեղի ունեցավ:

—Ձեր մայրն ասաց, վոր դուք ձեր մտադրությունից առաջ դուք նամակներ եք գրել, ուստի ձեր արարքը պատահական չի կարելի համարել:

—Ճիշտ ե, յես ցանկանում եյի, բայց չեյի կարողանում, ուրեմն յես վերջնականապես քայքայված չեյի:

— Գուցե, բայց չե՞ վոր դուք փորձել եք· դրա իրավունքն ել չունեք, վորովհետև ձեր կյանքը պատկանում ե կուսակցությանը:

— Այո՛, կուսակցությանն ե պատկանում մեր կյանքը, սակայն դառն փորձը ինձ ցույց տվեց, վոր կոմունիստն անհատական կյանք ել ունի· այդ անհատականը դնում ե իր դրոշմը կոմունիստի կյանքի վրա: Ցեսմեկն եմ նրանցից, վոր ամենաջերմեռանդ կերպով պայքարում ե նեղ անհատականության դեմ, ցանկանում ե կենցաղը վերակառուցել, յես ցանկանում եյի ստեղծել այնպիսի կենցաղ, վորտեղ վոչմի բան չի կաշկանդում կնոջը, ցանկանում եյի միանգամից վերակառուցել ընտանիքը: Սակայն դուրս յեկավ, վոր խոսելը հեշտ ե, բայց ձևափոխել կենցաղը՝ դժվար· յես կորվեցի մասսաներից և անդդուշարար ընկա անհատականության ճահիճը, իմ ձեռքից դնաց նույնիսկ այն ազատությունը, վոր ձեռք եյի բերել իմ կոմմունիստական ընտանիքում: Կյանքն ինձ թափահարեց: Ցես զղջալ, վոր միանգամից ձևափոխել կյանքը դժվար ե, վոր դեռ յերկար ու համառ պայքար ե հարկավոր: Իսկ յես փախա այդ համառ պայքարի ֆրոնտից:

— Իսկ ինչո՞ւ յե այդ այդպես լինում, — հարցրեց յերիտասարդ բժիշկը:

— Վորովհետև կուսակցությունը մեզ սովորեցնում ե պայքարել, կառուցել, դատել այնպես, ինչպես կուսակցությունն ե ընդունում, կուսակցությունը ե պահանջում, բայց կենցաղն ամեն անհատի մեջ յուրատեսակ դդացումներ ե առաջացնում, այլ կերպ ասած, ամեն մի կուսակցական զդում ե այնպես, ինչպես ինքն ե ցանկանում:

— Հենց այդ ել խանգարում ե համակարդությանը:

— Մի՞թե:

— Հանե՛ք ջերմաչափը, արդեն ժամանակն ե:

Բժիշկը բռնեց ջերմաչափի ծայրից և պտտելով բացականչեց·

—36,6, լա՛վ դուրս պրծաք, բա՛րեկամ:

Նա մոտեցավ մյուս հիվանդին, հանեց ջերմաչափը և գլուխը պտտեց:

— Ի՞նչքան ե, բժի՛շկ, — նստելով, հարցրեց Լենան հետաքրքրությամբ:

— Քառասուն և մեկ:

— Ո՛չ:

Բժիշկը մոտեցավ Լենայի մահճակալին և ավելի ցածր ձայնով շշնջաց.

— Վիրահատումը չողնեց, վերքը թարախակալած է, յերկրորդ վիրահատմանն ել չի դիմանա, ուղղակի անելանելի դրություն է:

— Ախո՛ս կին:

— Այսորվա լրագիրը կարդացե՞լ եք:

— Ի՞նչ կա այնտեղ:

— Վորսորդներ են խեղդվել լճում:

— Սովորական պատմություն է, ամեն տարի նույնը կրկնվում է, ո՞վքեր են խեղդվածները:

— Մահուդի գործարանի դիրեկտորն է աշխատակիցների հետ:

Լենայի մարմինը փշաքաղվեց, դողաց. նա սավանի դույն սառցավ, ունքերը տարորինակ կերպով վեր բարձրացան, աչքերը չռվեցին, բերանի խայտաբղետ ողակները լայնացան, սիրտը վիրավոր կրծքի մեջ թրպրտաց, նա սկսեց դանդաղորեն յեռ-յետ սահել անկողնու մեջ. վայրկենապես վոտը դրեց հատակի վրա, վերմակը վայր ձգեց հուպ տված բռունցքներից ու ամբողջ մարմնով դողալով, աչքերը հառած բժշկի հայացքին, փալատի նման վազեց հատակին:

— Ի՞նչ պատահեց ձեզ, — շփոթվեց բժիշկը, սեղանի զանգն արագորեն թափահարելով:

Ծառայողներն ու սպասավորները բարձրացրին և հազիվ ուշքի բերին Լենային:

— Բոլորովին տաքություն չուներ, զգում եր լրին չափազանց կայտառ, վերքը բոլորովին մաքուր է ու լավ. ի՞նչ պատահեց, չեմ հասկանում:

Լենայի դունատ այտերի վրայից սահում եյին առատ արցունքներ:

Բժիշկը խնդրեց մենակ թողնել հիվանդին: Լենայի զարկերակը քննելուց հետո, նրա մոտ թողեց մի հերթապահ և, ջերմաչափերի տուփը ձեռքին, դնաց վիրահատման բաժանմունքի բժշկապետի մոտ:

Լենան կամաց ձեռքը հանեց վերմակի տակից, մեկնեց դեպի հերթապահը ու պինդ հուպ տվեց նրա թեքը: Հերթապահը տարորինակ վախ զգաց ու շփոթված նայում եր Լենայի դողացող շրթունքներին:

— Բժշկի սեղանի վրայի լրագիրը բե՛ր:

— Լրագի՞րը:

— Այո՛...:

— Ձեր ինչի՞ն է պետք լրագիրը, դուք թույլ եք, ձեզ կարդալ չի կարելի, առանց բժշկի թույլտվության չեմ կարող:

— Լրագիրն ինձ հարկավոր է, նրա մեջ... նրա մեջ... տեղեկություն կա, իմ կյանքից ել շատ է հարկավոր այդ տեղեկությունն ինձ, լրագիրը բերե՛ք, դուք ինքներդ կարդացե՛ք, յես կլսեմ, աղաչում եմ ձեզ, բերե՛ք, հո՛գիս, ջանե՛կս, մի կտոր բան կա, յերկու բոպե ժամանակ է հարկավոր կարդալու համար:

«Գնդակը մի քիչ աջ և Ավրորան անտեր եր մնալու»,—մտածում եր Լենան և արցունքները շարունակում եյին գլորվել նրա դունատ ու գեղեցիկ այտերի վրայով: Միհրանն այլևս չկար. նրա խելացի աչքերը հավիտյան փակվել եյին բոլորի համար: Հենց այդ եր պատճառը, վոր Լենայի սիրտն այրվում եր անտարինակ կրակով, Միհրանի խոսքերը հնչում եյին Լենայի ականջում և նա անվերջ հեկեկում եր:

Հերթապահը ցածր ձայնով վերջացրեց լրագրի տված տեղեկությունները։

Լենան ավելի բարձրացրեց հեկեկոցը։

Մահճակալի գլխին, մռայլ դեմքով, կապոցը ձեռքին նկարվեց Լենայի մոր հասակը։ Լենան ցնցվեց, նրա մազերը փշաքաղվեցին, հրաբխի նման նրա կրծքի տակից ժայթքեց արցունքի նոր հեղեղ։

— Ի՞նչու թողեցիր, ինչո՞ւ թողեցիր, վոր գնա, ի՛մ անբիծ, չիտակ, ի՛մ սիրելի ընկեր Միհրան։

Մոր դեմքը լուրջ եր ու ցամաք և դա զարմացնում եր Լենային։ Պառավը հանդարտ ու կտրուկ հայտարարեց.

— Մի՛ լար, զավա՛կս, Միհրանը կենդանի յե։

— Սուտ ես ասում, խաբում ես ինձ։

— Հավատա՛, ճիշտ եմ ասում, ազնիվ խոսք։ Նրա ջրի տակ գնալուց հետո, գյուղացիներն խելքն և յեթ հանել են նրան և Սուրենին։ Հարությունյանը գյուղացիների հետ արհեստական շնչառություն են արել, ապիրտով չփել են նրանց մարմինները, յափնջիների մեջ փաթաթել, տաք շշեր դրել, Միհրանը յետ և յեկել, իսկ Սուրենը վոչ։ Դժբախտ յերիտասարդի սիրտը պայթած և յեղել դեռ լճի տակ ընկղմվելուց առաջ։

Ու Լենայի թաց աչքերի մեջ մի քանի րոպե առաջ գոյացած դառնագին արցունքները փայլեցին յերջանկության շողերով. նա բռնեց մոր թևից, նստեցրեց իր անկողնու վրա և իր կասկածները փարատելու համար, դեռ յերկար ժամանակ հարց ու փորձ եր անում նրան։

Պառավը, գլուխը շարժելով, շշնջում եր.

— Տեսնո՞ւմ ես, զավա՛կս, վատ սխալն ինչքան վատ հետևանքներ և ունենում. դու ղղջում ես քո սխալները, ա՛խ, ի՞նչ սև օրեր բերին մեզ այդ սխալները։

— Նա գի՞տե, թե ինչ և պատահել ինձ հետ։

— Գիտե։

Լենան, անհարմար գդալով, լռեց, ապա սրբելով աչքերը, մորն զգուշացրեց.

— Դու չասես, վոր յես լալիս եյի. գրածս նամակները չտաս նրան։

— Նամակը հանձնել եմ նրան այսոր և ամեն ինչ պատմել։

— Ո՛, շատ լավ, շատ լավ։

— Նա զարմացավ, ախսոսաց,—պառավը, ձեռքները ծալած, գլուխը տմբտմբացնում եր։

— Կոշիկները ճռճռացնելով, հերթապահ բժիշկը ներս մտավ, ուղիղ գծով Լենայի մահճակալին մոտեցավ ու բռնեց նրա ձեռքը։

— Աղջիկդ չարություններ և անում, մա՛յրիկ, այսոր բոլորովին առողջ եր, կես ժամ առաջ քիչ եր մընում ձեռքից գնա։

— Դուք եք մեղավոր։

— Ցե՞ս։

— Այո՛, հանկարծ հայտնել եք վորսորդների խեղդվելու մասին։ Իսկ նրանց մեջ և սրա ամուսինը, մահուդի գործարանի դիրեկտորը։

—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, իսկ յես վո՞րտեղից կարող եյի իմանալ, — կմկմաց, մատները, ծռմռելով, հերթապահ բժիշկը, — բայց չե՞ վոր դուք ինձ ասել եյիք, վոր ամուրի յեք, — դիմեց նա Լենային։

— Նախկին ամուսնս և, այժմ բաժանված ենք։

— Բա եվ ինչո՞ւ յեք ուշաթափվում։

XXXIV.

Լռության մատնված սենյակի պատուհանները դրսից զարկվում եյին ձյունի փարթամ փաթիլներով,

վորոնք հեզ ու հանգարտ նստում էին սպակիների վրա և հարվում։ Սենյակի բոլոր իրերը դասավորված էին վերին աստիճանի խնամքով։ Նույնիսկ սեղանի վրայի սփռոցի ծայրերը մաթեմատիկական ճշտությամբ էին իջեցված ափերից։ Հարևան սենյակից յերբեմն ներս եր գալիս Սոնա տատիկը, բռնում սեղանի առաջ դրած աթոռի գլուխը, նայում մահճակալի վրա պառկած Միհրանին, ձեռքը քսում, ուղղում ծաղկավոր սփռոցը, վորին վոչ վոք ձեռք չեր տվել ու կրկին հարևան սենյակը մտնում։

Միհրանը կարծես ծերացել եր, այտերի վրա կարմրատակած, պլոկված սպիներ կային, աչքերի տակը կապտել էին, ձախ ձեռքը փաթաթված եր։ Նա հանգիստ չեր կարողանում մնալ, նույնիսկ տեղից վեր եր կենում, քայլում։ Չորրորդ որն եր, միտքը համառորեն զբաղված եր մի հարցով։ «Մի՞թե չեր կարելի փրկել Սուրենին»։ Նա դասավորում եր բոլոր հանգամանքները, փաստերը, հնարավորությունները և գտնում եր, վոր կարելի յեր փրկել Սուրենի կյանքը, յեթե Դաթիկոյի խայտառակ արարքը չլիներ։ Ամեն անգամ, յերբ նրա մտածմունքների կծիկը բացվում եր ու հասնում Դաթիկոյին, նա խորը հառաչում եր, բուռն ատելությունը դեպի Դաթիկոն վրդովում եր նրան, իսկույն վեր եր կենում անկողնից ու անընդհատ քայլում եր մահճակալի մոտ փռված գորգի վրա, հուզմունքով լի աչքերը հառած հատակին։

Ամեն գիշեր ընկերները բժշկի հետ գալիս էին, յերկար ժամանակ զրուցում, զրաղեցնում Միհրանին, սակայն նրա ամբողջ խոսակցության նյութը Սուրենի անսպասելի կործանումն չուրջն եր պտտվում։

Այսոր նա ավելի հուզված եր։ անհամբեր սպասում եր ընկերներին, բայց նրանց գալու ժամանակից

դեռ յերեք ժամ կար։ Նա նստեց գրասեղանի մոտ և պատրաստվեց Լենային մի քանի խոսք գրելու։

«Հարգելի՛ ընկեր Լենա,

Թեպետ չափազանց աղդված եմ Սուրենի անսպասելի կորստով, բայց պարտավորված եմ զդում պատասխանել քո նամակին, քանի կենդանի յես մնացել։ Զարմանալի յե, մենք պիտի մեռնենք և պայքարում ենք մահվան դեմ, իսկ դու պայքարելիս ես յեղել մահվան համար։

Այս մեծ գրոհի ժամանակ այդպիսի հիմար մահը ամոթ և սոսկալի վիրավորանք եր պատճառում մեզ ու մենք կոտրում եյինք վայտացած, արյունաչաղախ ձեռքերով սառույցները մեր նոր կյանքի համար։ Ի՞նչպես կարող է թափերի մեջ վառվող մարդը մեռնել սառույցների մեջ։ Ի՞նչպես կարող եյինք բաժանվել մեր հրապուրիչ, հնոտաքրքիր և փայլուն կյանքից, ուր աշխատանքը պատվի, հերոսության, անվեհերության խնդիր է։ Ինչ պայքարը մահվան համար ամենախիստ պատասխանատվության է արժանի։ ամոթ է, յերբ այս հսկայական գրոհներում սերը հաղթահարում է մարդկանց, խճճում է նրանց։ ամոթ է, յերբ սոցիալիզմ կառուցող մարդը չի կարողանում պայքարել կենցաղի դժվարությունների, անհատականության դեմ։ ով ընկճվում է այդ դժվարությունների տակ, նա պետք է մնա դեպի սոցիալիզմ տանող կամրջի այս կողմը։

Գրում ես, վոր «մեր դժբախտությունը կայանում եր նրանում, վոր ամեն մեկս առանձին – առանձին հարցերն այնպես չեյինք լուծում, ինչպես կուսակցությունն է լուծում, իմ սիրալը կայանում է նրանում, վոր իմ միտքը, դատողությունս, զգացմունքներս, որոշամտությունները չեյին շաղկապվում մեկը մյուսին, հեռանում եյին մեկը մյուսից»։ Իհարկե, դա սիրալ

ե. բայլեվիկը պետք է իր մտքը, դատողությունները, զգացմունքները, տրամադրություններն ի մի հավաքած հարձակում գործի դատակարգային թշնամու վրա: Հենց այդտեղից է բղխում քո կարծիքը ընտանիքի մասին: Ալելին կասեմ. «Որպեսզի մարդ ցարքատական փոփոխությունը կատարված վ[illegible] դարձնենք, մենք, բոլոր բայլեվիկներս, պետք է [illegible] ինչ զգանք միատեսակ, վորովհետև զգայական [illegible] ն փորձի հետևանք են դատողությունները, տրամադրությունը: Արդարացնել կոմունիստի ինքնասպանությունը՝ զգացումների, դատողության, տրամադրությունների վոչ շաղկապվածությամբ՝ անթույլատրելի է, ով չի կարողանում ի մի հավաքել այդ բոլորը, մեչչանին է: Ինքնասպանությունն անհատական այլանդակ հոգեբանության, թուլության, լքման արդյունք է:

Մի բան լավ է. դու անկեղծորեն հանձն ես առնում քո սխալները. դա նշանակում է, վոր դու բոլորովին կորած չես, և կարող ես վերադառնալ մեր շարքերը, կարող ես կրկին վոգևորվել մեծ գրոհի զինդուն թափեց, խառնվել նրա հույզերին ու հերոսական աշխատանքներով ուղղել սխալները: ՄԻՀՐԱՆ»:

Սոնա տատիկը կրկին ներս եր յեկել և գնում եր վառարանի պատերի տաքությունը:

— Մա՛յրիկ, վաղը, յերբ կգնաս հիվանդանոց, խնդրեմ, այս ծրարը տաս Լենային:

Պառավը դլուխը յետ թեքեց դեպի Միհրանը. նրա խորշոմած դեմքին անսահման յերջանկության ժպիտ փայլեց. նա ձեռքերն իջեցրեց պատի վրայից և, մեկնելով դեպի Միհրանը, բացականչեց.

—Մի՛հրան, զավա՛կս, դուք հաշտվո՞ւմ եք, հա՞:

Քարմացած Միհրանը վեր կացավ և, ձեռքը դնելով նրա մեջքին, մեղմությամբ պատասխանեց.

— Չե՛, մա՛յրիկ, յես պատասխանում եմ նրա գլխած նամակին:

— Հա՛, փոխվել է, զավա՛կս, ել են չի, ճիշտ է, նրա սխալն աններելի յե, նրա արարքն անթույլատրելի յե, հենց դրա համար ել նա ցանկացել է իրեն վոչընչացնել, բայց ելի կարելի յե հաշտվել: Ինձ պատմեց, թե ինչքան է տանջվել, տառապել, ինչքան մեղավոր է քո առաջ, ինչքան լացեց, արցունքներ թափեց, անենկարագրելի յե նրա դրությունը:

— Ցես հասկանում եմ, մա՛յրիկ, նա վոչ թե իմ առաջ է մեղավոր, նա մեղավոր է մեր կուսակցության առաջ:

— Ցես գիտեմ, վոր դու յերբեք նրա հետ չես հաշտվի, — տխրությամբ հառաչեց պառավը:

Պառավը թեպետ համոզված եր, վոր աղջկա և փեսայի մեջ հաշտություն չի կարող լինել, սակայն այնուամենայնիվ նա հեռավոր կերպով հուսադրում եր իրեն, վոր նրանք միմյանց հետ կարող են հաշտվել:

Հարևան սենյակի դուռը բացվեց. ներս մտան Աղասի Աբրամիչը, բժիշկն ու մեծ վախախով մի անծանոթ գյուղացի: Գյուղացին վախախը հանեց: Աղասի Աբրամիչը գյուղացուն նշան արեց, վոր հետևի իրեն. նրանք մտան Միհրանի սենյակը:

— Ահա սա քո պատվիրած գյուղացին է, վորն անմիջական մասնակցություն է ունեցել ձեր վիրկության գործում: Եսոր յեկել եր գործարան, սպասեցնել տվի, հետս տարա տուն, այժմ ել բերել ենք քեզ մոտ: Ի՞նչպես ես, հը՞:

— Վատ եմ, Աղասի՛ Աբրամիչ, հոգեպես շատ եմ ճնշված ու քայքայված: Դժվար կացության մեջ եմ, չես կարող յերևակայել:

— Քո խիղճը հո մաքուր է, ինչ վոր կարողացել ես, արել ես. վերջապես ինքդ էլ հետը կործանվել ես. էլ ինչո՞ւ յես տանջվում, չեմ հասկանում:

—Դուք մեզ ջրից հանողների՞ցն եք, — դարձավ Միհրանը դյուղացուն:

— Այո՛:

— Դե մի մանրամասն ու ճիշտը պատմեցե՛ք սկզբից յեղելությունը:

Յեվ դյուղացին, ծանր ու բարակ գլուխը թեքած դեպի բուխարին, պատմում եր, թե ինչպես Հարությունյանն ուշացրել եր իրենց յերկու ժամ վոտերը տաքացնելու պատճառով, թե ինչպես Միհրանը մինչև վերջին րոպեն բաց չեր թողնում Սուրենին եր թեի տակից, թե ինչպես սկզբում իրենց հարցերին պատասխանում եր միայն ձեռքը բարձրացնելով:

— Ականջներս շաչում եյին սարսափելի աղմկով:

— Իսկ Դաթիկոն,—շարունակեց դյուղացին, մեր բոլոր հարցերին պատասխանում եր և շատ լավ եր գգում իրեն. մենք նրան նախազգուշացրինք, վոր չունը պարան կբերի, պարանին նա ձեռք չտա, մինչև ձեզ չհանենք. հենց չունը պարանը ձգեց, դու, կարծեմ գըլխի ընկար, հասկացար, պարանը բռնեցիր և սկսեցիր փաթաթել Սուրենին, ձեռքերդ սառած եյին, դժվարությամբ եյիր փաթաթում. պարանը Դաթիկոյի կողքով եր անցնում, նա իսկույն ձեռքը դցեց պարանին, մենք հանդիմանեցինք, հայհոյեցինք, զոռացինք, բան դուրս չեկավ, նա ամուր քաշեց, պարանը դուրս քաշեց քո ձեռքից, փաթաթեց իրեն, դե՛, ի՞նչ արած, պարանը մեզ հարկավոր եր, ստիպված քաշեցինք, հանեցինք նրան: Հենց ուզում եյինք նորից ձեզ ուղարկել, դուք ընկղմվեցիք ջրի տակ: Յերբ հանեցինք ձեզ, շատ չարչարվեցինք նրան յետ բերելու, բայց վոչինչ դուրս չեկավ:

— Իհարկե,— ձեռքերը ճմռելով բացականչում եր Միհրանը,—իհարկե, դուրս չեր գա, բժիշկները դեհատելուց հետո ասացին, վոր սիրտը պայթել եր հենց իմ ձեռքին, դեռ ջրի տակ չանցած:

— Տեսնո՞ւմ ես, Միհրան, այն ամենն, ինչ վոր քեզանից եր կախված, դու արել ես, ապերախտ են դտնվել Հարությունյանը, Դաթիկոն:

— Ա՛հա քեզ կոմունիստ, սոցիալիզմ պիտի կառուցի, պարանը խլում եր խեղդվող ընկերների ձեռքից, այն ընկերների, վորոնք իրենց կյանքը զոհեցին նրա կյանքը փրկելու համար, ահա՛ քեզ կոմունիստական բարոյականություն, ահա՛ ընկեր, խեղդվողներին թողնում ե լճում, իսկ ինքը ժամերով տաքացնում ե վոտերը կրակի մոտ:

— Յեթե կես ժամ առաջ եյինք հասել, տղայի կյանքը փրկված եր, — առարկեց դյուղացին:

Յերկա՛ր, յերկա՛ր, մանրամասնորեն դյուղացին պատասխանում եր Միհրանի ամենաչնչին հարցերին: Աղասի Աբրամիչն արդեն անցել եր ծխախոտի յերկրորդ տուփին, սենյակը լցվել եր ծխով. դրսում քամին վոռնոցով ձյունի շիթերը զարկում եր պատուհաններին: Գյուղացին շարունակում եր պատմությունն ու դատողությունները լճի սառույցների, բաղերի, Դաթիկոյի, Սուրենի ու Միհրանի մասին, իսկ Միհրանը տրորում եր ձեռքերն ու մտածում, թե արդյոք չե՞ր կարելի փրկել Սուրենի նման լավ ընկերոջ կյանքը:

XXXV.

Ռայկոմի քարտուղարի առանձնասենյակի դուռն արագ բաց ու խուփ եր լինում, նրա մոտից յոլնող ընկերները կամ գայրույթից դուռը շրխկացնում ե-

յին, կամ ժպտալով հեռանում։ Գործերի վարիչը, վորը պետք է ռայկոմի գործերով զբաղվեր, հալիվ եր հասցնում հեռախոսի զանգին պատասխանել, իսկ դրասեղանի վրա թղթերն անընդհատ կիտվում եյին, հա կիտվում։ Գործավարի դիմաց դրված յերկար աթոռի վրա, Կալինինի պատկերի տակ, նստած, յերկու դյուղերում աշխատող բանվոր-բրիգադայիններ ցածր ձայնով վիճում եյին կոլխոզշարժման բնագավառում կատարված խեղաթյուրումների մասին։ Գործավարը մի ձեռքով հեռախոսի փողը բռնած, մյուս ձեռքով գրում եր և աշխատակցին զանազան հանձնարարություններ տալիս։

— Ելի՞ մարդ կա ներսը,— անհամարձակ կերպով չշնչաց գործավարին սեղանի մոտ նստած կինը, վորը հոգնել եր գործավարին, պատից կախված պատկերներին և ներս մտնող ու դուրս յեկողներին դիտելուց։ Գործավարը, գլուխը թղթերի վրայից չբարձրացնելով, պատասխանեց.

— Մի քանի րոպե ևս...։

Գործավարի առաջ թեյ, հաց, պանիր ու խավիար եյին դրել, սակայն նա չեր ուտում, խմում, նա կարծում եր, վոր ժամանակը կանգնած է և մի քանի րոպեն դեռ չի անցել։ Քառորդ ժամ ել անցավ, քարտուղարի սենյակը դատարկվեց։

Հանկարծ քարտուղարի սենյակի դուռը բացվեց, կիսաբաց դռնից յերևաց Ստալինի մեծադիր պատկերը՝ հատ կարմիր շրջանակի մեջ. տեսնելով քարտուղարին, յերկու բրիգադայիններն և տիկինը վեր կացան տեղերից։ Քարտուղարն անտարբերությամբ նայեց բրիգադայիններին, ապա գլխով նշան արեց գործավարի սեղանի մոտ կանգնած տիկնոջը, վոր ներս մտնի ու հեռացավ իր առանձնասենյակի խորքը։

Կինը ներս մտավ առանձնասենյակը։ Քարտուղարի սեղանի մոտ նստած եր նաև կինբաժնի վարիչ Մարթան։ Տեսնելով ներս մտնողին, նա վեր կացավ տեղից ու, սեղմելով նրա ձեռքը, բացականչեց.

— Ո՞ւ... բա՛րև, Լե՛նա, յե՞րբ ես դուրս յեկել հիվանդանոցից։

— Յերկու շաբաթ կլինի,— պատասխանեց Լենան, աչքերն իջեցնելով հատակին։

— Ի՞նչ մոքի վրա յես...։

Լենան չիկնեց և չպատասխանեց։

— Ընկե՛ր Լենա, — խոսեց քարտուղարը, — ձեզ իհարկե հայտնի յե, վոր Վերատուգիչ Հանձնաժողովը հանել է ձեզ կուսակցության շարքերից վերջին անթույլատրելի արարքի համար։ Դուք չկարողացաք ապացուցել, վոր ինքնասպանության փորձը պատահական է յեղել, վորովհետև դուք նախորոք նամակներ եք պատրաստել։ Ձեր առաջքաշման սկզբնական շրջանում ամենքից միայն դովասանքի խոսքեր եյինք լսում ձեր մասին, իսկ վերջերս միանգամայն թուլացան ձեր աշխատանքները։

— Ցեսս անձնական կյանքում սխալներ ունեցա այն պատճառով, վոր կարվել եյի մասսաներից։ Ցեսս կուղղեմ իմ սխալները, կապացուցեմ, վոր արժանի յեմ կոմունիստի կոչմանը։

— Ռայկոմի պրեզիդիումը, հենց այդ սխալները և ձեր վերջին արարքը նկատի ունենալով, վորոշել է ձեզ հանել պատասխանատու պաշտոնից և ուղարկել

վարի աշխատանքների, կրկին դաղդյահի մոտ։ Մենք մտածել ենք ընկ. Մարթայի հետ, ձեզ կրկին ուղարկել ծխախոտի գործարանը։

«Դաղդյահի մոտ», — կրկնեց իր մտքում Լենան և ավելի չիկնեց ու չփոթվեց։

Կուսակցության շարքերից հանելու ուժեղ հարվածի ազդեցությունը դեռ չեր մեղմացել և ահա նոր հարված։ Նրա աչքերը բոցեղեն դնդեր դարձան, կարմրել և այրվում էին։ Արցունքները մի կերպ պահում եր վիրավորանքը ցույց չտալու համար, սակայն, քարտուղարը հասկանալով՝ առարկեց.

— Մեր կուսակցությունը խստապահանջ է, ընկե՛ր Լենա, չե՞ վոր դուք ինքներդ հանձն եք առնում ձեր սխալները և խոստանում եք ուղղել։ Այդ հանգամանքը նկատի ունենալով, մենք ձեզ կրկին յետ ենք ուղարկում դաղդյահի մոտ։ Ցեռ կարծում եմ, վոր դա վիրավորական չպետք է լինի մի բանվորուհու համար, վորին մի քանի տարի յե, ինչ առաջ եյին քաշել պատասխանատու աշխատանքների համար։ Ցեթե ցույց կտաք, վոր դուք ուղղվել եք, կուսակցությունը ձեզ միշտ հնարավորություն կտա առաջ քաշվելու։

— Ցեռ վիրավորանք չեմ համարում, յերանի թե սկզբից թողնեյիք ինձ դաղդյահի մոտ։

— Մենք հաղարավոր բանվորներ և աշխատավոր գյուղացիներ ենք առաջ քաշում,— շարունակեց քարտուղարը,— շատ քչերն են, վոր չեն արդարացնում մեր հույսերը, հազարները և տասնյակ հազարները առաջ են գնում, յետ են մնում միայն անհատներ։

— Դու բավականին գործունյա և բանիմաց կին ես դարձել,— առարկեց Մարթան,— սխալներդ կուղղես, վերջացավ, գնաց, մեզանում ո՞վ չի սխալվում։

Թեկման, վերակառուցման, արագ թափերի տարիներ են, շատերն են սխալվում, իսկ յեթե ցանկություն կա, սխալները միշտ կարելի յե ուղղել։

— Ցեռ ծխախոտի գործարանը վերադառնալ չեմ կարող։ Խնդրում եմ, ինձ մի ուրիշ գործարան ուղարկեք։

— Սակայն դուք ուրիշ արդյունաբերության հետ ծանոթ չեք,— դեմքը խոժոռեց քարտուղարը։

— Ծանոթ չեմ, կսովորեմ, յես ուզում եմ նոր բան սովորել։

— Մա՛րթա, վո՞ր գործարանն ուղարկենք։

—Մահուդի, մահուդի, այնտեղ և՛ հետաքրքիր է, և՛ կադրերի պակաս կա, նոր մեքենաներ, նոր տեխնիկա։

— Ա՛յ, թե ուր է հարկավոր ուղարկել, յես միանգամայն մոռացության եյի տվել։

Լենան զգաց, վոր ծուղակի մեջ ընկավ. այս ի՞նչպես պատահեց, վրդովմունքից նա նույնիսկ վեր կացավ տեղից։

— Չե՛, մահուդի չեմ գնա, — կտրուկ հայտարարեց նա։

— Ինչո՞ւ,— զարմացած հարցրեց քարտուղարը,— նոր տեխնիկա, նոր արդյունաբերություն, չե՞ վոր ինքներդ ասացիք։

— Չե՛, ուրիշ բան կա, — մեջ ընկավ կրկին Մարթան։

Քարտուղարը հարցական հայացքն ուղղեց Մարթային։

— Մահուդի գործարանի դիրեկտորը՝ Միհրանը չե՞ վոր սրա նախկին ամուսինն է...։

— Ե՛, ի՞նչ կա վոր, յես գիտե՞մ. դատարկ բաներ են, յես կարծում եմ, վոր ամենահետաքրքիր և լավ գործարանը մահուդի գործարանն է և այնտեղ վորակյալ աշխատող ձեռքերի մեծ կարիք է զգացվում, դատարկ բաների յետևից մի՛ ընկեք, վե՛ր կացեք, ստացե՛ք գործուղման գրությունը և գնացե՛ք։

Լենան անհարմար եր զգում ընդդիմանալ, մտածում եր այլ կերպ մի բան սարքել, բայց մահուդի գործարան չգնալ։ Մյուս կողմից նա սարսափելի նեղն եր ընկնում մահուդի գործարանից հրաժարվելու համար։ «Գուցե նրա գնալը Միհրանն ընդունի այլ կերպ, այլ բաներ մտածի»։ Ինքնասիրության զգացմունքները նրան յետ եյին հրում այդ գործարանից։

— Զե՛, չե՛մ գնա մահուդի գործարան։

— Ե՛, դե անհարմար բաներ մի՛ արեք, ընկե՛ր Լենա. եդ բոլորը մի կողմը թողեք և գնացեք։

— Լե՛նա, անհարմար է, դու պետք է անպայման գնաս,— փսփսաց Մարթան Լենայի ականջում։

— Ընկեր Լենային գործուղման թո՛ւղթ տվեք մահուդի գործարան։

Լենան չուզեց հակառակել այն պարզ պատճառով, վոր նրա համար ավելի ծանր եր ընկերների աչքին յերևալ, քան մահուդի գործարան գնալ, ուր կարող եր Միհրանի յերեսն անգամ չտեսնել։ Վորոշեց գործուղման թուղթը վերցնել։ Մի քանի րոպե անց, նա դուրս յեկավ քարտուղարի սենյակից։

— Այդպես ուրեմն, — դռռաց յետևից քարտուղարը, — ամո՛ւր կացեք և աշխատեցե՛ք նոր ուժերով, նոր թափով։

Լենան ժպտալով դուռը վրա քաշեց։

Զափազանց ծանր ապավորության տակ նա դուրս յեկավ փողոց. նրա կյանքը նորից բեկվում եր. նա մտքում վրդովվում եր. «Կրկին յետ, նորից գործարան, սա ի՞նչ խայտառակություն է. ի՞նչ յերեսով նորից բանվորների մոտ գնալ»։

«Իհարկե պետք է գնալ, նորից առաջ գնալու, սխալն ուղղելու համար, յես արժանի յեմ այդ պատժին, կուսակցությունը յերբեք չի սխալվում, դեպի ղազդյահը, այնտեղ կրկին կսկսեմ յես ապրել նոր կյանքով»,— նա թեթևություն եր զգում, յերբ մտքում բացականչում եր այդ խոսքերը, դեմքի գծերը լարվում եյին ու նրան թվում եր, վոր կյանքը նորից նրան ժպտում է։

XXXVI.

Աղյուսի գործարանի ծխնելույզից յելնող ծուխը կապույտ յերկնակամարում ողակելով, ձգվում եր Քռի վրայից և տարածվում դեպի լայնարձակ դաշտերը։ Ցուրտը սաստիկ եր ու կտրող։

Լենան մենակության մեջ ժամերով նստում եր պատուհանի առաջ ու դիտում հեռու հորիզոնի վրա կլոված գորշ ծուխը։ Նայում եր անվերջ դաշտերի այն կողմը, դեպի քաղաքի ծայրը, ուր մանկության որից խաղացել է ինքը, հետո Կիմիկը, Սվրոյան և կտրատվում եյին սրտի լարերն անասելի ցավից։ Յերբ վերջալույսի շողերը վառվում եյին պատուհանների վրա, Լենան, մթության դրկում, թաղում եր գլուխը բարձի մեջ և անվերջ հառաչում, շշնջալով. «Կիմիկին յե՛ս սպանեցի, յե՛ս սպանեցի»։

Տառապող սիրտը մենակության մեջ ավելի յեր ճնշվում, ավելի մեծ կարիք եր զգում սփոփանքի։

Ցեվ նրա միակ սփոփանքը քաղաքն էր իր մառախլապատ խորդ ու բորդերով, ուր զրնգում էին տրամվայի վագոնները, խշխշում էին հեռադրալարերն ու ռադիոն, հրաբղխում էին ծխնելույզները, փայլում էին բարձրադիր կորպուսների պատուհանները, շաչում մեքենաները: Լենան քարացած դիտում էր, մինչև վոր մութը թանձրանում էր, մինչև վոր բոլոր էլեկտրական լամպերը պսպղում էին քաղաքի լայնարձակ տարածության վրա: Լքված, ամոթից հուսահատ, վոր յետ է մնացել տեմպերից, ընկերներից, հանդիմանում էր իրեն: Մոքի խորշերը տակն ու վերա անելուց հետո, նորից նրա հիշողության մեջ դըծվում էին յերկու փոքրիկ եյակներ, ապա ցեմենտի կորպուսներով և փայլուն մեքենաներով զարդարված մահուդի գործարանի ֆոնի վրա պտտվում էին մեքենաները, վազում է Միհրանը տեմպերի հետ, վազում է հևիհև, իսկ ինքը կանգնած դիտում է սարերի վրայից, բարձունքներից: Ցերկու փոքրիկներն անվերջ ժպտում են, ժպտում, ծակվում են նրանց թըշիկները. հանկարծ մեկը անշնչացած ընկնում է, աչքերն ապակու նման սառած, հեգնանքի ժպիտը դեմքին, նայում է բուռն տեմպերից մի կողմը կանգնած Լենային ու թվում է, թե չշնչում է. «Ամո՛թ քեզ», հեկեկում է անզուսպ կերպով Լենան, հեկեկում, դառն արցունքներ կուլ տալիս ու սիրտն ազիզորմ կերպով ճմլվում է, թուլացած ընկնում է անկողնի վրա ու նվաղած դրության մեջ մնում մինչև առավոտ:

Լենան շատ շուտով զգաց, վոր մի անծանոթ ուժ նրան թոցրել է շատ հեռու: Առաջ գնալու տենչը հիվանդագին հետևանքներ էր տվել. զգացմունքների, մտքի, դատողության, տրամադրությունների անշաղկատ և անզուսպ հոսանքը հեռու յե տարել նրան:

Դաղդյահը ցցվեց նրա առաջ, հիշեց Լենինի մահվան դիշերը, ընկերների հրահանգը, Միհրանի խրատները: Նրա մեջ արթնացավ իր սխալները հանձն առնող բայլշևիկը, նա կանգնեց յերեսը դեպի քաղաքը և չշնչաց բայլշևիկի վճռական խոսքը. «Նորից անկումից դուրս, նորից դեպի աշխատանքը, դեպի թափերը, դեպի սոցիալիզմի շինարարության փոթորիկը: Արցունքից ուռած նրա դեմքն անորինակ փայլով ժպտաց, նա հիշեց բջիջը, ընկերներին. նրանք կոդնեն Լենային, վերջ կդնեն ամեն ինչի, նրանք ցույց կտան խոկական ճանապարհը:

Կարոտած, ընկերներին տեսնելու տենչով, Լենան դուրս յեկավ փողոց և քայլերն ուղղեց դեպի կուսկոլեկտիվի շենքը:

XXXVII.

Խոպոտ աղաղակներ ու ճիչեր հանելով, գործարանի ընդարձակ բակում յետ ու առաջ էր շարժվում չոգեմեքենան: Թանձր սև ծուխ էր ժայթքում նրա ծնչափողը: Հարվածներից ճռնչում էին արգելակները, զրնգում էին վագոնների յերկաթե սնակները, վորոնք մեկը մյուսի յետևից հերթով իրար էին զարկվում, յերկաթի սուր ու զրնգուն ձայն հանում ու կանգնում փոքրիկ վագոնետկանների առաջ: Ցերկու խումբ բանվորներ դուրս էին թափում բրդի մեծ հակերը և բարձում վագոնետկաներին: Ճոճոցով շարժվում էին վագոնետկաները դեպի գործարանի

խորքը և զոռոցով նորից դուրս գալիս դեպի գնացքը։ Գործարանի բակի շները հոտոտում էին բրդի հակերը և յերբեմն հեռու գլորվող հակերից մեջքները ծռելով, փախչում։

Լենան, մտնելով գործարանի ընդարձակ բակը, գնաց գնացքի կողմը և գործարանի պատուհաններից ներս էր նայում։ Գործարանի մի մասն աշխատում էր, մյուս մասում կարգավորում էին մեքենաները։ Նա առաջին անգամն էր տեսնում եղպես, պալատի նման շուսավորված գործարան։

Վերջին վագոնը դատարկեցին, գնացքը հեալով մի քանի անգամ ծղրտաց ու դանդաղորեն շարժվեց դեպի կայարան. բանվորներն աղմուկով հեռացան վագոնետկաների հետ։ Գործարանի բակի այդ մասը դատարկվեց։

Ճիշտ նույն բոպեին Լենան նկատեց, վոր մի ավտո կանգ առավ գործարանի դրասենյակի առաջ։ Դրասենյակից դուրս յեկան Միհրանն ու Աղասի Աբրամիչը և նստեցին ավտո։ Լենան արագորեն իրեն գցեց պատի յետևը, վոր աննկատելի մնա և մերթընդմերթ նայում էր, թե ուր են մեկնելու նրանք։ Ավտոն հեռացավ գործարանից դեպի քաղաք։ Լենան նորից դուրս յեկավ Թադոսյան տեղից, պտտվեց ամբողջ գործարանի շուրջը, մանրամասն ծանոթանալով նրա արտաքինի հետ և, հոգնելով թափառելուց, ուղղեց իր քայլերը դեպի այն շենքը, ուր բջիջն ու տեղկոմն էին գտնվում։

Ձեր իմանում, ինչպես պիտի հանդիպեն իրեն, ի նչպես ընդունեն, սիրտը ճմլվում էր, դողում, նա սմաչում էր։ Նա բաց արեց գործարկոմի դուռը. սեղանի մոտ նստած էր Դաթիկոն, գլուխը ձեռքերում

նայում էր առաջը փռած լրագրներին. դիմացի սեղանը դատարկ էր, նրա աջ կողմը կախած էր Սուրենի պատկերը պսակով շրջապատած, վորի տերևներն արդեն չորացել էին։ Դաթիկոն, տեսնելով Լենային, զարմացավ, տարորինակ կերպով ժպտաց, վեր կացավ տեղից և, սեղմելով նրա ձեռքը, հարցրեց.

— Այդ վո՞ր քամին ձեզ բերեց մեզ մոտ։

Լենան անհարմար զգաց պատասխանել, հանեց իր պայուսակից գործուղման թուղթը, տվեց Դաթիկոյին և, շրթունքները կրծոտելով, անհարմար դրության մեջ սպասում էր պատասխանի։ Դաթիկոն կարդաց, դեմքը կնճռոտեց, խորը շունչ քաշեց, ապա հեգնական ժպիտով գլուխն սկսեց պտտեցնել։

— Գիտե՞ք, ընկե՛ր Լենա, ինձ ել են չուտով քշելու դաղդյահի մոտ։

— Ի՞նչ կա, կուսակցության յերկաթե դիսցիպլինան այդ ե պահանջում։

— Հապա ինչո՞ւ եյին առաջ քաշում։

— Առաջ են քաշում տասնյակ հաղարների, յես են քաշում անհատների, վորոնք անպետք են գտնվում առաջքաշման համար, յես գտնում եմ, վոր կուսակցությունն արդարացի յե։

— Վո՛չ, կուսակցության ապարատում ևս խնամիներ կան։

— Կան, ճիշտ ե, բայց, որինակ, ինձ կրկին դաղդյահի մոտ ուղարկելը յես համարում եմ միանգամայն ճիշտ։

— Իսկ իմը յես չեմ համարում։

— Բջիջի քարտուղարն ո՞վ ե։

— Դեռ բջիջի քարտուղար չունենք,—պատասխանեց Դաթիկոն, մեքենայաբար գրիչը թանաքամանի մեջ

թաթախելով և ուղիղ Լենայի հայացքին նայելով,—
Ժամանակավորապես յես եմ։

— Դե՛, ուրեմն յես ի՞նչպես անեմ. ադմինիստրացիայի հետ դուք կհամաձայնեցնե՞ք։

— Յես կհամաձայնեցնեմ, դուք կարող եք այսորվանից գործի անցնել։

— Յես մի բան էլ եմ խնդրում քեզանից. ինձ այնպիսի բաժանմունք ուղարկեցե՛ք, վոր առանձին հետաքրքրություն ունենա արտադրության և տեխնիկայի տեսակետից, հասկանո՞ւմ ես, ինչ եմ ուզում ասել։

— Գնա՛նք, յես քեզ կծանոթացնեմ գործարանի հետ, թեպետ այս գործարանից խելքս բան չի կտրում, եզուց, մյուս որը կանգ է առնելու հում նյութ չլինելու պատճառով։

— Կա՞նգ է առնելու, դե՛, դե՛, ի՞նչ ես խոսում, Դա՛թիկո։

— Հավատացնում եմ քեզ, այ, կապրենք, կտեսնենք։

Դաթիկոն վեր կացավ տեղից և Լենայի հետ դուրս գնացին գործարանի բակը։

— Այդպես ուրեմն, դաղդյահի մոտ։ Ասացե՛ք, ճի՛շն ասացեք, ընկե՛ր Լենա, ի՞նչ եք զգում։

— Անկեղծորեն ասած, խորթություն եմ զգում. իմ մեջ անհասկանալի ամեն ինչ մեռնում է, վոչնչանում և ձուլվում գործարանի վայրկյան մեքենաների հետ։ Սակայն բանվորական իմ հին արյունն ինձ հրում, տանում է դեպի դաղդյահը, յես ձգտում եմ դեպի նա, վորպես խորտակվող նավը ձգտում է դեպի փարոսը. բանականությունս ինձ մղում է դեպի դաղդյահը, զգացումներս նույնիսկ իմ զղջումից հետո չեն ուզում հպատակվել ինձ, տհաճություն եմ զգում։

ցես կթքեմ իմ զգացումների վրա, նրանք հնի մնացորդներն են։ Ցես կղնամ բանականության յետևից։

— Ե՛հ, եղ էլ վոր չասես, բա երբված սիրտդ ինչով պիտի մխիթարես։ Բանվորները դարձել են խաղալիք կուսակցության ձեռքին, առաջ քաշել, յետ տարել, սա խայտառակություն է, յեթե այսպես շարունակվի, վոչ թե հնգամյակի ծրագիրը, այլ մեր բոլոր նվաճումները կկործանվեն։

— Ո՞վ է մեղավոր, վոր յես սխալված եմ, դու նեխված, թերահավատ, անհատականության, փառասիրության գերին դարձած։ Կուսակցությունը, բանվոր դասակարգը հարթում է իր ճանապարհը, պեն չպրտելով այդպիսիներին իրենց շարքերից և ուղղելով շեղվողներին, մոլորվածներին։

— Սխալվում ես, լեղուդ է միայն այդպես խոսում, սիրտդ ուրիշ բան է ասում։

Նրանք արդեն գործարանի մուտքի մոտ էին։ Պատին փակցված էր մեծադիր պատի թերթը։ Դաթիկոն կանգ առավ թերթի առաջ, յերեսը շուռ տվեց դեպի Լենան և արհամարհական ու հրամայողական տոնով ասաց.

— Ե՛ս հոդվածը կարդա։

Լենան դեմքը մոտեցրեց պատի թերթին և սկսեց կարդալ հոդվածը, վորի մեջ մեղադրում էին Դաթիկոյին, դեպի գործարանն ու իր աշխատանքներն ունեցած պասսիվ վերաբերմունքի, դեպի բանվորների կարիքներն ունեցած անտարբերության, թերահավատության և յերկերեսանիության մեջ։

— Դա՞ս, — բացականչեց Լենան հոդվածը կարդալուց հետո։

Նրանք մտան գործարան։

— Տեսնո՞ւմ ես, ինչ խուլիգանություններով են զբաղվում մեր կուսակցական ընկերները պատի թերթերի եզերում:

Լենան վոչինչ չպատասխանեց:

Դաթիկոն սկսեց ծանոթացնել Լենային գործարանի բոլոր ցեխերի, մեքենաների հետ: Լենան, մանրամասն զննելով ամբողջ գործարանը, կանգ առավ մանվածային ցեխի դրիբլիտեսալ մեքենայի վրա. գերմանացի մեխանիկ Իոսիֆը խոստացավ նրան մի քանի որվա ընթացքում, մինչև գործարանի պաշտոնական բացումը, ծանոթացնել մեքենայի բոլոր մանրամասնությունների հետ:

Դաթիկոն դուրս յեկավ գործարանից Լենայի գործուղման թղթի կտորը ձեռքին և գնաց գրասենյակ ձևակերպելու այն: Իոսիֆը մնաց մեքենայի մոտ Լենայի հետ: Նա զարմացած ու հետաքրքրությամբ նայում եր Լենային ու բացատրում նրան մեքենայի առանձնահատկությունները, կոտրված ռուսերեն լեզվով. Լենայի արտաքինն ամենևին բանվորուհու արտաքինի նման չեր: Իոսիֆը չեր կարողանում պարզել, թե ինչու յե Լենան գործարան յեկել: Հարմար մոմենտ գտնելով, նա ընդհատեց բացատրությունները և կոտրված ռուսերենով հարցրեց:

— Դու ինչո՞ւ յես յեկել գործարան:

— Ցեկել եմ աշխատելու:

— Իսկ առաջ ի՞նչ եյիր շինում, բո՞ւրժույի, հա՞, բո՞ւրժույի:

— Չե՛, չե՛, առաջ հրահանգիչ եյի Բանկոոպում, կոմունիստ եյի յես, ի՞նչպես կարող եմ բուրժույի լինել:

— Հա՞, կոմունի՞ստ ես:

— Առաջ բանվորուհի եյի, ինձ առաջ քաշեցին, հրահանգիչ դարձրին, յես վատ բաներ արեցի, շեղվեցի, դիտե՞ս՝ շեղվեցի, սխալվեցի, ինձ ելի յետ են ուղարկել գազգյահի մոտ, վորպեսզի սխալներս ուղղեմ, հասկանո՞ւմ ես:

Իոսիֆն ունքերը վեր քաշեց, ճակատը կնճռեց և, սիրտը վեր խմելով, ժպտաց. նրա թշերը բակ ընկան:

— Ա՛... հասկացա, հասկացա. ո՛յ, կոմոչնիստական կուսակցություն, ո՛յ, ո՛յ, ո՛յ, ի՞նչ բաներ և անում... եղ լավ է, լավ է, քեզ համար ել լավ է, բանվորների համար ել, կուսակցության համար ել:

Լենան լուռ դիտում եր մեքենայի մասնիկները, իրար կցում, հագցնում:

Իոսիֆը, ձեռքը գրպանը խոթած, նայում եր գործարանի յերկարությամբ, յերբեմն ուղղում Լենային, յերբ նա չեր գտնում համապատասխան մասնիկները:

Իոսիֆը մոտեցավ Լենային և քանդեց ամբողջ մեքենան, ցույց տալով ու բացատրելով բոլոր մասնիկներն ու սանրերը Լենային, ապա դողնոցը, ֆրանսիական բանալին, դեմ անելով Լենային, ասաց.

— Բանվորուհի՞ յես յեղել, չե՞, հագի՛ր ու հավաքի՛ր բոլոր մասնիկները, տեսնենք, ինչպես ես հավաքում:

Լենան հանեց թանգագին մորթե վզնոցով կապույտ վերարկուն, հագավ գոգնոցը, չոգեց մեքենայի առաջ և սկսեց հավաքել ու ամրացնել պտուտակները. աշխատանքի ժամանակ Իոսիֆը ցուցմունքներ եր տալիս, յերբ սխալմամբ դրված պտուտակները չեյին մտնում տեղը: Մինչև ժամի 5-ը Լենան հավաքեց ամբողջ մեքենան:

Իոսիֆը չատ գոհ մնաց Լենայի ընդունակություններից։

Ցերբ Իոսիֆն ու Լենան դուրս յեկան գործարանի բակը և մոտեցան դրասենյակին, բակում նախկին կենդանությունը չեր տիրում, ամեն ինչ դատարկ եր և լուռ։ Գահակն եր քայլում ցանկապատի մոտ։ գործարանի կոոպերատիվ խանութի մոտ մի քանի բանվորներ եյին հավաքվել։ Լենան ուղղակի գնաց դեպի բակի դուռը։

Գրասենյակի կողմից ճարտարապետ Հարությունյանի հետ սևազգեստ մի կին գալիս եր դեպի գործարանի դուռը։

— Ո՞վ է այդ կինը, — հարցրեց Լենան Իոսիֆին։

—Սուրենի՝ մեր բջիջի քարտուղարի կինն է, վոր խեղդվեց վորսի ժամանակ։

Լենան կրկին մեկ անգամ յետ նայեց, արագորեն նետեց իրենց գործարանի դռանը կանգնած տրամվայի վագոնը, նրա յետևից նստեց նաև Իոսիֆը։ Հարությունյանը նկատեց Լենային, մի քիչ արագացրեց քայլերը տրամվային հասնելու համար, բայց հետը քայլող կինն անտարբեր եր, տրամվայը շարժվեց և սևազգեստ կինն ու Հարությունյանը մնացին գործարանի առաջ կանգնած։

XXXVIII.

Մարմնովդ սարսուռ է անցնում, յերբ գործարանի բարձունքից յերեսդ դարձնում ես դեպի Քուռը, վորի քամին կտրում է մարդու յերեսը։ Հսկայական սառույցի կտորները, նազանքով պտտվելով, սահում են ջրի յերեսին դեպի քաղաքը, վոլորապտույտներ գործելով գործարանի տակ։ Դիմացի սարերի սպիտակ ֆոնի վրա գծվում են մերկացած ծառերի ու թփերի կնճռոտ ճյուղերը, վորոնք խտանալով միանում են յերկնքի կապույտին։ Կայարանի կողմից անընդհատ լսվում է Խորհրդային Միության փոշիների մեջ կորած շոգեշարժերի ծղրտոցը, վորոնց սպիտակ գոլորշին թանձր գանգուրներով ճեղքում է սառն ոդը, վշշացնում, զարկում վագոններին, ձգում, քաշում իր յետևից, նորից յետ զարկում։ Ամենուրեք թագավորում է այրվող մազութի հոտը։

Զաքեսի լապտերները դեռ վառվում եյին, թեպետ վաղուց լուսացել եր։ դռնապան Սիմոնը վոչխարի մորթիներից կարած ծանր մուշտակի մեջ փաթաթված, հրացանը ձեռքին անուշ խոմփում եր իր նեղլիկ ապաստանի նստարանի վրա։ Նրա դիմաց նստած եր գործարանի շունը, գլուխն առաջ ձգած յերկու թաթերի վրա և դույնդույն պլպլան աչքերը հառած Սիմոնի դեմքին, նայում եր մի առանձին բարվականությամբ։ Գործարանի առաջ, նորաշենի բարձր տրիբունի մոտ, մի ահագին կույտ յեղևնու կանաչ ճյուղեր եյին կիտված։

Դեպոյի շչակը սուլեց յերկար ու հաստ ձայնով։ Նրա յետևից սուլեցին բոլոր գործարանների շչակները։ Սիմոնը վեր թռավ տեղից, շունը ևս վեր կացավ, չռեց յետևի վոտները, մեջքն աղեղնաձև ծռեց, հորանջեց և շարժվեց Սիմոնի յետևից։ Զաքեսի լույսերը բոլորը միասին հանգան։ Սիմոնն արագ քայլերով վազեց դեպի բանվորաշենը, վեր կացրեց տեխնիկ Խեչոյին, կրկին յետ յեկավ, մի յերկու անգամ փչեց ձեռքերին ու բաց արեց գործարանի դռները, վորի առաջ արդեն բավականին բանվորներ եյին հավաքվել։ Շուտով յերևացին տրամվայի վագոնները։

Բանվորները խումբ – խումբ լցվում եյին գործարանի բակը։

Շչակը սուլեց յերրորդ անգամ զիլ ու յերկար։ Գործարանի բակում կանգ առավ Միհրանի ավտոն։

Խեչոն արդեն ելեկտրոքաշխ տախտակի առաջ եր, նա մեկ ել նայեց ժամացույցին, քիթը քորեց և գործարանն առավ Զաղեսի ելեկտրոհոսանքի մեջ։ Ահարկու շաչյունով գործարանի բոլոր մեքենաները, դաղդյահներն ու կոճերն սկսեցին պտտվել, շարժվել։

Վաղը գործարանի պաշտոնական բացման որն ե, այսոր վերջին փորձնական աշխատանքներն եյին կատարվում։

Գործարանի դրսի ամայությունը տեղի յեր տըվել աշխուժության։ Սաշան զբաղված եր գործարանի արտաքին զարդարանքի աշխատանքներով, ամենուրեք կարմիր կտավ եր և կանաչ մայրի ճյուղեր։ Մի քանի բանվորուհիներ կանաչից ժապավեններ եյին հյուսում և դուլդուլն ելեկտրոլամպերով զարդարում, մյուսները զուգում եյին լայնարձակ տրիբունը, վորի վրայից վաղը ճառելու եյին դեկավարները։ Գլխավոր անցքի յերկու կողմը շարված սյուներն արդեն թաղված եյին կանաչ ճյուղերի և կարմիր կտավի մեջ։ Այժմ անցել եյին գործարանի ճակատը և այնտեղ եյին բարձրանում յերկաթե յերկար լարերի վրա հյուսած կանաչ ողակները և խառնվելով կարմիր դրոշների հետ, զուգում եյին կորպուսի ճակատն ու պատուհանների շրջանակները։ Մի խումբ բանվորներ աշխատում եյին գործարանի միջանցքներում։

Գործարկումի և կոմբինատի սենյակում հատակի վրա փռված եր լայնարձակ պատի թերթը, վորի մի ծայրին նկարիչն ավարտում եր մահուդի գործարանի յետևը կանգնած բանվորի հաղթական բազուկները, ամուր բռնած մի մեծ մուրճ, վրան մակագրված՝ «Հնգամյակը չորս ամսում»։ Մեջտեղում խմբկոլի անդամներից մեկն ուղղում և լրացնում եր բաց թողած տառերը, իսկ ծայրին հարվածային բանթրեթակից Սաշան կպցնում եր վերջին հոդվածը։

Վերջացնելով գործը, Սաշան դուրս թռավ սենյակից և ուղղակի մտավ ճաշարան, տեսնելու, թե ինչ պատրաստություններ են տեսել վաղվա ճաշի համար։

Ճաշարանից Սաշան գնաց կոոպերատիվի խանութ, բանվորաշենը, ապա կրկին վերադարձավ գլխավոր կորպուսը զարդարող բանվորների մոտ։ Հենց նույն րոպեին պահեստի դռներից դուրս յեկան Միհրանը, Աղասի Աբրամիչը, Հարությունյանը։ Միհրանը ձեռքին բռնած ուներ մի մեծ կտոր ցեմենտ, վորն անձրևից արդեն կարծրացել եր, և չափազանց զայրացած ու հանդիմանական տոնով եր խոսում Աղասի Աբրամիչի հետ։

— Անմիջապես, խնդրում եմ, եսոր ևեթ քննություն կատարե՛ք, պարզե՛ք և պատասխան տվե՛ք ինձ, թե ո՞ւմ անփութության պատճառով և ի՞նչ հանգամանքներում ե փչացել այսքան ցեմենտը։

— Սիրը յես չեմ հասկանում, թե ի՞նչպես ե պատահել, ե՛. ուղղակի չարագործներով և վնասարարներով ենք շրջապատված։

— Հապա ի՞նչ ես պարծում, Սորինի հետ վնասարարությունը վերջացավ։ Մեր ամեն մի անկյունում, աշխատանքի ամեն մի տեղամասում վնասարարներ կան։

Սաշան մոտեցավ Միհրանին, խիտ մազերն առատորեն ծածկել եյին նրա դեմքը, յերկար ժամանակ չեր

սափրվել, զարմացած Սաշան նայում եր Միհրանի դեմքին:

— Հասկանո՞ւմ ես, — դեմ անելով Սաշային ցեմենտի կտորը, բացականչեց Միհրանը.— լավ աչքեր ու լավ ականջներ չունեք, հարյուր քառասուն տակառ ցեմենտն անձրևի տակ, տե՛ս, ի՞նչ է դարձել: Քնա՞ծ եք ձեր պատի թերթի հետ:

Սաշան վերցրեց Միհրանի ձեռքից ցեմենտի կտորը, դեն շպրտեց և չընչաց.

«Գիտենք, բա՛րեկամ, նույնիսկ պարզել ենք, թե ովքե՞ր են հանցավորները»:

Նախաճաշի չչակը սուլեց և բանվորները դուրս յեկան գործարանից: Բակում կիտված աղյուսի և շինանյութերի մնացորդներից կազմված կույտերի միջով իրար յետևից անցնում եյին բանվորուհիները դեպի ճաշարանի շենքը կենսուրախ, ծիծաղը դեմքներին: Սաշան, Միհրանը և Աղասի Աբրամիչը շարունակում եյին իրենց խոսակցությունը կարծրացած ցեմենտի շուրջը:

Սաշայի սուր աչքերը նկատեցին, վոր դեպի ճաշարան գնացող բանվորուհիների յետևից գալիս է Լենան: Նա, կտրելով Միհրանի և Աղասի Աբրամիչի արանքը, դեմքին խորը լրջություն տալով, չընչաց.

— Լենան գալիս է:

Միհրանը, տարորինակ անհարմարություն զգալով, աչքերը խոժոռեց նրա վրա, բայց Սաշայի փայլուն դեմքը նրան ստիպեց, վոր ժպտա: Լենան արագ քայլերով անցավ նրանց առաջից:

— Մեզ բարև չկա՞, ընկե՛ր Լենա, — նրա յետևից գոռաց Սաշան:

Լենան բարձրացրեց իր չիկնած դեմքը, ժպտալով վողջունեց ու Աղասի Աբրամիչի հետ ուղղեց իր քայլերը դեպի գործարկոմի շենքը:

— Հաշտվելու գործն արդեն կազմակերպել եմ:

— Դատարկ բաներով զբաղվելու ժամանակ չե:

— Ցույց ես տալիս, վոր անտարբեր ես, բայց ներքո՞ւստ: Ասա՛, խնդրեմ, կես ժամից ավելի գործարանի սրահում ո՞ւմ հետ եյիր բացատրվում:

Միհրանը բարձր ձայնով ծիծաղեց:

— Ամենայն լրջությամբ յես պահանջում եմ քեզնից, վոր դու ցույց տաս քո կոմունիստական վերաբերմունքը: Նա հանձն է առել իր սխալները, բավականին պատիժ և կրել դրա համար և սիրում ու հարգում է քեզ, ձեր ընտանիքը պետք է վերականգնվի:

— Միհրանը զայրացկոտ դեմքով ձեռքը թափահարեց և արագ քայլերով հեռացավ բակից: Սաշան չվարած, մի քանի բոպե մնաց կանգնած, ապա գնաց նրա յետևից:

Նախաճաշից հետո կարմիր անկյան ընդարձակ սենյակում սկսվեց կոմբջիջի բաց ժողովը: Լենան նստել եր աթոռների վերջին շարքերում. նա արդեն յերրորդ անգամն եր մասնակցում այդ բջիջի ժողովին և արդեն մոտից ծանոթացել եր մի քանիսի հետ:

Այսոր դաղդյահի մոտ աշխատելիս, Միհրանն ինքն եր մոտեցել նրան ու զրուցել: Նրա ականջներում մինչև հիմա հնչում եյին Միհրանի խոսքերը. «Լավ են արել, վոր մահուդի գործարանն են ընտրել, առանց վորևե անհարմարություն զգալու աշխատի՛ր, ամենքանով մենք կողնենք»:

Սաշան հավատում եր, վոր Միհրանը Լենայի հետ հաշտվելու խնդիրը դրական իմաստով պիտի լուծի: Միհրանը հետզհետե ավելի յեր բարձրանում Լենայի աչքում: Նրա մեջ նոր թափով և խանդավառությամբ ծավալվում եր սերը դեպի Միհրանը, սակայն շուտով հուսահատվում եր, յերբ Արշակի հետ

կապված հիշողությունները կուտակվում էին նրա գլխում:

Նոր էր հասկանում Լենին, որ զգացմունքները սերտորեն կապված են մարդու աշխարհայացքի, դատողությունների հետ, որ ինքը սխալվել է ընտանիքի հարցերին այդպիսի թեթև ու անհիմն լուծումն տալով և ընկել թյուրիմացությունների մեջ: Ակամա առաջը նստած մարդկանց արանքով նա նայեց Միհրանի դեմքին:

Միհրանը խոսում էր պարզ և հասկանալի. վաղը պետք է տեղի ունենար մահուդի գործարանի պաշտոնական բացումը և գործարանը հայտարարվելու էր հարվածային. որակարգի բոլոր հարցերը սերտորեն կապված էին այդ խնդրի հետ ու պետք է այսոր վորոշվեին: Բայց մինչ այդ Միհրանը ծանոթացրեց բոլոջին, թե ինչպես էր կառուցվել այս գործարանը, Կառուցողական աշխատանքների դժվարությունները Միհրանն այնպես քանդակեց, այնպես նկարագրեց, վոր այդ անպաճույճ պատմությունը բոլորին վոգևորեց:

Կառուցող բանվորների, հարվածայիններին կողմից հաշիվ տվեց բանվոր Սաչան և առաջարկեց գործարանի բոլոր ցեխերին հենց գործարանի բացման որը հայտարարել իրենց հարվածային և սոցմրցակցության հրավիրել միմյանց:

Միհրանի խոսքը վոգևորեց բանվորներին. մեկ-մեկ սկսեցին դուրս գալ ցեմենտի, յերկաթի. ու քարի փոշիների մեջ կորած հերոսները և, ձեռքերը թափ տալով, պատմել կառուցողական աշխատանքների դժվարությունների, տեխնիկային տիրապետելու, Լենինի, Ստալինի, հնգամյակի և կառուցվող սոցիալիզմի մասին:

* * *

Մի քանի տարի առաջ ամայի տափարակ էր այստեղ, ուր ազռավներն էին իջնում ընկած անասունների դիակները քրքրելու: Ցերեմն այդ տափարակի միջով անցնում էին դանդաղկոտ ճռնչող սայլերը դեպի վերի գյուղերը: Վոչ անցորդները և վոչ քաղաքի բնակիչները չէին մտածում, վոր այդ ամայի դաշտում յերբևիցե կարող է գործարան կառուցվել:

Սակայն ժամանակը փոխվեց: Հեղափոխություն եղավ. հաստատվեց պրոլետարիատի իշխանություն. խոսում էին, վոր բայլևիկները պիտի քար ու քանդ անեն ամեն ինչ: Սակայն նրանք վոչինչ չքանդեցին, ընդհակառակն սկսեցին կառուցել. քաղաքում խոսում էին, վոր Քռի առաջը պիտի կապեն: Քաղաքի հին մարդիկ, յերբ լսացան այդ, սկսեցին սովորական, փթած մարդկանց ծաղր ու ծանակը, իսկ նորերը գնացին Քռի առաջը կապող պատնեշի վրա աշխատելու: Անցավ մի քանի տարի. Քռի առաջը կապվեց: Քաղաքի և գյուղի բնակիչները հեհեհ գնում էին տեսնելու հինավուրց վանքի տակ ձգվող այդ պատնեշը և նրա առաջը կանգնած հանդուգն մարդու, մեծ ղեկավարի բրոնզե մատը: Քաղաքի հին մարդիկ, յերբ նայում էին պատնեշին և արձանին, սարսուռ էին զգում, դողում: Այդ պատնեշը պետք է կործաներ հին քաղաքը, նրա կեռ ու մեռ փողոցները, խանութներն ու հրապարակները:

Ցերը հիդրոկայանի լույսը վողողեց ամբողջ քաղաքը, ամեն ինչ փոխվեց: Եվ որեր անցան և շատ բան կառուցվեց: Մի առավոտ մի խումբ մարդիկ յեկան քաղաքի ծայրի Քռի ափին տարածվող ամայի դաշտը, կարմիր-սպիտակ գծերով ճողեր ցցեցին, յերկար մետաղյա շղթաներով չափեցին ընդարձակ տարածությունը, յերեք վոտանի պատվանդանների վրա ամրա-

ցրած փայլուն գործիքների դիտակներով դիտեցին, ապա բերանների վրա պառկեցին, գրեցին, դծեցին մի քանի որ շարունակ:

Մի քանի շաբաթից հետո յերկաթն սկսեց շաչել այստեղ: Ամենուրեք յերկաթ, ցեմենտ, քար ու աղյուս թափեցին, ցեմենտն ու քարը հյուսվում եյին միմյանց յերկաթավոր ձողերով: Հյուսեցին դիշեր ու ցերեկ մեծ կողովի նման: Ցեմենտը սեղմեց յերկաթին, քարին, աղյուսին և հսկայական շենքը բարձրացավ: Քաղաքի պարապ - սարապ փողոցները շրջող հին մարդիկ նկատեցին այդ ընդարձակ տարածվող հսկայական շենքը և զալիս հարցնում եյին տեխնիկներին ու բանվորներին:

— Ի՞նչ եք կառուցում:

— Մահուդի գործարան:

— Մահուդի՞...:

— Հա մահուդի:

— Ինչի՞ց պիտի մահուդ հանեք:

— Ելեկտրականությունից և բրդից:

— Խե՞նթ են սրանք, ինչ են:

— Հա՞, հա՞, հա՞:

— Ո՞վ ե ձեր ինժենները:

— Ամենագլխավոր ինժենները բանվոր Միհրանն ե, ա՞յ, ե՛ն, վոր կանգնած ե պատի վրա յերկաթե ձողերի արանքում, ա՞յ, հրեն...:

Ու գնում եյին նայելու այդ հանդուգն ինժեներ-ին, վոր այս ամայի դաշտում մահուդ ե ուզում հանել:

— Ես ի՞նչ ինժեներ ե, — մրթմրթում եյին հին մարդիկ,- սրանից մա՞հուդ ....:

Իսկ գործարանը բարձրանում, հա բարձրանում եր ու անկատելի կերպով նրա կառուցումը ավարտվեց:

★

Այսոր նրա ավարտված կորպուսների ճակատները զարդարող անհամար լոզունգները ծփում եյին քոր կողմից փչող սառը քամուց:

Մուտքի տնակի առաջ ահագին պլակատի տակ ռովորականի նման Սիմոնը չեր կանգնած. կանգնած եյին յերկու, գոտիները պինդ հուպ տված, մլլիցիոներ, վորոնք նեղս եյին թողնում վոտով ու ավտոյով գործարանի բակը մտնող մարդկանց: Զափազանց շատ մարդ յեկավ քաղաքից այդ որը: Սիմոնը, վոր ազատ պտտվում եր բակում, զարմացել եր: Լայնարձակ տրիբունի վրա խոնվում եյին կուսակցական, խորհրդային բարձրագույն որգանների ներկայացուցիչները: Ցերկար սյունաշարքով շարվել եյին կարմիր բանակային զորամասերը: Լուսանկարիչներն ամեն քայլափոխում պպզում, չոգում, կռանում և լուսանկարում եյին սրան, նրան խոսակցելիս տրիբունի վրա, գործարանի պատերի տակ, բանվորների շաքերում:

Տրիբունի աջ կողմը խոնվում եյին մահուդի գործարանի բանվորներն ու բանվորուհիները: Նրանց բոլորի դեմքերը ժպտում եյին, բոլորին վոգևորում եյին գործարանի լայնարձակ կորպուսներն ու փայլուն մեքենաները: Մի ինչ-վոր անսովոր, խորը բավականություն պատճառող ուժ այսոր ավելի եր կապում բանվորներին միմյանց: Նրանք առանձին բավականությամբ լսում եյին նվագի ձայնը:

Ամենուրեք հանդիպում եյիր հաղթանակող մարդկանց ժպիտների:

— Մոսկվայի ՅԻՏ-ը գնացողների մեջ դո՞ւ ել կաս, - հարցրեց հասակավոր բանվորներից մեկը Լենային:

— Վո՛չ, չկամ:

— Ցեսկամ, քառասուն հինգ տարեկան եմ և գնում եմ Մոսկվա, տեխնիկային տեիրապետելու. յես յերբեք լինած այնքան ջահել չեմ դդացել, ինչպես հիմա:

— Մենք բոլորս պետք է վերակառուցվենք. այժմ բոլոր հարցերն այլ կերպ են դրվում. այսորվա վաղը այսորվա նման չէ. փոխվել ենք մենք, փոխվել է մեր յերկիրը, մենք պետք է հասնենք և անցնենք առաջավոր յերկրներից:

— Ճիշտ է, ընկեր Միհրանը մեզ միշտ ասում է. «Պետք է կարողանանք գրոհել, տիրապետել տեխնիկային, հասնել ու անցնել կապիտալիստական յերկրներից»:

Ցեռևից արդեն Դաթիկոն դեմքը ցցել եր դեպի Լենան: Նա, քմծիծաղ տալով, բացականչեց.

— Հասնել և անցնել, հասնել և անցնել, յերբ հագիս կոշիկներ չկան:

— Կոշիկներ, — ծիծաղեցին բանվորուհիները, — այդքան փոքր բաների մասի՞ն ես մտածում.

— Բոբիկ վոտերով ի՞նչպես փաղեմ տեմպերի հետ:

— Մի՛ վաղիր, կանգնի՛ր, կոշիկները կդան քեզ մոտ:

Միհրանն արդեն պատրաստվում եր բաց անել միտինգը:

Տրիբունի վրա բազմաթիվ մարդկանց մեջ, առաջին շարքերի վրա, Լենինի արձանի կողքին մի ձեռք եր ցցվել դեպի վեր. կարծես Լենինի ձեռքը լիներ. աղմուկը մի ակնթարթում դադարեց: Ընչառությունները պահեցին, գործարանի պատերի տակից և մասսայից հեռու գանվողները վազելով մոտեցան ու միացան շարքերին:

Հանդիսավոր միտինգը բացելուց հետո խոսեց կենտգործկոմի նախագահը. հնչվում է Ինտերնացիոնալը. գործարանի կորպուսները զրնգում են. կենտգործկոմի ծերունի նախագահի հաղթական խոսքերը թռչում են տափարակի վրա ու Միհրանին թրվում է, թե յերաժշտության ձայները զնում, մտնում են բոլորի սրտի մեջ ու հետո դուրս գալիս, մտնում իր սիրտը, վոր այդքան արագ ու հպարտ զարկում եր այդ որը:

Ով հաղթանակել է, միմիայն նա կդդա, թե ինչպես եր լցվում ու դատարկվում Միհրանի սիրտն անորինակ բերկրանքից: Բանվորների դեմքերը Միհրանի դեմքին հառած ժպտում եյին, ժպիտը համատարած եր: Խոսողներ շատ յեղան. վոդջույնի խոսքեր ասողներին վերջ չկար: Նվագը և ծափերը թրնդացնում եյին ոդը: Միհրանն իջավ տրիբունից և, շրջապատված իր ընկերներով, խառնվեց մասսաներին, կորավ այնտեղ, վորտեղից ինքը յելել եր:

Լսվեց նորակառույց գործարանի շչակների հաղթական շաչյունը յերկար, յերկար: Գոլորշու շիթերը բարձրացան գործարանի տանիքից վերշչակի ձայնից ցնցվեցին բոլորը. բանվորներն չտապեցին դեպի իրենց դաղդյահները, հյուրերը դեպի մուտքը:

Մուտքի մոտ խոնվում եր խմբված մասսան: կենտգործկոմի նախագահին մի մկրատ տվին, վոր կարի մուտքը կապող կարմիր ժապավենը:

— Մեր առաջ ծառացած բոլոր դժվարությունները մենք կկտրենք այնպես, ինչպես այս ժապավենը:

Ժապավենի յերկու մասերը ցած ընկան ու կախվեցին պատերի վրա: Ճիշտ նույն վայրկյանին տեխնիկ Խեչոյի սենյակի կարմիր լամպը վառվեց, նա վեր կացավ տեղից, քիթը քորեց ու դործարանն առավ Զաղեսի հոսանքի մեջ:

Ահարկու դղրդյունն ականջ եր խլացնում: Ամբողջ դործարանն սկսեց շարժվել: Մարդկանց խուռը շարքերն անցնում եյին բուրդ լվացող, չորացնող, դզող և մանող մեքենաների մոտով. կեղտոտ բուրդը մաքրվում, չորանում, սպիտակ փաթիլներով դուրս եր գալիս, նորից դզվում, նորից մաքրվում, փաթիլներ կազմում, լվացվում, բամբակի նման սպիտակում, մանվում, փաթաթվում կոճերի վրա, ապա հետզհետե դաղդյահների միջոցով անցնելով թելը բարակում, անյերևակայելի բարակության հասնում: Միհրանը, շրջապատված մի խումբ հետաքրքրվողներով, բացատրում եր յուրաքանչյուր մեքենայի դերը, կազմությունը և անցնում բաժանմունքից բաժանմունք, ցեխից ցեխ: Լենան կարմիր փաթաթանի պոչերը ձիդ ձդած, գլուխը կախած, աշխատում եր իր ոդնականի հետ, դրեբլեսնալի մոտ, ուղղում եր մանված թելերը: Մարդիկ կանգ առան այդ հետաքրքիր և իր առանցքի շուրջը հոլի նման արագ պտտվող մեքենայի մոտ: Լենան բարձրացրեց գլուխը, ձեռքով արագորեն ուղղեց մեքենայի թելթև հովից տատանվող մաղերը և նորից հայացքն իջեցրեց. Միհրանը նայեց նրան, ապա մեքենային: Շրջապատողները կարծեցին, թե Միհրանն այդ մեքենայի մասին չի կարողանում բացատրություն տալ. նայում եյին մեկ Միհրանին, մեկ Լենային, մեկ էլ մեքենային:

— Սրանք հարվածայիններ են, աշխատանքի հենց առաջին որից սոցիալիստական մրցակցության են հրավիրել դործող ցեխին. պայմանագիրը ունեն կնքած:

— Ընկե՛ր Լենա, բացատրե՛ք ձեր մեքենայի կազմության ու անելիքների մասին:

Լենան չիկնեց. նրա համար չափազանց անհարմար դրություն եր ստեղծվել. սակայն սկսեց բացատրությունը պարզ, հասկանալի, սիրալիր: Միհրանը վոգևորված ու հետաքրքրությամբ, նայում եր Լենայի դեմքին. տարորինակ կարոտ զդաց նա դեպի այդ կինը և անսահման մեծ կարիք զդաց կրկին նրա հետ ընկերակցելու: Լենան ուշադրությամբ ու վոգևորված շարունակում եր իր բացատրությունները: Յերբ նա վերջացրեց, Միհրանը ժպտաց: Լենան ևս ժպտաց և գլուխը թաղցրեց մեքենայի յետևը: Խումբը հեռացավ:

— Աղջի, տեսա՞ր մարդդ ի՞նչպես եր նայում քեզ վրա: Հայացքը մեքենայից չհեռացնելով, խոսեց Լենայի ընկերուհին:

— Լա՞վ:

— Կարծես նորից սիրահարվել ե, ուրիշ տեսակ եր նայում, է՞:

Լենան ինքնարավականությամբ նայեց ընկերուհուն, հայացքը դցեց հեռացող խմբին, ապա տխրությամբ դարձավ ընկերուհուն.

— Նա յերբեք չի կարող սիրել ինձ:

— Ե՞հ, ո՞վ դիտե, ինչո՞ւ չե, այժմ ամեն ինչ այլ կերպ ե լինում: Մարդիկ փոխվել են, հասկանո՞ւմ ես:

Ամեն ինչ պտտվում ե, շաչում, փայլում պողպատի փայլով, վորտեղից են այսքան մեքենաները լցրել

այստեղ՝ բաղմութիւնն արբած մեքենաների ձայնից, անցնում էր բաժանմունքից բաժանմունք։ Գործող բաժանմունքում, ուր մահուդն էր գործվում, դաղդյահի տակից աղմուկն ավելի ուժեղ ու խլացուցիչ էր։ Դրանից այն կողմը ներկվում էր մահուդը, չորացվում ու դուրս գալիս կարմիր, կանաչ, կապույտ գույներով, ծալվում, փաթաթվում ու կուտակվում։ Միհրանը տարորինակ հայացքով էր նայում մահուդին՝ մահուդի ծալքերը կարծես նստում էին նրա սրտի ու մարմնի վրա։

Պտտվում էին յերկաթավոր յերկրի յերկաթավոր անիվները, լծակները, պալատներից էլ լուսավոր գործարանի ընդարձակ սրահում պտտվում էին բաղմահազար իլիկներն ու ճախարակները, ավելի բարակացնելով թելերը, գործում էին անընդհատ, թելի շերտերով փաթաթված մակույկները աջ և ձախ նետվելով։

Մեքենաների դյութական գարմոնիան վոգևորում էր նույնիսկ այնպիսի մարդկանց, վորոնք յերաժշտությունից չէին վոգևորվել։

— Մահո՛ւդը, մահո՛ւդը, գոչեցին մի քանիսը և մոտեցան կապույտ մահուդը իրար վրա ծալող մեքենային, բոլորը շոշափեցին մատերով, թեև համոզված էին, վոր մահուդ է։

— Ուրեմն մահո՛ւդ է, իսկակա՛ն մահուդ։

— Մահո՛ւդ է, մահո՛ւդ,— քրքջաց դաղդյահի վերևը կանգնած բանվոր Սաչան, վոր մինչև այդ մեջքը կռացրած մահուդի շոշափողներին էր նայում,— ի՞նչ կա զարմանալու, վոր եսքան արյան քրտինքից, տանջանքներից հետո մահուդ ենք ստանում։ Այնուհետև նա բոլոր մոտեցողներին ծիծաղով ակնարկում էր։

— Մոտեցե՛ք, ձեռքով բռնեցե՛ք, շոշափեցե՛ք, գուցե մահուդ չի՞։

Դոնապան Սիմոնը կնոջ հետ էր յեկել գործարանը դիտելու։

— Ես են մաշինն է, ա՛ կնիկ, հերու ինչ բերին և անձրևի տակ շաբթով թողել էին, մի՞տդ ա, ինչ Սորինն ասում էր, թե բանի պետքը չի, մի տե՛ս, ի՞նչ խաս թելեր է հանում պտուտակների տակից։

— Հա, քո տերը չմեռնի, եսքան էլ իլի՞կ կեղնի աշխարհը։

— Հիմի ասում են, մեր Սովետի յերկրում էլ են եսպես մաշինեք շինում, է՛։

Ու հոգնեցին դիտողները ձայնից ու տպավորություններից, հոգնեցին, բայց դիտում էին անվերջ, չէին ուզում գործարանից գնալ։ Շչակը կրկին թռնչաց յերկար ու զիլ, տեխնիկ Խեչոն նայեց ժամացույցին, քիթը քորեց, մի բոպե պակաս էր ժամանակից, ձեռքը դրեց վիկլյուչատելի կոթին, սպասեց մինչև ժամանակը լրանա և դուրս հանեց գործարանը Զաքեսի տոկից։ Գործարանը կանգ առավ։

Լսվեցին բանվորուհիների բարձր ծիծաղի ձայները։ Հարվածային ցեխերը հաչվում էին որվա արտադրանքի քանակությունը, կշռում էին թելերը, մանվածային ցեխը մեկ որվա առաջադրած գլուխը գերակատարել էր, մրցակցությունը տարել էին մանվածայինները։

Սաչան, գոգնոցի թելերը հանելով, արագությամբ մոտեցավ Լենայի մեքենային ու ցածր ձայնով փսփսաց նրա ականջին։

— Միհրանին տե՞սար։

— Չե...։

— Ասում ես, չե՞։

— Դե վոր դիտես, ել ինչո՞ւ յես հարցնում։

— Եսոր բանը վերջանալու յե։

— Այդպես հե՞չտ։

— Ահագին գործարանը կառուցեցինք դժվար չեր, հիմա մարդ ու կնոջ հաշտությունը դժվարացավ։

— Գործարանը յերկաթի, ցեմենտի, մեքենաների հետ գործ ունի, իսկ մենք զգացմունքների։

— Պետք է մեր զգացմունքները ճանաչենք մեքենաներից ել լավ, պետք է վերջապես մեր զգացումներն ել յենթարկենք մեզ, ինչպես յենթարկում ենք մեզ մեքենաները։

— Միջանցքի ծայրին յերևաց Միհրանն Աղասի Աբրամիչի հետ։ Աղասի Աբրամիչը կանգ առավ, ակնոցները դրեց քթի մեջքին և սկսեց կարդալ պատի յերկարությամբ կարմիր քաթանի վրա ձգվող պլակատը։

«Կոմունիզմն սկսվում է այնտեղ, ուր առաջ է գալիս շարքային բանվորների ինքնագործ ծանր աշխատանքն արտադրության բարձրացման համար»։

Միհրանն սպասեց, մինչև ծերուկը վերջացնի։ Բայց ծերուկը չմոտեցավ Միհրանին, նա շուռ յեկավ և արագ քայլերով հեռացավ դեպի մուտքը։

Միհրանը մնաց մենակ։ Լենան շոյող անշարժ աչքերը մեքենայի վրայից նետել եր ուղիղ Միհրանի վրա և մաքրում եր մեքենան։ Միհրանը լռեց, Սաշան գոգնոցը հանեց ու մոմոտլով հեռացավ միջանցքով։ Լռությունը, ծանր, անհարմար լռությունը կըշարունակվեր, յեթե Լենան չխոսեր։

— Դաղդյահների շաչյունն այսոր ինձ նորից հիշեցրեց գործարանը, մեր գործարանը։ 1917 թվի ցույցը, ապա Լենինի մահվան գիշերը, մեր ընտանիքը, Ավրոլան, Կիմիկը՝ իմ գեղեցիկ փայփայանքները, իմ այլանդակ ուղին, վորի առաջ կանգնել եմ յես այսոր մեծ զղջումով։ Կրկին յես վառվում եմ աշխատանքի կրակով, ինձ վոգևորում է դաղդյահների շաչյունը։ Վերելքի պայծառ ուղին, մեծ դարաշրջանի գրոհն ինձ կրկին նետում է հորդարուխ հոսանքի մեջ։ Յես խարազանում եմ ինձ թափերից յետ մնալու, կորած ընտանիքիս և իմ խայտառակ վերաբերմունքի համար։

Վճիտ արցունքները քամելով թարթում եր Լենան իր աչքերը և արցունքները գլորվում եյին մեքենայի փայլուն պողպատե առնակի վրա ու ծորումցած։

— Յես քեզ հանցավոր չեմ ճանաչում, դու սխալվեցիր։ Փոխանակ գրոհելու քո դասակարգի հետ, դու յենթարկվեցիր քո անձնական տարերքին։ Այն, ինչին ձգտում եյիր դու, անհատական ուժերով չի կարելի իրագործել և միշտ կխեղաթյուրվի։ Յե՛կ, գնանք միասին, անցածն անցավ, գնանք և միասին ուղղենք մեր սխալները, յես առաջվա նման կսիրեմ քեզ։

Լենան գլուխը դրեց մեքենայի վրա։ Ուրախության արցունքները խեղդեցին նրա կոկորդը։ Միհրանը մոտեցավ, բռնեց նրա թևից։

— Մի՛ լար, այժմ լաց լինելն այնքան ամոթ է, վորքան թափերից յետ մնալը։

Լենան յերբեք չեր յերևակայել, վոր յերբևիցե այդպես մոտ, իրեն շատ մոտ կկանգնի Միհրանը: Նա, յերկու ձեռքը դնելով Միհրանի ուսերին, կուչ յեկավ և գլուխը թաղցրեց նրա կրծքի վրա:

— Ցես... յես...:

Ու հեկեկում եր Լենան, արցունքները խեղդում եյին, նա այլևս չեր կարողանում խոսել:

Միհրանը, Լենայի թևն անցած, տարավ նրան դեպի գործարանի դուռը: Գործարանի ծայրում, դաղգյահի յետևը թաղնված Սաչան, կռացած, տեղից կամաց-կամաց բարձրացավ, ուղղվեց և հափշտակությամբ նայում եր նրանց յետևից դարան մտած աղվեսի նման, ապա մի վոտի վրա պտույտ յեկավ և, մեքենաների արանքով կեռ ու մեռ անելով, վազեց յետ, գործարանի խորքը:

Ցերբ մուտքից դուրս յեկան, տեխնիկ Խեչոն դեռ չեր վերջացրել գործերը: Նա պատուհանից տեսավ Միհրանին Լենայի թևից բռնած, բայց Լենային չճանաչեց, արագությամբ հանեց ակնոցները, նայեց պատուհանից, այս կողմն ընկավ, այն կողմն ընկավ, չճանաչեց:

Սաչան արդեն գործարանի մյուս ծայրով դուրս եր յեկել, նա նկատեց տեխնիկ Խեչոյին, դես – դեն ընկնելիս, կանգ առավ պատուհանի առաջ, ձեռքով, վոտով նշան արեց, ծաղրեց նրան: Տեխնիկ Խեչոյի հետաքրքրությունն այնքան մեծ եր, վոր յերկար չարչարանքից հետո պատուհանը բաց արեց և հարցրեց Սաչային.

— Ո՞վ եր Միհրանի հետ թևանցուկ գնում:

— Ո՞վ եր, չտեսա՞ր, — յերկու մատն իրար կպցնելով, ժպտում եր Սաչան Խեչոյի դեմքին:

— Թերևս՞, — Սաչան բութմատը տարավ յերկու մատների արանքը և դեմ արեց Խեչոյին:

— Ա՛ռ:

— Բա ո՞վ եր:

— Լենան եր:

— Ի՞նչ ես ասում, դա ուղղակի խայտառակություն է, անբարոյականություն, ուրիշ վոչինչ:

— Ինչո՞ւ, տո ա՛նամոթ, ինչո՞ւ:

Խեչոն զայրացած պատուհանը փակեց: Իսկ Սաչան հեռացավ գործարանի պատերի տակով, մի ուրախ յերգ մռմռացնելով:

XXXIX.

Մութն եր արդեն. ելեկտրական լույսի մեջ վողողված «Հնգամյակը չորս տարում» պլակատը վառվում եր թեժ կրակի նման գործարանի բակի մուտքի վերևը, վորի տակով անցավ Միհրանի ավտոն և դուրս յեկավ գործարանի բակից: Գործարանի ճակատը զարդարող դուլդուլ լամպերը հրդեհել եյին մթնոլորտը: Ավտոյի մեջ նստողների դեմքերը փայլում եյին հրճվանքից: Շոֆեր Վասոն այդքան ուրախ չեր նույնիսկ այն ժամանակ, յերբ փայլուն ավտոն ստացան արտասահմանից:

Լենան նստել եր յետևի նստարանի վրա, Աղասի Աբրամիչի և Միհրանի մեջտեղը: Առաջին աթոռի վրա նստել եյին ջրկոմի կենտրաժնի վարիչ Մարթան և Սաչան: Մարթան չուռ եր յեկել և խոսակցում եր Լենայի հետ:

— Տեմպերից յետ չմնալ, ահա այժմ գլխավորը: Մարտնչել կոնկրետ գործով գործարանում, ցեխում դաղդյահի մոտ, մարտնչել տոկունությամբ և բայլ-

չևիկորեն, ոգտագործելով բոլոր հնարավորությունները. մենք բոլորս կաջակցենք քեզ նորից մեր շարքերը վերադառնալու, դրա համար դու այդքան չպետք է մտածես:

— Ցես հիշում եմ յերկու – յերեք տարի սրանից առաջ քո և Լենայի վեճը, — խոսեց, գլանակի փոշին թափելով մոխրամանի մեջ, Աղասի Աբրամիչը, դառնալով դեպի Միհրանը: Այն ժամանակ յես ել ուրիշ մարդ եյի, սատանան տանի ձեզ, բայլշևիկներդ ինչ՞ը չեք անում, ինձ ել փոխեցիք և ի՞նչպես փոխեցիք: Կինս այլևս չի ճանաչում ինձ: Ցես կարծում եմ, վոր Լենային այդքան մեծ պատիժ տալը սխալ բան եր. Լենայի թուչքները ազատագրվող կնոջ թուչքներ են, դրանք հարկավոր են մեզ թափերի համար, այն թափերի, վորոնց շնորհիվ տասը տարվա ընթացքում մենք պիտի հասնենք ու անցնենք առաջավոր յերկրներից:

—Ներողությո՛ւն, Լենայի թուչքը կենցաղի բնազավառումն եր և վոչ թե շինարարության տեխնիկայի, — առարկեց Աղասի Աբրամիչին Միհրանը, — Լենան դեմ եր ընտանիքին, այժմ դու ասա՛, տեմպերի համար, սոցիալիզմի կառուցման համար ընտանիքը հարկավո՞ր է մեզ, թե՞ վոչ:

— Ե՛ – ը... ինչո՞ւ յես հարցն այդպես կտրուկ դնում:

— Այո՛, կտրուկ և կարճ պատասխան:

— Այն ընտանիքը, ինչ վոր հիմի գոյություն ունի, պետք չե սոցիալիզմին: Հարձակվեց Սաչան Միհրանի վրա:

— Այսինքն՝ ի՞նչպես այն ընտանիքը, մեր ընտանիքն արդեն մեծ չափով տարբերվում է հին ընտանիքից:

Հետզհետե, կինը բոլորովին կազատագրվի ընտանեկան հոգսերից, կդառնա ամբողջովին հասարակական մարդ, բայց ընտանիքը գոյություն կունենա: Ընտանիքի գոյությունը մեչչանականության համաբողները կորած մարդիկ են ու սոցիալիզմի կառուցման թշնամիներ:

Ավոն կանգ առավ Միհրանենց տան մուտքի մոտ: Վասոն գլուխը յետ գցեց, դուռը բացեց, նայեց Լենային, Միհրանին, ժպտաց: Բոլորն ինչան, ավոտի լույսերը հանդան: Հարևանուհիներից մեկը պատուհանի վարագույրը յետ քաշեց, նկատեց Լենային և հետաքրքրությունից պատուհանը բաց արեց: Ցերը դուռը բացվեց, առաջին սենյակի մեջտեղը դրած սեղանի վրա Ավրորան դասավորում եր իր քառակուսի փայտե խորանարդները մի մյանց վրա աղյուսի նման:

— Տեսե՛ք, հոր նման շինարարությամբ է պարապում, — ակնարկեց Աղասի Աբրամիչը, քաշ տալով ձեռնափայտն ու գլխարկն ըստ սովորականին դռան մոտ փակցրած կախարանի վրա: Լենան վրա վազեց դեպի Ավրորան. նրան մեկ տարի յեր, ինչ չեր տեսել: Կարոտը խառնեց նրա եյությունը, նա գրկեց յերեխային այնպիսի ուժով, վոր սեղանի սփռոցը ճմռթվեց, փայտե քառակուսիները թափվեցին: Ցերեխան յետ-յետ եր քաշում իր գլուխը, շրթունքները, աղեղի նման ծռում եր մեջքը, տհաճությամբ ծածկում եր յերեսը, զարմացած ու վրդովված նայում եր Լենայի կարմիր փաթաթանով գլխին ու արտասունքներով թրջված այտերին: Չեր ճանաչում: Բայց Լենան անընդհատ շարունակում եր համբուրել:

Սոնա տատիկը յերբ ներս մտավ հարևան սենյակից, Լենան իր գեմքն ամբողջովին թաղել եր Ավրորայի կրծքի մեջ։

Պառավը, զարմանքից չվարած, նայում եր յերեխային համբուրող կնոջ վրա։

— Ձե՞ս ճանաչում, մա՛յրիկ, — ժպտաց Միհրանը։ Պառավը մեկ հյուրերի գեմքին, մեկ Միհրանին եր նայում։

— Աղջիկդ է, աղջիկդ, — վրա բերեց Աղասի Աբրամիչը։

Սոնա տատիկը վրա ընկավ և յերկու միմյանց գրկվածներին ինքն ևս գրկեց։

Արցունքները թրջեցին պառավի աչքերը։

Տեսարանը ցնցում եր հյուրերին, վորոնք նայում եյին հանդիսականների նման։

— Տեսնո՞ւմ եք, ի՞նչպես է թափահարում մարդուն սխալը։

— Պետք է բայլևիկի պողպատե ամրակուռությունն ունենալ, — խոսեց Սաչան, — յես հիշում եմ, յերբ Կիմիկը հիվանդ եր, կրիտիկական մոմենտին, այն որը, յերբ նա կուրացավ ո՛հ, այդ սարսափելի որը և գիշերը Միհրանը չգնաց նրա մոտ, վորովհետև գործն այդպես եր պահանջում։

— Սիրտս թռչում եր նրա մոտ, — խոսեց Միհրանը, — բայց յես չգնացի նրան տեսնելու, մնացի գործարանի համար, մյուս որը մենք նրան կուրացած հանդիպեցինք, հիշո՞ւմ ես, Աղասի՛ Աբրամիչ։

— Հիշում եմ, բայց ինչո՞ւ յեք մտաբերում, — ծերունին ունքերը կիտեց։

— Ձեզ զգում եյի, վոր Կիմիկին յես սիրում եյի ջերմագին, անսահման սիրով, ո՞վ կարող է ժխտել այդ զգացմունքը, նա կոմունիստ լինել չի կարող, այո՛, սիրում եյի, սակայն և հասկանում եյի, վոր Կիմիկին միայն յես եյի սիրում, իսկ գործարանը հարյուր հազարներ, միլիոններ, դասակարգն և սիրում։ Ձեզ մնացի գործարանի համար։

Լենան չեր կարողանում զսպել արցունքները։ Նա յերեխային գրկած, վորբացածի նման նայում եր իր կարմրատակած, խղճալի հայացքով Միհրանի վրա։ Միհրանը մոտեցավ, սկսեց շոյել Լենային և Ավրորային։

Ավրորան յերկու ձեռքով գրկեց մոր գլուխը, յերջանկորեն ժպտաց, սկսեց տատիկին ել կանչել իրենց մոտ։

Տատիկի գեմքը յերևի կյանքում այնքան գոհ արտահայտություն չեր ունեցել, ինչպես այսոր։

— Ինչո՞ւ ինձ չասացիք, վոր քո այսորվա հյուրերի հետ Լենան ել է գալիս։

— Իսկ յես գիտեյի՞, վոր նա կգա։ Մենք այսոր պատահեցինք միմյանց ճիշտ այնպես, ինչպես տատներեք տարի սրանից առաջ։

Տատիկը պատրաստում եր սեղանը։

Ցերը ուրախ – ուրախ ճաշի սեղանին նստած, խումբը հանաքներ եր անում, հիշողություններ եր պատմում մահուդի գործարանի կառուցման մասին, Միհրանը հայտարարեց.

— Այսորվանից յես մահուդի գործարանի հետ այլևս գործ չունեմ։

— Ինչպե՞ս թե։

— Ձեզ տեղավորվում եմ այնտեղից։

Աղասի Աբրամիչը զարմացած պատառաքաղը ցած դրեց ձեռքից։ Լենան ևս հետաքրքրվեց, Սաչան դադարեցրեց ծամելը և վիզը ծռեց դեպի Աղասի Աբրամիչը։

— Ո՞ւր են տեղափոխում, — հարցրեց Աղասի Աբրամիչը:

— Ասում են, Ռիոնգես, կամ Զորագես:

— Ռիոնգե՞ս:

— Դուք տխրեցիք, իսկ ես ուրախ եմ, յես այլևս Մահուդի գործարանում անելիք չունեմ. այժմ կգնանք ուրիշ տեղ, կկառուցենք այնտեղ: Ցես, Աղասի Աբրամիչը, Լենան, Ավրորան, Սաչան, տատիկը և ելի այն ընկերները, վորոնք ուզում են մեզ հետ աշխատել, կըկառուցենք նոր ելեկտրոկայաններ, գործարաններ, կփոխենք մեր յերկրի յերեսը, ավելի ամուր կառուցենք ավելի ամուր սիրելու համար:

Բոլորը լուռ ու մտածկոտ լսում էին Միհրանին:

Թիֆլիս. 1929–30 թ.

ՎԵՐՋ.

Ց. ԱԹՐԻՅԱՆ

ՊԵՏԵՎԱ

ՏԱՆԵԼՄՈՒՓՈՒ ԳԱՄՈՒՑՈՒՄԼՈՒԹՅԱ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

1-ին յերեսում 22-րդ տող տպված է „Թիֆլիսի անդամ». պետք է լինի „Թիֆլիսի անդամության Թեկնածու"։

18-րդ յերեսում 15-դ տող տպված է „Վենան". պետք է լինի Լենան։

33-րդ յերես 26-րդ տող տպված է „1917" „1918" պետք է լինի „1916" Թ. „1917" Թ.։

82-րդ յերես 23-րդ տող տպված է „մի քանի ամիս հետո կորցրեց մարը". պետք է լինի „մի քանի ամիս հետո կորցրեց քրոջը"։

85-րդ յերես 13-դ տող—„դող յերեսում եյին մարդկային դիակների ծովի վրա" տպելորդ է։

ՀՀ Ազգային գրադարան
NL0320900

21121

891.99
Ц-81